РЕДАКЦИОННАЯ КОЛЛЕГИЯ

Батикян Г. Г. (ответ. редактор)
Арутюнян Б. М. (ответ. секретарь)
Меликян О. М.
Бунятян Г. Х.
Федоров А. А.

Тех. редактор *Манукян В.*
Отв. корректор (русск. текст) *Турабов Г.*
Отв. корректор (арм. текст) *Шахбазян С.*

Сдано в набор 19/X 1940 г. Подписано к печати 18/XI 1940 г. Формат 72×105
Об'ем 17 1/2 п. л. Тираж 2000. ВФ 2076, Изд. № 82. Заказ. № 244.

Գինը 11 к., կազմը 2 к. Цена 11 р. переплет 2 р.

Типография АрмФАН-а, Ереван, ул. Ленина, № 67.

М. Г. НЕРСЕСЯН

В. И. ЛЕНИН И ОСВОБОЖДЕНИЕ АРМЯНСКОГО НАРОДА

Бесконечно велика роль гениального вождя мирового пролетариата—Владимира Ильича Ленина в деле революционно-политического воспитания армянского народа, в организации его борьбы за окончательное освобождение от вековых притеснений и угнетения. Почти за весь период своей славной революционной деятельности великий друг трудящихся масс и всех народов находил время откликаться на каждое значительное явление общественно—политической жизни Армении и наряду с другими многочисленными и разносторонними вопросами занимался также и революционной борьбой армянского народа. Организатор большевистской партии и Великой Октябрьской социалистической революции интересовался жизнью армянских революционных масс, систематически руководил и помогал коммунистическим организациям Армении и вместе со своим великим соратником, товарищем Сталиным, подготовил и обеспечил победу и освобождение многострадального армянского народа.

Изучение Кавказа Ленин начал с девяностых годов прошлого века. В своей статье „Еще к вопросу о теории реализации", вышедшей в 1899 г., и, в особенности, в своем знаменитом труде „Развитие капитализма в России" Ленин дал блестящую и исчерпывающую оценку социально-экономическому развитию Кавказа (см. Ленин, собр. соч., т. III, стр. 463—464). Из последней работы видно, что он уже в девяностых годах прошлого века подробно изучил и прекрасно знал экономическую и общественно-политическую жизнь кавказских народов. Дальнейшее освещение разных вопросов Кавказа Ленин продолжал как на страницах „Искры", так и в последующих своих трудах.

Однако интерес Ленина к Кавказу не ограничивался теоретической стороной вопроса. Великий сочетатель теории и практики с первых же годов двадцатого столетия одновременно принимал также активное участие в практической организации революционного движения Кавказа, в распространении идей марксизма среди рабочих и трудящихся масс Закавказья.

В 1903 году, в частности после II С'езда партии Ленин усиленно занимался вопросами социал-демократического движения на Кавказе. Новообразовавшемуся Кавказскому Союзному Комитету и

местным большевикам он систематически давал руководящие указания и разоблачал дезорганизаторские попытки меньшевиков. В письме Кавказскому Союзному Комитету Р. С.-Д. Р. П. от 20 октября 1903 года Ленин вместе с Плехановым, который в то время шел с ним, писал:

„Пусть кавк[азские] товарищи твердо держатся того пути, на к[ото]рый они встали. Пусть не слушают они сплетней против большинства. Скоро выйдут в свет полные протоколы с'езда, и тогда дело будет ясным для всех. Пусть продолжают они дружную работу с товарищеским доверием к Ц. К., и мы уверены, что теперешняя партийная „смута" быстро рассеется.

Мы усиленно думаем теперь об организации здесь издания грузинской и армянской лит[е]р[а]т[у]ры. За это взялись компетентные товарищи; деньги надеемся найти. Нужна помощь и литературой и средствами.

Шлем привет кавказским товарищам и горячее пожелание успехов в работе". (Ленинский сборник, т. VII, стр. 114—115).

В конце 1903 года в Женеве, по инициативе и под руководством Ленина, была организована комиссия по изданию социал-демократической марксистской литературы на грузинском и армянском языках, что в значительной мере способствовало распространению марксизма в Грузии и Армении. В 1903 году Ленин в специальной статье „О манифесте армянских социал-демократов" (Ленин, собр. соч., т. V, стр. 241—242) отметил появление армянского социал-демократического союза, указал на ошибки этого союза и в связи с этим наметил правильные пути, по которым должны были итти сознательные армянские рабочие. В том же 1903 году ленинская „Искра" откликалась на явления общественно-политической жизни армянского народа и подробно на них останавливалась. Так, например, в № 50 ленинской „Искры" была напечатана обширная статья об освободительном движении в Армении в 1903 г.

В начале 1904 года на помощь кавказским большевикам в Тбилиси и другие центры Закавказья был командирован Лениным ряд большевиков.

В период революции 1905 года Ленин еще ближе познакомился с армянской общественно-политической жизнью, с политическими течениями среди армянского народа. Он блестяще разоблачил армянских оппортунистов, националистов-спецификов, прикрывающихся маской социализма. В своем письме к членам ЦК РСДРП в сентябре 1905 года Ленин так характеризовал спецификов:

*„Это—пара женевских дезорганизаторов, издающих здесь самые пустяки, без всяких серьезных связей на Кавказе. Это—**бун-***

довская креатура, *ничего более, специально выдуманная для питания кавказского бундизма... Кавказские товарищи все против этой шайки литераторов—дезорганизаторов". (Ленин, сбор. соч., XXVIII, стр. 496—497).*

В период революции 1905 года имя Ленина уже было знакомо рабочим массам армян. В 1905 г. Ленин обращается к вопросу об армяно-тюркской резне, организованной царизмом. В этом году в армянской большевистской печати появились переводы нескольких статей Ленина. Уже в этот период, благодаря руководящей деятельности Ленина, благодаря усилиям лучшего соратника Ленина—товарища Сталина и армянских ленинцев—Степана Шаумяна и Сурена Спандаряна, пропаганда марксизма имела значительный успех также и в Армении.

В годы столыпинской реакции и первой империалистической войны Ленин несколько раз останавливался на некоторых вопросах армянской действительности, давая им каждый раз правильное освещение и оценку. Так, например, в своем труде „Аграрная программа с.-д. в первой русской революции" (Ленин, собр. соч., т. XI, стр. 333), написанном в 1907 г., Ленин разбивает в пух и в прах народнически-эсеровские иллюзии представителей Армении, выступавших в Государственной Думе.

В годы нового под'ема революционного движения Ленин с неослабевающим вниманием следил за событиями и идейной борьбой на Кавказе. В письме к С. Г. Шаумяну от 11 августа 1913 года Ленин писал:

„Дорогой товарищ! Вернувшись домой, я застал Ваше письмо. Непременно пришлите побольше материалов о национальном вопросе на Кавказе (и статью Кострова и его книжки, доклады делегатов с переводом на русский язык, и ***статистику национальностей*** *на Кавказе, и материал об отношении национальностей на Кавказе, в Персии, Турции и России, одним словом все, что есть и что можете собрать, присылайте...)" (Собр. соч., т. XXIX, стр. 100).*

Держа тесную связь с Шаумяном, Ленин давал руководящие указания ему и через него знакомился с армянской действительностью этого периода. В декабре 1913 года Ленин в своем письме к Степану Шаумяну подробно раз'ясняет некоторые положения по национальному вопросу. Шаумян часто обращался за советами к вождю—Ленину. В письме к Ленину от 17 апреля 1914 года он писал:

„Нужно было писать брошюру о национальной культурной автономии на армянском языке. После выступления Ан (армянского национал-шовиниста, специфика Давида Анануна,—М. Н.)

это требование стало очень популярно на Кавказе". (Ленинский сборник, т. XIII, стр. 238).

Ленин одобряет предложение Шаумяна и даже предлагает ему план работы. В ответном письме от 19 мая 1914 года Ленин писал:

"Дорогой Сурен! Получил Ваше письмо от 17. IV. Надеюсь, ответите мне, когда прочтете конец статьи о самоопределении наций (пишу его сейчас) в „Просвещении".

О Вашей брошюре против Ана ***обязательно*** *дайте* Selbstanzeige *или изложение в „Просвещении".*

Предлагаю Вам еще следующий план. Чтобы бороться с глупостью „культурно-национальных автономистов", надо чтобы русская с.-д. рабочая фракция внесла в Г. Думу проект закона о равноправии наций и о защите прав национальных меньшинств".

Далее Ленин излагает подробный план работ по национальному вопросу. (См. Ленинский сборник, т. XIII, стр. 236—237).

По плану и указаниям Ленина и следуя замечательной, непревзойденной работе товарища Сталина „Марксизм и национальный вопрос", вышедшей в 1913 г. в большевистском журнале „Просвещение", Шаумян написал свою ценную работу „О национально-культурной автономии", работу, которая сыграла огромную роль в борьбе против армянских национал-шовинистов.

Тесную связь держал Ленин и с Суреном Спандаряном, с одним из лучших соратников и другом товарища Сталина. Ленин переписывался со Спандаряном, горячо любил его, а когда в 1912 году Спандарян был арестован, то он проявил исключительную заботливость к своему ученику и даже к его беспомощному отцу. В письме к В. А. Тер-Иоанисян Ленин писал:

„Не знаю, известна-ли Вам печальная новость про нашего общего друга, который познакомил меня с Вами в Берлине,—Сурена Спандарьяна. Он арестован в Баку. Жена его пишет отцу, что некому о нем позаботиться, нет де у него ни постели, ничего. Некому принести ему молока и т. д. Отец говорил мне, что у него много знакомых в Баку и что он написал ***одному****. Почему только одному, не знаю.*

Отец Спандарьяна живет здесь (Hotel Nicole, 19, Rue Pierre Nicole, 19. Paris).

Смотрит он очень больным и старым. Сын обещал ему все сделать, чтобы выслать денег ему из Баку—из-за ареста не мог. Отец без денег, с квартиры его гонят. Положение его самое печальное, даже отчаянное.

Мы ему помогли небольшим займом. Но я все же решил Вам написать. Вероятно, у Вас есть знакомые и друзья Спандарьяна и в Баку и в Париже. Отец Спандарьяна не раз посылал письма,

забывая поставить адрес. Поэтому я очень боюсь, что его письма в Баку, не дойдут. Не знаете-ли Вы кого-либо в Баку кому можно бы написать про Сурена и попросить позаботиться о нем?

Далее, если у Вас есть общие знакомые, крайне бы было важно позаботиться и об отце. Говорили, что у него есть богатый сын в Екатеринодаре. Хорошо бы, если бы Вы и ему написали ***поэнергичнее,*** *чтобы он послал побольше денег отцу, чтобы отец мог расплатиться с долгами и уехать.*

Надеюсь, Вы сделаете, что можете, для обоих Спандарьянов и черкнете мне об этом пару слов. ("Ленинский сборник", т. XIII, стр. 205—206).

Великий друг и вождь угнетенных национальностей проявлял исключительный интерес и заботливость об армянском народе, о его славных сыновьях—Степане Шаумяне и Сурене Спандаряне.

В период первой мировой империалистической войны и февральской революции Ленин неоднократно возвращается к вопросу Армении и в своих статьях вскрывает, в частности, истинную цель политики царского правительства по отношению к Турецкой Армении.

Великая Октябрьская социалистическая революция, положившая начало социалистической эре в мировой истории, открыла новую эпоху угнетенным народам. Освобождение народов царской России, в том числе и армянского народа, было связано с победой великой Октябрьской социалистической революции.

„... судьбы народов России,—писал товарищ Сталин в декабре 1917 г.,—особенно же судьбы армянского народа, тесно связаны с судьбами Октябрьской революции („Ленин—Сталин", Избр. произведения, стр. 557).

Освобождение многочисленных народов, угнетавшихся и притеснявшихся в империи Романовых, Октябрьская революция сделала первоочередным вопросом. Ленин—гениальный вождь социалистической революции, вместе со своим лучшим соратником, товарищем Сталиным, с первых же дней после победы Октября приступил к организации освобождения и национального возрождения как всех угнетенных народов бывшей царской России, так и армянского народа.

В декабре 1917 года Совнарком принял решение о назначении Степана Шаумяна чрезвычайным комиссаром Кавказа. Это постановление было подписано председателем Совнаркома Лениным и народным комиссаром по делам национальностей Сталиным. Совнарком возложил на Шаумяна задачу освободить Кавказ от контрреволюции и осуществить освобождение народов Кавказа. В это же самое время Ленин написал „Проект декларации прав трудящегося и эксплоати-

руемого народа", где поставил вопрос с самоопределении Армении (Ленин, собр. соч., т. XXII, стр. 177). В конце 1917 года Совнарком издал „Декрет о Турецкой Армении" за подписями председателя Совнаркома Ленина и народного комиссара по делам национальностей Сталина, которым Турецкой Армении было дано право на самоопределение, вплоть до полной самостоятельности. Однако, армянский народ, несмотря на помощь Советской России, в течение 1917—19 г. г. не сумел добиться независимости и освобождения, т. к. Армения в этот период попала под иго контрреволюционных дашнаков и их хозяев—европейских империалистических государств.

В период гражданской войны, когда Советская Россия переживала тяжелые дни, а Закавказье еще находилось под властью реакции и империалистических государств, Ленин не забывал об Армении, не забывал об освобождении армянского народа. В своих статьях этого периода, как и в своих речах, он неоднократно касался положения народов Закавказья, вопросов их борьбы. Он внимательно следил за героической борьбой славной Бакинской Коммуны и вместе с товарищем Сталиным давал коммунистическим организациям Закавказья, боровшимся за освобождение своих народов, руководящие указания и оказывал им всяческую помощь.

В конце 1919 и в начале 1920 г. г. славная Красная армия Советской России нанесла решительное поражение внутренним контрреволюционным (деникинским) и внешним интервенционистским (антантовским) силам.

Великие победы Красной армии дали возможность Советской России оказать решительную помощь народам Закавказья, которые все еще стонали под властью империалистических государств и закавказской контрреволюции. В марте 1920 г., когда славная XI Армия под руководством т. т. Орджоникидзе, Кирова и Микояна ликвидировала белые банды на Северном Кавказе, Краевой Комитет Кавказских большевистских организаций и Областной Комитет Коммунистического союза молодежи от имени народов Кавказа опубликовали декларацию, в которой обращались к Советской России и к вождю Великой Социалистической революции—Ленину за помощью.

— „*Мы,*—говорилось в этом обращении,—*не хотим оставаться рабами, особенно теперь, когда рядом с нами стоит освобожденный пролетариат России, с которым мы желаем вступить в единую пролетарскую интернациональную семью. Мы все, кавказские коммунисты, мы все, рабочие и крестьяне Грузии, Азербайджана, Армении и Дагестана, мы, представители трудящихся масс всех народов Кавказа... в беспримерно тяжелых условиях, в течение двух лет ведем непримиримую борьбу за те идеалы, которых вы добились с Октябрьской революцией. То побеждая, то падая, мы*

неустанно и сейчас бьемся с желтой контрреволюцией—вечной союзницей черной контрреволюции... Мы питаем непоколебимую уверенность и твердое убеждение, что Советская, рабоче-крестьянская Россия, Коммунистический Интернационал и доблестная Красная армия не останутся безучастными зрителями нашей неравной борьбы с об'единенной желто-черной контрреволюцией и активно помогут нам избавиться от власти капитала".

Это обращение закавказских народов и их революционных организаций не осталось без ответа. Вождь Великой Социалистической революции Ленин, великий друг угнетенных народов, немедленно отозвался на этот призыв. По указаниям Ленина и Сталина XI Армия под руководством Орджоникидзе, Кирова и Микояна двинулась в Закавказье. 28 апреля 1920 года, при самом активном участии Красной армии было низвергнуто бекско-ханское контрреволюционное правительство муссаватистов и трудящиеся Азербайджана стали на путь своего освобождения. По указаниям Ленина и Сталина XI Армия в ноябре 1920 г. пошла на помощь армянскому народу, который в то время находился в кошмарных условиях и особенно сильно нуждался в скорой братской помощи. 29 ноября 1920 г. восставшие трудящиеся Армении при активной помощи Красной армии и под непосредственным руководством Орджоникидзе, Кирова и славного сына армянского народа Анастаса Микояна низвергли контрреволюционное правительство дашнаков, эту агентуру англо-французского империализма. В Армении была установлена Советская власть. Армянский народ окончательно освободился от векового притеснения и гнета.

„Великий Ленин возвестил, великий Сталин дал нам весть,
Что армии, несущей свет, рядов бестрепетных не счесть.
И с сердцем пламенным пришли, горя отвагой, на Кавказ
Серго и Киров, и пришел в рядах победных Анастас.
В году двадцатом в ноябре взыграл горячий вал,—и вот
Дашнак раздавлен был, и вновь мы смело двинулись вперед.
И тучи черные ушли, блеснула радуги дуга,
Сверкнули ясно небеса, заря окрасила луга.
Свет над Арменией взошел, незнаемый до этих пор,
Плач угнетаемых исчез, позеленели склоны гор".

(Из письма молодых поэтов Армении к товарищу Сталину).

Освобожденный армянский народ с чувством глубокой благодарности послал Ленину и Сталину многочисленные телеграммы и письма. В ответ на эти телеграммы и письма Ленин 2 декабря 1920 г. приветствовал трудящихся армян:

„Приветствую,—писал Ленин,—освобожденную от гнета империализма трудовую Советскую Армению. Не сомневаюсь, что Вы

приложите все усилия для установления братской солидарности между трудящимися Армении, Турции и Азербайджана".

Приветствовал освобожденный армянский народ также и товарищ Сталин.

„Армения, —писал товарищ Сталин,—*измученная и многострадальная, отданная милостью Антанты и дашнаков на голод, разорение и беженство—эта обманутая всеми „друзьями" Армения, ныне обрела свое избавление в том, что об'явила себя советской страной. Ни лживые заверения Англии, „вековой защитницы" армянских интересов, ни пресловутые 14 пунктов Вильсона, ни широковещательные обещания Лиги наций с ее „мандатом" на управление Арменией не смогли (и не могли) спасти Армению от резни и физического истребления. Только идея советской власти принесла Армении мир и возможность национального обновления... Пусть знают все, кому ведать надлежит, что так называемую армянскую „проблему", над которой тщетно ломали голову старые волки империалистской дипломатии, оказалась в силах разрешить* ***только*** *Советская власть. Да здравствует Советская Армения!"*

22 декабря 1920 года в своем докладе на VIII всероссийском с'езде советов Ленин снова приветствовал Советскую Армению.

„Мы должны приветствовать, —писал Ленин,—*образование и упрочение Советских республик, Бухарской, Азербайджанской и Армянской, восстановивших не только свою полную независимость, но и взявших власть в руки рабочих и крестьян. Эти республики являются доказательством и подтверждением того, что идеи и принципы Советской власти доступны и немедленно осуществимы не только в странах, в промышленном отношении развитых, не только с такой социальной опорой, как пролетариат, но и с такой основой, как крестьянство. Идея крестьянских Советов победила. Власть в руках крестьян обеспечена; в их руках земля, средства производства. Дружественные отношения крестьянско-советских республик с Российской социалистической республикой уже закреплены практическими результатами нашей политики". (Ленин, соч., т. XXVI, стр. 27).*

Для улучшения продовольственного положения Советской Армении Ленин в конце 1920 и в начале 1921 года от имени Совнаркома в официальных телеграммах и нотах требовал от контрреволюционного правительства грузинских меньшевиков допустить свободную переброску продовольствия по железной дороге в Советскую Армению. Отцовская забота Ленина о продовольствии для Армении увенчалась успехом.

В феврале 1921 года в Лорийском районе вспыхнуло восстание армянских крестьян против грузинских меньшевиков. В своем докладе на заседании пленума Московского Совета рабочих и крестьянских депутатов 28 февраля 1921 года Ленин остановился на этом событии, приветствовал восстание армянских крестьян и разоблачил контрреволюционные, антантофильские планы грузинских меньшевиков и армянской буржуазии.

По указаниям Ленина и Сталина Красная армия пришла на помощь также грузинскому народу. 25 февраля 1921 года было свергнуто ненавистное правительство грузинских меньшевиков и в Грузии взвилось Красное Знамя Советов. Все Закавказье стало советским.

Владимир Ильич Ленин и после установления Советской власти в Армении с величайшей внимательностью следил за развитием экономической и культурной жизни Армении и помогал ей. 14 апреля 1921 г. Ленин послал коммунистам Азербайджана, Грузии, Армении, Дагестана и Горной Республики свое известное письмо, в котором он подробно указывал формы и методы, по которым должны были работать кавказские коммунисты.

Это письмо Ленина сделалось боевой программой для коммунистов Кавказа, в том числе и для коммунистов Армении. В 1921 году по указанию Ленина Советская Россия оказала огромную материальную помощь молодой Советской Армении. Она получила от России 1.500.000 рублей золотом, оборудование текстильной фабрики, сельскохозяйственные машины и пр. Ленин вместе с товарищем Сталиным руководил и созданием Закавказской федерации.

Дав отпор закавказским национал-уклонистам и всем враждебным элементам, закавказские организации Коммунистической партии под руководством Ленина и Сталина в марте 1922 года создали Закавказскую федерацию, которая сыграла огромную роль в восстановлении и развитии экономической и культурной жизни народов Закавказья. Ленин до конца своей жизни сердечно и с отеческой заботливостью руководил как всеми братскими народами, так и армянским народом.

Неизмеримо велика роль Ленина в организации борьбы армянского народа за свое освобождение и за развитие своей экономической и культурной жизни. Армянский народ говорит о Ленине, как о величайшем своем друге и вожде.

Ленин и Сталин—подлинные и великие освободители многострадального армянского народа.

Ռ. Ա. ՓՈՐՍՈՒՂՅԱՆ

ՍՈՎԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

I

Դեռևս Փետրվարյան revolyուցիայից հետո, նախկին ցարական Ռուսաստանի բազմաթիվ ծայրամասերում ստեղծվեցին բուրժուա-նացիոնալիստական, այսպես կոչված «ազգային խորհուրդներ», որոնք փաստորեն դարձան կոնտրrevolyուցիոն ուժերի կենտրոնատեղի։ Ընկեր Ստալինը Փետրվարյան revolyուցիայի հետևանքով ստեղծված այդ բուրժուական «ազգային խորհուրդների» մասին 1918 թ. գրում էր.

«Ռուսաստանի ծայրամասերը վայրկենապես ծածկվեցին «համազգային» հիմնարկներով։ Շարժման գլուխ էր անցած ազգային, բուրժուական-դեմոկրատական ինտելիգենցիան։ «Ազգային խորհուրդներ» Լատվիայում, Էստական երկրում, Լիտվայում, Վրաստանում, Հայաստանում, Ազրբեջանում, Կովկասում, Կիրգիզսաանում ու Միջին Պովոլոժյեում... ահա «համազգային» այն ինստիտուտները, որոնց շուրջը ուժեր էր հավաքում ազգային բուրժուազիան։ Խոսքը վերաբերում էր ցարիզմից, իբրև ազգային ճնշման «հիմնական պատճառից» ազատագրվելուն և ազգային բուրժուական պետություններ կազմելուն։ Ազգերի ինքնորոշման իրավունքը մեկնաբանվում էր որպես ծայրամասերի ազգային բուրժուազիայի իրավունք իշխանությունն իր ձեռքը վերցնելու և օգտագործելու Փետրվարյան հեղափոխությունը՝ «իր» ազգային պետություններ կազմելու համար»[1]։

Հենց այդպես վարվեց կոնտրrevolyուցիոն հայկական «ազգային խորհուրդը», որն էապես դաշնակցական խորհուրդ էր և որը դարձավ հայ ժողովրդին ստրկացնող ու Հայաստանն օտարերկրյա իմպերիալիստներին վաճառող օրգան։ Անդրկովկասի ռեակցիոն ուժերը բացարձակ թշնամական դիրք բռնեցին դեպի Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ revolyուցիան։ Այդ ուժերի ջանքերով 1917 թ. նոյեմբերին Անդրկովկասում կազմակերպվեց կոմիսարիատ, որն իրեն հայտարարեց Անդրկովկասի միակ իշխանությունը և չճանաչեց սովետական իշխանությունը, մինչդեռ Սովետական Ռուսաստանի կառավարությունը Կովկասում նշանակել էր իր արտակարգ կոմիսարին՝ ի դեմս ընկեր Սա. Շահումյանի։ Այսպիսով՝ փաստորեն Անդրկովկասում ստեղծվել էին կոնտրrevolyուցիոն կոմիսարիատի և Սովետական Ռուսաստանի կառավարության արտակարգ կոմիսարի իշխանությունները,

1 Ի. Վ. Ստալին — «Մարքսիզմը և ազգային-գաղութային հարցը», 1938 թ., Երևան, Պետհրատ, էջ 83—84։

ընտրում դրանցից մեկը (Անդրկովկասյան կոմիսարիատը) հենված էր անդրկովկասյան ռեակցիայի և օտարերկրյա ինտերվենտների ավիների վրա, երկրում չունենալով ոչ մի համակրանք ու հեղինակություն, իսկ մյուսը՝ Սովետական Ռուսաստանի արտակարգ կոմիսարը՝ հենված էր Անդրկովկասի ժողովուրդների ամենալայն մասսաների ու Սովետական Ռուսաստանի ջերմ աջակցության և օգնության վրա։

Հակառակ Անդրկովկասյան կոմիսարիատի ջանքերի, Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի բանվորներն ու գյուղացիները ջերմորեն էին արձագանքում Սովետական Ռուսաստանի և նրա կովկասյան կոմիսարի բոլոր ձեռնարկումներին։ Այսպես, երբ սովետական իշխանությունը ցրեց Սահմանադիր ժողովը որպես կոնտրռևոլյուցիոն մարմին, Բաքվում, Թբիլիսիում, Բաթումիում, Ալեքսանդրոպոլում, Ղարսում, Սարիղամիշում տեղի ունեցան բանվորների ու աշխատավորների բազմամարդ միտինգներ, որոնք հավանություն տվին սովետական իշխանության այդ քայլին։ Ալեքսանդրոպոլում 1918 թ. հունվարի 21-ին տեղի ունեցած բանվորական միտինգն իր բանաձևի մեջ ասում էր. «Անհրաժեշտ էր ժողովրդական կոմիսարների [Մորիդի] այդ անգնահատելի քայլը հանդեպ մի այնպիսի մարմնի, որն իր կազմով ոչ մի պաշտոնյան չի կարող հանդիսանալ բանվորության և չքավոր գյուղացիության, այլև նույնիսկ նրանց մեծամասնության արտահայտիչը չէ»[1]։

Երբ կոնտրռևոլյուցիոն կոմիսարիատը որոշում ընդունեց Ստ. Շահումյանին, որպես Սովետական Ռուսաստանի արտակարգ կոմիսարի, ձերբակալելու մասին, Հայաստանում տեղի ունեցան բազմաթիվ բողոքի միտինգներ։ Այսպես, Ալեքսանդրոպոլում գումարված կոշկակար բանվորների միտինգն անարգանքի սյունին գամելով կոմիսարիատի այդ ռեակցիոն որոշումը, իր բանաձևում գրում էր. «... Ով դեմ է Շահումյանին, դեմ է մեզ՝ պրոլետարներիս... Ով դեմ է Շահումյանին, դեմ է ռուսական մեծ հեղափոխությանը, կարմիր Պետրոգրադին, որովհետև նրանք են, որ նշանակել են նրան [Շահումյանին] Կովկասի կոմիսար մինչև խորհուրդների գումարելը, որպեսզի երկիրը անարխիայի և հակահեղափոխության գրկից ազատեն»[2]։

Սարիղամիշի գյուղացիական դեպուտատների սովետը պահանջում էր, որպեսզի Թբիլիսիում գումարվի Անդրկովկասի բանվորների, զինվորների, գյուղացիների դեպուտատների սովետների համաժողով՝ երկրի իշխանության հարցը վճռելու համար, որպեսզի Թբիլիսիում «անմիջապես ստեղծվի Համառուսական ժողովրդական կոմիսարների Սովետի ներկայացուցչություն՝ երկրամասը կառավարելու համար»[3]։

Այս փաստերի շարանը կարելի է երկարացնել, բայց բերված օրինակներն էլ բավական են ցույց տալու ռևոլյուցիոն այն խանդավառ տրամադրությունը, որով համակված էին Հայաստանի բանվորներն ու գյու-

---

1 «Բանվորի կռիվ», 1918 թ., № 23։

2 «Բանվորի կռիվ», 1918 թ., № 4։

3 „Кавказский рабочий", 1917 թ., № 219։

դացիները, անսասանորեն պաշտպան կանգնելով Սովետական Ռուսաստանին։

Անդրկովկասում 1917—20 թ. թ. կատարվող իրադարձությունները, բանվորների ու գյուղացիների revolutionիոն ելույթները և նրանց համերաշխությունը Սովետական Ռուսաստանի բանվորների ու գյուղացիների հետ, ամբողջովին հաստատում են ընկեր Ստալինի այն միտքը, թե՝

«Հոկտեմբերյան հեղաշրջումը միայն ամբապնդեց ծայրամասերի բանվորների ու գյուղացիների դաշինքը Ռուսաստանում բանվորների ու գյուղացիների հետ՝ ոգեշնչելով սոցիալիզմի հաղթանակի հավատով...

Այսպես կազմավորվեց ամբողջ Ռուսաստանի բանվորների ու գյուղացիների սոցիալիստական դաշինքն *ընդդեմ Ռուսաստանի ծայրամասերի ազգային-բուրժուական «կառավարությունների» հակահեղափոխական դաշինքի*[1]։

Սովետական Ռուսաստանի նկատմամբ աճող համակրանքի և ազդեցության դեմ կռվելու, օտարերկրյա իմպերիալիստների պլանները կատարելու և Սովետական Ռուսաստանի ու Անդրկովկասի բանվորների և գյուղացիների՝ ընկեր Ստալինի հիշատակած սոցիալիստական գաշինքի դեմ կռվելու նպատակով, Անդրկովկասի reակցիոն ուժերը, հանձին Սեյմի, 1918 թ. ապրիլի 9-ին որոշում ընդունեցին Անդրկովկասը Սովետական Ռուսաստանից անջատելու մասին։ Անդրկովկասի կոնտրrevolutionերներն այդ ակտով ձգտում էին խեղդել revolutionիոն շարժումն Անդրկովկասում և վերջինս օտարերկրյա ինտերվենտների համար ռազմական պլացդարմ դարձնել Սովետական Ռուսաստանի դեմ։ Ընկեր Ստալինը «Սովետական իշխանության քաղաքականությունը Ռուսաստանում ազգային հարցի վերաբերմամբ» իր հոդվածում խոսելով Սովետական Ռուսաստանից անջատված Անդրկովկասի reակցիոներների մասին, ասում էր.

«Ծայրամասերը Ռուսաստանից անջատելու պահանջը, որպես կենտրոնի ու ծայրամասերի հարաբերությունների ձև, պետք է բացատրվի ոչ միայն այն պատճառով, որ տյդ պահանջը հակասում է կենտրոնի և ծայրամասերի միջև դաշինք հաստատելու հարցի դրմանն իսկ, այլև, ամենից առաջ, այն պատճառով, որ այն արմատապես հակասում է ինչպես կենտրոնի, այնպես էլ ծայրամասերի ժողովրդական մասսաների շահերին։ Այլևս չխոսելով տյն մասին, որ ծայրամասերի անջատումը կխարխլեր Արևմուտքի ու Արևելքի ազատագրական շարժումը խթանող կենտրոնական Ռուսաստանի հեղափոխական հզորությունը՝ անջատված ծայրամասերն իրենք անխուսափելիորեն միջազգային իմպերիալիզմի ստրուկի դրության մեջ կընկնեին։ Բավական է մի հայացք գցել Ռուսաստանից անջատված Վրաստանի, Հայաստանի, Լեհաստանի, Ֆինլանդիայի և այլոց վրա, որպեսզի պահպանել են անկախության միայն տեսքը, իսկ իրականում դարձել են Անտանտի անպայման վասալները, բավական է, վերջապես, մտաբերել մոտ անցյալում Ուկրաինայի ու Ադրբեջանի գլխին եկածը, երբ առաջինին կողոպտում էր գերմանական

[1] *Ի. Վ. Ստալին—«Մարքսիզմը և ազգային-գաղութային հարցը», 1938 թ., Քաղհրատ, Երևան, էջ 88 (ընդգծումն իմն է. Ռ. Փ.)։*

կապիտալը, իսկ երկրորդին՝ Անտանտը, որպեսզի հասկանանք ծայրամասերը միջազգային ներկա պայմաններում անջատելու պահանջի ամբողջ հակահեղափոխականությունը»[1]:

1918 թ. մայիսի 26-ին Անդրկովկասյան Սեյմը լիկվիդացիայի ենթարկվեց, դրան հետևեց մենշևիկյան Վրաստանի «անկախությունը» (մայիսի 26-ին), մուսավաթական Ադրբեջանի «անկախությունը»(մայիսի 27-ին), դաշնակցական Հայաստանի «անկախությունը» (մայիսի 28-ին): Բուրժուական այդ ռեսպուբլիկաների «անկախությունը» լոկ ձևական բնույթ ուներ և դրանցից և ոչ մեկը փաստորեն անկախություն չստացավ:

«Այսպես կոչված անկախ Վրաստանի, Հայաստանի, Լեհաստանի, Ֆինլանդիայի և այլոց՝ այսպես կոչված անկախությունը միայն խարուսիկ տեսք է, որն սքողում է այդ, թող ներվի ասել, պետությունների լիակատար կախումն իմպերիալիստների այս կամ այն խմբից»[2]:

Հայաստանը կոնտրռևոլյուցիոն դաշնակների տիրապետության օրոք ուներ հենց այդպիսի խարուսիկ անկախություն և գտնվում էր Անտանտի գերիշխանության ներքո:

1918—20 թ.թ. Անդրկովկասի «ռեսպուբլիկաների» վիճակը—դա պարզապես վասսալական պետությունների վիճակ էր: Հայաստանի, Վրաստանի անկախությունը ձևական բնույթ ուներ, այդ երկրները պարզապես անգլո-ֆրանսիական իմպերիալիզմի վասսալներն էին. անգլո-ֆրանսիական իմպերիալիզմի համար կարևոր էր պահպանել այդ երկրների ձևական անկախությունը և նրանց օգտագործել Սովետական իշխանության դեմ կռվելու համար: Անգլո-ֆրանսիական իմպերիալիզմի այդ տենդենցը որոշակիորեն արտահայտել էր դաշնակից զորքերի հրամանատար-գեներալ Տոմսոնը, որը 1918 թվին հրապարակած իր դեկլարացիայի մեջ գրում էր. «Դաշնակից պետությունները, ինչպես նաև նոր ռուսական կառավարությունն Ուֆայում, որի հետ նրանք (այսինքն՝ դաշնակից պետությունները—Ռ. Փ.) համաձայնեցված են գործում, չեն ճանաչում ոչ մի անկախ կազմակերպում, որոնք ստեղծվել են Ռուսաստանում և չեն վերաբերվի նրանց իբրև այդպիսիների: Նրանց գործունեության խնդիրն է.

1. Վերականգնել Ռուսաստանի կովկասյան փոխարքայությունը...»:

Գեներալ Տոմսոնի այս խոստովանությունը պարզ ապացույց է այն բանի, որ Անդրկովկասը իմպերիալիստական Անտանտի զորքերի կողմից օկուպացիայի չենթարկվելու շրջանում իրական անկախություն չուներ:

II

Ի՞նչ էր ներկայացնում Հայաստանը կոնտրռևոլյուցիոն դաշնակության տիրապետության շրջանում: Այդ հարցը պարզ ու հստակ պատասխանը տվել

---

1 *Ի. Վ. Ստալին—«Մարքսիզմը և ազգային-գաղութային հարցը», 1938 թ., Պետհրատ, Երևան, էջ 95 (ընդգծումն իմն է. Ռ. Փ.):*

2 *Նույն տեղ, էջ 96:*

են մեծ Մտալինի լավագույն դինակիցները՝ ընկ. ընկ. Ս. Մ. Կիրովը և Ա. Ի. Միկոյանը 1919 թ. հունիսի 3-ին Լենինին ու Մտալինին ուղղած իրենց հեռագրի մեջ։ 1919 թ. ընկեր Միկոյանը ընկեր Կիրովին ներկայացնում է մի զեկուցագիր, որի մեջ մանրամասն վեր է լուծում Անդրկովկասում տիրող դրությունը։ Ս. Մ. Կիրովը, ելնելով այդ զեկուցագրից, Լենինին և Մտալինին մի հեռագիր է ուղարկում, որի մեջ դաշնակցական Հայաստանի ներքին ու արտաքին դրությունը բնութագրված է այսպես.

«Հայկական կառավարությունը, Հայաստանն ընդարձակելու վիթխարի պլան ունենալով և վայելելով դաշնակիցների ու Դենիկինի համակրանքն ու աջակցությունը, ամեն կերպ պաշտպանում է նրանց, իսկ Դենիկինի հետ գտնվում է ռազմական դաշինքի մեջ։ Իշխանության գլուխ կանգնած են կադետներն ու դաշնակները... Երկրի ներսում անարխիա է, գինված հրոսակախմբերի գերիշխանություն, սովամահություն, համաճարակ հիվանդություններ, դրան ավելացրած մահմեդականների կազմակերպած կոտորածներ, *որոնք ամեն րոպե կարող են պատերազմ առաջացնել Ադրբեջանի հետ»*[1]։

Դաշնակցական տիրապետությունը հայ ժողովրդի պատմության ամենամռայլ էջերից մեկն է, լի արտասուքով ու տանջանքներով, արյունով և զրկանքներով։ Դաշնակցական տիրապետությունը հայ ժողովրդին բերեց մահաբեր պատերազմների ու արյունահեղ կոտորածների մի ամբողջ շարան, որը գերեզման տարավ մեր ժողովրդի տասնյակ հազարավոր զավակներին։

«Պետությունը,—1918 թվին գրում էր «Русская Дума»-ն դաշնակցական Հայաստանի մասին,—չունի փոստա-հեռագրական հաղորդակցություն, արդյունաբերություն, ապրանքաշրջանառություն, ֆինանսներ, տարրական իրավակարգ, կյանքի ու գույքի ապահովություն։ Մի պետություն, որի բնակչության 80 տոկոսը զրկվել է իր հայրենիքից և վերածվել գաղթականների... գաղթականները լցրել են համարյա թե ռեսպուբլիկայի ամբողջ տերրիտորիան։ Նրանց թիվը հասնում է մինչև 400 հազարի։ Եթե դրա հետ նկատի ունենանք, որ ըստ Բաթումի պայմանագրի՝ Թյուրքիային անցան հացահատիկային լավագույն ռայոնները, ինչպես օրինակ՝ Սարգամասրաբադի, Ալեքսանդրոպոլի, Էջմիածնի մի մասը, ապա ռեսպուբլիկայի պահեստավորման պատկերը բավականաչափ պարզ կդառնա»[2]։

Այս դրությունն ավելի ու ավելի խորացավ կոնտրևոլյուցիոն դաշնակների 2 և կես տարվա տիրապետության ամբողջ ժամանակաշրջանում։ Եղած տնտեսատնտեսական արդյունաբերությունը շարունակեց քայքայվել։ Գյուղատնտեսությունը ևս ապրում, տոկալի չափերով կրճատվեցին ցանքերը, մասամբ ոչնչացան կոտորվեցին անասունները, ընկավ գյուղատնտեսության եկամտաբերությունը, նվազեց բանող ուժը։ Կանգ առան երկաթուղիները՝ վառելանյութի պակասության, երկաթուղում տիրող անարխիայի և մասնավորապես սաբոտաժի հետևանքով։ Արտադրությունը,

[1] С. М. Киров—„Статьи, речи, документы", Партиздат ЦК ВКП(б), 1936 г., стр. 143 *(ընդգծումն իմն է. Ռ. Փ.)։*

[2] «Русская Дума», 1918 г., № 4, стр. 42.

1913 թվի համեմատությամբ, 1919 թ. կազմում էր միայն 8—10 տոկոսը։ Փակվեցին հատ ու կենտ գործող մանր ձեռնարկությունները։ 1919 թ. դարու սանքերի տարածությունը կազմում էր, 1913 թ. համեմատությամբ, 22,1 տոկոսը, ցորենի տանքերը՝ 40,1 տոկ., բամբակինը՝ 5,5 տոկ., կարտոֆիլինը՝ 28,3 տոկ., կտավահատինը՝ 14,7 տոկ., բրնձինը՝ 30 տոկ. և այլն։ Ներքին կոտորածների և անընդհատ պատերազմների հետևանքով, 1918—20 թ.թ. Հայաստանում հիմնովին կործանվել են 156 գյուղ և կիսաքանդ են եղել 138 գյուղ։ Եթե սրան ավելացնենք այն, որ կոնտրռևոլյուցիոն դաշնակցական կառավարության նացիոնալիստական քաղաքականության հետևանքով, հիմնովին ոչնչացվեցին աղրբեջանական մի շարք գյուղեր, իրենց բնակչությամբ, դրությունն ավելի հասկանալի կդառնա։ Տնտեսության այս անկման և անընդհատ կրկնվող պատերազմների հետևանքով կյանքն օրեցօր թանգանում էր, ապրանքների և մթերքների գներր աճում էին կատաստրոֆիկ չափերով։ Այսպես՝ 1920 թ. փետրվարի 22-ին, բստ առևտրական պալատի հրապարակած բյուլետենի, ցորենի փութն արժեր 1800 չեկ-ռուբլի, դարու փութը՝ 1500 ռուբլի, հաճարի փունտը՝ 60 ռուբլի, բրնձի փութը՝ 1800 ռուբլի, կարտոֆիլի փութը՝ 800 ռուբլի, ոչխարի մսի ֆունտը՝ 110 ռուբլի, մի ձուն՝ 15 ռուբլի և այլն։ Իսկ արդեն մի շաբաթ հետո ցորենի փութը դարձել էր 2200 ռուբլի, գարունը՝ 1700 ռուբլի, բրնձինը՝ 2800 ռուբլի։ Մթերքների թանգացումը շարունակվեց ամբողջ 1920 թ. և աստակացավ, մանավանդ 1920 թ. դաշնակո-թյուրքական պատերազմի շրջանում։ Տնտեսական այդ ծանր կացության մասին է նաև վկայում ՌՍՖՍՌ Ազգությունների գործերի ժողկոմատի օրգան «Жизнь национальностей» լրագիրը, որը գրում էր. «Հայաստանում բնակչությունը բրիտանական իմպերիալիստների «հովանավորության» տակ գանվում է էլ ավելի վատթար դրության մեջ, քան երբևէ նա յեղել է։

Անգլիացիներն այնտեղ վոչ մի ապրանք, պարենային ոչ մի մթերք չեն բերել, բայց միաժամանակ նրանք այնտեղից արտահանել են հացը, ուրիշ խոսքով՝ այնտեղ նրանք անց են կացնում իրենց սովորական «պատերազմը» քաղաքականության։

Ահա թե ինչու սովը Հայաստանում դարձել էր նույնպիսի «ամենօրյա» երևույթ, ինչպես Հնդկաստանում»[1]։

Բանվորներն ամենածանր պայմաններում աշխատում էին օրական 14—16 ժամ. առանձնապես ծանր էր երկաթուղային և ապարանական բանվորների դրությունը։ Կոնտրռևոլյուցիոն դաշնակների տիրապետության օրոք գյուղացիությունը շարունակեց ծնել հողազուրկ, մինչդեռ հողերը կենտրոնացվում էին շահագործողական տարրերի՝ կուլակների և նորատեղծ դաշնակցական կալվածատիրության ձեռքում։ Հողազրկությունը, հարկային ճնշումը, սեկվեստրները և դաշնակցական բանդիտների բռնությունները գյուղացիության մեջ խորը վրդովմունք և բուռն ատելություն էին առաջ բերում կոնտրռևոլյուցիոն դաշնակների դեմ։ Այդ ամենը և երկրում տիրող սովը, համաճարակ հիվանդությունները, բացարձակ ընչազրկությունը և

[1] «Жизнь национальностей», 1919 г., № 24.

գաղթականական հոծ մասսաների սովալլուկ վիճակը դրությունը դարձնում էին միանգամայն անտանելի։

Հայաստանի բանվորներն ու գյուղացիները անընդհատ ելույթներ, գործադուլներ էին կազմակերպում դաշնակցական կառավարության դեմ և դենքով պաշտպանում իրենց իրավունքներն ու շահերը։ Դաշնակցական կառավարությունը հալածանքի էր ենթարկում բոլշևիկյան կազմակերպություններին, որոնք Լենինի-Ստալինի պարտիայի դեկավարությամբ պայքարում էին դաշնակների բռնապետական ռեժիմը տապալելու, սովետական ազատ դեմոկրատիկ կարգեր ստեղծելու համար, հայ ժողովրդի բախտն անխզելի թելերով կապելու Հոկտեմբերյան Սոցիալիստական ռևոլյուցիայի բախտի հետ։ Հայաստանի բանվորներն ու գյուղացիները հերոսաբար պայքարում էին իրենց երկրից դուրս քշելու օտարերկրյա ինտերվենտներին՝ անգլո-ֆրանսիական իմպերիալիստներին։ Հայաստանի բանվորներն ու գյուղացիները ոչ մի րոպե չթուլացրին ռևոլյուցիոն իրենց պայքարը սովետական իշխանության համար։ 1917—20 թ. թ. անընդհատ շարունակվում էին բանվորների ու գյուղացիների ռևոլյուցիոն ելույթները։ Այսպես՝ 1917 թ. գործադուլ արին Երևանի ջրմուղի բանվոր-ծառայողները, որոնք պահանջում էին «ավելացնել ամսական աշխատավարձը, համապատասխան՝ կյանքի թանգության պայմաններին»[1]։ Այդ թվին գործադուլ արին նաև միլիցիայի շարքային կազմը, Տեր-Ավետիքովների մեխանիկական գործարանի բանվորները, Երևանի գիմնազիայի աշակերտները[2], որոնք պահանջում էին ավելացնել աշխատավարձը, դուրս վռնդել բանվորներին և աշակերտներին ատելի ադմինիստրատիվ աշխատողներին։ Մոշոր գործադուլ տեղի ունեցավ կալվածատիրուհի Դեդովայի, այսպես կոչված «Кир» կալվածքում։ Այդ կալվածքի բանվորներն ու բատրակները գտնվում էին նյութական ամենածանր պայմաններում. նրանք օրվա մեջ աշխատում էին մինչև 16 ժամ, ամիսներով աշխատավարձ չէին ստանում, քաղաքական իրավունքներից զրկված էին։ Գործադուլ անելով՝ բանվորները պահանջում էին բարելավել իրենց դրությունը, հնարավորություն տալ կազմակերպելու բանվորական կոմիտե և ժամանակին վճարել աշխատավարձը։ Բանվորների այդ գործադուլը վերջացավ նրանց մասնակի հաջողությամբ[3]։ Մոշոր գործադուլ տեղի ունեցավ նաև «Արաղզայան» կալվածքում. այդ գործադուլը տևեց 2—3 ամիս[4]։

1919 թվին Ալեքսոլի երկաթուղային բանվորները և ադմինիստրացիայի մեջ կոնֆլիկտ առաջացավ պարենավորման հարցի շուրջը։ Բանվորները ցույց կազմակերպեցին ադմինիստրացիայի դեմ և պահանջեցին բարելավել իրենց նյութական վիճակը։ Սակայն կոնտռևոլյուցիոն դաշնակցական իշխանությունը դինված ուժով ճնշեց բանվորների այդ ելույթը և ձերբակալեց դրա կազմակերպիչներին։ Կոնտռևոլյուցիոն դաշնակ-

---

[1] Հայկական ՍՍՌ Պետարխիվ, ֆոնդ 32, գործ № 8, էջ 8։

[2] Նույն տեղ, ֆոնդ 32, գործ № 1, էջ 110։

[3] Նույն տեղ, ֆոնդ 32, գործ № 15 (ամբողջ գործը)։

[4] Նույն տեղ, գործ № 16։

գական իշխանության այդ վարմունքը բանվորության մեջ ուժեղ բողոք առաջացրեց։ Բանվորներն այս անգամ կազմակերպում են նոր բողոքի մեծ ցույց, որը, սակայն, ցրվում է ոստիկանության ուժերով։ Կոնտրռևոլյուցիոն դաշնակները ձերբակալում են 15 ցուցարար բանվորների։

1919 թվականի նոյեմբերի 28-ին № 4 գնացքը Երևանից Ալեքսոլ է հասնում 2 ժամ 10 րոպե ուշացումով, որովհետև երկաթուղային բանվորները գործադուլ էին կազմակերպել երկաթուղում տիրող միանգամայն անտանելի և կամայական ռեժիմի դեմ։ Կառավարությունը զենքի ուժով ստիպում է բանվորներին վերսկսել աշխատանքը։ 1920 թվի ապրիլի 8-ին երկաթուղային բանվորները նորից են գործադուլ կազմակերպում դրամի և ալյուրի պակասության պատճառով։ 1919 թվի հոկտեմբերի 30-ին Ալեքսոլի մասնավոր տպարանների բանվորները մի մեծ գործադուլ են կազմակերպում։ Գործադուլավորները տպարանատերերին ուղղած իրենց պահանջագրի մեջ պնդում էին ավելացնել աշխատավարձը, պակասեցնել աշխատանքի ժամերը, նկատի ունենալով, որ իրենք՝ բանվորները գտնվում են նյութական ծանր դրության մեջ և որ օրեցօր կյանքը թանգանում է։ Տպագրական բանվորների այս գործադուլը մասամբ վերջացավ բանվորների հաղթանակով։ Տպարանատերերի մի մասը բանվորների ճնշման տակ ստիպված էր ընդունել գործադուլավորների պահանջները։ Տպագրական բանվորների այդ գործադուլը տևեց երկու շաբաթից ավելի։

1920 թվին, Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի երրորդ տարեդարձի առթիվ, երկաթուղային բանվորները Սովետական Ռուսաստանի պատվին գործադուլ կազմակերպելով՝ առաջ են քաշում Հայաստանում սովետական իշխանության ստեղծելու պահանջը։ Բանվորներից հետ չէր մնում ռևոլյուցիոնորեն տրամադրված գյուղացիությունը, որը Լենինի-Ստալինի պարտիայի ղեկավարությամբ պայքարում էր իր ազատագրության համար։

Հոկտեմբերյան Սոցիալիստական ռևոլյուցիայի ազդեցության շնորհիվ ոչ միայն ամբողջ Ռուսաստանում, այլև նրանից ձևականորեն բաժանված Անդրկովկասում և Հայաստանում լայն ծավալ են ստանում ագրարային-գյուղացիական ռևոլյուցիոն շարժումները։ Ընկեր Ստալինը գրում էր, որ Անդրկովկասում ծավալված ագրարային-գյուղացիական շարժումների մեջ կարևոր դեր կատարեցին ճակատից վերադարձող, բոլշևիկորեն տրամադրված զինվորները, որոնք վերադառնում էին Ռուսաստան՝ հող ստանալու և սովետական իշխանությունը պաշտպանելու համար։ «Անդրկովկասի կոնտրռևոլյուցիոներները սոցիալիզմի դիմակի տակ» իր հոդվածում ընկեր Ստալինը գրում է.

«Ռազմաճակատից վերադարձող անդրկովկասյան զինվորներն ագրարային ռևոլյուցիա տարածեցին գյուղերում... Ճորտատիրական մնացորդների վերջին գիրքերը վճռական գրոհի ենթարկվեցին բոլշևիկացած զինվորների՝ գյուղացիների կողմից։ Պարզ է, որ Անդրկովկասյան կոմիսարիատի դատարկ խոստումները հողը գյուղացիներին վերադարձնելու մասին՝

արդեն չէին կարող բավարարել ագրարային ռևոլյուցիայի ալիքով բռնված գյուղացիներին»[1]։

Ընկեր Ստալինի այս հանճարեղ խոսքերի հաստատումն է հանդիսանում ագրարային-գյուղացիական այն շարժումը, որ տեղի էր ունենում նաև Հայաստանում՝ կոնտրռևոլյուցիոն դաշնակցության տիրապետության դեմ։ Ագրարային-գյուղացիական շարժումը, որ ղեկավարում էր բոլշևիկների պարտիան, լայն ծավալ էր սացել Հայաստանում։ Այդ շարժումն առաջադրում էր հողի կալվածատիրական սեփականության լիկվիդացիա, սովետական իշխանության ստեղծում, բուրժուական կոնտրռևոլյուցիոն դաշնակցական կառավարության տապալում։ Կալվածատիրական հողերի գրավում, կալվածքների հրկիզում, գյուղացիական սովետների կազմակերպում, կալվածատերերի վրա կատարվող հարձակումներ, ռևոլյուցիոն մարտական դրուժինաների կազմակերպում, հարկերը վճարելուց մասսայաբար հրաժարվել—ահա այն ընդհանուր երևույթները, որոնք կոնտրռևոլյուցիոն դաշնակների տիրապետության ժամանակ Հայաստանի գյուղում տեղի էին ունենում Լենինի-Ստալինի պարտիայի ղեկավարությամբ։

1918 թվի հոկտեմբերի 20-ին Սևանա լճի ափին զինված ընդհարում է տեղի ունենում գյուղացիների ու կոնտրռևոլյուցիոն դաշնակցական միլիցիայի միջև։ Բանն այն է, որ Սևանա լճում ձուկ որսալու իրավունքը կոնտրռևոլյուցիոն դաշնակցական կառավարությունը կապալով էր տվել խոշոր կապալառուներ Աֆրիկյանին, Մկրտիչ և Խաչատուր Զիրուխչյաններին։ Չնայած այդ հանգամանքին, Նորադուզ և Կշլաղ գյուղերի գյուղացիները միանգամայն արդարացի կերպով շարունակում էին ձուկ որսալ։ Կոնտրռևոլյուցիոն դաշնակցական կառավարությունը, կապալառու կուլակների շահերը պաշտպանելու համար, զինված խմբեր և պահակ է կարգում լճի ափին, սակայն այդ բոլորը չէն կարողանում մաղաչափ անգամ ընկճել գյուղացիներին, որոնք շարունակում են ձուկ որսալ, քանի որ այդ լիճը նրանց սեփականությունն էր։ Ահա այդ հողի վրա ընդհարում է տեղի ունենում։ Կապալառուները ներքին գործոց նախարարությանն ուղարկած հեռագրի մեջ հայտնում են, թե՝ «... Նորադուզ, Կշլաղ գյուղերը չեն թողնում որսալու ձուկ, իրենք են որսում, չճանաչելով ոչ մի իշխանություն։ Օրվա ժամերին զիմանալ չենք կարող ... եթե կառավարությունը չէր կարող զեսը պաշտպանել գյուղացիներից, չպետք է ծախեր...»[2]։ Այս հեռագրից հետո կառավարությունը կարգադրում է Նոր-Բայազետի դաշնակ միլլետ Բուրթել Թառումյանին պաշտպանել կապալառուների շահերը։ Միլլետը զինված ջոկատով աշխատում է հեռացնել գյուղացիներին. գյուղացիները զինված դիմադրություն են ցույց տալիս։ Այդ ընդհարման հետևանքով սպանվում են 4 հոգի, վիրավորվում են 3 հոգի։ Նոր-Բայազետի շրջանի գյուղացիները մասսայորեն հրաժարվում են կոնտրռևոլյուցիոն դաշնակցական կառավարության պահանջը կատարելուց։

---

[1] «Правда», 1918 թ., № 55—56։

[2] Հայկ. ՍՍՌ Պետարխիվ, ֆոնդ 69, գործ № 15, էջ 118։

Կոնտրռևոլյուցիոն դաշնակցական կառավարությունը պատերազմի նպատակների համար գյուղացիներից հաց էր հավաքում։ Գյուղացիները, որոնք ճնշվում, խեղդվում էին կուլակային շահագործումից և դաշնակցության բռնություններից, հրաժարվում են հաց տալ։ Վերին Ղարանլուղի գյուղացիները դաշնակցական լիազորին հայտարարում են, թե՝ գնացեք հայտնեցեք կառավարությանը, որ մենք չենք հպատակվում նրան...

Եվ գյուղացիների այդ դիմադրության շնորհիվ, կոնտրռևոլյուցիոն դաշնակցական կառավարությանը չի հաջողվում մի հատիկ անգամ հաց հավաքել Նոր-Բայազետի շրջանում։

Դարալագյազի շրջանի գյուղացիությունը ոչ միայն հրաժարվում է կոնտրռևոլյուցիոն դաշնակցական կառավարության հանդեպ որևէ պարտավորություն կատարելուց, այլև զինված դիմադրություն է ցույց տալիս դաշնակ խմբապետների ոտնձգություններին, գյուղերում ծեծում, ջարդում էին դաշնակ լիազորներին և դուրս քշում գյուղերից։ 1920 թ. սկզբին Նոր-Բայազետի, Ապարանի, Ղազախի շրջաններում գյուղացիական «անկարգություններ են տեղի ունենում հողային հարցի շուրջը»։ Ալիքուշակ գյուղում խմբապետների և գյուղացիների միջև ընդհարում է տեղի ունենում, որը վեր է ածվում հակակառավարական, ռևոլյուցիոն խոշոր ցույցի։ Շամշադինի շրջանի գյուղացիությունը միաձնական կերպով կոնտրռևոլյուցիոն դաշնակցական կառավարությունից պահանջում էր՝

«ա) Վերացնել զարապարհակը (պոդվոդ).

բ) Հետաձգել զորակոչը մինչև հունձքի վերջանալը, կամ գեթ զինվորները տեղվույն վրա թողնել։ Ազատել ատն միակները (նեցուկները).

գ) Հատուցանել մասամբ կռիվներու ատեն գյուղերում հասցրած վնասները.

դ) Մինչև հաջորդիկ ձմեռը շինել Իջևան-Շամշադին խճուղին, հասցնելով զայն մինչև Վերին Կարմիր աղբյուրը, որը համարել Շամշադինի կենտրոնը, հոն հասցնել նույնպես հեռախոս»։

Իհարկե, գյուղացիության այս պահանջները չիրականացան և չէին էլ կարող իրականացվել կոնտրռևոլյուցիոն դաշնակցական կառավարության կողմից։ Բայց այդ փաստաթուղթը ցայտուն կերպով նշում է ռևոլյուցիոն այն հանուռան տրամադրությունը, որով համակված էր Հայաստանի գյուղացիությունը։ Կոնտրռևոլյուցիոն դաշնակցական կառավարությունը, ի պատասխան այդ պահանջների, 1920 թ. հաստուկ որոշումով բանակ է կանչում ատն միակ կերակրող անձերին։

Շամշադնի շրջանի գյուղերում բոլշևիկներն ալ ևս կարողացել էին ստեղծել դինվորական ու գյուղացիական սովետներ, որոնք ունեին իրենց կարմիր գվարդիանները՝ վերահիշյալ գյուղերի ինքնապաշտպանության համար։ Գյուղացիության մեջ ընդհանրապես նկատվում էր հետզհետե աճող բոլշևիկյան տրամադրություն։

Այս փաստերը վկայում են գյուղացիության մեջ բոլշևիկների ազդեցության ամման մասին։ Պակաս հետաքրքրական չեն նաև բոլշևիկների կատարած համան աշխատանքն Ախտայի շրջանի գյուղերում։ Գոմանորում 1918 թվականին կազմակերպվում է ոչ միայն կոմբջիջ, այլև սովետ։ Այդ

սովետի կազմակերպման նախաձեռնությունը պատկանում է ճակատից վե-
րադարձած բոլշևիկ ղինվորներին։ Ծաղկունք գյուղում ռևոլյուցիոնորեն
տրամադրված երիտասարդությունը հիմնում է իր կազմակերպությունը, որն
ամբողջապես գտնվում էր բոլշևիկների ազդեցության տակ և ուներ իր
շտամպն ու կնիքը հետևյալ մակագրությամբ՝ „Коммунистический союз
молодежи с. Цахкунк“։ Գոմաձորում և Ելենովկայում կազմակերպվում
են մարտական դրուժինաներ։

Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի ալիքը թափան-
ցելով Անդրկովկասյան «ռեսպուբլիկանները», ուժեղ չափով ռևոլյուցիոնացրեց
Անդրկովկասի և Հայաստանի աշխատավորությանը։ Անդրկովկասյան բան-
վորներն ու գյուղացիները ինտերնացիոնալ պայքար էին տանում կոնտ-
ռևոլյուցիոն մենշևիկների, մուսավաթականների ու դաշնակների բռնակա-
լությունը խորտակելու, սովետական իշխանություն հաստատելու և Սովե-
տական Ռուսաստանի հետ կապվելու համար։ Կարմիր Բանակի զորամասերն
արագ թափով մոտենում էին Անդրկովկասի սահմաններին։ Կարմիր բա-
նակի զորամասերը, որոնք կովկասյան ճակատում կռվում էին Դենիկինի
բանդաների դեմ, Օրջոնիկիձեի, Կիրովի, Միկոյանի ղեկավարությամբ հա-
ջող կերպով իրագործում են ընկեր Ստալինի ստրատեգիական պլանը՝ գրա-
վում են Ռոստովը, Հյուսիսային Կովկասը և հասնում են Բագու։ Կարմիր
բանակի այդ հաջողությունները ոգևորում և պայքարի եռանդով լցնում են
Անդրկովկասի ու Հայաստանի աշխատավորների սրտերը։ Կարմիր բանակի
ամեն մի նոր նվաճումը, ամեն մի նոր հաղթանակը ռևոլյուցիոն պայքա-
րի սիմվոլ է դառնում Հայաստանի աշխատավորության համար։ Հայաս-
տանի աշխատավորների ռևոլյուցիոն իանդավառությունն իր գագաթնա-
կետին է հասնում, երբ 11-րդ բանակի զորամասերը ընկերներ Օրջոնիկիձեի,
Կիրովի և Միկոյանի ղեկավարությամբ ապրիլի 28-ին օգնության են հաս-
նում Ադրբեջանի ապստամբած պրոլետարիատին և գյուղացիությանը՝
տապալելու մուսավաթականների դաժան ռեժիմը և հաստատելու սովետա-
կան իշխանություն։ Ադրբեջանում սովետական իշխանության հաստատումը
առաջադրում է բոլշևիկյան պայքարի բոցավառ մի լոզունգ, որը համակում
է Հայաստանի բոլոր աշխատավորներին, մոբիլիզացիայի ենթարկելով նրանց
ուժերը սովետական իշխանության համար մղվող պայքարում։

1920 թ. մայիսմեկյան ցույցերը Հայաստանում վեր են ածվում աշ-
խատավոր մասսաների համերաշխության ցույցերի՝ հօգուտ Սովետական
Ռուսաստանի, հօգուտ Սովետական Ադրբեջանի և արտահայտում են մաս-
սաների պատրաստակամությունը խորտակելու կոնտրռևոլյուցիոն դաշնակ-
ների լուծը։ Մայիսի 1-ին Ալեքսոլի, Ղարաքիլիսայի, Ղարսի, Ն. Բայազետի
և մյուս շրջանների աշխատավորներն իրենց դրոշների վրա գրել էին. «Մու-
սավաթական Բագուն ընկավ, հերթը դաշնակցական Երևանինն է», «Կեց-
ցե Խորհրդային Հայաստանը», «Կեցցե Անդրկովկասի բանվորների ու գյու-
ղացիների իշխանությունը», «Կեցցեն Խորհրդային Ռուսաստանն ու Խորհր-
դային Ադրբեջանը» լոզունգները, որոնք նրանց պայքարի են կոչում կոնտր-
ռևոլյուցիոն դաշնակցության դեմ։

1920 թ. մայիսին կոնտրռևոլյուցիոն դաշնակցական կառավարության

դեմ ապստամբություններ տեղի ունեցան Ալեքսանդրոպոլում, Ղարսում, Սարիղամիշում, Ղարաքիլիսայում, Ջանգեզուրում, Ն. Բայազետում, Դիլիջան-Իջևանում և այլուր։ Այդ ապստամբությունների հետևանքով տեղերում ստեղծվում էր սովետական իշխանություն, տապալվում էր դաշնակցական բռնակալների իշխանությունը։ Ապստամբությունների մեջ ընգգրկված էր Հայաստանի բանվորների, գյուղացիների և զորքի մեծ մասը։ Ապստամբությունները ղեկավարում էին Լենինի-Ստալինի մեծ պարտիայի հավատարիմ զավակները, հայ ժողովրդի տաղանդավոր զավակները՝ ընկ. ընկ. Ղ. Ղուկասյանը, Ս. Մուսայելյանը, Ֆ. Ղարիբջանյանը, Սա. Ալավերդյանը և ուրիշները, որոնք իրենց կյանքը զոհեցին հանուն սովետական իշխանության, հանուն հայ ժողովրդի ազատագրության։

Մայիսյան ապստամբությունները դաժանորեն ճնշվեցին։ Կոնտրռևոլյուցիոն դաշնակները արյան մեջ խեղդեցին հայ ժողովրդի հերոսական այդ սխրագործությունը։ Ապստամբության ճնշման գործում կոնտրռևոլյուցիոն դաշնակներին օգնեցին ոչ միայն անգլո-ֆրանսիական իմպերիալիստները, այլև հայ ժողովրդի ստոր թշնամիները, տրոցկիստական-նացիոնալիստական բուրժուական տարրերը, որոնք խցկվել էին ապստամբների շարքերը և գաղտնի դաշինք ունեին կոնտրռևոլյուցիոն դաշնակցության հետ։ Ժողովրդի այդ թշնամիների դավաճանությունն ապստամբության պարտության պատճառներից մեկն էր։

Բայց մայիսյան ապստամբություններն անհետևանք չմնացին. հայ ժողովուրդը, լի հավատով, Լենինի-Ստալինի պարտիայի ղեկավարությամբ համառորեն շարունակեց իր հերոսական պայքարը սովետական կարգերի համար, իր ազատագրության համար, օտարերկրյա և սեփական կեղեքիչներին երկրից դուրս քշելու համար։

III

Կոնտրռևոլյուցիոն դաշնակցական կառավարությունն արյան մեջ խեղդեց Հայաստանի բանվորների և գյուղացիների առաջին մասսայական համաժողովրդական ապստամբությունները։ Երկրում ամենադաժան տեռորի ռեժիմ սահմանելով, կոնտրռևոլյուցիոն դաշնակցական կառավարությունը ցանկանում էր արմատախիլ անել ռևոլյուցիոն ամեն մի շարժում։ Այդ էին ցանկանում նաև Անգլիայի, Ֆրանսիայի իմպերիալիստների շահերը, իմպերիալիստներ, որոնք գործոն օգնություն էին ցույց տալիս կոնտրռևոլյուցիոն դաշնակցական կառավարությանը։ Նրանք չէին կարող հանդուրժել Հայաստանի բանվորների ու գյուղացիների ռևոլյուցիոն ելույթները, որովհետև այդ ռևոլյուցիոն շարժումներն ուղղված էին ոչ միայն կոնտրռևոլյուցիոն դաշնակցական կառավարության դեմ, այլև Անտանտի տերությունների և նրանց գաղութային քաղաքականության դեմ։

1920 թ. օգոստոսին Թյուրքիայի և կոնտրռևոլյուցիոն դաշնակցական կառավարության միջև նոր պատերազմ սկսվեց, որը հրահրվում էր Անտանտի կողմից։ Պատերազմը շատ թանդ նստեց ինչպես հայ ժողովրդի, այնպես և Թյուրք ժողովրդի վրա։ Այդ պատերազմում Անտանտը դաշնակներին խոս-

ատնում էր տալ զենք, ռազմամթերք, զորք, հագուստեղեն, սպաներ և այլն։ Թյուրքիայի դեմ ուղղված պատերազմն ըստ էության նախապատրաստվում և ծրագրվում էր ոչ թե Երևանում, այլ Լոնդոնում և Փարիզում, անգլիական ու ֆրանսիական կառավարությունների կաբինետներում։ Իրենց երկրների հասարակական կարծիքն սպեկուլյացիայի ենթարկելու և նոր պատերազմի շուրջը բարենպաստ կարծիք ստեղծելու նպատակով՝ նորից հրապարակ է հանվում «հայի դատը» պաշպանելու չարանենգ և շինծու իմպերիալիստական պրոպագանդան։ Լոնդոնում և Փարիզում ամենուրեք հրապարակային ճառեր են արտասանվում «բազմաչարչար» հայ ժողովրդի մասին, որոշումներ են կայացվում դաշնակցական բանակին «զենք ու ռազմամթերք հայթայթելու» մասին, հորինվում են դիվանագիտական կոմբինացիաներ և այլն, և այլն։

Այդ բոլորից թև առնելով՝ կոնտրռևոլյուցիոն դաշնակցական կառավարությունը երկրի ներսում նոր թափով է ծավալում բուրժուա-նացիոնալիստական պրոպագանդան, ժողովրդին «մշակում» է «գարավոր թշնամու» դեմ կռվելու համար, փառաբանում է «անգլիական զենքի ուժը», խոսում է հայ ժողովրդի «մեծ բարեկամների» «գթասրտության» մասին։ Կոնտրռևոլյուցիոն դաշնակցական կառավարության պատվիրակությունն արտասահմանից հեռագիր հեռագրի հետևից է ուղարկում Երևան՝ հաղորդելով, որ դաշնակիցները վորոշել են զենք տալ, զորք տալ և այլն։ Իսկ կոնտրռևոլյուցիոն դաշնակցական կառավարությունն էլ, իր հերթին, դաշնակիցներին չխըրտնեցնելու համար, երկրի ներսում խաչով հրահանգում է, որ դաշնակիցների հասցեին ոչ մի բացասական խոսք չգրվի։ Այսպես, կոնտրռևոլյուցիոն դաշնակցական կառավարության նախարարապետը 1920 թ. ներքին գործերի նախարարին գրում է, որ «մամուլի զանազան օրգաններում պակաս չեն հաճախ այնպիսի հոդվածներ ու լուրեր, որոնք ուղղված են դաշնակիցների դեմ, ինչ որ վատ կերպով կանդրադառնան մեր պետական շահերի վրա. որպեսզի միանգամ ընդմիշտ վերջ տրվի անցանկալի այդ երևույթին, անհրաժեշտ եմ համարում, որ ներքին գործոց նախարարությունը անհրաժեշտ հրահանգներ տա, որպեսզի զգուշանան դաշնակիցների և ի մասնավորի Անգլիո դեմ ուղղված գրություններ հրապարակելիս»[1]։ Արգելելով «բացասական խոսք» ընել Անգլիայի դեմ, կոնտրռևոլյուցիոն դաշնակներն այդ ամբողջ ազմուկը հանում էին, որպեսզի հայ ժողովրդին նորից թունավորեն նացիոնալիստական առելությամբ դեպի թյուրք ժողովուրդը և նրան ոտքի հանեն կռվելու թյուրք ժողովրդի դեմ՝ հօգուտ ինտերվենտների և կոնտրռևոլյուցիոն դաշնակների շահերի։ Այսպես էր Անտանտը կոնտրռևոլյուցիոն դաշնակցական կառավարությանը քըս-քըս անում Թյուրքիայի դեմ։

1920 թ. օգոստոսի 11-ին պատերազմ սկսվեց Թյուրքիայի և կոնտրռևոլյուցիոն դաշնակցական կառավարության միջև Արզվին—Սարիղամիշ—Սողը—Սուրմալու ընդհանուր ճակատով։ Պատերազմական գործողությունները ծավալվեցին ամենայն դաժանությամբ։ Թյուրքական բանակը հաջողությամբ առաջ էր շարժվում և արդեն սեպտեմբերի սկզբին գրավեց Սարիղամիշը։ Սարիղամիշի անկումից հետո, որ ծանր հարված էր կոնտրռևո-

1 Հայկ. ՍՍՌ Պետարխիվ, ֆոնդ 2/65, գործ № 116, էջ 320։

լյուցիոն դաշնակցական կառավարության համար, վերջինս Վանանդի նահանգը հայտարարեց զինվորական դրության մեջ, քաղաքացիական ու զինվորական ամբողջ իշխանությունը կենտրոնացնելով գեներալ Փիրումյանի ձեռքում։ Դաշնակցական զորքը անընդունակ էր դիմադրելու թյուրքական բանակին և, որ գլխավորն է, այդ զորքը՝ շինել հազած բանվորներն ու գյուղացիները, չէր ցանկանում կռվել շահագործողների համար։ Թե ինչ ստոր ճան քայքայված ու անմարտունակ էր դաշնակցական բանակը, այդ մասին բավական պերճախոս վկայում է դաշնակցական կառավարության զինվորական մինիստրը, հայտարարելով, թե՝ «Մեր զորքը բոլորովին անպատրաստ էր։ Նոր հավաքագրված զինվորները մարզված չէին։ Ներքին կարգապահություն չկար։ Սպաները և զինվորները միմյանց չէին ճանաչում։ Պարենավորման և զինավորման գործը չափազանց վատ էր գրված, դաստլքության ոտկոսը մեծ էր։ Ռազմունակության տեսակետից զորքը շատ ցածր էր կանգնած և այդպիսի զորքով դժվար էր որևէ լուրջ ռազմական խնդիր կատարել»[1]։

Սարիղամիշի անկումից հետո, երբ թյուրքական բանակի առաջխաղացումը շարունակվում էր, երբ թյուրքական զորքերը մոտենում էին Վարդին, երբ դեռ երևանում չէր ստացվել անգլիական կառավարության խոստացած ռազմական օգնությունը, կոնտրռևոլյուցիոն դաշնակցական կառավարության մեջ խուճապ է առաջանում։ Գլխավոր-մինիստր Համո Օհանջանյանը 1920 թվի հոկտեմբերի 31-ին անգլիական զորքերի հրամանատար Սատկինց զինք, ռազմամթերք, ինդանոթ, վառելանյութ էր պահանջում։ Նրան ուղարկած շտապ հեռագրի մեջ Հ. Օհանջանյանը գրում էր.

«Իմ կառավարությունն ապատում է ձեր կառավարության կողմից Հայաստանին տրվելիք օգնության չափի և ժամանակի վերաբերյալ պատասխանին. որպեսզի դրությունը փրկվի, անհրաժեշտ է, որ այս օգնությունը լինի անմիջական, այլապես դաշնակիցների ֆրոնտի այն մասը, որը Հայաստանի կողմից պաշտպանվում է, անխուսափելիորեն կճեխվի։ Իմ կառավարությունը, ինչպես ձեզ հայտնի է, հետաձգել է Սովետական Ռուսաստանի հետ բանակցությունները, սպասելով անմիջական օգնության»[2]։

Անգլիական կառավարության խոստացած օգնությունը դեռ շարունակում էր ուշանալ։ Իսկ կոնտրռևոլյուցիոն դաշնակցական կառավարությունը չցանկանալով որևէ կերպ իր հարաբերությունները խզել Անտանտի հետ, ցինիկաբար մերժեց Սովետական Ռուսաստանի բարեկամական այն առաջարկությունը, որով ռուս մեծ ժողովուրդը ցանկանում էր միջամտել թյուրքիայի հետ սկսած արյունահեղ պատերազմը դադարեցնելու գործին։ Սովետական Ռուսաստանը լավ էր գիտեր, որ անգլիական իմպերիալիզմի դրդմամբ սկսված այդ պատերազմը կորստաբեր հետևանքներ կունենա հայ ժողովրդի համար, որն առանց այն էլ շատ էր ջլատվել իմպերիալիստական պատերազմում։

---

[1] «Հառաջ», 1919 թ. հոկտեմբեր, № 17։

[2] ՍՍՌՄ Դիտուք. Ակադ. Հայկ. ֆիլիալի Պատմ. և Նյութական Իմսաիտուտի արխիվ, գործ № 42։ (Ընդգծումն իմն է—Ռ. Փ.)։

Սովետական Ռուսաստանը հայ ժողովրդի նկատմամբ ունենալով ամենաջերմ վերաբերմունք և իր սրտին մոտ զգալով հայ ժողովրդի զրկանքները, ցանկանում էր նրան հանել այդ պատերազմից։

Սակայն կոնտրռևոլյուցիոն դաշնակցական կառավարությունը մերժելով Սովետական Ռուսաստանի կառավարության առաջարկությունը և գործելով ընդդեմ Սովետական Ռուսաստանի, հայ ժողովրդին ավելի խորն է գլորում ակսված պատերազմի մեջ։ Թյուրքական զորքերի առաջխաղացումը կատարվում էր ամենայն արագությամբ. Ղարսի անկումը մոտ օրերի խնդիրը էր։ Թյուրքական զորքերը, ջարդելով դաշնակցական բանակը, նոյեմբերի 2-ին գրավում են Ղարսը։ Ղարսի անկումն անբուժելի հարված էր դաշնակցական պետության ողջ սիստեմին։ Ղարսի անկումից հետո, երբ մոլեգին արագությամբ թյուրքական զորքերը մոտենում են Ալեքսանդրոպոլին, կոնտրռևոլյուցիոն դաշնակցական կառավարությունը գլուխը կորցնում է։ Կոնտրռևոլյուցիոն դաշնակցական կառավարության բաց թողած «Հայրենիքը վտանգի մեջ է» կոչը արձագանք չի գտնում։

Անտանտը խայտառակորեն լքում է Հայաստանը։

Ընկեր Ստալինը խոսելով այդ պատերազմի մասին, ասում էր.

«Հայաստանում և Վրաստանում Անտանտի շանսերը նույնպես զգալի չափով նվազեցին Վրանգելի ջախջախվելուց հետո։ Դաշնակցական բանակը, անկասկած, զոհ գնաց Անտանտի պրովոկացիային, որը նրան Թյուրքիայի վրա բրս-բրս արեց և խայտառակորեն լքեց, որ Թյուրքիան հոշոտի նրան։ Հազիվ թե կարելի էր տարակուսել, որ Հայաստանին փրկության ոչ մի հնարավորություն չի մնացել, բացի մեկից՝ Սովետական Ռուսաստանի հետ դաշինք կնքելուց» [1]։

Այս պատերազմում դաշնակցական բանակը վերջնականապես ջախջախվեց։ Թյուրքերը գրավեցին նաև Ալեքսանդրոպոլը։ Ընկեր Սերգո Օրջոնիկիձեն ասում է, որ «Դաշնակցական կառավարությունն իր ժողովրդին արյունահեղ պատերազմի մեջ քաշեց ընդդեմ թյուրքերի։ Վերջինների հարձակումը շատ հաջող էր առաջ գնում։ Հայկական բանակը ջախջախվեց և կապիտուլյացիայի ենթարկվեց։ Թյուրքերը հասան մինչև Ալեքսանդրոպոլ» [2]։

Դաշնակցական բանակի այս պարտությունն արագացրեց հայ ժողովրդի մեջ կուտակված ռևոլյուցիոն ցասման պոռթկումը։ Հայ ժողովուրդն ամենուրեք ոտքի ելավ օտարերկրյա իմպերիալիստների և սեփական կեղեքիչների տիրապետության դեմ։ Դաշնակո-թյուրքական պատերազմի հետևանքով Հայաստանի տնտեսական-քաղաքական դրությունն ավելի սրվեց։ Պատերազմական ծախսերը, որպես ծանր բեռ, ընկած էին ժողովրդական

---

[1] „Положение на Кавказе" („Правда", 1920 г. от 30 ноября). *(Ընդգծումն իմն է. Ռ. Փ.)։*

[2] Г. К. Орджоникидзе — „Избранные статьи и речи", под редакцией А. И. Микояна, Л. З. Мехлиса, Л. П. Берия и И. З. Орджоникидзе, Госполитиздат, Москва, 1939 г., стр. 118.

ամենալայն մասսաների ուսերին։ Կոնտրռևոլյուցիոն դաշնակցական կառավարությունը պատերազմի նպատակների համար մոբիլիզացիայի ենթարկեց պետության բոլոր ռեսուրսները, աշխատավոր ժողովրդի միջոցները։ Նա 1920 թ. սեպտեմբերի 25-ին օրենք հրատարակեց «Պետական ինքնապաշտպանության մի անվադ տուրքի մասին», որով ժողովրդի վրա նշանակեց $2^1/_2$ միլիարդ ռուբլի հարկ։ Ըստ այդ օրենքի՝ Երևանը պիտի վճարեր 246.000.000 ռուբլի, Ալեքսանդրոպոլը՝ 120.000.000 ռուբլի, Երևանի գավառը՝ 400.000.000 ռուբլի, Ղարսը, Սարիղամիշը՝ 276.000.000 ռուբլի, Էջմիածինը՝ 370,000.000 ռուբլի և այլն[1]։ Ավելացան անուղղակի հարկերը, հողային հարկը և այլն։ Արդյունաբերական ձեռնարկները, որոնք առանց այն էլ քայքայված և կիսախափան վիճակի մեջ էին, դադարեցրին իրենց աշխատանքը՝ նյութական միջոցների, բանվորական ուժի, վառելիքի բացակայության հետևանքով։ Գյուղացիության տնտեսությունը շարունակեց արագորեն քայքայվել։ Գյուղատնտեսական-դաշտային աշխատանքները կանդ առան։ Թյուրքական զորքերի կողմից օկուպացիայի ենթարկված քաղաքների և գյուղերի բնակչությունը հոծ մասսաներով լցվեց Երևան, Էջմիածին և այլուր։ Գաղթականական մասսան սոված ու մերկ թափառում էր գյուղից գյուղ իր գոյությունը մի կերպ քարշ տալու համար։ Ավելի ծանրացան ու վատթարացան քաղաքների և գյուղերի բնակիչների կյանքի պայմանները։ Շուկայի գները մի քանի անգամ բարձրացան. կյանքը թանգացավ։ Այսպես՝ եթե 1920 թ. մայիսին ցորենի փութն արժեր 3500 ռուբլի, ապա նոյեմբերին արդեն դարձավ 25,000 ռուբլի, գարին՝ 3000 ռուբլուց հասավ 15,000 ռուբլու, յուղի ֆունտը նույն ժամանակամիջոցում 300 ռուբլուց դարձավ 1700 ռուբլի, ձվի հատը 22 ռուբլուց դարձավ 300 ռուբլի, նավթի ֆունտը 20 ռուբլուց դարձավ 350 ռուբլի։ «Ժողովուրդն ապրում է տաղնապալի կացությունն կենսամթերքների պակասության պատճառով, շնչին տրվում է $^1/_4$ ֆունտ հաց, այն էլ ոչ կանոնավոր. ավելի վատ է դրությունը որբանոցներում»։ «Դարալագյազի գյուղացիության 80 տոկոսը գաղթականություն է և ներկայումս դտնվում է շատ ողորմելի կացության մեջ։ Նրանք կորցրել են աշխատող ձեռքերը, լծկան եղները և տնտեսապես քայքայվել են»։ Այսպես էին գրում թերթերը, չկարողանալով ծածկել դառն իրականությունը։ Երևանում հացի նորման 200 գրամից իջեցվում է 100 գրամի, իսկ որոշ ժամանակից հետո՝ քաղաքի իշխանությունները բնակչությանը հայտարարում են, որ ալյուրի պակասության պատճառով քաղաքում մի քանի օր հաց չի լինելու։ Երկրի տնտեսության այս անկմանը զուգակցվում էին համբաշնական տարրերի վայրագությունները։ Մաուզերիստական խմբերը՝ թափառում էին Հայաստանի գյուղերում ու քաղաքներում, մասսայաբար կողոպտելով գյուղացիությանը, այն ու սարսափի մեջ պահելով ժողովրդին։ Մաուզերիստների անձնաբաձակությունները սահման չունեին։ Երկրի ներսում անարխիա, կողոպուտ, թալան, երկրից դուրս՝ թյուրքական բանակի հաջող առաջխաղացումը և դաշնակցական բանակի պարտությունը — ահա դաշնակցական Հայաստանի բնորոշ դրությունը

[1] Հայկ. ՍՍՌ Պետ. Արխիվ, ֆոնդ $^2/_{65}$, գործ № 128, էջ 128։

1920 թ. աշնանը՝ Հայ ժողովուրդն այլևս չէր կարող հանդուրժել դաշնակցական բռնակալների այդ տիրապետությունը։ Մայիսյան ապստամբությունները դաժանորեն ճնշվելուց հետո էլ Հայաստանի բանվորներն ու գյուղացիները՝ բոլշևիկների մեծ պարտիայի ղեկավարությամբ անդուլ կերպով շարունակում էին պայքարել կոնտրռևոլյուցիոն դաշնակցական կառավարության դեմ։ Ոչ կոնտրռևոլյուցիոն դաշնակների հալածանքները, ոչ կախաղանները և ոչ էլ դնդակահարությունները չկարողացան ընկճել հայ ժողովրդի հավատն իր վերջնական հաղթանակի նկատմամբ, չկարողացան հուսալքել նրա շարքերը՝ թշնամու դեմ մղվող պայքարում։ Բոլշևիկների պարտիան ժողովրդի լայն մասսաներին բացատրում էր Թյուրքիայի դեմ սկսված պատերազմի ամբողջ կորստաբերությունը, ժողովրդին վառ օրինակներով ցույց էր տալիս Սովետական Ռուսաստանի ձգտումները ու ջանքերը՝ հայ ժողովրդին բնաջնջումից և ինտերվենտների լծից ազատագրելու ուղղությամբ։

Լենինի-Ստալինի մեծ պարտիան Հայաստանի բանվորների, գյուղացիների ու զինվորների լայն մասսաներին կազմակերպում էր Լենինի և Ստալինի մեծ դրոշի ներքո, նրանց նախապատրաստում էր զինված ապստամբության՝ կոնտրռևոլյուցիոն դաշնակցական կառավարության դեմ։ Բոլշևիկների ազդեցությունն ու համակրանքը բանվորների և գյուղացիների լայն մասսաներում օրեցօր աճում ու բարձրանում էր։ Հայ ժողովուրդը գործնականում Սովետական Ռուսաստանի և Սովետական Ադրբեջանի օրինակով՝ տեսնում էր, որ Լենինի-Ստալինի մեծ պարտիան, ինչպես ռուս ժողովրդին, այնպես էլ բոլոր ժողովուրդներին առաջնորդում է դեպի երջանիկ ու ապահով կյանք, թե ինչպես ժողովրդին հող, հաց և ազատություն է տալիս, թե ինչպես հերոսաբար կռվում է Անտանտի և կոնտրռևոլյուցիայի՝ Ռուսաստանի ժողովուրդներին ստրկացնելու փորձերի դեմ։ Ռուս մեծ ժողովրդի պայքարի փորձից ոգևորվելով, ադրբեջանական ժողովրդի օրինակին հետևելով, հայ ժողովուրդը, ավելի խիտ համախմբվելով բոլշևիկների պարտիայի շուրջը, պայքարում էր իր ազգային անկախության և Հայաստանում սովետական իշխանություն հաստատելու համար։ Հայ ժողովուրդն ըմբռնել էր Ստալինյան հանճարեղ խոսքերի իմաստությունը, թե՝ «...Ճնշված ժողովուրդների ազատագրության ուղին անցնում է հոկտեմբերին Ռուսաստանում սկսված բանվորական ռևոլյուցիայի միջոցով։ Այժմ բոլորի համար պարզ է, որ Ռուսաստանի ժողովուրդների ճակատագիրը, մանավորապես հայ ժողովրդի ճակատագիրը, սերտորեն կապված է Հոկտեմբերյան ռևոլյուցիայի ճակատագրի հետ»[1]։

Հայաստանի բանվորներն ու գյուղացիները բոլշևիկների ղեկավարությամբ պայքար ծավալեցին Հայաստանում սովետական իշխանություն հաստատելու համար։ Բոլշևիկների համառ աշխատանքի շնորհիվ, անընդհատ տեղի էին ունենում բանվորների, գյուղացիների և դաշնակցական բանակի զինվորների ռևոլյուցիոն ելույթներ, գործադուլներ և ապստամբություններ։ Այսպես՝ 1920 թ. հունիսի 12-ին գործադուլ արին Երևանի արհեստանոցների բանվորները, որոնք պահանջում էին թեթևացնել աշխատանքի պայ-

[1] Ленин—Сталин, „Избранные произведения 1917 г.", изд. 1938 г., стр. 557.

մաննները, ավելացնել աշխատավարձը և անխնա պայքար հայտարարել սպեկուլյացիայի դեմ։ Հուլիսի 22-ին գործադուլ արին ամերիկյան կապիտալիստներին պատկանող արհեստանոցների բանվորները, որոնք պահանջում էին ավելացնել իրենց աշխատավարձը, բարելավել աշխատանքի պայմանները։ Հունիս-հուլիս ամիսներին զինված ելույթներ տեղի ունեցան Շամշադինի, Դիլիջանի շրջանների գյուղերում։ Հուլիսի 31-ին զինված ընդհարում տեղի ունեցավ Նոր-Բայազետի շրջանի Ղարանլուխ գյուղի գյուղացիների և դաշնակցական զինված ուժերի միջև։ Այդ զինված ընդհարման պատճառն այն էր, որ դաշնակցական սպայությունը գյուղում մեծամեծ թալաններ էր արել։ Օգոստոսի սկզբին Զանգեզուրի շրջանի գյուղերում տեղի ունեցան ընդհարումներ, որոնք մեջ ընդ մեջ շարունակվեցին մինչև Հայաստանում սովետական իշխանության հաստատվելը։ Ռևոլյուցիոն ուժեղ տրամադրություն էր տիրում դաշնակցական բանակի շարքային մասի մեջ։ Պետերին չհնթարկվելը, կոնտրռևոլյուցիոն դաշնակցական կառավարության դեմ ելույթներ կազմակերպելը, դաշնակների և իմպերիալիստների շահերի համար կռվելուց հրաժարվելը սովորական երևույթներ էին դաշնակցական բանակում։ 1920 թ. հոկտեմբերի 5-ին Ալեքսանդրոպոլից հեռագրում են դաշնակցական բանակի շտաբին, թե՝ «Երկրորդ բրիգադի շտաբի պետ գնդապետ Գորսկի 4 ժամ 30 րոպեին ներկայացրած զեկուցման համաձայն, ճակատի վիճակն այսպես է.—զորամասերն ինքնակամ թողնում են ռազմաճակատը և զինվորները խմբերով դասալքում են զորամասերը և նույնիսկ չեն լսում անմիջական պետերին։ Ռազմաճակատի նեխումն ու կազմալուծումը ըստ երևույթին գնում է ուժեղ թափով։ Սիլիկով»[1]։ 1920 թ. հոկտեմբերի 30-ին Ղարսում զորագնդերից մեկը հրաժարվում է հակահարձակման անցնել և, թողնելով ճակատամասը, հեռանում է։ 1920 թ. հոկտեմբեր ամսին զինվորական մինիստրը կառավարությանը հեռագրում է. «Մեր զորքերը չեն կամենում կռվել, ուղում են հաշտություն։ Այդ պայմաններում անհնար է շարունակել պատերազմը»[2]։ Իսկ կոնտրռևոլյուցիոն դաշնակցական կառավարությունը նոյեմբերի 1-ին ի պատասխան այդ հեռագրի որոշում է շարունակել պատերազմը։ Դրանից հետո նույն մինիստրը հեռագրում է. «Զորամասերը թողնում են ֆրոնտը, զինվորները փախչում են մասերից»։

1920 թ. նոյեմբերը դաշնակցական Հայաստանի ամենակրիտիկական ամիսն էր։ Պատերազմը դեռ շարունակվում էր, մահ ու սարսափ տարածելով։ Հայ ժողովուրդը հասել էր բնաջնջման եզրին։ Գաղթականություն, սով, անարխիա։ Դաշնակցական Հայաստանում տիրող դրությունը հենց հաժապատասխանում էր մեր նշանավոր պոետ Հովհ. Թումանյանի այն նկարագրությանը, որի մեջ ասում է.

«Կըրակն ընկավ շեն ու քաղաք,
Աբյուն, ավեր, ճիչ, աղաղակ,

---

[1] ՍՍՌՄ Գիտությունների Ակադ. Հայկ. Ֆիլիալի Պատմության և Նյութ. կուլտուրայի ինստիտուտի արխիվ, գործ № 42 բ.։

[2] Նույն տեղ, գործ № 8, էջ 6։

Ամեն կողմից սարսափ ու բոթ,
Ամեն կողմից մեռելի հոտ...
Մըշակն անբան,
Գաշտերն անցան,
Ու, կռիվը չդադարած,
Սովը եկավ համատարած,
Սովը եկավ, սովի հետ ցավ...»[1]

Ահա հենց այդ ամսին է, որ Անդրկովկաս է գալիս հայ ժողովրդի մեծ ազատարար, Հայաստանում Սովետական կարգերի հաստատման կազմակերպիչ մեծ Ստալինը:

1920 թ. նոյեմբերի 5-ին, ընկեր Ստալինի Բագու գալու առթիվ, Ադրբեջանի Կոմպարտիայի կենտկոմի հրատարակած կոչի մեջ գրված էր.

«Մեզ մոտ է եկել բացառիկ անձնազոհության, եռանդի ու տոկունության տեր, բանվորական առաջնորդ, ռևոլյուցիոն տակտիկայի փորձված ու ամենից ճանաչված և Կովկասի ու Արևելքի պրոլետարական ռևոլյուցիայի առաջնորդ ընկ. Ստալինը»[2]:

Նոյեմբերի 6-ին, Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի 3-րդ տարեդարձի առթիվ, տեղի է ունենում Բագվի սովետի հանդիսավոր նիստը, ուր ընկեր Ստալինը հանդես է գալիս հատուկ ճառով, որի մեջ վեր է լուծում Սովետական Ռուսաստանի անցած երեք տարիների պայքարի ուղին: Նոյեմբերի 8-ին տեղի է ունենում Ադրբեջանի կոմունիստական (բոլշևիկների) պարտիայի կենտկոմի պլենումը ընկեր Ստալինի մասնակցությամբ: Այդ պլենումում, ուրիշ հարցերի հետ միասին, քննության է առնվում նաև Հայաստանում ստեղծված դրությունը՝ կապված քեմալական զորքերի առաջխաղացման հետ: Նոյեմբերի 9-ին տեղի է ունենում Ադրբեջանի Կ(բ)Պ կենտկոմի, Բաղվի կոմիտեի և Բաղվի սովետական, պարտիական, պրոֆեսիոնալ աշխատողների, Կովկասյան Երկրային Կոմիտեի միացյալ նիստը: Այդ նիստին մասնակցում են ընկերներ Ստալինը, Սերգո Օրջոնիկիձեն, Կիրովը, Միկոյանը և ուրիշները: Նիստը լսում է ընկեր Ստալինի զեկուցումը՝ Ադրբեջանում տարվելիք պարտիական և սովետական մոտակա աշխատանքների մասին: Ուշադրության է դրվում նաև Հայաստանում ստեղծված դրության մասին: Այդ խորհրդակցության ընթացքում հրատարակված ինֆորմացիոն հաղորդագրության մեջ գրված է.

«Հայաստանի հարցը, Անդրկովկասում քեմալի առաջխաղացման և Անատոլի մեքենայությունների կապակցությամբ, վերածվել է առաջնակարգ քաղաքական կարևորագույն հարցի:

Բուն Հայաստանի ներքին դրությունը և ռևոլյուցիոն հուզումները օրակարգի դրին Հայաստանի սովետիզացիայի հարցը...»[3]:

Այդ խորհրդակցության Հայաստանի հարցի կապակցությամբ իր ու-

---

1 Հ. Թումանյան — Գեղարվեստական երկեր, էջ 66:

2 «Կոմունիստ», 1920 թ. նոյեմբեր, № 171 (Բագու):

3 Известия ЦК АКП(б), 1920 г., № 2, ноябрь.

նեցած ելույթի մեջ հայ ժողովրդի ազատարար մեծ Ստալինն ասել է՝ «ինչ էլ որ լինի, պետք է հայ ժողովրդին փրկել բնաջնջումից...»:

Ընկեր Ստալինը գործնական ղեկավար ցուցումներ է տալիս Հայաստանի բոլշևիկներին և XI կարմիր բանակի զորքերի հրամանատարությանը՝ հայ ժողովրդին բնաջնջումից ու կոնտրռևոլյուցիոն դաշնակների ու օտարերկրյա ինտերվենտների լծից ազատագրելու համար: Ղեկավարվելով Ստալինյան ցուցումներով, Հայաստանի բանվորներն ու գյուղացիները, Լենինի-Ստալինի մեծ պարտիայի ղեկավարությամբ հերոսական պայքար մղեցին Հայաստանում սովետական իշխանություն հաստատելու համար: Թե՛ քաղաքներում, թե՛ գյուղերում և թե զորքի մեջ ուժեղացան ռևոլյուցիոն ելույթները:

Այսպես՝ 1920 թ. նոյեմբերի սկզբին պարլամենտի անդամ Ավագյանը հայտնում է կոնտրռևոլյուցիոն դաշնակցական կառավարությանը, որ «Իջևանի և Բարանայի շրջանում զորքը գունդ-գունդ ցրվում է ինքնակամ կերպով: Ռազմամիլիցիոն գնդից չորս ջոկատ երեկ և այսօր ցրվել են: Նախապես ուրիշ ջոկատներ ևս մասամբ ցրված են եղել: Ճակատը հետզհետե մնում է բոլորովին բաց... Դասալիքները գնում են տուն իրենց զենքերով և հագուստներով: Շրջանը կարող է ձեռքից գնալ: Միայն անհրաժեշտ է ուժեղ միջոցներ ձեռք առնել»[1]: 1920 թ. նոյեմբերի 7-ին պրեմյեր մինիստր Օհանջանյանին և գեներալ Հախվերդովին Ալեքսանդրոպոլից հեռագրում են. «Մեր զորքերը չեն ուզում կռվել, կամենում են խաղաղություն: Այսպիսի պայմաններում անկարելի է պատերազմել: Առաջարկում եմ, առաջին՝ սկսել բանակցություններ և կնքել խաղաղություն: Երկրորդ՝ անհապաղ զորացրել 30-ից վեր տարիք ունեցողներին, կազմակերպել կամավորական զորամասեր ցանկացողներից, խոստանալ մոտ ապագայում աստիճանաբար զորացրել և մյուսներին: Կարծում եմ, որ եթե պատերազմը շարունակվի. ամեն ինչ կկորցնենք»[2]: 1920 թ. նոյեմբերի վերջին Սիմեոն Վրացյանը Դիլիջանից Յատիսյանին հեռագրում է, թե՝ «Հայ զորքերը Դիլիջանում համբույրներով են ընդունել կարմիրներին»[3]: 1920 թ. նոյեմբերի 28-ին. «Այս րոպեիս կապիտան Յաչատրյանը,— հեռագրում էր հայ ժողովրդի դահիճ Սեպուհը,— հաղորդում է, որ երկրորդ, վեցերորդ և առաջին ռազմամիլիցիոն վաշտերը լքել են դիրքերը և գնացել են տուն: Այսօր թողել են գնացել նաև հինգերորդ և երորդ վաշտերը: Պահեստում դիրքերի վրա մնում է չորրորդ վաշտը, որի վրա հույս դնել չեմ կարող: Դասալիքները փախչում են, գյուղերում հայտարարում են իրենց կառավարությունը»[4]: Այս փաստերն անվերապահորեն խոսում են դաշնակցական բանակի մեջ գոյություն ունեցող ռևոլյուցիոն բարձր տրամադրության մասին, տրամադրություն,

---

1 ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիայի Հայկական ֆիլիալի Պատմության և Նյութական կուլտուրայի ինստիտուտի արխիվ, գործ № 42 բ:

2 Նույն տեղ:

3 Նույն տեղ:

4 Նույն տեղ:

որով նրանց համակել էր բոլշևիկների մեծ պարտիան։ Դասալքելով դաշնակցական բանակը, զենքը ձեռքներին վերադառնալով տուն, դաշնակցական բանակի շարքային զինվորներն իրենց ամբողջովին տրամադրում են բոլշևիկների պարտիայի տեղական կազմակերպություններին և ակտիվ աջակցում են կոնտրռևոլյուցիոն դաշնակների դեմ ուղղված պայքարին։ Զորքի նման՝ ռևոլյուցիոն տրամադրությամբ էին համակված նաև բանվորների ու գյուղացիների բազմահազար մասսաները։ Բանվորական Ալեքսանդրոպոլն այդ շրջանում ամբողջապես տոգորված էր բոլշևիկյան ոգով և պատրաստ էր անձնազոհաբար պայքարելու սովետական իշխանության համար։ Ալեքսանդրոպոլի բանվորները Հայաստանի սովետական իշխանության համար մղվող պայքարի պատմության մեջ անմոռանալի և փառապանծ էջեր են դրել։

Երբ դաշնակների կորստաբեր քաղաքականության հետևանքով Ալեքսանդրոպոլը կանգնած էր թյուրքական զորքերի օկուպացիայի վտանգի առաջ, Ալեքսանդրոպոլի բանվորները միահամուռ կերպով ոտքի ելան հանուն սովետական իշխանության, հանուն հարազատ քաղաքի պաշտպանության։ «Հաղորդակցության մինիստր Ջամալյանը, որ նոր էր եկել Ալեքսանդրոպոլից, ինձ տեղեկացրեց, որ համարյա թե ամբողջ քաղաքը բոլշևիկական է, որովհետև բոլորը կողմնակից են... Հայաստանի խորհրդայնացմանը...»[1] այսպես է դրում անգլիական զորքերի հրամանատար Գորտին՝ զնդապետ Ստոկսին ուղարկած զեկուցագրի մեջ։ Եվ դա զուրկ չէր հիմքից։ Ալեքսանդրոպոլի բանվորները 1920 թ. նոյեմբերի 5-ին, հարազատ քաղաքը թյուրքական իմպերիալիզմի զորքերից պաշտպանելու համար, ապրստամբում են և քաղաքում հայտարարում սովետական իշխանություն։ Բանտերից կոմունիստներն ազատվում և անցնում են նոր կազմակերպված սովետական իշխանության գլուխը։ Ալեքսանդրոպոլի բոլշևիկյան կոմիտեն մի կոչ է ուղղում բնակչությանը, որպեսզի ժողովուրդը խուճապի չենթարկվի։ Սակայն այդ ապստամբությունը պարտվում է թյուրքական զորքերի ներխուժման հետևանքով։ Ալեքսանդրոպոլի բոլշևիկների օրինակով՝ ապստամբություն է բարձրացնում Ղարաքիլիսայի, Աղբաբայի և բազմաթիվ այլ շրջանների աշխատավոր գյուղացիությունը։ Նոյեմբերի 6-ին Ֆավթաուլու գյուղի գյուղացիներն ապստամբում և տեղում հայտարարում են սովետական իշխանություն։ Նոյեմբերի 18-ին Նոր-Բայազետում ռևոլյուցիոն գյուղացիները զուրս են գալիս կոնտրռևոլյուցիոն դաշնակցական կառավարության կոմիսարներին ու լիազորներին։ Նոյեմբերի 19-ին զինված ընդհարումներ են տեղի ունենում Ախտայի շրջանի գյուղացիների և դաշնակցական բանդաների միջև։ Գյուղացիական ելույթներ են տեղի ունենում նաև Դիլիջանում, Շամշադինում։ Շամշադինի շրջանի ռևոլյուցիոներն տրամադրված երիտասարդությունը «զենքը ձեռքներին բոպե առ բոպե սպասում է օգնության։ Զինակոչի ենթարկվածները հաշվի չեն առնում դաշնակներին, չնայած, որ դաշնակները ծեծում, բանտարկում են

[1] ՀՍՍՌ Գետարխիվ, գործ № 867, էջ 105։

նրանց ծնողներին ու բարեկամներին»[1]։ Ղարաքիլիսայի աշխատավորները կազմակերպված կերպով հարձակում գործեցին դաշնակիցների միսսիաների վրա, ցանկանալով քարուքանդ անել դրանք։ Այսպես շարունակվեցին Հայաստանի բանվորների ու գյուղացիների և ղորքի ռևոլյուցիոն ելույթները ամբողջ նոյեմբեր ամսին։ Կոնտրռևոլյուցիոն դաշնակցական կառավարությունը, բռնություն գործադրելով ապստամբված գյուղերի և ռևոլյուցիոներն տրամադրված աշխատավորների դեմ, աշխատում էր արյան մեջ խեղդել ռևոլյուցիոն պայքարը։

Երկրում դրությունը նոյեմբեր ամսին դարձել էր խիստ կրիտիկական։ Կոնարռևոլյուցիոն դաշնակների քաղաքականության հետևանքով հայ ժողովուրդը կանգնած էր ֆիզիկական բնաջնջման անմիջական սպառնալիքի տակ, սպառնալիք, որ գալիս եր թյուրքական իմպերիալիզմից։ Հայաստանի բանվորներն ու գյուղացիները, որոնք հերոսաբար շարունակում էին պայքարել դաշնակների բռնակալության և ինտերվենտների դեմ, ծավալում են իրենց ելույթները։ 1920 թ. նոյեմբերի 28-ի գիշերը, լույս 29-ի առավոտյան Հայաստանի հյուսիսային ռայոնները Լենինի-Ստալինի պարտիայի ղեկավարությամբ ապստամբում են կոնտրռևոլյուցիոն դաշնակցական կառավարության դեմ։ Հերոսական ապստամբությանը մասնակցում են Ղազախի, Դիլիջանի, Իջևանի, Շամշադնի շրջանների գյուղացիները։ Ապստամբները կազմակերպում են ռազմա-ռևոլյուցիոն կոմիտե, բռնագրավում են հողը, տապալում են կոնտրռևոլյուցիոն դաշնակցական իշխանությունը և կազմակերպում են սովետական իշխանություն։ Քարվանսարայում կազմակերպված Ռազմռևկոմը նոյեմբերի 29-ին հրապարակում է դեկլարացիա, որով ամբողջ Հայաստանում հայտարարում է սովետական իշխանություն։ Ռազմռևկոմը այդ ակտի առթիվ հրատարակած իր դիմումի մեջ Հայաստանի բանվորներին ու գյուղացիներին բացատրում է դաշնակների վայրագությունների հետևանքով երկրում ստեղծված ծանր դրությունը, կոչ է անում համախմբվել Լենինի-Ստալինի պարտիայի շուրջը և ակտիվ կերպով օգնել Ռազմռևկոմին ամբողջ երկրում սովետական կարգեր հաստատելու գործում։ Ռազմռևկոմը Հայաստանում սովետական իշխանություն հաստատելու լուրը 1920 թ. նոյեմբերի 30-ին անմիջապես հաղորդում է համաշխարհային պրոլետարիատի հանճարեղ առաջնորդ մեծ Լենինին, որին ուղղած հեռագրի մեջ գրում է. «Թող հայտնի լինի համաշխարհային հեղափոխության առաջնորդին, որ Դիլիջանի ու Քարվանսարայի շրջանների գյուղացիները, վրդովված դաշնակցական կառավարության հանցագործ քաղաքականությամբ և երկրում խորացող անարխիայով, ապստամբության դրոշ բարձրացրին...

Ոգևորված ապստամբները առաջ են նետվում վերջնականապես խորտակելու ատելի Թշնամուն՝ Անտանտի գործակալին։ Եվ կատարելով ժողովրդի կամքը, տեղական հեղկոմ կազմելով՝ մենք առաջ ենք շարժվում լիահույս լինելով, որ սոցիալիստական մեծ Ռուսաստանի հերոսական կարմիր

[1] «Կոմունիստ», 1920 թ., № 99։

բանակը՝ Արևելքի ճնշված ժողովուրդների ազատարարը, մեր այս գժվարին պայքարում իրական օգնություն ցույց կտա մեզ։

Հայաստանի բոլոր բանվորների ու գյուղացիների կողմից մենք խընդրում ենք ժողկոմխարհին ցույց տալ այդ օգնությունը»։

Հայ ժողովուրդն անհամբերությամբ էր սպասում սուս մեծ ժողովրդի և նրա վինված ուժի՝ կարմիր բանակի օգնությանը։ Ընկ. Սերգո Օրջոնիկիձեն 1920 թ. դեկտեմբերի 4-ին Բաքվի սովետի հանդիսավոր նիստում արտասանած ճառի մեջ ցույց է տալիս, թե ինչպես Սովետական Ադրբեջանի սահմանակից Հայաստանի ռայոններին գյուղացիները երաժշտությամբ և կարմիր դրոշակներով մոտեցել են Սովետական Ադրբեջանի սահմանապահ կարմիր բանակայիններին և հայտարարել. «Նդրայը կարմիր-բանակայիններ, ևկել է Հայաստանի բանվորա-գյուղացիական սովետական իշխանության հաղթանակի ժամը, ևկեք, օգնեցեք մեզ»[1] տապալելու դաշնակների բռնապետությունը։

Կարմիր բանակի 11-րդ բանակի զորամասերը, ընկ. ընկ. Ս. Օրջոնիկիձեի, Կիրովի և Միկոյանի գլխավորությամբ, անհապաղ օգնության են հասնում Հայաստանի ապստամբած բանվորներին ու գյուղացիներին, երկրում սովետական իշխանություն հաստատելու համար։ Ընկ. Օրջոնիկիձեն լուր ստանալով 1920 թ. նոյեմբերի 29-ի ապստամբության մասին, ապրստամբ գյուղացիներին օգնություն ցույց տալու վերաբերյալ դիմումների մասին, հեռագրում է Լենինին ու Ստալինին հայտնելով, թե՝ «Հենց հիմա երևանից հաղորդագրություն է ստացվել, որ Երևանում հռչակված է սովետական իշխանություն, հին կառավարությունը տապալված է»[2]։ Ապստամբ բանվորներն ու գյուղացիները ստանալով կարմիր բանակի օգնությունը, նոյեմբերի 30-ին շարժվում են դեպի Դիլիջան, որը և նույն օրը գրավում են։ Այնուհետև նրանք իրենց երթը շարունակում են դեպի Երևան, ճանապարհին հաղթահարելով դաշնակցական բանդաների դիմադրությունը։ Ապրստամբները շարժվում էին Ղազախ-Իջևան-Դիլիջան-Ախտա-Քանաքեռ-Նըռվան ուղղությամբ։ Կարմիր բանակը և ապստամբ բանվորներից ու գյուղացիներից կազմված վինված ջոկատները 1920 թ. դեկտեմբերի 2-ին մտնում են Երևան, այդտեղից դուրս քշելով դաշնակների բանդաներին։ Այսպիսով՝ Հայաստանի հյուսիսային ռայոններում սկսված մասսայական ապստամբությունը ծավալվում է ամբողջ երկրում, իր մեջ ներգրավելով Հայաստանի բանվորների ու գյուղացիների բազմահազարանոց, ինտերնացիոնալ բանակի նորանոր զանգվածներին։ Կարմիր բանակը, հայ ժողովրդի այդ ազատարարը, Հայաստանի ապստամբած բանվորներին ու գյուղացիներին օգնության հասավ ոչ միայն ռազմական միջոցներով, այլև տնտեսական, բարոյական միջոցներով։ Կարմիր բանակի չանքերով և Սովետական Ադրբեջանի ու Հյուսիսային Կովկասի աշխատավորների ակտիվ օգնությամբ Սովետական Հայաստանի համար կազմակերպվում է հացի հատուկ մարշրուտ՝ բաղկացած

[1] Г. К. Орджоникидзе — „Избранные статьи и речи", под редакцией А. И. Микояна, Л. З. Мехлиса, Л. П. Берия, З. И. Орджоникидзе, 1939 г., Москва, Госполитиздат, стр. 92.

[2] *Նույն տեղում, էջ 94։*

40 վագոնից, որով հերոսական կարմիր բանակն օգնության է հասնում՝ հայ ժողովրդին սովի ճիրաններից փրկելու համար։ «Կարմիր բանակը,— գրում է ընկեր Օրջոնիկիձեն 1920 թ. դեկտեմբերի 5-ին Ռևկոմին ուղղած հեռագրի մեջ,— երիտասարդ եղբայրական Սովետական Հայաստանի համար հացով բեռնավորված մարշրուտային գնացք է պատրաստել 40 վագոնից բաղկացած։ Գնացքն անմիջապես կուղարկվի, հենց որ ստացվի վրացական կառավարության թույլտվությունը՝ գնացքն իր ճանապարհներով անցկացնելու մասին»[1]։ Թեև վրացական մենշևիկյան կառավարությունն Անտանտի թելադրանքով ամեն կերպ ցանկանում էր արգելք հանդիսանալ հացի այդ մարշրուտը Հայաստան տեղափոխվելուն, սակայն Վրաստանի բանվորների և գյուղացիների հուժկու ցույցերի ներգործության տակ ստիպված էր թույլ տալ, որ հացի այդ մարշրուտը Հայաստան տեղափոխվի։

1920 թ. նոյեմբերի 29-ին սկսված ապստամբությունը ծավալվում է ամբողջ երկրում, ոտքի հանելով Հայաստանի բանվորների և գյուղացիների ավելի լայն մասսաներին։ Այդ ապստամբությունը, կարմիր բանակի, ռուս մեծ ժողովրդի օգնությամբ, հայ ժողովրդի մեծ ազատարար Ստալինի և նրա լավագույն զինակիցների՝ Օրջոնիկիձեի, Կիրովի, Միկոյանի ղեկավարությամբ ավարտվում է լիակատար հաղթանակով։ Կոնտրռևոլյուցիոն դաշնակցության և Անտանտի տիրապետությունը Հայաստանում խորտակվում է ապստամբության ու կարմիր բանակի հուժկու հարվածների տակ։ Բռնմաչարչար հայ ժողովուրդը, Լենինի-Ստալինի մեծ պարտիայի ղեկավարությամբ, անվեհերադարձորեն ոտք է դնում երջանիկ, բերկրալից, լուսավոր կյանքի ուղին, ոտք է դնում ամենապայծառ ապագայի՝ կոմունիստական հասարակության կառուցման ուղին։ Սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում հայ ժողովրդին մեկ ընդմիշտ ազատագրեց դարավոր ստրկության կապանքներից, նրան հնարավորություն տվեց անհունորեն զարգացնելու իր ստեղծագործական կարողությունները։

«Ողջունում եմ,— գրում է Լենինը,— իմպերիալիզմի լծից ազատագրված աշխատավորական Սովետական Հայաստանին»։ Լենինի լավագույն զինակից և հայ ժողովրդի մեծ ազատարար ընկեր Ստալինը իր «Կեցցե Սովետական Հայաստանը» ողջույն հոդվածի մեծ գրում էր. «Տանջված ու բազմաչարչար, Անտանտի ու դաշնակների ողորմածությամբ սովի, քայքայման ու գաղթի մատնված Հայաստանը,— բոլոր «բարեկամների» կողմից խաբված այդ Հայաստանը, իր փրկությունը գտավ այն բանի մեջ, որ իրեն հայտարարեց սովետական երկիր։

Ոչ Անգլիայի՝ հայկական շահերի այդ «զարմավոր պաշտպանի» կեղծ հավաստիացումները, ոչ Վիլսոնի տխրահռչակ 14 կետերը, ոչ էլ Ազգերի Լիգայի մեծադղորդ խոստումները Հայաստանի կառավարման նրա «մանդատով» հանդերձ՝ չկարողացան (և չէին կարող) Հայաստանը փրկել կոտորածից ու ֆիզիկական բնաջնջումից։ Միայն Սովետական իշխանության

[1] „Коммунист", 1920 թ., դեկտեմբեր, № 182։

գաղափարը խաղաղություն և ազգային վերածնունդի հնարավորություն տվեց Հայաստանին»[1]։

Մեր հանճարեղ առաջնորդն իր այդ հոդվածում փայլուն կերպով ցույց է տալիս Հայաստանում սովետական իշխանության հաղթանակի պատմական միջազգային նշանակությունը։ «Հայկական հարցը», որի վրա գլուխ էին ջարդում իմպերիալիստական դիպլոմատիայի հին գայլերը, հնարավոր եղավ լուծել միմիայն սովետական իշխանության հաստատվելու միջոցով, որովհետև «ամեն մի ժողովուրդ, որը ձեռնամուխ է լինում ազատագրվել դարավոր ճնշումից, այսուհետև բարձրացնում է սովետական իշխանության դրոշը, որովհետև մեր դրոշը—դա ճնշվածների դրոշն է»[2]*—դրում է Օրջոնիկիձեն։ Ահա այդ դրոշը, սովետական իշխանության դրոշը, բարձր պահելով, այդ դրոշի համար իրենց կյանքը չխնայելով՝ Հայաստանի բանվորներն ու գյուղացիները, Լենինի-Ստալինի մեծ պարտիայի ղեկավարությամբ, հանճարեղ Ստալինի ղեկավարությամբ երկրում հաստատեցին սովետական իշխանություն։ Սովետական իշխանության հաղթանակը լենինյան-ստալինյան ազգային քաղաքականության խոշորագույն հաղթանակներից մեկն էր, որովհետև դրանով գործնականում մի անգամ ևս սովետական իշխանությունն ապացուցում էր դեպի ճնշված ժողովուրդներն ունեցած իր անկեղծ զգացումները և նրանց սարկությունից ու կապիտալիստական ճնշումից ազատագրելու իր ազատարար դերը։*

Սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում վերջնականապես թուլացրեց և ոչնչի հավասարեցրեց Անտանտի ու անդրկովկասյան ռեակցիայի պլանները՝ Անդրկովկասը Սովետական Ռուսաստանի դեմ օգտագործելու հարցում։ Երիտասարդ սովետական իշխանությունը Հայաստանում հարկադրված էր հսկայական ուժ և միջոցներ գործադրել վերջնականապես ջախջախելու ներքին կոնտրռևոլյուցիան և արտաքին ինտերվենտներին, երկիրը և ժողովրդին փրկելու անտեսական քայքայումից ու սովի ճիրաններից։

Սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում, որպես Սովետական Ռուսաստանի քաղաքականության հաղթանակ, բարձր է գնահատել ընկեր Լենինը։ Լենինը, 1920 թ. Սովետների համառուսական VIII համագումարում տված զեկուցման մեջ ասում է.

«Ես պետք է նաև ընդգծեմ, ընկերներ, որ Արևելքում մեր քաղաքականությունը այս տարի խոշոր հաջողություններ ունեցավ։ Մենք պետք է ողջունենք Բուխարայի, Ադրբեջանական, Հայկական Սովետական ռեսպուբլիկաների կազմավորումը և հաստատումը, որոնք ոչ միայն վերականգնել են իրենց լիակատար անկախությունը, այլև իշխանությունը վերցրել են բանվորների և գյուղացիների ձեռքը։

Այդ ռեսպուբլիկաները հանդիսանում են ապացույց ու հաստատումն

---

[1] „Правда", 1920 г., декабрь, № 273. *Տես նաև* „Жизнь национальностей", 1920 г., № 39, „Правда Грузии", 1920 г., № 41.

[2] Г. К. Орджоникидзе—„Избранные статьи и речи", под ред. А. И. Микояна, Л. З. Мехлиса, Л. П. Берия, З. И. Орджоникидзе, стр. 91.

այն բանի, որ Սովետական իշխանության իդեանները ու սկզբունքները մատչելի են և անմիջապես իրագործելի ոչ միայն այն երկրներում, որոնք արդյունաբերական տեսակետից զարգացած են, ոչ միայն սոցիալական այնպիսի հենարանով, ինչպիսին պրոլետարիատն է, այլև այնպիսի հիմքով, ինչպիսին գյուղացիությունն է։ Գյուղացիական Սովետների իդեան հաղթանակեց։ Իշխանությունը գյուղացիների ձեռքում ապահովված է. նրանց ձեռքումն է հողը, արտադրության միջոցները։ Գյուղացիական-սովետական ռեսպուբլիկաների բարեկամական հարաբերությունները Ռուսաստանի սոցիալիստական ռեսպուբլիկաների հետ արդեն ամրապնդված են մեր քաղաքականության գործնական հետևանքներով»[1]։

Սովետական Հայաստանն ստանալով ռուս ժողովրդի օգնությունը, հերոսաբար պայքարում էր երկիրը քայքայված գրությունից դուրս բերելու և ժողովուրդը սովից փրկելու համար։ Սովետական Ռուսաստանը, հայ ժողովրդի ամենամեծ բարեկամը, բոլոր հնարավոր միջոցներով ձգտում էր օգնել հայ ժողովրդին։ Դեռ գաշնակցական պատերազմի շրջանում Սովետական Ռուսաստանի կառավարությունն աշխատում էր հայ ժողովրդին դուրս բերել գաշնակների և Անտանտի տերությունների շահերի համար Թյուրքիայի դեմ նյութած արյունալի պատերազմից։ Սովետական Ռուսաստանն այդ ամբիվ արտահայտել էր իր պատրաստակամությունը [2] *միջամտելու պատերազմին վերջ տալու դործին։ Սակայն կոնտրռևոլյուցիոն գաշնակները հետևելով Անտանտի քաղաքականությանը, միջոցում են Սովետական Ռուսաստանի բարեկամական միջամտությունը։ Միջոցելով Սովետական Ռուսաստանի կառավարության առաջարկությունը, գաշնակները հայ ժողովրդին հասցրին ֆիզիկական բնաջնջման եզրին։ Սովետական Ռուսաստանը պայքարելով ճնշված ժողովուրդներին իմպերիալիզմի լծից ազատագրելու համար, չէր կարող անուշադրության մատնել հայ ժողովրդի վիճակը, որի թանգագին ուժերը վատնվում էին անիմաստ պատերազմի մեջ։ Սովետական Ռուսաստանը լավ էր զգում, որ Անտանտը պարտվելով Սովետների դեմ նյութած առաջին, երկրորդ և երրորդ արշավանքներում, աշխատելու էր ամբանալ Անդրկովկասում և վերջինս ռազմական գործողությունների թատերաբեմ դարձնել Սովետական Ռուսաստանի դեմ։ Ընկեր Ստալինը 1920 թ. նոյեմբերի սկզբին Բագվում տեղի ունեցած Ռ(բ)Պ Կովկասյան երկրային խորհրդակցությանը արտասանած իր ճառում նշում է, որ «Անտանտը, սրտի կսկիծով հաշտվելով լեհերի կողմից հաշտություն կնքելու փաստի հետ, բոլոր տվյալներով, չի ցանկանում զենքը ցած դնել, նա, ըստ երևույթին, մտադիր է ռազմական գործողությունների թատերաբեմը տեղափոխել Հարավ, Անդրկովկասի ուղղությամբ»*[3]։ *Անտանտն այդպես էլ արավ։ Բուն դնելով Անդրկովկասում, Անտանտն ամեն ինչ անում էր Անդրկովկասի ժողովուրդներին Սովետական Ռուսաստանի դեմ հանելու համար։ Սակայն նրա այդ ջանքերը որևէ արդյունք չտվին, Անդրկովկասի ժողովուրդները սերտորեն կապված լինելով Սովետական Ռուսաստանի, ռուս մեծ*

[1] *Լենին, երկերի ժողովածու, հ. XXVI, էջ 27։*

[2] И. Сталин — „Современное положение Советской России", „Коммунист", 1920 г., ноябрь, № 155.

ժողովրդի հետ, հերոսաբար պաշտպան կանգնեցին Սովետական Ռուսաստանին և ջախջախիչ հարված տվին Անտանտին ու անդրկովկասյան ռեակցիային։ Անտանտի թելադրանքով Սովետական Ադրբեջանի դեմ կոնտրռևոլյուցիոն դաշնակցական կառավարության կազմակերպած պատերազմը ցայտուն ապացույց է այն բանի, թե ինչպես Անտանտն իր շահերի համար նոր արյունահեղություն էր առաջ բերում և Անդրկովկասը դարձնում պատերազմի թատերաբեմ։ Նրա բոլոր հաշիվները ջարդ ու փշուր եղան։ Սովետական Ռուսաստանը հետևողականորեն իրականացնելով իր ազատագրական միսիան, ամեն կերպ օգնում և աջակցում էր Արևելքի ժողովուրդներին պայքարելու իմպերիալիզմի դեմ։ Նույն այդ ճառի մեջ ընկեր Ստալինը ցույց է տալիս, որ Սովետական Ռուսաստանի համար կարևոր նշանակություն ունի «բոլոր ուժերով, բոլոր միջոցներով աջակցել, բոլոր և ամեն տեսակի օգնություն ցույց տալ Արևելքի երկրներին, որոնք պայքարում են Անտանտի դեմ իրենց ազատագրության համար—ահա մեր հերթական խնդիրները, որոնք մենք պետք է կատարենք անշեղորեն, ամբողջ եռանդով, եթե մենք ուզում ենք հաղթել և մենք անկասկած կհաղթենք, եթե ազնվորեն կատարենք այդ խնդիրները»[1]։ Եվ ստալինյան այդ դրույթից ելնելով՝ Սովետական Ռուսաստանն ամեն տեսակի օգնություն ցույց տվեց հայ ժողովրդին՝ իմպերիալիզմի դեմ մղած նրա պայքարում։

Սովետական Ռուսաստանը, Հայաստանում սովետական իշխանություն հաստատվելուց հետո, Հայաստանին օգնում էր բոլոր միջոցներով։ Ընկեր Օրջոնիկիձեի զեկուցագրի հիման վրա Սովետական Ռուսաստանը Հայաստանին օգնում է ոսկով, պարենով և այլ միջոցներով։ Այդ մասին ընկեր Լենինը Օրջոնիկիձեին հեռագրում է.

«Ստացա ձեր ծածկագրությունը Անդրկովկասի հուսահատական դրության մասին։ Մենք մի շարք միջոցներ ձեռք առանք, մի քիչ ոսկի տվինք Հայաստանին, կրկնեցինք մեր ամեն տեսակի հանձնարարությունները Պարժողկոմատին»[2]։

Սովետական Ռուսաստանի բանվորներն ու գյուղացիները ոչինչ չէին խնայում հայ ժողովրդին օգնելու համար. նրանք՝ իրենք անգամ լինելով սուր կարիքի մեջ, բաժին են հանում Սովետական Հայաստանի բանվորներին ու գյուղացիներին։ Ռուսաստանի բանվորների ու գյուղացիների բարեկամական այդ վերաբերմունքը հիանալի կերպով արտահայտել է ընկեր Սերգո Օրջոնիկիձեն 1920 թ. դեկտեմբերին Երևանի հետ ուղիղ գծով ունեցած զրույցի մեջ։ Նա հայտարարել է. «Թող Հայաստանի բանվորներն ու գյուղացիները գիտենան, որ Սովետական Ռուսաստանի ամբողջ ուժն ու եռանդը դրվում է ի սպաս Սովետական Հայաստանի, թող գիտենան, որ Ռուսաստանի բանվորներն ու գյուղացիները և կարմիր Բանակը հացի հետ մեստ պաշարը կբաժանեն Հայաստանի բանվորների ու գյուղացիների հետ։ Պայքարեցեք լիակատար եռանդով ու վստահությամբ՝ բզկտված Հայաստանն ազատագրելու սուրբ գործի համար»[3]։

---

[1] Նույն տեղ։

[2] Լենին, Երկերի ժողովածու, հատ. XXVI, էջ 269. ռուս. հրատ.։

[3] „Бакинский рабочий“, 1920 թ. դեկտեմբեր, № 30։

Հնկեր Օրջոնիկիձեի այդ բոցավառ խոսքերի փայլուն հաստատումն է նյութական այն օգնությունը, որ Սովետական Ռուսաստանը ցույց տվեց Հայաստանին, ուղարկելով հաց, ոսկի և պարեն, այն պահին, երբ ինքը՝ Ռուսաստանը նրանց կարիքը խիստ զգում էր։ Սովետական Ռուսաստանը Հայաստանին օգնեց նաև ռազմական ուժերով, պաշտպան կանգնելով ինչպես Հայաստանի, այնպես էլ Անդրկովկասի մյուս ժողովուրդներին՝ Անտանտի ու կոնտրռևոլյուցիայի ամեն տեսակի մեքենայությունների դեմ։ Լենինը Ադրբեջանի, Վրաստանի, Հայաստանի, Դաղստանի ռեսպուբլիկաների կոմունիստներին ուղղած իր նամակի մեջ լիովին վոտահեցնում էր, որ «Այժմ հարկ չկա վախենալու Անտանտի ոչ արշավանքից, ոչ էլ ռազմական օժանդակությունից՝ Վրաստանի, Ադրբեջանի, Հայաստանի, Դաղստանի լեռնականների սպիտակ-գվարդիականներին։ Ռուսաստանը «գաղել է Անտանտի ձեռքերը» և այս նրան կհարկադրի թերևս մի որոշ ժամանակ, ավելի զգուշ լինել»[1]։ Այսպիսով՝ Սովետական Ռուսաստանն օգնեց երիտասարդ Սովետական Հայաստանին ձեռնամուխ լինելու ստեղծագործական շինարարական մեծ աշխատանքի։ Սովետական Հայաստանի ժողովուրդը, ինչպես նաև Անդրկովկասի մյուս ժողովուրդներն իրենց ազատագրությամբ ամբողջովին պարտական են Սովետական Ռուսաստանին։ «Սովետական իշխանության գոյությամբ,—գրում է ընկեր Օրջոնիկիձեն,—Վրաստանի, Հայաստանի, Ադրբեջանի աշխատավոր մասսաներն իրենց ազատագրությամբ ամբողջովին պարտական են Ռուսաստանին։ Չլիներ Սովետական Ռուսաստանը՝ չէր լինի Սովետական Ադրբեջանը, Սովետական Վրաստանը, Սովետական Հայաստանը և մինչև հիմա նրանք կգտնվեին անգլիական իմպերիալիզմի կրնկի տակ։

Միայն Ռուսաստանի բանվորների ու գյուղացիների հետ դաշինք կազմելով, միայն Ռուսաստանի Կարմիր բանակի հետ դաշինք կազմելով՝ ադրբեջանական բանվորներն ու գյուղացիները, վրացական բանվորներն ու գյուղացիները, հայկական բանվորներն ու գյուղացիները ձեռք բերին իրենց ազատագրությունը»[2]։

Ահա այս մի քանի փաստերը մեզ ցույց են տալիս, թե որքան հակայական է եղել մեր ժողովրդի լավագույն բարեկամ ռուս մեծ ժողովրդի ու նրա զինված ուժի օգնությունն ու աջակցությունը՝ Հայաստանը իմպերիալիզմի և դաշնակների տիրապետությունից ազատագրելու գործում։

Սովետական Հայաստանին, Սովետական Ռուսաստանի հետ միասին, ջերմ օգնություն ցույց տվեց նաև ազատագրված ադրբեջանական ժողովուրդը՝ հանձին Սովետական Ադրբեջանի կառավարության։ Եղբայրական ադրբեջանական ժողովուրդն անհուն խանդավառությամբ արձագանքեց հայ ժողովրդի ազատագրական մեծ պայքարին։ Սովետական Ադրբեջանը Հայաստանի աշխատավորներին ուղղած իր ողջույնի հեռագրի մեջ հայտարարեց, թե՝ «Սովետական Ադրբեջանի կառավարությունն անհուն հրճվանքով և

---

1 Լենին, Երկերի ժողովածու, հատ. XXVI, էջ 191. ռուս. հրատ.

2 Г. К. Орджоникидзе — „Избранные статьи и речи", под ред. А. И. Микояна, Л. З. Мехлиса, Л. П. Берия, З. И. Орджоникидзе, Госполитиздат, Москва, 1939 г., стр. 167.

ուրախության զգացումներով է ողջունում հերոսական այն ջանքերը, որ ներկա մոմենտում հանդես է բերում աշխատավոր հայ ժողովուրդը առելի դաշնակցական կառավարության լծի դեմ մղվող պայքարում, կառավարություն, որը ավելի քան երկու տարվա ընթացքում Հայաստանը հասցրել է լիակատար քայքայման ու հուսահատության։ Սովետական Ադրբեջանը լայնորեն բաց է անում իր դռները Սովետական Հայաստանի առաջ դեպի Նավթի, կերոսինի և մյուս մթերքների անսպառ հարստություններ, որպիսիք ունի Սովետական Ադրբեջանը»[1]։

Սովետական Ադրբեջանը և նրա ժողովուրդը լայնորեն բաց անելով իրենց հյուրընկալ դռները Սովետական Հայաստանի առաջ՝ դործնական միջոցներով աշխատում էին իրականացնել իրենց այդ օգնությունը։ Անգնահատելի էր Սովետական Ադրբեջանի և հատկապես Բագվի հերոսական պրոլետարիատի աջակցությունը Սովետական Հայաստանին այն օրերին, երբ Վրաստանի մենշևիկյան կառավարությունը, ռևոլյուցիայի թշնամիների և ռեակցիոներների այդ որջը, ուզում էր սովի միջոցով խորտակել հայ ժողովրդի ազատագրական մեծ պայքարը, թույլ չտալով Սովետական Ադրբեջանից հացի մարշրուտներ տեղափոխելու Հայաստան։ Ընդհակառակ համերաշխությամբ Ադրբեջանի ժողովուրդը պայքարից Վրաստանի մենշևիկյան կառավարության այդ դավաճանության դեմ։

Վրաստանի մենշևիկյան կառավարությունը ցանկանալով հայ ժողովրդին և Սովետական Հայաստանը խեղդել սովամահության միջոցով, որոշեց թույլ չտալ Բագվում Հայաստանի համար պատրաստած հացի, նավթի մարշրուտներն անցկացնել իր երկաթուղիներով։ Վրաստանի մենշևիկյան կառավարության թշնամական այդ ակար խորը վրդովմունք և բուռն զայրույթ առաջ բերեց Սովետական Ադրբեջանի և Բագվի պրոլետարիատի շարքերում։ Բագվի պրոլետարիատը կոչ արեց ամբողջ աշխարհի բանվորներին ու դյուղացիներին՝ բողոքի ցույցեր կազմակերպել Վրաստանի մենշևիկյան կառավարության այդ լկտի քայլի դեմ, մի քայլ, որը հետապնդում էր սովամահ անել հյուծված, բազմաչարչար հայ ժողովրդին, կոտրել սովետական իշխանության հանդեպ նրա ունեցած խորը հավատը և այդ կերպ վերականգնել դաշնակների դազրելի սիրապետությունը։ Սովետական Ադրբեջանի աշխատավորությունն իր այդ պայքարում լողունգ ընդունեց. «Ոչ մի կաթիլ նավթ մենշևիկյան Վրաստանին, քանի դեռ [Վրաստանը] թույլ չի տա անցկացնել Սովետական Հայաստանի համար նախատեսված հացը», «Բագվի պրոլետարիատն անարգանքի սյունին է գամում աշխատավոր-բազմաչարչար հայ ժողովրդի նոր դահիճներին», «Անատանի ավազակների դրդմամբ վրացական մենշևիկները, խանութպանները, երիտասարդ Սովետական Հայաստանի բանվորներին ու դյուղացիներին մատնում են սովամահության»[2]։ *Զբաղվականանալով այդ ամենով, Բագվի պրոլետարիատը մենշևիկյան Վրաստանի բանվորներին ու գյուղացիներին մի հատուկ կոչ ուղղեց, որի մեջ*

---

[1] „Бакинский рабочий", *1920 թ. դեկտեմբեր, № 23.*

[2] „Бакинский рабочий", *1920 թ. դեկտեմբեր, № 28, տես նաև նույն թվի «Հոմանիտա» լրագիրը։*

մերկացրեց մենշևիկյան կառավարության նոր հանցագործությունը Սովետական Հայաստանի նկատմամբ։ Այդ կոչի մեջ Բաքվի պրոլետարիատը պահանջում էր վրաստանի բանվորներից ու գյուղացիներից վճռականորեն պայքարել մենշևիկյան կառավարության դեմ, որպեսզի այդ կառավարությունը թույլ տա հայց տեղափոխել Սովետական Հայաստան։ Բաքվի պրոլետարիատն իր այդ կոչի մեջ վրաստանի բանվորներին ու գյուղացիներին հայտնում էր, թե՝ «Հայաստանի և ամբողջ աշխարհի աշխատավոր մասսաների հանդեպ ձեր խնդիրը և ձեր պարտականությունն է հարկադրել ձեր կառավարությանը դադարել վերջապես խաղալիք լինել Անտանտի ձեռքին և հրաժարվել այնպիսի կարգի վարմունքներից, որոնք իրենց հետևից սովամահություն և անթիվ աղետներ են բերում մի ամբողջ ժողովրդի համար։

Ձեր կառավարության՝ հացը դեպի Սովետական Հայաստան անցկացնելու թույլտվությունից հրաժարվելը մեղ բերում է այն համոզման, թե այն նավթը, որը ձեռք է բերվում Բագվի բանվորների քրտինքով ու արյունով և որը մասամբ Սովետական Ադրբեջանի կառավարությունը բաց է թողնում վրաստանի համար, գնում է ոչ թե բավարարելու աշխատավորների պահանջները, այլ. ընդհակառակը, գնում է ամրապնդելու շահագործողների ու կեղեքիչների կառավարությունը, ի վնաս բանվոր դասակարգի ու չքավոր գյուղացիության գործի...

Հիշեցեք, որ հայ աշխատավոր ժողովրդի տասնյակ, հարյուր հազարավոր երեխաների սովամահության համար այսուհետև պատասխանատվությունն ընկնում է ձեր վրա։

Բագվի Սովետը հուսով է, որ վրաստանի աշխատավոր մասսաները կգտնվեն իրենց պրոլետարական կոչման բարձրության վրա և կիրագործեն իրենց պարտքը Սովետական Հայաստանի և ամբողջ աշխարհի աշխատավոր մասսաների հանդեպ»[1]։

Բաքվի պրոլետարիատի այս կոչին ջերմորեն արձագանքեցին վրաստանի բանվորներն ու գյուղացիները, որոնք իրենց հուժկու ցույցերով, կազմակերպված մասսայական ելույթներով հարկադրեցին մենշևիկյան կառավարությանը թույլ տալու Սովետական Հայաստան անցկացնել հացի և նավթի մարշրուտները։ Այսպիսով՝ մի անդամ ևս հանդես եկավ Անդրկովկասի եղբայրական ժողովուրդների ջերմ համերաշխությունն ու միասնությունն ընդդեմ սովետական իշխանության թշնամիների, ընդդեմ եղբայրական ժողովուրդների միասնության թշնամիների։ Ադրբեջանի, վրաստանի բանվորների ու գյուղացիների պայքարն ապահովեց երիտասարդ Սովետական Հայաստանի աշխատավորներին հացով ու վառելիքով։ Սովետական Ադրբեջանը Հայաստանին օգնեց նաև բոլշևիկյան աշխատանքի փորձ ունեցող լավագույն կադրերով, որոնք մոբիլիզացիայի ենթարկվեցին և ուղարկվեցին Սովետական Հայաստան։

Սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում ջերմորեն ողջունեցին նաև Հյուսիսային Կովկասի բազմացեղ ժողովուրդները. հանդի-

[1] „Бакинский рабочий", 1920 թ. դեկտեմբեր, № 28։

սավոր նիստեր տեղի ունեցան Դաղստանում, Վլադիկավկազում, Թերեկում, Ռոստովում և այլուր։ Հայաստանում սովետական իշխանություն հաստատելու առթիվ 1920 թ. դեկտեմբերի 4-ին տեղի ունեցավ Վլադիկավկազի Քաղսովետի, Թերեկի մարզային գործկոմի, ՌԿ(բ)Պ Մարզկոմի և Կարմիր բանակի ներկայացուցիչների միացյալ նիստ։ Այդ նիստում, Հայաստանում սովետական իշխանություն հաստատվելու առթիվ, ընդարձակ ճառով հանդես եկավ ընկեր Ս. Մ. Կիրովը, որն ընդգծեց Հայաստանում սովետական իշխանության հաղթանակի միջազգային նշանակությունը։ Նա հայտարարեց, թե՝ «Անտանտը միշտ իր բոլոր ուժերը կենտրոնացնում էր այն սեպում, որ իրենցից ներկայացնում էին Անդրկովկասի ռեսպուբլիկանները։ Բայց կատարված փաստը (այսինքն՝ Հայաստանում սովետական իշխանություն հաստատվելը—Ռ. Փ.) հանդիսանում է Անտանտի քաղաքականության կրախի առաջին էտապը։ Ոչ անգլիական դեղանյութերը, ոչ էլ ամերիկյան հացը չկարողացան փրկել կործանվող Հայաստանը, որը միայն այժմ, մտնելով երբորդ Ինտերնացիոնալի ազնիվ ընտանիքի մեջ, ելք գտավ և դուրս եկավ ճիշտ ուղու վրա»[1]։ Ընկեր Կիրովն իր այդ փայլուն ճառն ավարտում է «կեցցե հայ ժողովուրդը» բացականչությամբ։ Այդ նիստի վերջում ընդունվում է մի բանաձև, որի մեջ Վլադիկավկազի աշխատավորությունը՝ «հիանալով Հայաստանի աշխատավոր մասսաների հերոսությամբ, մասսաներ, որոնք պայքար են մղում ռեակցիայի և շովինիզմի կառավարության դեմ, աշխատավոր ժողովրդի շահագործման դեմ»[2], իր լիակատար պատրաստակամությունն է հայտնում օգնելու հայ ժողովրդին՝ սովետական իշխանության ամրապնդման համար նրա մղած պայքարում։ «Ճնշվածների ձեր ձայնը եղբայրական օգնության մասին՝ անսահմանորեն մոտ է մեր սրտին, և մենք ցույց կտանք այդ օգնությունը։

Ազատագրված Թերեկը, որը նույնպես դարերով կրել է ցարական դահիճների ու կալվածատերերի ճնշումը, այժմ ազատագրված է ու հպարտորեն կառուցում է իր ազատությունը, Ձեզ մենակ չի թողնի ձեր պայքարում։

Առաջ տարեք պրոլետարական ռևոլյուցիայի կարմիր դրոշը, հանուն կոմունիզմի, հանուն աշխատանքի ազատագրության Արևելքի ճնշվածների համար։ Մոտ է միջազգային պրոլետարիատի վերջնական հաղթանակի ժամը։ Ձեր հերոսական հարվածները կոնտրռևոլյուցիոն դաշնակիցներին, էսերներին, համաձայնողականներին, մենք խորապես ողջունում ենք և համոզում ենք ձեզ համաշխարհային պրոլետարիատի գործի համար պայքարող մարտիկներ։

Կեցցե ազատագրված Սովետական Հայաստանը։

Կեցցե համաշխարհային սոցիալիստական ռևոլյուցիան»[3]։

Նույն ոգով Սովետական Հայաստանին ողջունում է նաև Դաղստանի աշխատավորությունը, որը Սովետական Հայաստանին ուղարկած իր հեռագրի մեջ խորը համոզում է հայտնում այն մասին, թե Սովետական Հա-

---

[1] „Коммунист", *1920 թ. դեկտեմբեր,* № 181, *տես նաև* „Коммунист Грузии", *1920 թ., դեկտեմբեր,* № 40։

[2] „Бакинский рабочий", *1920 թ., դեկտեմբեր,* № 24։

[3] *Նույն տեղ։*

յաստանի աշխատավորությունը, որը «համարձակ կոչ է նետել բուրժուական Եվրոպային ու մենշևիկյան Վրաստանին»[1], հերոսաբար առաջ կտանի սովետական իշխանության մեծ դրոշը։ Դաղստանի աշխատավորները հպարտությամբ հայտարարում են, որ Սովետական Հայաստանը միանալով Սովետական Ռուսաստանին և սովետական մյուս ռեսպուբլիկաներին, համարձակ կերպով առաջ կընթանա դեպի կոմունիզմի հաղթանակը։

Այսպիսի ակտիվ օգնություն և ջերմ արձագանք գտան Հայաստանի բանվորներն ու գյուղացիները իրենց հերոսական պայքարում։ Այդ օգնությունը, դումարած Հայաստանի բանվորների ու գյուղացիների անշեջ հավատը՝ իրենց ուժի, Լենինի-Ստալինի պարտիայի գործի անպարտելիության նկատմամբ՝ հանդիսացան այն ռեալ միջոցները, որոնք նպաստեցին սովետական իշխանության վերջնական հաղթանակին Հայաստանում։ Երիտասարդ սովետական իշխանությունը Հայաստանում անմիջապես ձեռնամուխ եղավ մի շարք տնտեսական, քաղաքական կարևորագույն նշանակություն ունեցող ձեռնարկումների կիրառմանը։ Ամենից առաջ, 1920 թ. դեկտեմբերին դեկրետ հրատարակվեց կալվածատիրական, արքունական, վանքապատկան, վակուֆային հողերը պետականացնելու մասին։ Սովետական իշխանության այդ ձեռնարկումը ջերմ արձագանք գտավ հողազուրկ, հողի ծարավ աշխատավոր գյուղացիության մեջ, որոնք տեղերում անմիջապես կազմակերպեցին գյուղական ռևկոմներ և հողերը վերցրին իրենց տնօրինության տակ։ 1920 թ. դեկտեմբեր ամսվա ընթացքում մի շարք դեկրետների միջոցով պետականացվեցին վակված կոնսերվի, Շուստովի գինու ու կոնյակի գործարանները, պետականացվեցին երկաթուղին, բանկը, կուլտուր-կրթական հիմնարկները, փոստ-հեռագրատունը և ուրիշ հիմնարկ-ձեռնարկներ։ Հատուկ դեկրետով անմիջապես դադարեցվում է մեջլիսին և սինոդին վարկ տալը, վերացվում է հին բուրժուական օրենսդրությունը և կիրառության է դրվում սովետական առաջին օրենսդրությունը՝ ՌՍՖՍՌ-ում կիրառվող սովետական օրենսդրությունը։ Վերացվում է ազմինիստրատիվ նախկին բաժանումը, ստեղծվում են գավառներ, որոնք անմիջապես ենթարկվում են կենտրոնական իշխանությանը։ Հրատարակվում է թալանչիների, ավազակների ու պրովոկատորների դեմ ուղղված հատուկ դեկրետ, որը խոշոր նշանակություն է ունենում սովետական իշխանության ամրապնդման համար մղած պայքարում։ 1920 թ. դեկտեմբերին № 5 հրամանով ստեղծվում է Արտակարգ Հանձնաժողով՝ կոնտրռևոլյուցիայի դեմ կռվելու համար։ 1920 թ. դեկտեմբերի 20-ին դեկրետ է հրատարակվում գաշնակցական դրամանիշները վերացնելու և ՌՍՖՍՌ-ի նոր սովետական դրամանիշները Սովետական Հայաստանում կիրառելու մասին, դեկտեմբերի 22-ին օրենք է հրատարակվում ՋԱԴՄ կազմակերպելու մասին։ Երիտասարդ Սովետական իշխանության այդ ձեռնարկումները ջերմորեն արձագանք են գտնում Հայաստանի բանվորների ու գյուղացիների մեջ։ Հայաստանի քաղաքներում և գյուղերում տեղի ունեցած միտինգները պերճախոս ապացույց են հայ ժողովրդի անհուն սիրո և նվիրվածության սովետական իշ-

[1] „Бакинский рабочий", 1920 թ., դեկտեմբեր, № 24։

խանութ յանը։ Աշխատավոր դյուղացիները ամենայն ջերմութ յամբ իրենց վերջին միջոցները տալիս են հերոսական կարմիր բանակին, երիտասարդ սովետական իշխանութ յանը, որպեսզի Հայաստանն ընդմիշտ ազատագրված լինի թշնամիների ու կեղեքիչների որոգայթներից։ Այսպես՝ դեկտեմբերի 2-ին Երևանում, քաղաքային այգու մոտ, տեղի է ունենում խոշոր միտինգ, որին մասնակցում են մի քանի հազար աշխատավորներ։ Այդ միտինգում ընդունված բանաձևի մեջ Երևանի աշխատավորութ յունը ջերմորեն ողջունելով սովետական իշխանութ յանը և հերոսական կարմիր բանակին, հայտնում է իր լիակատար պատրաստակամութ յունը՝ աջակցելու սովետական իշխանութ յան բոլոր միջոցառումներին։ Եվ իրըև այդ բանի ապացույց, Երևանի աշխատավորութ յունն ակտիվ մասնակցութ յուն է ունենում ինչպես սովետական իշխանութ յան առանձին հեղափոխական-ձեռնարկների կազմակերպմանը, թշնամիների դեմ մղվող պայքարին, այնպես էլ հարազատ քաղաքի մաքրման ու կարգավորման գործին։ Դեկտեմբերի 3-ին իջևանում տեղի ունեցած բազմամարդ միտինգը պատրաստակամութ յուն է հայտնում դյուղերում հավաքված պարենը և փոխադրական միջոցները տրամադրելու կարմիր բանակին ու սովետական իշխանութ յանը։ Դեկտեմբերի 6-ին, սովետական իշխանութ յան հաջողութ յունների առթիվ, Երևանում նորից տեղի է ունենում բազմամարդ միտինգ, որը ողջույնի հեռագրեր է ուղարկում Հոկտեմբերյան մեծ ռևոլյուցիայի մեծահանճար կազմակերպիչներ Լենինին և Ստալինին, Ռ(բ)Կ կենտկոմին ու Կոմինտերնին։ Լենինին ուղղած հեռագրի մեջ Երևանի աշխատավորութ յունը ասում էր. «Համախմբվելով կուռ, խիտ շարքերով կոմունիստական դրոշի ներքո, Երևանի աշխատավորութ յունը հանձին ձեզ ողջունում է Հոկտեմբերյան ռևոլյուցիայի առաջնորդին, ռևոլյուցիա, որի ալիքները ջախջախելով ու ոչնչացնելով բոլոր արգելակները, ներթափանցեցին Հայաստան։ Այն պիտակցութ յամբ, որ միայն աշխատավորների դիկտատուրան ընդունակ է երկիրը դուրս բերելու զարգացման և բարեկեցութ յան ուղին, մենք, մանելով Սովետական ռեսպուբլիկանների պրոլետարական ընտանիքի մեջ, հետևեցինք հերոսական Հոկտեմբերյան ռևոլյուցիայի օրինակին։ Ունենալով անցյալում ոուս բանվորների փորձը, ներկայումս՝ Ադրբեջանի ու Ռուսաստանի աշխատավորների աջակցութ յունը, երիտասարդ Սովետական Հայաստանը համարձակ ու անվախ նայում է ապագային, ոչ մի րոպե չկասկածելով կապիտալի դեմ աշխատանքի վերջնական հաղթանակի մեջ»[1]։ Այս նույն ոգով Երևանի այդ միտինգը ողջույնի հեռագիր է ուղարկում բնկեր Ստալինին, պատրաստակամութ յուն հայտնելով պայքարելու սովետական իշխանութ յան ամրապնդման համար։ Դեկտեմբերի 8-ին միտինգ է տեղի ունենում Իջևանում, դեկտեմբերի 10-ին՝ Ալավերդում, դեկտեմբերի 11-ին՝ Օշականում ու Աշտարակում և այլ դյուղերում, բոլոր միտինգներն էլ պատրաստակամութ յուն են հայտնում ըստ ամենայնի օգնելու սովետական իշխանութ յանը և աջակցելու նրա ձեռնարկումներին։ Ալավերդու շրջանի ադրբեջանական դյուղերի դյուղացիների միտինգն իր ընդունած բանաձևի մեջ հայտարարում է, որ

[1] „Правда Грузии", *1920 թ., դեկտեմբեր, № 47։*

իրենք «իրենց եղբայրական ձեռքը մեկնում են հայ գյուղացուն ու բանվորին՝ ծաղկեցնելու սովետական հայրենիք Հայաստանը»[1]։ Զեյվա և Ալիքելու գյուղերի աշխատավորների միտինգում ընդունված բանաձևի մեջ ասված էր. «Զեյվա և Ալիքելու գյուղերի հասարակությունն անհուն բերկրանքով ողջունում է կարմիր բանակին և պատրաստակամություն է հայտնում իր հացի չնչին պաշարը և միևնույնը տրամադրել նրա կարիքները»։ Նույն ոգով բանաձև են ընդունում Բիջապլու, Արտաշատ, Վերին և Ներքին Գյուրքյանդ, Թափաբաշ գյուղերի գյուղացիները։ Այս օրինակները փայլուն կերպով վկայում են Հայաստանի բանվորների ու գյուղացիների այն ջերմ վերաբերմունքի մասին, որ նրանք անմիջապես ցուցաբերում էին երիտասարդ սովետական իշխանության և հերոսական կարմիր բանակի նկատմամբ։ Դրանք միաժամանակ ապացույց են այն խորը համոզման, որ սովետական իշխանությունը կարող է աղատագրություն բերել բանվորներին ու գյուղացիներին, որ միայն սովետական իշխանությունը կփրկի հայ ժողովրդին։

Հայ ժողովրդի այդ համոզումը փայլուն իրականություն դարձավ։ Միմիայն սովետական իշխանությունը հայ ժողովրդին վերածննդի հնարավորություն բերեց։ Լենինի-Ստալինի մեծ պարտիայի ղեկավարությամբ Հայաստանի բանվորներն ու գյուղացիները, ջախջախելով դաշնակարդային թշնամիներին, հողմացրիվ անելով ժողովրդի տրոցկիստական-բուխարինական, բուրժուա-նացիոնալիստական թշնամիներին, բնում խեղդելով այդ թշնամիների բոլոր ստորությունները ու ձգտումները, հաստատորեն դնում են դեպի կոմունիզմի հաղթանակի ուղիով։

Անցած 20 տարիների ընթացքում Սովետական Հայաստանի բանվորներն ու գյուղացիները, աշխատավոր ինտելիգենցիան ցույց տվին, որ անօդուտ չի անցել մեր հայրենիքի բռնակալների թափած արյունը, որ նրանց հերոսական պայքարն ավարտվեց լիակատար հաղթանակով։ Անցած 20 տարիների ընթացքում Լենինի-Ստալինի մեծ պարտիայի ղեկավարությամբ, մեծ Ստալինի առաջնորդությամբ Սովետական Հայաստանը դարձավ սոցիալիզմի մեծ երկրի առաջավոր ռեսպուբլիկաներից մեկը, մեծ Միության 16 իրավահավասար եղբայրական ռեսպուբլիկաներից մեկը։

Հայ ժողովուրդն իր այսօրվա փառավոր հաղթանակների, կոմունիզմի կառուցման ասպարեզում ձեռք բերած վիթխարի նվաճումների համար անհունորեն պարտական է Լենինի-Ստալինի մեծ պարտիային, ժողովուրդների սիրելի առաջնորդ և հայ ժողովրդի մեծ ազատարար բնկեր Ստալինին, որի հայրական հոգատարությամբ աճում ու ծաղկում է Սովետական Սոցիալիստական Հայաստանը։

---

[1] «Կոմունիստ», 1920 թ. դեկտեմբեր։

ՊՐՈՖ. Դ-Ր Մ. ԱԲԵՂՅԱՆ

ՎԻՊԱԿԱՆ ԵՐԳԵՐ

1. Վեպերի սկիզբն ու զարգացումը:—*Այս խորագրի տակ չի դրվում այն հարցը, թե որ գաթում որ պատմական եղելությունների ազդեցությամբ ակսվել են մեր վեպերը և հետո՝ ուրիշ որ պատմական իրողությունների հետևանքով ընդարձակվել կամ որևէ ձևով փոփոխվել են։ Այդ բավական պարզված է սրա հեղինակի ուրիշ աշխատությունները, ինչպես օրինակ, մեր առաջին մեծ վեպի, «Վիպասանքի» համար ցույց է տրված, որ դա իր մեջ անդրապատկերել է «Պատմական հիշողություններ Արտաշատի հիմնարկությունից (180 թ. մ. թ. ա.), Հայոց բնիկ և առաջին թագավորության հիմնադիր Արտաշիսից» մինչև 1-ին դարի վերջը մեր թ. ա.։ Նույնպես բացատրված է այդ խնդիրը «Պարսից Պատերազմ» և «Սասնա Ծռեր» վեպերի վերաբերմամբ։*

Այստեղ չի դրվում հարցը նաև այն մտքով, թե ինչպես դարեր ապրող բանավոր վեպը գարգանալով կերպարանափոխվում է իր ներքինով—դասակարգային բնավորությամբ ու գաղափարախոսությամբ։ Այս մասին ուսումնասիրություն անելու շատ նյութ ունին իրենց մեջ «Սասնա Ծռերի» վարիանտները, որոնց մի մասը դեռ մնում է հրատարակելու։ Այդպիսի մի ուսումնասիրության արդյունքը շատ հետաքրքիր կլիներ նաև ընդհանուր գրականության տեսակետով։

Հարցն այստեղ վերաբերում է այն խնդրին, թե՝

1. Որոնք են մեր գրականության մեջ այն սկզբնական վիպական տարրերը, որոնք ծագել են կոնկրետ եղելությունների անմիջական տպավորության տակ և որոնցից հետագայում օգտվել են վիպասանները մեծ վեպերի համար։

2. Ի՛նչպիսի աստիճանական զարգացումով ըստ բովանդակության և ըստ ձևի—ըստ առանձնավորի և ըստ կատարման եղանակի՝ երգելու կամ արտասանելու—պատմական և վիպական երգերը մեր գրականության մեջ հետզհետե մոտեցել են, դիցուք, «Սասնա Ծռերի» վարիանտներից մեկին։

Ճիշտ է, մեր գրականության մեջ քիչ նյութ կա վերևի հարցերին լիակատար պատասխան տալու համար, բայց, կարծում եմ, կարելի է որոշ չափով նշել և ցույց տալ այդպիսի տարրերը և պատմական ու վիպական երգերի զարգացումը հիշված ուղղությամբ։

Այդ տարրերն ու վիպական երգերն ըստ ինքյան էլ հետաքրքիր են, և արժե դրանցով զբաղվել այստեղ։

2. Լացի ու կոծի երգեր։—*Առաջին կարևոր տարրը, որ ծագել է կոնկ-*

բետ դեպքերի ազդեցության տակ, դա «լալեաց բանասաեղծությունն» է, որ հորինում և ասում էին մեռելների հուղարկավորության կոծն անելիս ողբասաց կանայք։ Սրանք կոչվում էին ձայնարկու, անշուշտ, մեռելների վրա ճչալու համար։

Հնումն նշանավոր մարդկանց, թագավորների ու զորավարների թաղումը կատարվում էր մեծ բազմությամբ և մեծ հանդեսով։ Այդ ժամանակ առանձնապես սաստիկ էին ողբում մեռելին։ Կանայք ու տղամարդիկ հուղարկավորությանը մասնակցում էին լալով, երգելով ու նվագելով և ծափ տալով, դեմ ու դեմ պարելով ու կաքավելով։ Նրանք երեսներն ու բազուկները ցտում, պատառում էին, ինչպես մի 20-25 տարի առաջ մեզնում մահմեդականներն անում էին իրենց հայտնի կրոնական տոնի սգի հանդեսը կատարելիս։

Մովսես Խորենացին «Հայոց Պատմության» մեջ, հավանորեն «Վիպասանքից» ազդված, նկարագրում է (Բ. կ.) վիպական Արտաշես թագավորի թաղումը, երբ, ասում է նա, «շուրջ զգերեզմանաւն լինէին կամաւոր մահունք». «ամբոխութիւնք մեռան ի մահուանն Արտաշիսի, սիրելի կանայք և հարճք և մտերիմ ծառայք»։ Այդ մահերը, հարկավ, «կամավոր» չեն եղել։

Փ. Բուզանդը գրում է. «Յորժամ զմեռեալն լային, փողովք և փանդռօք և ճօք զկոծան պարուցն կաքաւելով, զտիգսն (կռները) հատեալս, զերեսս պատառեալս, արք և կանայք զղծութեամբ ճիւաղութեամբ պարուք դէմ ընդդէմ հարկանելով և կամ ափս (ծափս) հարկանելով, զմեռեալն յուղարկէին» (Բուզ. Ե. լա.)։

Մեծն Ներսեսի օրով Աշտիշատի եկեղեցական ժողովով արգելվում է մեռելի կոծը. «Մի... անյուսութեամբ ի վերայ գնացելոցն ոճիրս գործիցեն լալեացն կոծոյն, զանառակութիւնս աշխար դնելոյ» (Բուզ. Դ. դ.)։ Եվ իբր այս կաթողիկոսի օրով «Ոչ ոք իշխէր անյուսութեամբ... լալ զմեռեալն և ոչ կոծ ոք դնէր կամ աշխարանս մեռելոյն, և ոչ ձայնս ոք արկանէր ի վերայ մեռելոյն» (Բուզ. Ե. լա.)։ Հետո, սակայն, կոծը միշտ էլ կատարվել է։

Կոծի մասին շատ տեղեկություններ ունենք «Պարսից Պատերազմ» վեպից (Բուզանդի և Ագաթանգեղոսի մեջ), որ ընդարձակ չափերով անդրադարձրել է ֆեոդալական կյանքը 2—5-րդ դարերում։ Նույն կյանքի երևույթներից մեկն է եղել նաև մեռելների կոծն ու լալիքը, որ գալիս է շատ ավելի հին դարերից։

Մեր այդ հերոսական վեպի բովանդակությունից իմանում ենք, որ կոծեր են կատարել մի քանի նշանավոր վիպական անձերի համար։ Այսպես՝ մեծ կոծ է լինում մարտի մեջ ընկած Վաչե զորավարի համար։ Ինքը Խոսրով թագավորը և բոլոր զորքը («ազատախումբ բանակ նախարարակոյտ զօրացն») «բազում անձկայրևաց տրտմութեամբ և արտասուակաթ ողբովք և ծանրաթախիծ հոգով, մեծաւ կոծովք և անհնարին աշխարանօք պաշարեալք, զդնացելոցն կարիս մնացելոցն համաբեալ՝ սգային». «լինէր ամենայն աշխարհին սուգ անհնարին»։

Նույնպես՝ երբ մեռնում է «քաջարանցն աշխարհաշէնն Խոսրով, թագաւորն Հայոց Մեծաց, ժողովեալ, աշխար եղեալ, լացին ամենայն սահմանք աշխարհաց գաւառաց Հայոց Մեծաց. և տարան առ իւր նախնիսն յԱնին

յԵկեղեաց գաւառն Դարանաղեաց» (Բուզ. Գ. ժա)։ Հասկանալի է, որ ամբողջ երկրով անցնող և օրեր աւող այսպիսի հուղարկավորութիւնների ժամանակ՝ բանահյուս ձայնարկուները պիտի երգեին ու վիպեին քաջարանց Թագավորի կյանքից ոչ թե անպատրաստից, այլ առաջուց պատրաստված։

Տիրան Թագավորի գերվելու վրեժն առնելուց հետո՝ ժողովվում են նախարարներն և իշխանները, «գործակալք և զօրագլուխք, պետք և ամենայն աշխարհաժողովք բազմութեանն եկելոց կուտելոցն», թեպետ և Թագավորը չէր մեռած, բայց «կոծ եղեալ աշխարանօք լային գիւրեանց [ան] տէրն զարքայն Հայոց. սոյնպես և զկորուստ աշխարհին, և զանձանց անտէրչութիւն կ՚րծանմանն վարանացն աղիողորմ գործէին» (Բուզ. Գ. ի.)։

Ինչքան էլ Մանուելը մեռնելուց առաջ հրամայում է, որ իր համար չկոծան, բայց «Հրամանն զոր տայր յաղագս կոծոյն չղնելոյ՝ այնմ ինչ ոք ոչ անսաց. այլ ամենայն մարդ երկրին Հայոց կոծ եղեալ, մեծաւ աշխարանօք լային զնա առհասարակ ազատք և շինականք» (Բուզ. Ե. խգ.)։ Մանուելի եղբայր Վաչեի համար ևս «մեծապէս աշխար» և լաց է եղել (Բուզ. Ե. խգ.)։

Նույն կոծը կատարվել է և Մուշեղ սպարապետի համար, քանի որ Բուզանդը գրում է. «եւ լացին, թաղեցին զնա որպէս օրէն էր» (Բուզ. Ե. լզ.)։ Իսկ «օրէնքը», «մեռելի կարգը», ինչպես ասում էին մեր ժամանակ, հենց կոծն էր։

Վեպի մեջ կոծ հիշվում է նաև Խոսրով Մեծի համար։ Մարդասպան Անակին հալածող «նախարարք հայակոյտ զօրացն» յետ են դառնում «վայիւք, ճչովք և ողբովք. և ամենայն երկիրն ժողովեալ՝ զԹագաւորն աշխարէին» (Ագաթ.)։ Արժեք չունի, հարկավ, այն, որ վիպական Խոսրով Մեծ Թագավորն ինչպես կարծում եմ, իրապես պատմական անձ չէ։ Մեռելի կոծն իրրև կյանքի անդրադարձում կարող էր պատմվել և ստեղծական հերոսի համար, մանավանդ որ վիպասանները հավատում են վիպական հերոսների պատմական անձեր լինելուն։ Այսպես և «Սասնա Ծռերի» մեջ Արամիլիքի մահից հետո Սասունը յոթ տարի սուգ է անում և սուգի պատճառով տղա ու աղջիկ չեն պսակում։ Բայց ոչ ոք չի կարող, անշուշտ, լրջությամբ պնդել, թե Արամիլիքն ու Սասունի այդ սուգը նրա մահվան համար՝ իրական եղելություն է։

Այսպես ուրեմն վեպից հենց յերևում է, որ կոծն այդ վիպական շրջանի կյանքի մեջ մեծ տեղ է բռնել։ Եվ վորովհետև ողբն երգով ու նվագով էին անում, հետևաբար կոծի համար երգեր են հորինվել և տարածվել։

Դրանք ժամանակի միակ պատմական հիշատակարաններն են եղել կամ ճիշտ ասած՝ նույն դերն են կատարել, ինչ որ մեր ժամանակ լրագրերը կատարում են՝ լուր տալով եղած դեպքերի համար և մահաբան (նեկրոլոգ) գրելով նշանավոր անձերի մահվան առիթով։ Եվ ուրիշ կերպ էլ մտածել կարելի չէ մի ժողովրդի համար, որ գիր ու գրականությունից զուրկ էր։

Այդ ձայնարկուների երգը և նրա հետ կապված զրույցը՝ և եղել են վեպի սկզբնական աղբյուրները, վեպի տարերքը, որոնցից հետագայում օգտվել են վիպասաններն իրենց ստեղծագործության ժամանակ։

Թե ինչպես էին պատահած դեպքերի անմիջական ազդեցության տակ

կոծի միջոցին հորինվում և տարածվում պատմական երգերը, այդ էլ իմանում ենք «Պարսից Պատերազմ» վեպից։ Այստեղ մանրամասն նկարագրված է Գնելի կոծը և նրա մասին «լալեաց բանաստեղծությունը» (Բուզանդ Դ. ժե)։

Գնելը, Արշակ Թագավորի եղբորորդին, ամուսնանում է Սյունիքի իշխանի դուստրի, դեղեցկուհի Փառանձեմի հետ։ Սրան սիրահարվում է Թագավորի մյուս եղբորորդի Տիրիթն ևս։ Նա, որպեսզի Փառանձեմին ինքն առնի, քսությամբ գրգռում է Արշակին Գնելի դեմ, մինչև որ Արշակն սպանել է տալիս Գնելին։ Ապա Վեպի մեջ (Բուզ., Դ. ժե.) նկարագրված է, թե ինչպես Արշակ Թագավորի հրամանով կատարվում է Գնելի կոծը։

Ապա հրաման եղե յարքայէն.
«Ամենայն մարդիկն որ իցեն ի բանակին,
Մեծ և փոքր առ հասարակ,
Երթիցեն, դիցեն աշխար կոծոց,
Եւ լացցեն զԳնել մեծ սեպուհն Արշակունի,
Զըսպանեալն»։
Իսկ ինքն թագաւորն գնացեալ ի·լալիսն,
Նստեալ լայր զեղբօրորդին իւր,
Զոր ինքն եսպան։
Երթեալ նստէր մօտ առ դին,
Լայր ինքն, և տայր հրաման՝
Կոծ մեծ և աշխար դնել
Շուրջ զսպանելով դիակամբն։
Իսկ կինն սպանելոյն, Փառանձեմն,
Չհանդերձան պատառեալ, զգէսս արձակեալ,
Մերկատիտ ի մէջ աշխարանին կոծէր.
Զայն արկանելով ճչէր,
Յոզբս արտասուաց յաղիողորմ գուժի
Առ հասարակ զամենեսեան լացուցանէր։

Տիրիթը, որ սիրահարված լինելով Փառանձեմին՝ սպանել էր տվել Գնելին, հենց այդ սաստիկ կոծի ժամանակ չի համբերում և Փառանձեմին հայտնում է իր սերը։

Պատգամ յղէր առ կինն մեռելոյն, ասէ՝
Զի «Մի կարի զանձն քո աշխատ առնէր այդ չափ,
Զի այր բարի եմ ես քան զնա.
Ես սիրեցի զքեզ,
Վասն այսորիկ մատնեցի զնա ի մահ,
Զի զքեզ առից ինձ կնութեան»։
Ընդ մինչ դեռ կոծ մոլութեան զդիակամբն ջայլէին,
Զայսպիսի պատգամս առաքէր Տիրիթն։
Բողոք բառնայր, թէ՝ «Վուարուք ամենքեան,
Զի մահ առն իմոյ վասն իմ եղև.
Զի որ ինձ ակն եղ՝ վասն իմ զայրն իմ եւս սպանանել»։

Զհերն փետէր, ճչէր ընդ կոծելն։
Ապա իբրև մեծ իրքն
Համարձակ հայտնեցան
Ի լսելիս ամենեցուն,
Եւ ի ձայնարկուքն ամենայն,
Եղև նա մայր ողբոցն։
Եւ ձայնարկուքն ամենայն
Ի ձայն ողբոցն սկսան նուագել՝
Զիրսն տրփանացն Տիրիթայ,
Զակն դնելն, զխութիւնն,
Զնուագս մահու նիւթել, զապանումն.
Զայնիւքն մրմնջոցն ի վերայ սպանելոյն
Ի մէջ կոծոյն բարբառէին,
Գեղգեղեալ խանդաղատութեամբ։
Ի նուաճել իւրեանց ձայնիցն՝
Իրքն յայտնեալ հոչակ հարկանէր։

Հետաքրքիրն այն է, որ այս հատվածից իմանում ենք, թե ինչպես Գնելի սպանման վեպը հենց նրա հուղարկավորության կոծի ժամանակ է հորինվում, երգվում և տարածվում։ Այդ այնպիսի ժամանակ էր, որ մի սեղունդ էլ պետք չէր որ անցներ՝ պատմական երգեր ու զրույցներ հորինելու և տարածելու համար։

Վիպական պատմական երգերը, ուրեմն, մասամբ ծագած են հենց այդպիսի կոծի երգերից, «լալեաց բանաստեղծությունից», այն էլ վիպված եղելություններից անմիջապես կամ քիչ հետո։ Իրանք, այդ երգերն անմիջական բանաստեղծական հիշողություններ են կատարված դեպքերի։ Իրանց հետ միաժամանակ և պատմվել են եղելությունները, և երգ ու զրույց միասին են ծագել։

Կոծի համար, անշուշտ, եղել են նաև հնավանդ երգեր ընդհանուր բնավորությամբ, որոնք կրկնվում էին կոծերի ժամանակ։ Այս ընդունելն անհրաժեշտ է, քանի որ եղել են արհեստով ողբասաց կանայք։ Նրանք, ինչպես վերևում հիշվեց, կոչվում էին «ձայնարկուք», «ձայնարկու կուսանք սահզիստք և աշխարողք կանայք», որոնցից մեկը լինում էր «եղևրամայր» կամ «մայր ողբոց» (տես նաև Խոր. Բ. կ.)։ Գրիգոր Նարեկացին, 10-րդ դարում, այդ ողբասացներին կոչում է «բանահիւս (=բանաստեղծ) կանայք լալականք»[1]։

Մեռելի լացն ու կոծը («լալիք կոծոյ»), մեռելի կենսագրությունից առնված բանահյուսությամբ, այնքան մեծ դեր է կատարել հնումը, որ հասել է մինչև մեր օրերը։ Մեր ժամանակներում անգամ «լալկան կանայք», հաճախ առանձին վարձատրությամբ, հրավիրվել են մեռելատուն և մեռելի ողբն արել բայթիներ ասելով։ Նույնիսկ վարձկան գուսանները շատ տեղերում կատարել են և դեռ կատարում են ողբասացների այդ հին դերը։

[2] *Մ. Աբեղյան, «Հին գուսանական երգեր», Երևան, 1931, էջ 160. հմմտ.։*

Նրանք ասում էին ավանդական երգեր, հարմարեցնելով դրանք նոր մեռելի վրա, կամ թե նոր երգեր էին հորինում մեռելի կյանքից՝ նրա «գովքն» անելու համար, ինչպես և կոչվում է այդ երգը։

Պետք չէ կարծել, թե մեռելի կյանքից առած բոլոր երգերը ձայնարկուներն անպատրաստից են ասել, այլ, ինչպես կոծի հանդեսի համար առաջուց պատրաստություն էին տեսնում, նույնպես և նրանք կարող էին նախապատրաստել իրենց «լալեաց բանաստեղծությունը», մանավանդ նշանավոր մեռելների համար, ինչպես են թագավորներն ու զորավարները։

Պետք չէ կարծել, թե այդպիսի բանաստեղծության մեջ իրական պատմությունն առնվում էր ճշգրիտ հարազատությամբ, այլ դա հորինվում էր որոշ լուսաբանությամբ, քանի որ մեռելի «գովքն» էին անում, ուստի պետք է ամեն ինչ ծաղկեցնեին։

Թե ինչպիսի են եղել այդ երգերը, մենք այդ չգիտենք։ Դրանցից ոչ մեկը չի հասել մեզ։ Գրիգոր Նարեկացու վկայությամբ՝ այդ երգերը հորինվելիս են եղել հայրենի չափով։ Դրանք անպայման փոքր երգեր են եղել, կես քնարական ու կես վիպական, ինչպես են մեր ժամանակի լացի երգերը, երկու-կամ երեք երկատող տներից—բեյթերից կազմված, ինչպես են 19-րդ գարի լացի անուններն[1], որոնք նույն հայրենի չափով են և գալիս են մեծ մասամբ հին ժամանակներից ի վեր։ Երկատող տներով կամ բեյթերով հորինվածքն այնքան հատուկ է եղել այդ կարգի երգերին, որ «բայաթի» (=բեյթեր) բառն ստացել է նաև «մեռելի ողբի երգ» նշանակությունը, մինչդեռ այդ բառով անվանվում են առհասարակ բեյթերից կազմված փոքր երգերը, ինչպես են մեր ժողովրդական քառյակները։

3. Գուսանների սկզբնական պատմական երգեր։ — Երկրորդ և ավելի կարևոր տարրը, աղբյուրները վեպի համար եղել են գուսանների վիպական երգերը, պատմական երգերը, որ ասվել են ամենահին ժամանակներից ի վեր խնճույքների, ուրախության ժողովների, գինարբուքների ժամանակ։ Եվ այսպես ոչ միայն մեր, այլև ուրիշ շատ ազգերի մեջ։

Հայ ազնվականության գլխավոր պարապմունքը, երբ նա պատերազմ չի ունեցել, եղել է որսի հետ և խնջույքը։ Նախ լինում էր հացկերույթը, հետո սկսվում էր գինարբուքը (խումը), գուսանների, վարձակների (կին գուսանների) նվագով ու գուսանական երգերով, և ուրախացողների պարով (կլոր պարով) ու կաքավով։ Այս յերեքը՝ նվագ, երգ ու կլոր պար կամ կաքավ մտնում էին ազնվականների կենցաղի մեջ իբրև անհրաժեշտ պայման ոչ միայն կոծի, այլև խնջույքի ժամանակ։

Խնջույքները, գուսաններով կատարած ուրախությունները, նույնպես մտնում են վեպի մեջ։ Պապ թագավորին սպանում են խնջույքի ժամանակ, երբ նա «նայէր ընդ պէս պէս ամբոխ գուսանացն» (Բուզ. ե. լբ.)։ Խնջույքի ժամանակ են սպանում և Մուշեղ սպարապետին (Բուզ. ե. լե.)։ Եվ վերջապես Արշակ թագավորն ինքնասպան է լինում, երբ Դրաստամատն «ուրախ առնէր զնա գուսանօք» (Բուզ. ե. է.)։

---

[1] Տես՝ Մ. Աբեղյան, «Գուսանական ժողովրդական տաղեր», Երևան, 1940, էջ 251, հան.։

Բացի ուրախութիյան, որ է՝ գինու և սիրու երգերից, գուսանները երգել են նաև հին վիպական երգերը, հին «երգք առասպելաց», ինչպես նույնն արել են նաև այլ ազգերի մեջ[1]։ Գուսանները միաժամանակ և՛ հորինել, և՛ ասել են ոչ միայն ուրախութիյան, այլ նաև պատմական երգեր, ինչպես և ուրիշ վիպական երգեր ու վեպեր։ Այս վերջին դեպքում նրանք կոչվել են վիպասաց։ «Վիպասանն» ուրիշ արվեստագետ չէ, բայց եթե վիպական երգեր հորինող և ասող գուսանը։

Մեր պատմական հիշատակարանների մեջ շատ քիչ վկայութիյուններ ենք գտնում այն մասին, որ գուսանները պատմական երգեր հորինած լինեն կատարված դեպքերի անմիջական ազդեցութիյամբ, ինչպես եղել են ձայնարկուների կոծի երգերը։

Այս նկատմամբ մի շատ կարևոր վկայութիյուն ունենք Մ. Խորենացուց «Պարսից Պատերազմի» գլխավոր հերոս Արշակի մասին։ Նա պատմելով, թե այս թագավորը չի պատասխանում հռոմայեցոց կայսրի թղթին, ավելացնում է. «Նշկահնալ ալհամարհանց զնոսա (=հռոմայեցիներին). նաև ոչ գնետ Շապհոյ միտեցավ ամենայն սրտիւ, այլ անձնահաճ եղեալ՝ պարծելով հանապազ ի դինարբուս, և յերգս վարձակաց քաջ և արի երևնալ քան զԱքիլլևս, իսկ արդեամբք Թևրսխաևսյ նմանևնալ կաղն և սրագլխայ» (Խոր. Գ. ժԶ.)։

Այս հատվածը սխալ կետադրութիյան պատճառով մինչև այժմ ուշադրութիյան չի առնված։ Տպագրվածի մեջ «դինարբուս» բառից հետո ոչ մի կետ չի դրված, իսկ «վարձակաց» բառից հետո, ուր ոչ մի նշան չպիտի լինի, դրված է միջակետ։ Այդպիսով առացվում է այս նշանակութիյունը։ Արշակը «քանի տեղ չդրեց, արհամարհեց. նրանց (=հռոմայեցիներին). նաև Շապուհի կողմն էլ չհավիտեց բոլոր սրտով, այլ ինքնահավան դարձավ, պարծենալով միշտ դինարբուքների ժամանակ և վարձակների երգերի մեջ. Աքիլլեսից ավելի քաջ և արի էր երևում, բայց գործերով նմանում էր կաղ և սրաղլուխ Թևրսխաևսին»։ Արշակը կարող էր պարծենալ դինարբուքների մեջ, այսինքն գինարբուքների ժամանակ, բայց «վարձակների (կին գուսանների) երգերի մեջ» պարծենալ, դա անհեթեթութիյուն է։

Անշուշտ այդ է եղել պատճառը, որ Խորեն Ստեփաննեն այդ հատվածի վերջին մասը աշխարհաբար թարգմանել է այսպես[2]. «Այլ ինքնահավանութիյամբ միշտ պարծենում էր խնջույքների մեջ և երգիչ կանանց մոտ. Աքիլլեսից ավելի քաջ և արի ցույց տալով իրան, նա իսկապես նմանում էր կաղ և սրաղլուխ Թևրսխաևսին»։ Մի կողմ թողնելով ուրիշ անճշտութիյուններ, պետք է ասեմ, որ բնագրի «յերգս վարձակաց» (վարձակների երգերի մեջ) նրբին չի նշանակիլ «երգիչ կանանց մոտ», ինչպես թարգմանել է Ստեփաննեն՝ վերևում հիշված անհեթեթութիյունից զերծ մնալու համար։

Այդ կտորը կարելի չէ և այնպես հասկանալ, թե Արշակն արհամարհելով և հռոմայեցոց կայսրին և պարսից թագավորին՝ «պարծենում էր գինարբուքներով և վարձակների երգերով»։ Նրա պարծանքի հիմն էր իր «քաջութիյունը», որով չէր վախենում հարևաններից, և ոչ թե վինարբուքն ու

---

[1] *Մանրամասնութիյունները տես՝ Մ. Աբեղյան, «Հին գուսանական ժողովրդական երգեր», էջ 173, հետ.։*

[2] *Մովսես Խորենացու «Հայոց Պատմութիյուն», աշխարհաբար թարգմանեց Խորեն եպիս. Ստեփանե. Բ. տպ., Ս. Պետերբուրգ, 1897։*

վարձակների երգը։ Թե «ի գինարբուս» պետք է հասկանալ «գինարբուքի ժամանակ», դրան ապացույց է և հետևյալը։ Մ. Խորենացին (Գ. խգ.) պատմում է, թե մի օր Արշակը որս է անում. «հղեալ որս սաստիկ. ուրախացեալ Արշակ ի գինիս պարծէր, ոչ այլոյ ուրուք ի թագաւորաց նախ քան զնա մեռ [ուց] անել այնչափ բազմութիւն երէոց ի միում ժամու»։ Այստեղ «գինիք» նշանակում է «գինարբուք», դինեխում և ոչ՝ «գինիներ», «ի դինիս» նշանակում է՝ «գինարբուքի ժամանակ», նույնը՝ ինչ որ «ի գինարբուս»։ Ուստի Ստեփաննն սխալ է թարգմանել. «և գինով ուրախացած, թագավորը պարծենում էր»[1]։ Այդ հատվածի ճիշտ թարգմանությունը հետևյալն է. «Շատ որս եղավ, Արշակը [որսի վրա] ուրախացած՝ գինարբուքի ժամանակ պարծենում էր, [թե] իրենից առաջ եղած թագավորներից ոչ մեկն այնքան շատ երե չի սպանել մի ժամում»։ Ինչպես հայտնի է, մեր ազնվականները որսից հետո խնջույք էին անում և ապա՝ հացն ուտելուց հետո՝ գինարբուք։ Արշակն ահա գինարբուքի ժամանակ պարծենում էր իր որսով։

Այսպես ուրեմն, վերևի կտորը կարելի չէ թարգմանել, թե Արշակը «պարծենում էր գինարբուքներով և վարձակների երգերով»[2]։

Արդ, «ի գինարբուս» հասկանալով՝ «գինարբուքի», «գինեխումի ժամանակ», պետք է ընդել վերևում գրված հատվածի մեջ միջակետը «վարձակաց» բառից հետո և ստորակետ դնել «գինարբուս» բառից հետո։ Լոկ կետադրության այդպիսի ուղղումով այդ հատվածն ստանում է մի կարևոր նշանակություն. դրանից իմանում ենք, որ «ինքնահաճ դարձած Արշակը պարծենկոտություն էր անում գինարբուքների ժամանակ, և վարձակների [կին դուսաննների] երգերի մեջ նա քաջ և արի էր երևում Աքիլլեսից ավելի, բայց իր գործերով նմանում էր կաղ և սրագլուխ Թերսիտեսին»։ Կնշանակի՝ դուսաննեըն Արշակի վրա հորինած են եղել երգեր, որոնց մեջ թագավորը գովվում է իբրև քաջ և արի, որ և երգում էին գինարբուքների ժամանակ թագավորի իրեն նեկայության։

Այդ դուսաննները եղել են պալատական երգիչներ, որոնք և թագավորի կենդանության, անպայման հաճախ և նրա պատվերով են բանահյուսել։

Երգիչներ ունեցել են նաև նախարարները։ Տրդատ Բագրատունու վեպի մեջ (Խոր. Բ. կգ.) հիշվում է Սյունիքի Բակուր նահապետի Նազինիկ վարձակը, որ «երգէր ձեռամբ» ի պատիվ Տրդատին տրված ընթրիքի ժամանակ։

Այդ պրոֆեսիոնալ պալատական դուսաննները երգել ու պատմել են ոչ միայն իրենց մեկենասների համար, այլև երգել են հենց նրանց իրենց, փառաբանելով նրանց իբրև քաջարի հերոսների։ Դրա համար դուսաննները ծաղկեց-

---

1 *Այդ հատվածը Մ. Խորենացու վենետիկյան տպագրության մեջ աղճատված է. բացի այդ՝ «ի դինիս» բառից հետո դրված է բուլ նշանը, որ և շփոթեցրել է Ստեփաննեին։ Աղճատումն ուղղված է Տփղիսի 1913 թ. հրատարակության մեջ, որ կատարված է աշխատությամբ Մ. Աբեղեան և Ս. Յարությունեան. բնագիրը կազմել է Մ. Աբեղյանը։*

2 *Ագաթանգեղոսի «Հայոց Պատմության» մեջ ևս «գինիք» բառը «գինարբուքի» իմաստով գործածված կա հետևյալ տեղում։ Տրդատն Անահտին գոհ անելուց հետո՝ «յընթրիս բազմեցաւ, և իբրև ընդ գինիս մտին» [երբ հարբեցին], որ պատկերը նվեր տանի Անահտի բագնին «Իբրև ընդ գինիս մտին» չի նշանակում «երբ հարբեցին», այլ՝ «երբ գինարբուքն սկսեցին»։*

նում, մեծացնում էին հովանավորողների արարքները, հարկավ, հիմնվելով գլխավորապես իրենց անառածների ու լսածների վրա։

Բայց այդ երկիչները, ինչպես վեպից տեսնում ենք, իրենց երգերի մեջ, հիմնվելով ավանդության ու դրույցների վրա, ներշնչվելով անպայման և հին կոծերի ու վիպական երգերից, փառաբանում էին նաև իրենց հերոսների նախնիքներին, նրանց ոտնմի հին մարդկանց։ Այդպես է եղել Ֆեոդալական շրջանում ամենուր։ Ազնվականի պարծանքի համար մեծ նշանակություն է ունեցել իր ոտնմի ազնվական ծագումը։ Նախնիքների գովեստով փառավորվում էր գուսանների հովանավորող իշխանը։ Այսպես՝ «Պարսից Պատերազմ» մեծ վեպի մեջ Արշակը և Մամիկոնյանները պարծենում են իրենց ծագումով, և Սեբեոս պատմագրից գիտենք, որ գուսանները պատմել կամ երգել են Մամիկոնյանների ծագումը չինաց թագավորական տոհմից։

Անպայման այդպիսի գուսանական երգերից, իբրև սկզբնական աղբյուրից, ծագում են «Պարսից Պատերազմ» վեպի մի որոշ մասը, հատկապես Փ. Բուզանդի «Հայոց Պատմութիւն» այն բազմաթիվ մանր գլուխները, որոնց մեջ միանման կերպով պատմվում են Արշակի ու Վասակի հպարտությունները։

Թե ինչպիսի ձևով են հորինված եղել այդ սկզբնական պատմական երգերը, մենք այդ չգիտենք։ Այդ տարրական երգերից էլ քառացի ոչինչ չի մնացել։ Դրանց ձևի մասին գաղափար կարելի է կազմել նույն տեսակի մի քանի ուրիշ երգերից, որ բերում ենք ներքևում։

4. Լևոնի երգը։ — Ունենք մի պատմական փոքր երգ, որ հին ժամանակ գրի առնված լինելով՝ մնացել, հասել է մեզ։ Դա այսպես կոչված «Լևոնի երգն» է, որ պատկանում է նույն վիպական շրջանին, ինչ որ «Սասնա Ծռերն» իր պատմականության զարգացման վերջին էտապում։ Այդ երգով մոտավոր գաղափար ենք կազմում մեր գուսանների պատմական երգերի սկզբնական ձևի և ծագման մասին։

Լևոնի երգը, ինչպես նման երգերն ուրիշ ազգերի մեջ, ունի ֆնարեական-վիպական բնավորություն, հորինված է մի պատմական իրողության վրա, որ հետևյալն է։ Եգիպտոսի Բիբարս կամ Ֆնդխտար Սուլթանի դեմ վարած պատերազմի ժամանակ Կիլիկիայի հայոց Հեթում Ա. թագավորի մի որդին՝ Թորոսը սպանվում է, իսկ մյուսը՝ Լևոնը գերի է ընկնում 1266 թ.։ Հայրը՝ Հեթումը՝ Հալեբ քաղաքը փրկանք է տալիս Եգիպտոսի թագավորին, միաժամանակ և միջնորդելով թաթարական գերությունից ազատել է տալիս Եգիպտոսի մի հայանի զորավարի, և դրա միջոցով Եգիպտոսի սուլթանն էլ գերությունից ազատում է Լևոնին, որ հետո, 1270 թ. դառնում է Կիլիկիայի հայոց թագավոր։ Այս դեպքի մասին ահա հորինված է հետևյալ երգը, որին վերնագիրը և գրված՝ «Ի Լէոն որդի Հեթմոյ».

Աւաղ զԼէոնն ասեմ,
Որ տաճկաց դուռն ընկել գերի։
Իմ լուս, իմ լուս, ու սուրբ կոյս,
Սուրբ խաչն օգնական Լէոնիս ու ամենուս։

Սուլթանն ի մոյտան[1] ելել,
Իր ոսկի դուռնըն կու խաղայ։
Ծաղաց, ի Լէոնն երետ,
«Ա՛ռ խաղա, ու տուր դատայիդ[2]։
Լէոն, դու տաճիկ լինիս,
Ես ու իմ տատաս[2] քե դերի»։

Լէոնն ի բերդին նստել,
Դաստրոակն[3] աչիցն ու կուլայ.
«Քերվանդ[4] որ ի Սիս կ'երթաս,
Դուն խապար տանիս պապայիս[5]»։

Ինց որ պապն[5] ալ զայն լսեց,
Շատ հեծել հանեց երամով.
Եկավ ի Սուլթանն ելավ[6],
Շատ գետեր եհան, արընեց։

Իսո գիր Լէոն որդին,
Ու հասավ սրտին մուրատին։
Իմ լուս, իմ լուս, ու տուրը կոյս, և այլն[7]։

Այս երգի մեջ ես, ինչպես «Սասնա Ծռերի» մեջ, այլազգի մահմեդականները, իսկապես Եգիպտոսի (Մսրա)մելիքները, հանդես են գալիս նույն ընդհանուր «տաճիկ» անունով։ Այստեղ էլ, ինչպես մյնաղարում, ընդհանրապես թե կյանքի և թե վեպի մեջ, հարաբերությունները մեծ մասամբ կատարվում են կրոնական հիման վրա։ Սուլթանը, ըստ երգի, սկզբում լավ է վարվում դերի Լեվոնի հետ և մինչև անդամ նրան մանակից է անում իր «ոսկի դուռնա» խաղին (որ նույն խաղն է, ինչ որ Մսրամելքի ու Դավթի հոլ—դուռնա խաղալը)։ Հետո Սուլթանը նրան առաջարկում է հավատն ուրանալ, և ապա բանտարկել է տալիս նրան։ Կրոնական տարրն ուժեղ կերպով երևան է գալիս նաև երգի քնարական մասի մեջ, «իմ լուս, իմ լուս» որ կրկնվում է ամեն երկատողերից հետո։

Այս երգը, բացի կրկնակից, հորինված է իր ժամանակին շատ սիրված հայրենի չափով, երկատող տներով—բևեռներով, որոնց կազակցությունն ըստ բովանդակության՝ բավական թույլ է։ Ոճը պարզ ու հասարակ է, ինչպես ընդհանրապես ժողովրդական երգերի։

Երգի մեջ պատմական անցքը չի հանված իրական եղելության նման, այլ փոխված է երգչին հովանավորող իշխանի ցանկացած ձևով։ Գերի որդին լուր և ուղարկում հորը։ Հայրը Լեվոնին գերությունից ազատում է ոչ թե փրկանքով, այլ մեծ հեծելազորով հարձակվում և Սուլթանի վրա, մեծ ավերմունհեղություն է անում և այսպես յետ առնում իր Լեվոնին։ Եվ այլա-

---

1 *Մոյտան—մեչետ, հրապարակ։* 2 *Տատա—հայր։* 3 *Դաստրոակ—թաշկինակ։* 4 *Քերվանդ—այ քարվան, կարավան։* 5 *Պապայիս—հորս, պապն—հայրը։* 6 *Ելավ—հարձակվեց։*

7 *Տես՝ Մ. Մ. Մ ի ա ն ա ս ր յ ա ն ց, «Քնար Հայկական», Ս. Պետերբուրգ, 1868 թ., էջ 130 հտ.։*

պես էլ չէր կարող լինել մի ֆեոդալական երգի մեջ, որի նպատակն է ոչ այնքան իրական եղելությունը, որքան ամեն դեպքում բարձրացնել պատվեր ասողին։

Հարկավոր է մոռանալ, որ երբ ասում ենք, թե այս կամ այն վիպական երգը պատմական է,—կամ երգի, վեպի պատմականության,—այդ չպետք է երբեք հասկանալ այն մտքով, թե երգի կամ վեպի մեջ հարազատ ճշտությամբ պատմված է կատարված եղելությունը, այլ պետք է հասկանալ այն մտքով, թե երգը հիմնված է մի կատարված իրողության վրա։ Հաճախ մի երկու դիծն են իրական պատմական, մնացածը եղելության բանաստեղծական մշակությունն է, վիպասանների մտքի և երևակայության ծնունդը, ոչ միայն վիպական մանրամասներով, այլև գաղափարախոսության նկատմամբ։ Բայց ամեն ինչ, հարկավ, հորինման ժամանակի ոգով։

• 5. Ուրիշ պատմական երգեր։ — Ցավոք մեզ չեն հասել ուրիշ նման պատմական երգեր, անշուշտ, այն պատճառով, որ բերանացի լինելով՝ մոռացության են տրված։ Բայց որ ուրիշ այդպիսի երգեր եղել են, այդ մասին կասկած չի կարող լինել։ Կա 19-րդ դարի վերջերին գրի առնված մի փոքրիկ պատմական երգ ևս, «Մսրա Թալանի» երգը, որ գալիս է նույն ժամանակներից, ինչ որ «Լեվոնի երգը», և վերաբերում է Մսրա Մելիքների իշխանության անկմանը Հայաստանում[1]։

Սկսած 15-րդ դարից, երբ հայկական անկախությունն ընկնում է և հայ ազնվականները կարևոր քաղաքական-հասարակական դեր չեն կատարում, բնականաբար հետզհետե պակասում են հայերեն լեզվով երգերը պատմական նշանավոր երևույթների մասին, և հին ավանդական երգերն էլ մոռացվում են։ Բայց այդպիսի հայերեն երգեր հորինելու արվեստն ու պահանջը չի վերացվում։ Նույնիսկ 1880-ական թվականներին կային և խիստ սիրված էին մի քանի լոլորովին նոր հորինված պատմական երգեր 1878 թվականի ռուս-տաճկական պատերազմի շրջանից Տեր-Ղուկասովի և Լոռիս-Մելիքովի մասին։ Կոմիտասը ձայնագրած ունի դրանցից մեկի եղանակը, բերելով բնագրից միայն երկու տող[2].

Օրդուն քաշեց սարի հովը
Տերսիմեն Տեր-Ղուկասովը։

Տողերիս գրողը հիշում է կարսի առման մասին երգից միայն երկու տուն և կրկնակը։ Այդ երգը երգվում էր դեռ 1890-ական թվականներին։ Կրկնակն էր.

Վույ-վույ, վույ-վույ, Մելիքով,
Ղուշումի սարդար Մելիքով։

Այս կրկնակն ասվում էր ամեն երկատող տներից (բեյթերից) հետո, որոնք են՝

---

[1] Տես՝ Մ. Աբեղյան, «Հին գուսանական ժողովրդական երգեր», Երևան, 1931 էջ՝ 166, հմն.։

[2] Տես՝ Կոմիտաս, Ժողովրդ. երգեր, հայ. նոտագրությունից փոխադրեց Ս. Մելիքյան, 1931, եր. 36։

Ջեյրան թռփեր կապեցին,
Կարսա վրեն թափեցին։ Վույ-վույ, և այլն։
Կարսա բոլոր խանդաք ա,
Մեջը դյուլլի ջանդաք ա։ Վույ-վույ, և այլն։

Այս երգերն, որոնք իրենց ծագումով ժամանակակից են երգված իրողությանը, հորինված են նույն արվեստով, ինչպես «Լևոնի երգը», միայն ոտանավորի չափը ասրբեր է։

6. Տեղական պատմական խաղեր։—*Ինչպես ուրիշ բանահյուսական տեսակների վերաբերմամբ լինում է, պատմական երգեր հորինելու և պահելու ավանդությունն ևս հարատևում է գյուղացու մեջ։ Բայց նրա կյանքի մեջ տեղի չէին ունենում այնպիսի սեփական հասարակական մեծ դիպվածներ, որ իրրև նյութ ծառայեին նոր արժեքավոր պատմական երգերի համար։ Գյուղացիական միջավայրում հորինվում և երգվում էին փոքրիկ խաղեր, հին տերմինով՝ «խաղ երգոց», բոլորովին տեղական բնույթ ունեցող դիպվածների մասին, որոնք որևէ պատճառով ավելի կամ պակաս հետք էին թողնում տեղական բնակիչների մեջ։ Այդպիսի երգերը, սովորաբար իրենց թարմ եղանակի պատճառով, բավական սիրվում ու տարածվում էին։ Այսպես, օրինակ, երբ տեղում աչքի ընկնող մեկը սպանվում էր կամ խեղդվում, կամ մի հայտնի աղջիկ էին փախցնում, և ահա այդպիսի դեպքի համար հերոսի վրա «խաղ էին կապում», հին տերմինով՝ «շեր էին հանում», այսինքն հորինում էին մի նոր եղանակ, մի նոր առանձին կրկնակ և մի քանի քառյակ խաղեր, որոնց մեջ պատմվում էր կատարված եղելությունը։ Իսկ կրկնակով արտահայտվում էր երգչի զգացմունքը և վերաբերմունքը կատարված դեպքին ու նրա հերոսին։ Եվ պատրաստ էր քնարական-վիպական փոքր երգը, «պատմական» երգը, որ իրեն էր քաշում համանման ուրիշ խաղերից ևս քառյակներ, որոնք և սովորաբար առանց որոշ դասավորության ու հաստատուն հաջորդության խառն երգվում էին*[1]։

Այսպիսի երգերի համար իրրև օրինակ կարելի է բերել այստեղ Գուլաբեցի Արշակի խաղը, որ շատ սիրված և տարածված էր 19-րդ դարի վերջին քառորդին և մինչև 1910-ական թվականները։ Այդ գյուղացին, իր տեղում մի հայտնի կարիճ երիտասարդ, ցուրտ աշնանը նավակով մենակ ձուկ բռնելիս է եղել Իալըղ գյոլում (հին՝ Գայլատավա լիճ), ջուրը սառչում է, և նա ճեպով նավակի մեջ՝ գիշերը ցրտահար է լինում, մեռնում։ Երգն սկսվում է Արշակի կին Սալաթին ուղղված երկտող կրկնակով, որ ասվում էր նաև յուրաքանչյուր քառյակից հետո՝

Շորորա, Սալաթ, շորորա,
Նավակն (վ. լոդկեն, դայըղն) Արշակին կ՚որորա։

Արշակն եկավ, ծովը գնաց,
Քեզ Սալաթին ցավեր մնաց.

1 *Տես՝ Մ. Աբեղյան «Ծողովրդական խաղեր» (ուսվածք), Վաղարշապատ, 1904, էջ 78, հետ.։*

Ծաբար տարեք խեղճ Թամամին[1],
Արքևյի[2] տուն ավեր ձեաց։

Թամին ելավ երան երան,
Նավը զարկավ ծովի բերան.
Ծաբար տարեք իմ մայրիկին,
Մեր տուն ու տեղ մնաց վերան։

Երկինքն ամպից, քամին առավ,
Ծովի երես ջուրը սառավ.
Թիակ զարկի, ինչ որ արի,
Նավը տեղին չես չդառավ։

Ես Արշակն եմ Դուլաբեցի,
Դիշեր ցերեկ ծովին կացի.
Ծաբար տարեք իմ Սալաթին,
Հնար չեղավ, նստա լացի[3]։

Այս էլ մի պատմական երգ է, մի պատահած դիպվածի մասին, բայց, հարկավ, շատ նեղ շրջանի գյուղական պատմական երգ։ Դա իր ծագումով և արվեստով նույնն է, ինչ որ ֆեոդալական ժամանակի պատմական երգը Լեվոնի դերության մասին, միայն վերջինս հորինված է իր ժամանակի սիրված հայրենի չափով, իսկ առաջինը՝ մեր ժամանակի քառյակների չափով և սրանց հանգերի սիրված դասավորությամբ — առաջին, երկրորդ և չորրորդ տողերը նույնահանգ, իսկ երրորդ տողն անհանգ։ Դրանք երկուսն էլ պատմական երգերի սկզբնական փոքր տեսակներն են՝ պատմական խաղեր «խաղ երգոց» կամ շերեր։

7. «Մոկաց Միրզա»[4]։ — Պատմական երգի համեմատաբար մի ավելի զարգացած ձևով է այս երգը, որ նույնպես ֆեոդալական ժամանակի մի երգ է։ Դրա հնությունը երևում է և տողերի վերջում «են» (մի քանի տողի վերջում «ին») հանգերի միակերպությունից, որ սիրված էր միջնադարում։ Դա դեռ բնաբանաց-վիպական երգ է. ունի կրկնակ՝ «Հազար ափսոս Մոկաց Միրզեն», ինչպես և «Բեմուրազ կեներ Կոլոտ վիաշեն», որոնց մեջ երևում է երգչի վերաբերմունքը դեպի գործող անձերը։ Բայց դա արդեն փոքր երգ չէ, և նայելով վարիանտներին՝ ավելի կամ պակաս չափով մեծ է։ Դա չի հորինված ոչ հայրենի չափի երկատող տներով (բեյթերով) և ոչ ժողովրդական խաղի քառյակներով, որոնք երկուսն էլ, երկատող տունը և քառյակը, հատուկ են առանձնապես քնարական երգերին։ Դրա մեջ գտնում ենք արդեն այն վիպական չափը, ազատ ոտանավորները, իշխող ուխվանկանի տողերով, որ ունենք և մեր հին առասպելների, հին ու նոր վեպ երի մեջ։ Երգը բաժանվում է 3—9 տողերից կազմված փոքր հատվածների, որոնցից հետո ասվում է կրկնակը։

---

1 *Մոր անունը։*

2 *Հոր անունը։*

3 *Տես՝ Դ ո մ ի տ ա ս և Մ. Ա բ ե ղ յ ա ն, Հազար ու մի խաղ, ժող. երգարան. Ա. հին-նյակ, 49-րդ երգ։*

4 *Տես՝ Հազար ու մի խաղ, Ա., 50-րդ երգը։*

Դրա բովանդակությունը դեռ փոքր է, մեկ դիպված միայն, ինչպես մեծ վեպերի մեջ պատմված մեկ էպիզոդ, մեկ միջադեպ։ Զեվով ու. բովանդակությամբ, ուրեմն, մոտենում է արդեն «Սասնա Ծռերին»։

Մոկաց Մհրզան Զիլբև քաղաքից մի սիրով գրված հրավեր է ստանում. նա իր ձին հեծնում, գնում է այնտեղ։ Ճաշի ժամանակ Կոլոտ փաշան նրան թունավորում է. նրա դիակը բերում են Մոկաց Մալաքավա քաղաքն ու այնտեղ թաղում։ Պատմությունն այս երգի մեջ զարգացրած ու պատմված է ավելի մանրամասնորեն և ավելի շարունակական ձևով, քան նախորդ տիպի երգերի մեջ է։ Ուրեմն և՛ իր ոտանավորի, և՛ իր պատմելու ձևով դա ավելի վիպական բնավորություն ունի։ Բայց և այնպես երգիչը դեռ հանգիստ պատմել չգիտե։ Երկրորդ մասը նա ասում է նույնիսկ իր կողմից, և մեջ է բերում իր վերաբերմունքը դեպի Կոլոտ փաշան ու Մոկաց Մհրզան.

Ախր չտեսներ Կոլոտ փաշեն,
Բաժն էր կոլոտ, բըրչամ երկեն...

Ընդհակառակն՝ Մոկաց Մհրզան վեր է հանված մեծ համակրությամբ, և նրա գեղեցկությունը յուցադրված է իսկական վիպական եղանակով։

Կանչեց ասաց իր մըշակին.—
—Դուս քաշի Բոզ-Բեզավին,
Վըրա դըրեք թամքը սադաֆին,
Ծափար կ'ներթամ չուր Զըզիրեն։
Գընաց, հասավ չուր Ջամբարեն,
Ախթուններեր թափան փանջարեն,
Թափան Մոկաց Մհրզի թամաշեն,
Զկեր իր նըման բոլոր դուշմեն։
Գնաց, հասավ չուր Զըզիրեն,
Եկան, ժողվան քաղաք զըմեն.
Մոկաց Մհրզին՝
Կ'արժեր քաղաք զըմեն։

Բանաստեղծը Մոկաց Մհրզի տխուր պատմությանը հակադրում է կանանց պարն ու զվարճությունն այն ժամանակ, երբ մեռած կտրիճը դին բերում են Մալաքավա։ Հետաքրքիր է և դերեզմանը, որ նախնական ձև ունի.

Եկան, ժողվան Մոկացիք,
Եկան մոտ Մոկաց Մհրզեն.
Տարան, դըրին մեջ պողերուն[1],
Դուռն էլ բացին հարավ քամուն։
Կացեք բարով
Հազար տարով։
Թանգ Նազլու խան[2]
Թող տան էրկան։

1 *Ժայռերի մեջ։*
2 *Կնոջ անունն է։*

Այս երգի մեջ պատմված դիպվածը չենք կարող համեմատել ոչ մի իրապես պատահած եղելության հետ միայն այն պատճառով, որ պատմական հիշատակություններ չունենք։ Մոկացիների մեջ պահված է ավանդություն, որ այդ Միրզան եղել է Մոկաց իշխաններից, գուցե և վերջինը։ Նա նստել է Մալաքավայում, որի ավերակներն էին դեռ տալիս 19-րդ դարում, և տեր էր եղել բերդին։ Երգի մեջ էլ հիշվում է նույնը.

Աբար տարեք Մալաքյավեն,
Աբար տարեք բերդի խաթունին[1].
Թող գա վար իր թախթեն.
Հանեն թազեն,
Հագնե գհին,
Ինչի՞ բերդի խաթուն է էն։

Ապա ավանդությունն ասում է, թե Զգիրե քաղաքի թուրք Փաշան նրան սիրով նամակ է դրում, կանչում իր մոտ, և նենգությամբ թունավորում։ Այս պատմական երգի մեջ պահված է, ուրեմն, մի հատուկ դեպքի հիշողություն, բայց դա ունի միաժամանակ ընդհանուր պատմական գույն էլ։ Դրա մեջ հանված է բազմաթիվ նույնանման եղելությունների ընդհանուր պատկերը, իբրև մի հավաքական ընդհանրացում այն դեպքերի մի տեսակի, որոնցով օտար բռնապետները, ամենահին ժամանակներից ի վեր, դանազան միջոցներով ոչնչացրել են ամեն տեղական հայ ազնվականություն։ Այն ձևով ինչպես կա՝ այդ երգը պատկերացնում է հայ ֆեոդալիզմի անկումը։

8. «Կարոն խաչ»[2]։—Այս կրոնական վիպական երգն ավելի ևս ընդարձակ ու դարգացած է, քան նախորդը։ Դա ևս ունի քնարական մաս՝ «Մառա կ՚ըլինեմ կարոս Խաչին» կրկնակը։ Հատվածներն այստեղ ավելի մեծ են, կազմված են 4—20 տողերից, որոնք, սակավ բացառությամբ, վերջանում են «ին» հանդով, ինչպես միջնադարյան քերթվածների մեջ։ Կազմված է սկզբնապես խրարուց առնախ մասերից, ինչպես «Սասնա Ծռերի» մեջ շատ հատվածներ։

Թե որքան հին է այդ երգը՝ կարելի չէ որոշել։ Բայց դրա բովանդակության առաջին մասն իրրև առնախ կրոնական գրույց գտնում ենք արդեն Ստեփանոս Օրբելյանի պատմության մեջ (13-րդ դարում)[3]։ Նա Սիսականի (այժմյան Սիսիանի) վանքերի մեջ երրորդ տեղում դնում է Կնևվանքը և դրա մասին բերում է հետևյալ զրույցը։

«Ապա Կնէվանք, զորմէ ասեն՝ Մանկունք անդէորդք արածէին ջոլիրս եզանց, և սկսան խաղալ. կորեալ[4] կնիւն[5] մի և արարին խաչ

---

[1] *Միրզայի կնոջը։*

[2] *Կոմիտաս և Մ. Աբեղյան, Հազար ու մի խազ, Հինյակ Բ., 50-րդ երգ։*

[3] *Պատմութիւն նահանգին Սիսական, արարեալ Ստեփանոսի Օրբելեան արքեպիսկոպոսի Սիւնեաց, Թիֆլիս, 1910, եջ 338, գլուխ ԿԲ. «Վանորայք և ուխտ եկեղեցեաց»։*

[4] *Տպված է վրիպակով՝ «կարեալ», «խաղ»։*

[5] *Կնիւն—փափուկ եղեգ, որից փսխաք (խսիր) են գործում։*

և եկին ի վերայ քարի մի և սկսան երկրպագել և ասել՝ «զոր ինչ երէցն ասէ և ընթեռնու, այն ի վերայ քո եղիցի. և յայց եղանցս այս երկաթս քեզ մատաղ եղիցի»։ Եւ զոր նոքա ընդ խաղս արկին՝ հողին ասառած իջնալ տնօրինէր նոյնպէս։ Ապա ի ժամ երեկոյին սկսան դնալ. և թէպէտ ջանացին՝ զայն նուիրեալ մատաղն ոչ կալսային յատուցանել ի տեղւոյն. գնացին և ազդ արարին ահբանցն. և նոքա եկեալ ոչ կարացին շարժել. և հարցեալ պատճառն ի մանկանց՝ խոստովանեցին զուզիղն։ Կոչեալ այնուհետև քահանայ՝ օրհնեցին զխաչն և գնին գնպինան և պատուեցին զտեղի կնիւնին։ Ազդ լինէր այս իշխանացն Սիւնեաց, և գային ի տեսութիւն. և հրամայեցին շինել եկեղեցի ի տեղւոջն, և սահմանեցին գնա տուն կրօնաւորաց. բայց զտեղին կնիւնին Քողին ի մէջ եկեղեցւոյն վոս մի դուզնաքաշ. և մինչ յաւեր տեղւոյն ձէթ բղխէր ի փոսոյն այնքան՝ զի օտար ձիթոյ ոչ կարօտանային. այլ եկեղեցւոյն կանթեղունքն նոսա. կերակրէր. և գնա ևս կայ եկեղեցին և տեղի կնիւնին, և խաչ ևս, որք վկայեն անսուտ գոլ»։

«Կարոս Խաչի» մէջ պատմվում է, որ հոտաղները գաշտում մի քողն խաչ են շինում, երկրպագում են նրան. խաչի մէջ շնորհք ու մասունք է իջնում, թռչում դնում է Կարոսի (նախկին, քարավուղի) ածուի մէջ, որից և իր անունն է կոչվում։ Քահանան երազով իմանում է այդ, հայտնում է այդ մասին «մեծ իշխանին»։ Սա հավատում և ժողովրդին և այդ խաչը մեծ խոփորով բերում, դնում են տաճարում.

Ցերեկ հով կ՚աներ վեր աշխարհին,
Գիշեր լույս կամար կապեր վեր տաճարին։

Երկի այս առաջին մասը, ինչպես ասվեց, նույնն է, ինչ որ Ստ. Օրբելյանի պատմած զրույցը, միայն չափածո բանաստեղծության վերածված։ Ավելի հետաքրքրիը, սակայն, այն է, որ այդ զրույցին միացել է մի ուրիշ անկախ մաս, և կազմվել է մեծ վիպական վեպերիկ երգ, իսկական վիպական ոճով հորինված, 196 տողից (հիշված փոխոխակի մէջ, կրկնակները չհաշված)։ Այդ զարդացումն ասաջ է եկել այնու, որ առաջին զրույցին գեղարվեստորեն հարակցված է իրրև շարունակութիւն այն, ինչ որ կա պատմված նաև մեր մեծ վեպերի մէջ և որ հաճախ կատարված է կյանքի մէջ, — եկեղեցիների կողոպտումն այլազգիների կողմից։ Այստեղ այլազգին է պարսիկ խանը, փոխոխակի մէջ՝ քուրդ պարոնը։ Հայերի կողմից չի պակասում մատնիչը։

Մեկ շուն գըվիր կար մէջ գնդին,
Ուրացավ հայոց լույս հավատ,
Գնաց, ասաց Քուրդ Պարոնին.
«Խաչ մի ևլեր Հայոց ազգին...
Էն վայել չէ Հայոց ազգին,
Էն վայել է քո դիվանին,
Ակն ու գոհար քո խանումին,
Ցերեկ հով բանի քո բերդին,
Գիշեր լույս տա քո քաղաքին»։

Բուրդ Պարոնը երկու մարդ է ուղարկում խաչը եկեղեցուց հափշտակելու. խաչը կատաղեցնում է նրանց։ Բուրդ Պարոնը զորք է ուղարկում հայերի դեմ, բայց զորքի մարդիկն իրար կոտորում են։ Եվ երբ նա ուզում է նոր զորք ուղարկել հայոց ազգի դեմ, այդ ժամանակ՝

Բերդ երերաց վեր իր հիմին,
Կատաղավ Պարոն մեջ իր բերդին,
Ջին եկ կատաղավ մեջ ախոռին.
Կատաղավ մանուկ օրորոցին,
Կատաղավ խանում մեջ իր օդին,
Կաթն էլ կատաղավ մեջ պըղընձին.
Կատաղավ գրդիր մեջ իր գոմին,
Դարձավ, կերավ միսն իր անձին։
Ծառա կ՚ըլնեմ Կարոս Խաչին։

Բուրդ Պարոնը զղջում է և ամեն ինչ որ ունի՝ մատաղ է խոստանում Կարոս Խաչին. բայց նրա խոստումները չեն անց կենում խաչի մոտ։

Բուրդ Պարոնի բերդ ավերեց,
Աշխարհ թափան նկան վերան.
Հիվանդացուց էն շուն գըզրին,
Կերն ընկավ գըզրի բերան.
Մեռավ, տարան լիշ խորնցին,
Շընները հանին, տարան, կերան։

*Այս վիպական երգը ծագած է և միմյանցից անկախ մասերի հարակցումով զարգացած է շատ պարզ կերպով եկեղեցական միջավայրում իբրև աբատահայտությունն նրա գազափարախոսության ու շահերի։ Դրա մեջ շեշտված է, ըստ հոգևորականության հայացքի, եկեղեցու հովանավորող նշանակությունը հայոց ազգի համար, բայց որ գլխավորն է՝ այնտեղ ուժեղ կերպով անդրադարձված է այն գազափարը, թե եկեղեցուն պիտչողն ինքը կջնասվի, իսկապես, ըստ անահավատքի, սուսկալի կերպով կպատահասվի հենց նրա դերբնական զորությունից։ Այդ հարկավոր էր հոգևորականության շահերի համար, և հոգևորականությունն այդ քարոզել է ամենահին դարերից ի վեր։ Հիշենք միայն Բուզանդի (Գ. դպր. Գ. գլուխ) պատմածը, թե ինչպես քահանայապետ Վրթանեսին սպանել և Աշխիշատի եկեղեցին ավերել ուզողների «բազուկք իւրեանց իւրաքանչիւր չհաս գարձեալ ի վնաս իւրաքանչիւր թիկանց, առանց իրիք կապելոյ՝ սքանչելապէս կապեալ լինէին։ Այսպէս պաշարեալք, ընկապճեալք, գելեալք, վանեալք, կծկեալք, ամենեքեան առ հասարակ յերկիր անգեալք անբարբառ կային, անխափանք ի տնզուոյէն»։

Իր այս և այլ գազափարները հոգևորականությունն ամեն կերպ աշխատել է պատվաստել նաև մյուս դասերի մեջ։ Մի անգամ որ չկար հայ ազնվականությունը կամ շատ աննշան էր գարձած, ավերվել ու ընկել էին և Հայաստանի քաղաքները,—միակ էր միայն դյուղացությունը հոգևորականության առաջ իր պրոպագանդայի ու քարոզչությունների համար։ Եվ դրա

հետևանքով այդ դարաշրջանից ի վեր՝ գյուղացու վրա ավելի ևս զորացել է եկեղեցականի ազդեցությունը, որ և արտացոլում է գյուղացիների միջավայրում ապրած այս վիպական երգի մեջ։ Հայերը ճնշված, հարատահարված են այլազգի ֆեոդալների ղողմից, իսկ եկեղեցին ինչ է քարոզում նրանց,—խաչի գերբնական պատուհասող զորությունը, խաչն է կռվում կոզոպտիչների դեմ... Այդ էր քարոզում և երգում հոգևորականն իր շարականների մեջ ևս.

Սուրբ խաչն օգնական հավատացելոց՝
Կանգնեցաւ ի յերկրի յաղթող թշնամւոյն...
Սա է ղէն յաղթութեան...
Եւ սովաւ յաղթեացուք անօրէն թշնամւոյն։

Ահա թե ինչ ենք գտնում այս վիպական երգի մեջ ևս իբրև հետևանք այդ գաղափարախոսության — կրոնական պաշտամունք, չոքել ծունր դնել, աղոթք, թափոր, խաչ համբուրել, մատաղ, մասունք, հրաշագործություն ու հրաշալիքներ, խաչի երազ գալը քահանային և այլն։ Եվ խաչն ինքն իբրև մի կենդանի էակ թռչում է.

Թռաւ, գնաց մեջ կարոս ածուին...
Կարոս խաչ թրռաւ դիրկ Տեր Օհանին...

Այսպես նաև «Սասնա Ծռերի» մի երկու պատումի մեջ հանդես է գալիս Դավթի Խաչ-Պատարագինը։

Մի անգամ որ զրույցնն այսպես է, բնականաբար կարող էին այլազգի ֆեոդալները կողոպտել՝ ամեն ինչ, ասելով՝

Էն վայել չէ հայոց աղին,
Էն վայել է իմ դիվանին։

Եվ այդ բռնակալ իշխանների կողմից ուղարկված երկու մարդն անգամ կարող էին համարձակ և անարգել վարվել, ինչպես ուզում են։ Դիմադրող չկա։ Հայկական ազնվականությունը դեռ չի անհետացած, բայց նա այլևս հին ոգեմիկը չէ.—նա խեղճացած ու խնդրող է միայն։ Ահա թե նա ինչպես է երգի մեջ դիմավորում երկու կողոպտիչներին։

Խաբար տարան մեծ իշխանին,—
Ասված օրհնի էն իշխանին,—
Կանչեց Մահմադ, կանչեց Ալին,
Ասաց. «Ընդիր կ՚անեմ Քուրդ Պարոնին,
Աղաչանք կ՚անեմ Քուրդ Պարոնին,
Էն բան չունի հայոց խաչին,
Կ՚ուզի ոսկի, էս է ոսկին.
Կ՚ուզի արծաթ, էս է արծաթ,
Ջեռ մի՛ զարկեք կարոս խաչին»։

Ջեն ընդունում, գնում են լուսարարի դուռը.

Թափկով զարկին էն Լուսարարին,
Ելավ, բերավ սինով ոսկին,
Ասաց. «Առեք ձեր սղերի գին,
Դարձեք, գնացեք վեր ձեր հետին...»

Դարձյալ չեն ընդունում։ Նրանք գնում, մտնում են եկեղեցին և երբ ելնում, կանդնում են բեմի քարի վրա և ձեռ ձգում խաչին, այն ժամանակ՝

Կատղավ Ալին, կատղավ իր ձին,
Դարձավ կերավ իր ձիու ցին.
Կատղավ Մահմադ, կատղավ իր ձին,
Առավն առավ Թևի կաշին,
Ինչպես կտրի ձին իր զարին.
Լցին մեջ մազե խարարին,
Ուղարկեցին Քուրդ Պարոնին։

Երբն արդեն դյուղական է դարձած, բայց գյուղացին դրա մեջ բոլորովին կրավորական դրության մեջ է. հոգևորականության քարոզը թմրեցրել է նրան, թեպետ և արտաքին հարվածն ամենից առաջ նրան է հասնում։ Մահմադն ու Ալին հենց որ հայ գյուղն են մտնում՝

Փետ մի զարկին գեղականին։

Ինչքան էլ վեպի սկզբում իրրև գործող անձեր հանդես են գալիս հոտաղները, բայց նրանք ներկայացուցիչ չեն իրենց դասի և արտահայտիչ չեն իրենց շահերի ու գազափարների։ Կրոնական ոգին թափանցել է հոտաղների մեջ անգամ։

9. Նարեկացին։— Այդպես չե Գրիգոր Նարեկացու մասին երգված պատմական երգը, որի մեջ պատմված են այդ սրբի հրաշագործությունները[1]։ Դրա մեջ պատմականը Նարեկացին է, մեկ էլ այն, որ ժողովուրդը զարեր շարունակ հավատացել է նրա հրաշագործությանը։

Այդ երգված զրույցները նույնպես անպայման գալիս են հին ժամանակներից և ժողովրդական են դարձած, կամ թեևս հին կրոնական զրույցները ժողովրդական երևիների կողմից ելք ու ոտանավորների են վերածված։ Դրանց մեջ արդեն աշխատավոր գյուղացին, մշակներ են հանդես գալիս, և Գրիգոր Նարեկացին, այդ հրաշագործը, նրանց հայ ու ջուր տանողն է։ Նա թողնում, գնում է Ղազիդու կապանը. այստեղ նա մեռած հովվի փոխանակ յոթ տարի հովվություն է անում և իր վարձով պահում է հովվի որբերին.

Հերըմ շահող Նարեկեցին,
Գաս, գել խըտաց ի՛ երըծին.
Եկին, տեսան, զարմանք մընացին։

[1] Գ ա բ. Հ ո վ ս է փ յ ա ն, «Փշրանքներ», Թիֆլիս, 1892, էջ 16, հան.։

Հետո նա գնում է Մշու Լրկիրը և ծառա մանում մի գյուղացու մոտ, և իր հրաշագործությամբ պարտքից ազատում այդ գյուղացուն.

Պարտքընտեր պարտքից ազատող Նարեկեցին.
Վար Նարեկեցուն զարմանք մընացին։

Ապա նա գնում է մի գյուղ.

Գնաց, տեսավ՝ նորափեսեն մեռեր վար աթոռին,
Հեր, մեր նստած, դառնիկն կը լան։

Նա մեռելին հարության է տալիս, ապա՝

Թորկեց, եկավ, հասավ Նարեկ,
Մեռել հարուցող սուրբ Նարեկեցին։

Հետո նա իրեն փորձելու եկած վարդապետներին իր հրաշագործությամբ զարմացնելով՝ Նարեկից ճանապարհ է դնում յետ։ Այս վերջին դրույցը, եփած աղաքինևերին կենդանացնել ու թուցնելը, հայտնի է հին ժամանակներից։ Դա զուտ կրոնական հրաշագործական բնույթ ունի, ինչպես և հետևյալը.

Ելավ գչափուկ ջուր ելից,
Վերա կըրակ եղի.
Վար կըրակին բամբակն եղի, ասաց.
«Առնք, ձի [ձերը] առաջնորդին հաղիա տարնք»։
Ելան, առան, կյացին։
Առաջնուրդ ելավ, տեսավ՝
Նա ջուր զկըրակն էր ընցուցեր,
Նա կըրակ զբամբակն էր ընցուցեր։—
Շատ անախուռն զարմանք ճնացին,
Սըրփ զանեզան, սըրփ Նարեկեցին։

Այս զրույցներն սկզբնապես իրարուց անջատ են եղել. բայց վիպական զարգացման ընդհանուր հատկությամբ կցված են և կազմում են մեկ ամբողջություն, բայց ոչ դեղարվեստական միությամբ, ինչպես նախորդ երգը։ Դրանք մեկ երգ են, մեկ ամբողջություն են, որովհետև մեկ անձի վրա են երգվում իբրև նույն անձի հետզհետե կատարած արարքներ։ Դրանց միության կապը պահվում է նույն զործող անձով և սրա մի տեղից մյուս տեղ գնալով։ Անվախ զրույցների այսպիսի մշակում շատ ենք գտնում «Սասնա Ծռերի» վարիանտների մեջ։ Քանի դարձյալ ազատ ոտանավոր և անհանգ է, բայց սակավաթիվ տողերից։ Դրանով էլ այս երգն ավելի մոտ է «Սասնա Ծռերի» վարիանտներին։ Երգը չունի կրկնակ, բայց երգի քնարականությունը դեռ ուժում է այն բացականչությունների մեջ, որ երգիչ դուռանն անում է ամեն մի դեպքի պատումի վերջում։ Դրանք վերևում ընդգծված են։

10. «Ապան աղա»։— *Այս երգի սյուժեսը ոչ մի որևէ պատմական իրողության վրա է հիմնված, այլ ընդհանուր առնդծական բնավորություն*

ունի և կա մասամբ նաև ուրիշ ազգերի մեջ։ Այսպես՝ հին հունական առասպելով Հերակլեսը մահվան աստուծու ձեռից կռվով խլում է նրա ավարը, իսկ նոր հունական մի երգի մեջ երիտասարդ հովիվը երկու օր կռվելով Խարոսի հետ (որ իր մեջ միացրած ունի հին Թանատոսին, մահվան աստուծուն, և հին Խարոնին—մեռելներին նավակով Սուիքս գետի մյուս կողմն անցկացնողին), հաղթվում է նրանից։ Իսկ մեր երգերի մեջ Ասլան աղան մի օր կամ երեք օր (նայելով փոփոխակին) կռվում է Գարբիել հրեշտակի հետ, որ փոխանակել է հին Հոգեառ Գրողին, և պարտվում է նրանից։

Ինչքան էլ այս վիպական երգի առաջին մասի նյութն այսպես ընդհանուր է, բայց և այնպես ամբողջը մշակված և պատմված է ազգային ձևով ու գույնով, հարմարեցրած հայկական հավատալիքներին, ևոր միջադեպերի հարակցությամբ։ Միաժամանակ և դրա մեջ մեր գյուղացի երգիչն արտահայտում է իր և իր դասի հայացքը և իղձերը։

Հանձին Ասլան աղի հանդէս է գալիս հին փարթամապած ֆեոդալը, «մեծ թագավորի» որդին։ Ծնողները նրա համար բերում են «մեկ լավ, ընտիր աղջիկ», «անունն էլ Մարգարիտ»։

«Քսան ու չորս երկրի երևելի իշխանքաեր ժողովեցին, եկան խարսնիս։ Տասվերկու տարից Ասլան աղեն փսակեցին։

Ֆյառսուն օր էնու խարսնիս, ուրախութին էրին։ Ծառ, ճյուղ, սար, քար ուրախութին էրին։ Ինչ որ կըեր Ասլան աղի խարսնիս՝ էգա քյառասուն օր կ'ուտին, կը խմին, կը խաղան»։—Այսպես և հեքաթներում քառասուն օր ու քառասուն գիշեր հարսանիք են անում։

Ասլանը հարուստ է, ունի «յոթ բուրջ ոսկի», «յոթ բուրջ արծաթեղեն», նա այլևս «փաքի չունի աստանվորի մալին»։ Նա ուրիշ բան չգիտե, բայց եթե այն, որ կը նստի իր «նախշուն օդայում»,

Կուսի իր խաց, կը խմի իր գինին,
Ասաանվոր կանի մեջ աշխարքին։

Բայց նա միաժամանակ և կտրիճ աղամարդ է. ունի, ինչպես Մոկաց Մհրգան, նժույգ Բոզ-Բեղավին, սադաֆի թամքով և ոսկե ասպանդակներով. ունի Քրմանի թուր կամ, ըստ մի փոփոխակի, Կայծակի թուր, և այսպես զինված՝ գիտե համարձակ դուրս գալ ասպարեզ և կռվել ամենքի հետ։ Նա մահից չի վախենում, «չգիտե, որ մեռնել կա աշխարհում»։

Դա միջնադարյան ռազմիկ ֆեոդալն է իր զենք ու զրահով, իր կռվի տեսչով և կերպարանքով։ Բայց դրա վիպական երգն անցել է գյուղացուն—ուստի, ինչպես «Սասնա Ծռերի» մեջ Դավիթը, նույնպես և այդ Ասլանը դարձել է աշխատավորի իդեալը։ Նա պաշտպան է իր աղքատ ժողովրդին՝ հանձին ամենաաղքատ մարդու։

Մի օր քսան տարեկան հասակում նա, ուրախություն անելիս, ծառային ուղարկում է հացի ու գինու, պատվիրելով, որ շուտ գա հասնի իր խնջույքին։ Ծառան, որ իր տիրոջ մի կրկին պատկերն է, գնում տեսնում է, որ աղքատը մեռել է փողոցի մեջ, թաղող չկա։ Քահանան էլ առանց վարձի այսպիսի աղքատին չի թաղում։ Նա իր գլխի փուշին-փաթաթանը

տալիս է քահանային իբրև վարձ, մեջքի գոտին տալիս է պատանքի համար (որովհետև ըստ հայկական ծեսի մեռելն անպատճառ սպիտակ պատանքով պետք է թաղվեր), աղքատին տանում են, թաղում, և այդ պատճառով ծառան ուշանում է։ Ասլանը սաստիկ բարկանում է, բայց ոչ իր ծառայի վրա։

Ասլան աղի աչքեր գաղրավ վար բունին։
Ասաց.—Ան վոճ ի առիր զիմ աղքտի խոզին.
Թը կերի[1] Թըխ գա, առնի զիմ քաղցրիկ խոզին։

Ծառան ասում է.

«Ասլան աղեն, կուրբան կըլինիմ քեզի,
Գաբրիել հրեշտակն ի երկնային
Առի դաղըտի խոզին»։

Ասլանն այդ չի հասկանում. ուստի նա (ըստ վոփոխակին) դարձյալ պարծենում է.

Ասաց.—Իսն իմ Ասլան աղեն,
Թագավորու աղեն.
Էն վով քան ձի կորիճ,
Վոր մեռուցեր զիմ աղքատ մեջ փողոցին։

Նրան պատասխան են տալիս.

«Էնի Գաբրիելն էր կորիճ,
Ոա իմ գո երկինք,
Մեկն կը գներ գետին,
Համ կը մեռուցեր զաղքատ, համ զզանգին,
Սնաթ չուներ հեչ մեկ թագավորից»։
Ասլան աղեն կանչեց, ասաց.
«Իս ճնաթ չունիմ Գաբրիել հրեշտակից.
Իս կ'ըլնիմ, խեծնիմ գիոգ-Իեգավին,
կըգնիմ քամակ զին սագաֆին,
կըկախիմ մոտեն ըռքերն ը ոսկին,
կ'առնիմ իմ ձեռ Թուր կեծակին,
կ'ըլնիմ կըկանգնիմ մեջ իմ բաղչին.
Որ Գաբրիլ շատ կըտրիճ ի,
Թը (Թող) կյա, իմ գեմ կանգնի։
Որ իմ դեմ կանգնի, խետ կը կռվիմ,
կը զարկիմ, գհրեշտակ կըսպանիմ,
Իմ աղքտի փոխ կրհանիմ։

Այսպես նա մարտակոչ է անում Հոգեառին, և սա երկնքից իջնում, կանգնում է նրա առաջ։ Ծառային Ասլանը պատվիրում է Թամբել ձին, դուրս քաշել։

1 Թե կաթող է։

Ասլան աղեն իջավ մեջ մեյդանին,
Կանչեց Գաբրիլ հրեշտակ երկնային,
Էսաց.—Դու բան լինչ ունիս իմ աղքտին,
Որ կառնիս դիմ աղքտի խոզին։
Արի ըստա, առ դիմ քաղցրիկ խոզին։

Սկսում են մենամարտել։ Ասլանը ուժեղ հարվածներ է հասցնում Գաբրիելին, իսկ սա կամաց է դարնում նրան։ Բայց վերջը «Տերն քաղցրացավ», այսինքն աստված թույլ տվեց, և Հոգեառն ուժեղ հարվածեց Ասլանին, կամ, ըստ առաջին փոփոխակին՝

Կեսօրին հրեշտակ աչքեր շլից վար Ասլան աղին,
Ասլան աղեն ավալ-թավալ էկավ ինկավ վար իր դոշակին։

Եվ այդ խիղախ ու անձնապաստան կորիճը պիտի մեռնի։

Բայց կարծղ է այդ թույլ տալ մեր ժողովրդական վիպասանը։ Այդ միևնույնը կլիներ, եթե Դավիթն սպաներ Մսրամելիքից և ոչ ընդհակառակն։ Ասլանը, սակայն, չէր կարող սպանել Հոգեառ Գաբրիելին։

Այստեղ հարակցվում է երկրորդ մասը։

Մի անգամ որ մահը պատկերացված է ըստ հին հավատալիքի իբրև կռիվ Հոգեառի դեմ, վիպասանն Ասլանին մահից ազատում է դարձյալ ըստ հին հավատալիքի, այն է՝ եթե հիվանդի հոգու փոխանակ մեկն իր հոգին ուղի տալ, այն ժամանակ Հոգեառը հիվանդին կթողնի և այդ մարդու հոգին կառնի։ Այս նախնական հավատալիքն իբրե մի գերապրուկ մինչև վերջերս դեռ կար մեր սնոտիապաշտ ժողովրդի մեջ, և նույնիսկ առանձին արարողություն էին կատարում հիվանդի հոգու փոխանակ իբենց հոգին Հոգեառին առաջարկելիս։ Վիպասանն ահա այս հավատալիքից օգտվելով՝ զարգացնում, ընդարձակում է վեպը մի նոր անկախ սյուժետով։

Ասլանը նեղ ընկած՝ շատ է խնդրում, աղաչում Գաբրիելին, որ խնայի իրեն։ Հրեշտակն ասում է. «Կամ մեկ մարդ կբերես, հոգին տա քո հոգու փոխանակ, կամ քո հոգին կ'առնեմ»։—Բայց ով պիտի տա իր հոգին Նրա հոգու փոխանակ։ Ծնողները։

Ներիկ ասաց.—Կուրբան կ'ըլնեմ քի, Ասլան աղեն,
Ի՞նչ ավալ-թավալ եկիր, ինկիր իս վար քո դոշակին։
Ասաց.—Կյացիր իմ կռիվ խետ Գաբրել հրեշտակին,
Եկիր կ'ուզի դիմ քաղցրիկ հոգին։
Ասաց.—Դու տու քո Բող-Բեզավին,
Դու տու քու դին [թամք] Սադաֆին,
Դու տու քու Թուրն ի Քրմանին,
Դու տու քու յոթ բուրջի ոսկին,
Դու տու քու յոթ բուրջի արծըթեղեն,
Դու մի տա քո քաղցրիկ հոգին։
Ասաց.—Գաբրել հրեշտակն ի երկնային,
Թմահ չանի աստանվորի մալին,
Հոգի մ'կուղի իմ խոգու.փոխանին։
Ներ ասաց.—Իրեք խաբիր տարի ումր իմ արիր,—

Նորափեսա իմ վաղ ասկի աթոռին,
Իմ խոզին չեմ իտա քո խոզու փոխանին։

Նույնը նույն ձևով ասում է և ևրևք հարյուր տարի ապրած մայրը, որ իրեն դեռ համարում է «նորահարս քողն երևելին»։

Ալանը նեղն է ընկնում։ Բայց ահա գալիս է կինը և ասում է.

Ասաց.—Ես չէր պիտի, քև խոզին կ'ուզին խոզու փոխանին,
Խալալ սրտով իմ խոզին տվիր իմ քու խոզու փոխանին։

Ալան աղան ժրտում, նատում է, և կինը հիվանդ պառկում։

Գարբիլ հրեշտակ գխոզին քաշից չուր վար սրտին.
Ասաց.—Քու խոզին մի տա էնու խոզու փոխանին.
Ներ նկավ՝ չետու, մեր նկավ՝ չետու,
Դու ինչու կը տաս էնու խոզու փոխանին։

Կինը պատասխանում է.

«Ես խալալ սրտով իմ խոզին տվիր իմ էնու խոզու փոխանին,
Վաղ գը չըսին տաս որբավարին»։
«Որ վաղն ինձ չանվանեն դառն որբևայրի»։—

Այն ժամանակ հրեշտակը գնում է երկինք, Տիրոջը զեկուցում է այդ մասին և Տերը հրամայում է հոր ու մոր հոգին առնել, իսկ Ալանին ու Մարգարտին երկար կյանք է տալիս «կնկա խաթրի համար, էնու սերուբընկ խաթրի համար, որ մարդուն այնքան կըսիրէր»։

Ինչքան էլ այս վիպական երգի մեջ իրրև գործող անձեր հանդես են գալիս Հոգևոր Գարբիլն ու «Միայն Տերը» և երևում է վիպասանի և իր դասի անհավատքը, բայց դա իսկապես ոչ քե կրոնական երգ է, այլ ֆեոդալական կյանքից առնված կենցաղական վեպ։ Բավական է միայն «հրեշտակ» ու «Տերը» փոխանակել Ալանից ավելի գորեղ իշխաններով, և այն ժամանակ կունենանք մի իսկական ֆեոդալական վեպ, ըստ որի իշխանն իր ժողովրդին ուրիշ ֆեոդալների կեղեքումից ազատ պահելու համար, նրանց դեմ կռվի է դուրս գալիս և հաղթվում է։ Նա ոչ մի խոստումով չի ազատվում մահից, բայց նեե միայն իր սիրող կնոջ միջնորդությամբ, որի անձնազոհության համար՝ հաղթողը քողնում է իր պարտված հակառակորդին։

Հավատարիմ կինն իր ամուսնի մահից հետո չի ուզում ապրել իրրև որբևայրի։ Հիշենք Խանդութին Դավթի մահից հետո։

Այս վեպը կարևորություն ունի ոչ միայն իր բովանդակության ու վիպական արվեստի գեղեցկության կողմից, այլև հարակցական զարգացման նկատմամբ։ Սրա մեջ արդեն չկա ֆնարական տարրը, այլ ամբողջ երգը պատմվածք է նախնական վիպական կրկնություններով։ Գեղեցիկ հատվածներ կան և երկրորդ փոփոխակի մեջ[1]։ Հետաքրքիր է և այն, որ առա-

[1] *Տես՝ Գ. ս. Հովսեփյան, «Փշրանքներս», էջ 3—11։*

Ջին փոփոխակի ասացողը երգելով է ասել այդ վեպն ամբողջ (ընդամենը 104 տող), իսկ մյուս փոփոխակի վիպասանը մասամբ պատմել է և մասամբ երգել այդ վեպը։ Նա երգել է ոչ միայն հերոսների խոսքերը, ինչպես «Սասնա Ծռերի» մեջ է, այլ և պատմվածական մասերից, ինչպես, օրինակ, հետևյալը.

Ասլան աղեն, որ խեծավ Բոզ-Բեղավին,
Բռնեց իր ձեռ թուր կեծակին,
Դավի կանգնավ էն սուփ հրեշտակին։
Հրեշտակ որ երկնուց իջավ,
Ասա Ասլան բռնից լախբդին։
Իրիք օր, իրիք պիշեր կոխվ էրավ խատ Ասլան աղին, և այլն։

Այս վեպի օրինակով արդեն տեսնում ենք, թե ինչպես այն վիպական երգերը, որոնք սկզբում ամբողջապես երգվել են, հետագայում վերածվում են երգ ու պատմվածքի, ապա, ինչպես «Սասնա Ծռերի» մեջ է, երգվում են միայն այն կտորները, որ հերոսներն էլ երգել են։ Եվ վերջապես, ինչպես դարձյալ նույն «Սասնա Ծռերի» ուրիշ պատումների մեջ է, երգը վերանում է և իշխում է միայն պատմվածքը։

Այս վիպական երգի տողերն ևս երգված մասերի մեջ, սակավ բացառությամբ, վերջանում են այս կամ այն հանգով, բայց պատմված մասերն անհանգ են։ Ոտանավորը նույն չափով է, ինչ որ մյուսները և «Սասնա Ծռերի» վարիանտները։ Վանկերի թիվը տողերի մեջ 6—16։

Ամփոփենք հետևությունը։

Կատարված դեպքերի անմիջական ազդեցության տակ ծագած սկզբնական վիպական տարրերն են լայ ու կոծի և գուսանների սկզբնական պատմական երգերը։ Դրանք հորինված են շատ պարզ արվեստով։ Կանոնավոր ոտանավորներով հորինված մեկ կամ երկու բեյթեր, երկատող տներ կազմում են առանձին երգեր իրենց քնարական մասով, կրկնակով։ Դրանց մեջ երգվելով պատմվում է նույն նյութի տարրեր կողմերի մասին։

Միմյանցից անկախ այդ երգերը կամ, ինչպես հներն ասում էին, «խաղք երգոց», իրենց ընդհանուր կրկնակով և երգված նյութի նույնությամբ հարում են իրարու և, եթե պատահաբար կամ գիտակցաբար որոշ դասավորությամբ են ասվում, կազմում են մի քիչ ավելի մեծ երգ, բայց ընդհանրապես մասերի թուլ կապակցությամբ։ Այս է սկզբնական պատմական երգերի տարրական դարգացումը, որ սակավագեպ է երևան գալիս։ Այս դարգացած ձևով էլ, ինչպիսին է «Լեվոնի երգը», այդպիսի պատմական երգերը, իրենց կանոնավոր ոտանավորներով, քնարականությամբ և կատարման եղանակով, շատ հեռու են «Սասնա Ծռերից»։

Զարգացման հետագա աստիճանի վրա վիպական երգերն ընդարձակված են և հորինվում են արդեն ազատ ոտանավորներով, ճիշտ նույն չափով, ինչ որ մեր մեծ վեպերը։ Բեյթեր չկան. բայց երգը դեռ բաժանվում է մեծ ու փոքր հատվածների, որոնց վերջում ասվում է կրկնակը։ Բովանդակությունը մի հատիկ դեպքի պատմություն է, ինչպես «Սասնա Ծռերի» մեկ միջադեպ։ Այսպես է «Մոկաց Միրզա» պատմական երգը։

Վիպական յերդը հետզհետե ավելի է մոտենում «Սասնա Ծռերին»։ «Կարոս Խաչի» մեջ արդեն գանում ենք երկու տարրեր տարրերի գեղարվեստական հարակցություն, — որ սովորական է վեպերի մեջ, — և ավելի ևս ընդարձակ պատմվածք նույն ազատ ոտանավորով, բայց դարձյալ քնարական ոգով և կրկնակով հատվածներից հետո։ Հարակցությունը մեքենայարար չի լինում, այլ նյութի վերամշակումով։

Նույն հարակցությունը կա և «Նարեկացին» երգի մեջ։ Այստեղ տարբեր գրույցները հաջորդում են միմյանց հերոսի նույնությամբ և նրա տեղից տեղ գնալու ընթացքով, ինչպես հաճախ «Սասնա Ծռերի» մեջ է։ Կրկնակ չկա արդեն, բայց դեռ կա քնարական արտահայտություն։

Եվ վերջապես «Ալան աղա» վիպական երգի մեջ ոչ կրկնակ կա, ոչ քնարական արտահայտություն։ Դրա մեկ վարիանտն սկզբից մինչև վերջը երգված մի պատմվածք է։ Երկրորդ վարիանտը մասամբ երգված, մասամբ առանց երգելու պատմվածք է ազատ ոտանավորով, ինչպես «Սասնա Ծռերը»։ Կազմված է հարակցությամբ տարրեր, մասամբ ընդհանուր բնավորություն ունեցող, գրույցներից, ինչպես «Սասնա Ծռերը»։

Այսպես ուրեմն, վիպական երգն սկսվելով պատահած դեպքերի անմիջական ազդեցությամբ հորինված կես քնարական ու կես վիպական երգերից՝ հետզհետե մեծանում, ընդարձակվում է տարրեր նյութերի հարակցումով, թողնում է քնարական բնավորությունը, դառնում է ազատ ոտանավորով հորինված երգախառն պատմվածք։ Այդպիսով պատմական-վիպական երգը մոտենում է «Սասնա Ծռերին», միայն վերջինս շատ ընդարձակ չափերով է զարգացած քան մեր վիպական երգերից որևէ մեկը։

Երգերի այս զարգացումը կատարված է, հարկավ, երկար ժամանակի ընթացքում։ Բայց, ինչպես սովորաբար լինում է ուրիշ դեպքերում ևս,— այսինքն՝ միաժամանակ ապրում են զարգացման զանազան էտապների արդյունքները,—այսպես էլ այս դեպքում։ Մեր ժամանակում գանում ենք զարգացման տարբեր ձևերը։

ՊՐՈՖ. Դ-Ր Հ. ԱՃԱՌՅԱՆ

ՆՈՐ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. ՀԱԿԻՐՃ

Այս բառի համար Արմ. բառարանում գրված է միայն հետևյալը. «Պատահական նմանութիւն ունի պհլ. hakirč *«երբեք, երբ և իցէ»։ Ուրիշ ոչ ոք այս բառի մասին չի խոսել։*

Ուզում եմ հաստատել, որ հյ. հակիրճ *«համառոտ» բառը փոխառյալ է պհլ.* hakirč *բառից։*

Պհլ. բառի մասին խոսել են Horn § 1092 *և* Bartholomae, Altir. Wört. *էջ 1743. առաջինը պահլավ ձևը կարդում է* akarč, hakarč, hakarǰ, *իսկ երկրորդը՝* hakirč, hakurč: *Բնականաբար ես ընտրում եմ* hakirč *ձևը, որ ճիշտ համապատասխանն է հայերենի։*

Քննիչները պհլ. բառը միացնում են հպրս. *hakaramčiy *«մեկ անգամ», պնդ.* hakərət *«մեկ անգամ,* semel, *միայն մի անգամ, մի անգամից, մի հարվածով»=սանս.* sakṛt *և պրս.* hagirz, hargiz *«երբևիցե» բառերին։ Ոչ ոք չի համեմատած հայերենի հետ։*

«Մի անգամ, մի անգամից» և «համառոտ» միևնույն գաղափարներն են. «մի անգամից ասա, պրծիր» միևնույն է թե ասենք «կարճ ասա, վերջացրու»։ Լատիներեն semel *«մի անգամ» բառից ոճով ասվում է* ut semel finiam *«համառոտելու համար»։*

Ըստ այսմ հյ. հակիրճ *և պհլ.* hakirč, *որոնք ձևով բոլորովին նույն են, նույնանում են նաև իմաստով.—անտարակուսելի է, որ հայերենը փոխ է առնված պահլավականից։*

2. ՊԱՏՇԳԱՄ(Բ)

Այս բառը երկու ձևով է գրվում՝ պատշգամ(բ) *և* պատշկամ(բ). *առաջինը շատ տարածված, երկրորդը՝ գոյութիւն ունի արդի գրականութեան մեջ, բայց շատ անսովոր է և նույն իսկ սխալ է համարվում։ Հայկազյան բառարանը գիտե երկու ձևով էլ։*

Երբ մի բառ կրկնակ ձև ունի, անշուշտ մեկը սխալ է. իսկ այդ սխալը գտնելու և հաստատելու միակ միջոցն է բառի ստուգաբանութիւնը։

Պատշգամբ *բառը իրանական ծագում ունի. փոխառյալ է պահլավերեն* *patškamb *ձևից, որ բուն նշանակում է «այնավոր, այնապատ» (ծագում է* pat *մասնիկով՝* skamb *«այուն» բառից. ավելին տես Արմատական բառարան)։*

Սրանից հետևում է, որ ուղիղ ձևն է միայն պատշկամբ։ *Արդեն ձայնաբանորեն շ բաղաձայնից հետո չի կարող հաջորդել թրթռուն գ, այլ խուլ կ։ Ուրեմն* պատշգամ(բ) *սխալ ձևը առաջացել է հետին արևմտյան տառադարձութեան համեմատ. և որովհետև բառարաններում, այբուբենական կարգով,* պատշգամ *ավելի առաջ է քան* պատշկամ, *սրանով էլ առաջնութիւն է ստացել և տարածվել, ուրիշ զանազան սխալ ձևերի նման (ինչպես* քաղդ, շերաս, պարկել՝ *փոխանակ* բախտ, շերամ, պառկել)։

3. ԹԻՒ

Այս բառի ծագումը ճիշտ որոշված չէ՝ համապատասխան մի ձև չգտնվե-լու պատճառով։

Հին հունարեն անսովոր, անգործածական կամ գավառական բառերի մի հավաքածու կա, որ ավանդել է մեզ Hesychios *ալեքսանդրացի հույն հեղինակը (շուրջ 400 թվին)։ Լեզվաբանները հաճախ օգտագործում են այս հավաքածուն՝ հնավանդ բառերի համար։ Այդտեղ գտնում եմ հունարեն* ταῦς *«մեծ, շատ» և* ταῦσαι *«մեծություն, շատություն» բառերը, որոնք ճիշտ հա-մապատասխանում են հայերենին։ Ուրեմն* թիւ *բնիկ հայերեն բառ է՝ հնդեվրոպական* tēw *արմատից։*

4. ՀՈՅԱԿԱՊ

Բնականաբար կազմված է կապ, կապել *բայով՝* հոյ *արմատից, որ առանձին չէ գործածված, բայց գտնվում է նաև* հոյաշեն *և* հոյակերտ *բա-ռերի մեջ։*

Ի՞նչ է այս հոյ *բառի ծագումը։*

Մի բառի ծագումը գտնելու համար մենք երկու ձև ունինք. կամ վերցը-նել հնդեվրոպական արմատը, կատարել նրա վրա բոլոր ձայնաբանական գործողությունները և հասնել հայերեն ձևին, եթե կա. կամ՝ վերցնել հայե-րեն ձևը, հետ տանել նրա ամեն մի տառը դեպի իր նախնական ձևը և հաս-նել հնդեվրոպական արմատին։ Կատարելով այս երկրորդ միջոցը հոյ *արմա-տի վրա, կտեսնենք, որ* h *կարող է ծագել* h *կամ* s *ձայնից, ո ծագում է* o *ձայնավորից, իսկ* յ *երկու ձայնավորի միջև՝* t *բաղաձայնից. այսպեսով՝* հոյ *բառը պետք է առաջացած լինի* pot *կամ* sot *արմատից։ Հնդեվրոպական բա-ռարանում չունինք* sot *արմատ, բայց շատ հայտնի է* pot, poti, *որ նշանա-կում է «տեր, իշխան» և գտնվում է բոլոր հնդեվրոպական լեզուների մեջ. այսպես՝ ունինք սանսկրիտ* pâti, *զենդերեն* paiti, *հունարեն* pósis, des-pótēs, *ալբաներեն* pata, *լատիներեն* potis, potior, potissimus, *լիթվաներեն* patis, pàts, *սլավոնական* gos-podь *և այլն։ Պակասում էր միայն հայերե-նի մեջ, ուր և երևան է գալիս այժմ։*

Այսպեսով՝ հոյակապ, հոյաշեն, հոյակերտ *բառերը նշանակում են «իշխանական, իշխանի համար շինված կամ կերտված» և ըստ կազմության համապատասխանում են ճիշտ ու ճիշտ զենդերեն* xšaθrō-kərəta *բառին, որ* Bartholomae-*ի բառարանը (էջ 547) մեկնում է «für den, die Herrscher erbaut, fürstlich», իշխանի համար շինված, իշխանական=հոյակերտ։*

Ոմանք լեզվաբաններ poti *բառից գնում էին մեր ազգի անունը* (հայ), *իբր թե իշխողների անուն։ Այս ստուգաբանությունը սխալ է, որովհետև հնդեվրոպական* o *չի տալիս հայերեն* ա։ *Իսկ նրանք, որոնց համար արժեք չունին ձայնական օրենքները, իբր ճիշտ էին ընդունում այս ստուգաբա-նությունը։ Մեր տված բացատրությունը* հոյ *բառի ծագման մասին՝ իբր ներկայացուցիչ* poti *բառի, վերջնականապես ջնջում է* հայ *բառի այս սխալ ստուգաբանությունը։*

4 հոկտ. 1940

ՊՐՈՖ. Լ. ՄԵԼԻՔՍԵԹ-ԲԵԿ

ՄԻ ՍՈՌԱՑՎԱԾ ՀԱՅ ԲԱՆԱՍՏԵՂԾ

(Աշըգ Իհաի—Ծաչատուր Էհրամճյանց կարնեցի)

Երբոր գառնամ ես հայրենիք՝
Հարբստացած և ապահով,
Էլ ինչո՞ւ լա իմ զարենիք,
Իմ պըսակը էլ չէ ամով։

Այսպիսի խոսքերով էր արտահայտում իր տենչանքը՝ տեսնել ավերածութեյան ու կոտորածի ենթարկված Հայաստանի ազատագրումը Բաֆֆու ժամանակակից այն հայ բանաստեղծը, որի քնարը լուրթյան էին մատնել ցարական ցենզուրայի ջերմեռանդ սպասավորները։

Մեր ձեռքի տակ է Թբիլիսիի՝ Ստալինի անվան Պետհամալսարանի հայագիտութեյան ամբիոնի ձեռք բերած՝ կորստի մատնված բանաստեղծի երկերի ձեռագրատետրը, մի մասն այն ժողովածուի, որ իր ժամանակին տպագրութեյան է պատրաստվել և ցենզուրային ներկայացվել հետևյալ վերնագրով.

ԿԱՐԻՆԻ ՍՐԻՆԳԸ

Փչեց
Աշըգ Իհաի
Ա. հատոր

Այս վերնագրի տակ, մի այլ ձեռքով, կլոր փակագծերի մեջ ավելացրած է՝ Ծաչատուր Էհրամճյանց։

Հիմնական վերնագրի տակ, աջից, նույն ձևոքով գրված է՝ իբրև էպիգրաֆ՝ հետևյալ բանաստեղծութեյունը.

Աշղի շնորք չունիմ, քո սերն ինձ աշըղ կը շինի
Սերն շատին լեզու տվավ, ինձ էլ սիրահար կը շինի,
Համ կերգեմ, համ կը կանչեմ, քանի բերանս շունչ կը լինի,
Իմ բուրաստան, իմ վարժարան, ախ քեզի ծաղկած չտեսի։

Իղձ բանաստեղծութեյան։

Նույն առաջին երեսի վրա կա երկու մակագրութեյուն ռուսերեն լեզվով, մեկը՝ վերևի ծայրին՝ սև թանաքով, իսկ մյուսը՝ ներքևում՝ կարմիր թանաքով։

Առաջինը կարդացվում է այսպես.

Поступ. 25-го Июня 1888 г.
Тифлис.

Երկրորդը կարդացվում է այսպես.

Дозволено Цензурою
Тифлис, 1-го Июля 1888 г., с исключ.
Младший Цензор Григ. Караханов.

Երրորդ մակագրությունը՝ առաջերեն լեզվով, սև թանաքով, գտնվում է տիտղոսաթերթի երկրորդ երեսին՝ հետևյալ բովանդակությամբ.

По журналу Цензурного Комитета 12 Сентября 90 г.,
определено: в виду 22 и 105 ст. Уст. Ценз., изд. 86 г.,
напечатание воспретить и удержать при делах Комитета.
Председатель Комитета К. Якимов,
Секретарь Н. Мелик-Нубаров.

Ձեռագրի տևողը սովորական փոլիանա է (դավթարի ծավալով) և պարունակում է 81 էջ, ուր ամփոփված է ընդամենը 64 բանաստեղծություն։

Այդ բանաստեղծություններից զրաքննչի կողմից կարմիր թանաքով կամ կարմիր մատիտով ջնջված է լիովին 8 հատ, այն է՝

— Իմ երգը. հ. 1, 4 տուն (էջ 1)։

— Մրմունջ երիտասարդի. հ. 15, 23 տուն (էջ 37—40)։

— Վարդանի երկու խոսքը նիզակակիցներին. հ. 16, 10 տուն (էջ 40—41)։

— Եղիշե պատմագրին. հ. 17, 6 տուն (էջ 42)։

— Խրիմյան Հայրիկին. հ. 18, 28 տուն (էջ 43)։

— Հինը անցավ. հ. 28, 3 տուն (էջ 58)։

— Տարօրինակ. հ. 29, $2^1/_2$ տուն (էջ 58)։

— Խրատ տշըխ Մալիխին (ալևքսանդրապոլցի). հ. 64,20 տուն (էջ 79)։

Տեղ-տեղ առանձին տուներ են ջնջված հետևյալ բանաստեղծություններում.

— Պանդուխտի նոր տարին. հ. 4 (էջ 10—12)։

— Ախ աչեր. հ. 5 (էջ 12—13)։

— Հողագործին. հ. 6 (էջ 13—14)։

— Աշխարհ. հ. 8 (էջ 14—16)։

— Փանդված օճախ. հ. 9 (էջ 16—23)։

— Մի գպիր և ֆրանսագետ մի հայ. հ. 11 (էջ 30—31)։

— Ծերունի կին. հ. 27 (էջ 57—58)։

— Աշըգ Ինաին—Խաչատուր Էրզրումցյանցը, անտարակույս, հեղինակն է 1887 թ. Թբիլիսիում հրատարակված երկի, որ պարունակում է 128 էջ, հետևյալ վերնագրով.

«Վարվառե կամ 19-րդ դարու զոհը, կարնո հին գյուղական կյանքից. Նկարագրեց Խ. Ս. Ե. (Կարինցի)» (հմմ. Արսեն Ղազիկյան. Հայկական նոր մատենագիտություն և հանրագիտարան հայ կյանքի։ Ա. Հատոր. Վենետիկ, 1909—1912, էջ 672)։

Ծարական ցենզուրայի կողմից տպագրությանը արգելված ձեռագրատետրի հեղինակը, լինելով ծագումով էրզրումցի (Կարինից), անկասկած, գաղթած պիտի լինի 1877—1878 թ.թ. ռուս-տաճկական պատերազմի ըն-

թացքում։ Նա պատկանում է գաղթականության այն հոսանքին, որ անցել է նախ Արաքսի և ապա Ախուրյանի հովիտը։ Իբրև ականատես պատերազմական գործողությունները համընթաց սովի, կոտորածի և այլ չարիքի, բանաստեղծը հիշում է «արյունաներկ ջուրն Արաքսի» իր առաջին ոտանավորում (Իմ երգը, էջ 1).

Թեպետ անշուք կա Արծն, Սխա,
Եվ անթիվ է ցաքն իմ նախնի,
Արյունաներկ ջուրն Արաքսիս
Սրտումս միշտ հիշատակի։

Բանաստեղծին, իբրև տաճկահայի, քաջ ծանոթ է Թյուրքիայի և, մասնավորապես, Թյուրքահայաստանի միջավայրը. ուստի և նա հիշում է համապատասխան վայրերը. Արծն, Սխա (էջ 1), Զեյթուն (էջ 14), Պուլանըխ (էջ 23), Տիգրանակերտ (էջ 37), Բյուղանդիոն (էջ 38), Տարոն (էջ 43) և այլն։

Նա ունի նաև 21 տունից բաղկացած հատուկ ոտանավոր «Կարնեցվոց դիմառնական պարերգը» (էջ 46—50), ուր, ի միջի այլոց, հիշում է տեղական առևտրական և «բարեգործ» Սանասարյանի անունը։

«Պանդուխտի նոր տարին» բանաստեղծության մեջ (էջ 10—12), որ երգվում է «Ինձ համար չէ գարնան գալը» երգի եղանակով, հեղինակը հիշում է.

Այլևս ինչ հույս աշխարհումս
Անձնավորության մի տկար.
Հուսահատված իմ կյանքումս
Երբ գլխումս կա տխուր կամար։

Այդ կամարը չէ հաղթական,
Կամ ի նշան երջանկության.
Ծանր մի լուծ օտարական
Կուզե ինձալ գլխիս վերան։

Բանաստեղծին խորթ է «հյուսիսը», ուր էլ նա գաղթել է. ուստի և միանգամայն հասկանալի է, թե ինչու նրան դուրեկան չէ «սառն օդը հյուսիսային» (էջ 1).

Ո՛հ պղտոր ջուր՝ ամպոտ կամար,
Կամ սառն օդ հյուսիսային.
Տանի՛մ զրկանք խիստ անհամար,
Քանի՛, քանի՛ դժոխային։

Իբրև Ախուրյան-Արփաչայի վայրում բնակության հաստատած մարդու՝ բանաստեղծին խորթ է թվում և իր նոր հայրենիքի ժողովրդի վարքն ու բարքը։ Խոսելով «Քանդված օճախ» երկում մի «մերկ աղքատի» մասին (էջ 16), բանաստեղծը, կարծես թե, ծաղրով նշում է.

Նա ոչ յուղ ուներ, ոչ մածուն, ոչ ձու,
Դրացիները գողցան նախանձու.
Միայն յուր հույսը Ախուրյան գետն էր,
Որ մի քանի ձուկ այնտեղից բռներ։

կամ (էջ 17)—

Դողդոջան ոտով հասավ Ախուրյան,
Ասավ, ով աստված, դու կաց պահապան։

Բանաստեղծը ոչ միայն գրագետ է, այլև գրակարդաց։ Իր «Օրոր» ոտանավորում (էջ 44) նա՝ դիմելով օրորոցի երևակային՝ ասում է.

Մի լար, հոգի ջան, քեզի զարդարեմ,
Մի լար, օրոցքդ մելանով պատեմ,
Մի լար, բարձիդ սակ գրքեր դրել եմ,
Քեզ համար ընտիր երգեր գրել եմ։

Ապա «Ուրատ աշըխ Մալիլին» (էջ 79) երկում բանաստեղծը նշում է

Ջեռս առա և կարդացի քո գիրքդ.
Նրանից հասկացա քո ունեցած ձիրքդ,
Վարքդ, բարքդ, խիղճդ և ամեն դիրքդ։

Բանաստեղծը հորդորում է «հասկացողին» (էջ 70)—

Իմաստության սեմի վերա քո անունդ նկարե,
Քո խրճիթի դրան առաջ ուտելու հացը ճարե,
Թե որ կուզես քո ապագադ խոշորացուցով դիտել.
Ճշմարտության ու գիտության քարերով պատդ շարե։

Բանաստեղծը, անկասկած, ծանոթ է հայ մատենագրության։ Նա ունի երկու ոտանավոր՝ նվիրված եղիշե պատմիչին. մեկը (էջ 42) 6 տունից բաղկացած՝ «Եղիշե պատմագրին», մյուսը (էջ 73) 3 տունից բաղկացած՝ «Եղիշե» վերնագրով։ Իսկ երկու ոտանավոր էլ, այն է՝ «Արտաշեսի վերջին խոսքը» (էջ 65—66) և «Արտաշես Բ-ի խրախույսը» (էջ 72)՝ Մ. Խորենացու ազդեցությամբ է հորինված։

Վերջինում բանաստեղծը, ի միջի այլոց, գրում է.

Արտաշեսը ջարդեց բյուր հազար Ալան,
Կուր գետը վճռեցին շինել գերեզման.
Ինաի, քեզ ճանչցեր ես անօգնական.
Առավ նա Սաթենիկ ծաղիկ հոտավետ։

Ընդամին հեղինակը մի ոտանավորում (էջ 44) անցողակի խոսում է նաև «Գողթանի քնարի» մասին։

Բացի դրանից՝ բանաստեղծը մի-մի անգամ հիշում է «Իմաստուն Սողոմոն»-ին (էջ 68) և «Ռոպինզոն»-ին (էջ 23)։

Բանաստեղծն որոշ չափով իրազեկ է պատմության փաստերին կամ ավանդություններին։

Մի տեղ հեղինակը խոսում է Արմավիր և Տիգրանակերտ մայրաքաղաքների մասին (էջ 37), կամ Հայկազանց մասին (նույն տեղ), մի ուրիշ տեղ՝ «Լանկ-Թիմուրի» մասին (էջ 38)։

«Զեյթունցի քահանայի շարականը պատերազմին» ոտանավորի մեջ բանաստեղծը՝ խոսելով Հայկազանց, Տրդատյան, Արշակունյաց, Բագրատունյաց և Ռուբինյան հարստությունների մասին՝ դիմում է «Ունայն աշխարհին» (էջ 16)—

Արշակունիք կործանեցան,
Բագրատունյան տունը կերար,
Ռուբինյանք էլ տապալեցան։

Այս բանաստեղծի, իբրև ժողովրդի ծոցից ելած գրողի ու ժողովրդի զավակի, սրտին միանգամայն մոտ են աշխատավոր ժողովրդի շահերը և, միաժամանակ, ատելի են վերջինիս կեղեքիչներն ու հարստահարողները։ Հատուկ բանաստեղծության մեջ, որ «Հողագործին» վերնագիրն է կրում (էջ 13), հեղինակը գրում է.

Գիտեմ. հողագործ, վաստակդ արդար էր.
Քո սիրտդ, միտքդ քեզի ամպար էր.
Երբոր հալալեդ հարամ խառնեցիր.
Դու էլ անոթի ու մերկ մնացիր։

Քո խորի ծայրը ինչո՞ւ ծռեցավ.
Կամ քո գութանը է՞ր ժանկոտեցավ,
Ասա, շուտ ասա, քանի՞ մեկ—քանի՞
Քրտինքիդ շահը քեզ չեն պիտանի։

Գոմերիդ միջից պակսեցավ կովը,
Էշդ ու գոմեշդ կուլ տվեց ծովը,
Մարդ անուն ունես և անարգվում ես.
Ջնջս գիտեր քեզի տապան փորում ես։

Ի դեպ, նշելու է, որ այս տուներից վերջինը ջնջված է գրաքննիչի կողմից։

Մի ուրիշ տեղ (էջ 15) բանաստեղծը դիմում է նույն հողագործին՝ ասելով.

Քեզ սիրողը շատ է աշխարհ,
Թլատները, կապալառուն։

Իր ժամանակակից աշխարհի անիրավության պատկերը բանաստեղծը ներկայացնում է «Ձկա» ոտանավորում (էջ 74), ուր ի միջի այլոց, ասում է.

Տեսեք գործը այս աշխարհին, լավ ապրելու ճար չկա,
Դեռ նոր ծնող տղաներին մի կաթնատու մայր չկա,
Եղբայրները իրարու հետ ամուր կապող լար չկա,

Շուկաները և ամեն տեղ ուղիղ տուր և առ չկա,
Հորդորական խրատատու մի ծերունի ճար չկա,
Լավ ապահով աշխատելու անբիծ սիրտ ու կար չկա։

Բանաստեղծը մի ոտանավոր ունի գրած Գեորգ 4-րդ կաթողիկոսի մահվան առթիվ՝ 1883 թ. դեկտեմբերի 6-ի թվահամարով (էջ 35—36), և մեկն էլ Խրիմյան Հայրիկին նվիրված (էջ 43)։

Սրանցից վերջինում հեղինակը, ի միջի այլոց, ցուցաբերում է իր վերաբերմունքը դեպի «Արծվի Վասպուրականի»-ն և այսպես կոչված «Հայկական դատը», դառնությամբ հիշում է «Մարմարայի Տարտանելի ալիքները», «Լոնտոն, Լոնտոն», «Կզզիք Բրիտանյան» և «Թագուհուն Անգլիական», «Գահն Անգլիական ու Գաղղիա», «Իտալիա», «Հռովմ», «Պերլին» և այլն, ուր շրջել էր Խրիմյանը՝ «Հայկական դատը» պաշտպանելու նպատակով։

Նույն տեղում բանաստեղծն անցողակի կերպով խոսում է և «Անգլիական ահեղ Ջարդի» մասին։

Մեր հեղինակը մի-մի բանաստեղծություն ունի նվիրած նաև իր ժամանակակից երկու աշուղները Ջիվանուն և Մալեկին։ Առաջին բանաստեղծության վերնագիրն է՝ «Ինդիր Աշըգ Ջիվանին» (էջ 78), յերկրորդինը, որ ամբողջապես ջնջված է գրաքննիչի կողմից, «Խրատ Աշըխ Մալեկին (ալեքսանդրոպոլցի)» (էջ 79—81), թեև Մալեկին երկու անգամ հիշվում է նաև Ջիվանուն նվիրված ոտանավորում։

Ստորև բերում ենք չորս նմուշ բանաստեղծի երկերից. «Իմ երգը («Ո՛հ ինչ անուշ» երգի եղանակով), «Ինդիր Աշըգ Ջիվանին», «Խոստովանություն» և «Սիրունին»։

ԻՄ ԵՐԳԸ

(«Ո՛հ ինչ անուշ» երգի եղանակով)

Ո՛հ ինչ ցավեր կամ մորմոքներ
Ջարչարում են ինձի հավետ.
Գնաց հույսս, որ ամոքվեր
Վշտոտ սիրտս իմ լայնանետ։
Նոքա ցավ են հալածանաց,
Նոքա զրկեն զիս ի կենաց։

Ո՛հ պանդուխտ տեղ՝ օտար երկիր,
Ի՞նչպես ապրեմ ես անտերունչ,
Կամ բյուրավոր անթիվ վերքեր
Քանի՞ տանեմ ես լուռ ու մունչ։
Նոքա խոցեր են օտարաց,
Նոքա զրկեն զիս ի կենաց։

Ո՛հ պղտոր ջուր՝ ամպոտ կամար,
Կամ սառն օդ հյուսիսային,

Տանեմ ղրկանք խիստ անհամար
Քանի՛ քանի՛ դժոխային։
Նոքա ջրեր են այլազգյաց,
Նոքա ղրկեն զիս ի կենաց։

Թեպետ անշուք կա Արծն, Սիս,
Եվ անթիվ է ցաքն իմ նախնի,
Արյունաներկ ջուրն Արաքսիս
Սրտումս միշտ հիշատակի։
Նոքա բեկորք են հայկազնյաց,
Նոքա հիշեմ ես անմոռաց։

ԽՆԴԻՐ ԱՇԸԳ-ՋԻՎԱՆԻՆ

Հարգելի ես, սիրելի ես ամեն մարդի, Ջիվան աշըգ,
Ինդրեմ՝ բացվես ու զարդարվես նման վարդի, Ջիվան աշըգ,
Անվանեցար երգիչներուն գլուխ զարդի, Ջիվան աշըգ,
Խլուխդ արժան է կրելու ձև ոսկեթել, Ջիվան աշըգ,
Քշնամիքդ Թող չորանան նման քարպի, Ջիվան աշըգ,
Ձայնին աշխարհիս մեջ առանց թակարթի, Ջիվան աշըգ։

Սովորեցնում ես անկասկած սրտով հայերը չզատել հայեն,
Բոզոքականներուն սիրել որպես քեզ ազատենք վայեն,
Ըրչափ եղանք անոնց Աբել, անոնք եղան մեզի կայեն,
Ա՛խ, գոնվել են անգլիական ահեղ ջարդի, Ջիվան աշըգ։

Սոխեն ազատվելու համար պտզատու բերք հարկավոր է,
Քաղցածներուն կշտացնելու անթիվ մթերք հարկավոր է,
Ափիդ ձայնը խմացնելուն երկու հատ ձեռք հարկավոր է,
Կուզեն վարվել մեզի հետ նըման կախարդի, Ջիվան աշըգ։

Թողնելով անդին Մանանան, սոխ ու սխտորը սիրեցին.
Մալելի պես թուլասրտին օտարները շուտ տիրեցին,
Ինդրեմ ներես, չեմ համբերել, ինձի անկլակ վատեցին,
Մեր ուննցած ճանապարհը պետք է հարթի, Ջիվան աշըգ։

Ազգատ, Քշվատ մի ժողովուրդ, որ չգիտեն քեզ ճամ նային,
Լավը լավին նվիրելով՝ անարգները վատին տային,
Դու ես Ջիվան, կա կուչը Մալել, հանկարծ տեսնք այս Իտալին
Ահա ըսկսում եմ խոսել առանց բարդի, Ջիվան աշըգ։

ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹՅՈՒՆ

Նետ ու աղեղ, սուր ու դանակ նետելով քեզ ատեցի,
Ջիմանալով քո արժեքըդ՝ ոչինչ գընով ծախեցի,
Շատ ժամանակ քեզի համար անձըս զոհել խոստացա,
Կըրկին անգամ չը խըղճացի քեզի այսպես խարեցի։

Սիրտըդ ընտիր, լեզուդ շատ պարզ, և միշտ էիր հարազատ,
Իայց ես քեզի անտրգելով օտար երկիր վարեցի,
Հրեշտակատիպ իմ սիրելի, տրխուր դեմքդ անարատ,
Դու կըսիրես Ինաիին, քեզ անտապան թաղեցի։

ՍԻՐՈՒՆԻՆ

Գընա, սիրուն, աչքըս չը տեսնեն քեզի,
Շատ ապերախտ երախտամոլ ես, սիրուն,
Առաջուց վատ աչքով նայեցիր մեզի,
Դու անիրավ ու բախտամոլ ես, սիրուն։

Ես էլ աշխարհիս մեջ հորից ծընվելով՝
Իմ հացըս ճարել եմ, կյանքըս գընելով,
Քեզ պես ապերախտին սաստիկ սիրելով՝
Հասկացել եմ, որ ախտամոլ ես, սիրուն։

Սոխակ չէիր, վարդին ինչո՞ւ սիրեցիր,
Անգութ, թե սիրեցիր, ինչո՞ւ ատեցիր,
Դու որ սիրտըդ Ինաիին զատեցիր,
Ի՞նչպես լինեմ ես, գաղտամոլ, ով սիրուն[1]։

---

1 Համմ. մեր նախնական հաղորդագրությունը—ծանոթությունը Աշըգ-Ինաիի մասին վերջին երկու ոտանավորի հրատարակությամբ, ժուռնալ «Արշավ»-ում (Թբիլիսի), 1940 թ. № 2, էջ 35։

ԱՐ. ՂԱՐԻԲՅԱՆ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԼԵԶՎԻ ՄԻ ՀՆԱԳՈՒՅՆ ՎԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Անանուն մեկնիչի քերականության մեջ կա մի ուշադրավ վկայություն.

«Այլ էր իսկ ճշմարտապէս և ի տեսակի խաւսիցն, որպէս բազուկ, պազուկ, փազուկ»[1]:

Այդ վկայությունը պարզապես ասում է այն մասին, թե ժողովրդական լեզուն ունի տարբեր վարիանտներ՝ «տեսակ խաւսից», այսինքն՝ բարբառներ, որոնք տարբեր սիստեմ են ներկայացնում, գոնե իրենց հնչյունական կազմության մեջ: Դադափար չունենալով հնչյունաբանության մասին, Անանունը, այնուամենայնիվ հնարավորություն է գտել արտահայտելու այդ սիստեմների տարբերությունը և, որպեսզի օրինակով պարզ դարձնի իր ասածը, նա ընտրել է «բազուկ» բառը, այսինքն՝ սկզբին շրթնային ձայնեղ ունեցող մի բառ, և տվել այդ ձայնեղի տեղաշարժը դիպի աչ՝ բ, պ, փ:

Այդ վկայությունը խիստ ուշագրավ է այն պատճառով, որ բարբառների ուսումնասիրությունը ցույց է տալիս այդ տեղաշարժի առկայությունը հայերենի մեջ նաև ներկայումս:

Որպեսզի մեկ առ միշտ կարողանանք գործածել «տեղաշարժ» տերմինը և օգտագործել այդ տերմինը բարբառների զանազան սիստեմները համաոտ նշելու համար, որոշենք այդ տեղաշարժի ընթացքը և կարգը զանազան բարբառներում: «Տեղաշարժ» տերմինը մենք վերցնում ենք իբրև պայմանական տերմին, քանի որ, իրոք, չի եղել մեկ՝ միաձույլ հայերեն լեզու, որի հնչյունական սիստեմն այս կամ այն կերպ տեղաշարժվեր, այլ, ընդհակառակն, եղել են նախահայերեն տարբեր լեզուներ՝ յուրաքանչյուրն իր հնչյունական սիստեմով, որը եղել է կայուն և պահպանվել է այդ լեզուների մեջ այն ժամանակ, երբ նրանք վերասերվել են հայերենի բարբառների, նաև, այն ժամանակ, երբ նրանցից յուրաքանչյուրը իբրև հայերենի բարբառ պահպանվել է ու պահպանվում է մինչև այսօր մեր ժողովրդի յուրաքանչյուր տարբեր հատվածի բերանում: Յուրաքանչյուր նոր ձև, նոր լեզվական երեվույթ «հայական», այսինքն՝ ընդհանուր հայկական բնույթ ընդունելով՝ յուրաքանչյուր բարբառում ենթարկվել է այն հնչյունական սիստեմին, որն ունեցել է այդ բարբառը և որը ժառանգել է այդ բարբառը իր նախորդ

[1] «Дионисий фракийский и арм. толкователи», *1915 թ., էջ 149.*

անկախ վիճակից։ Այդ հասկանալի դարձնելու համար պետք է հիշենք այն պարզ երևույթը, որը նկատելի է ազրբեջանական լեզվի մեջ, երբ նա, ընդունելով պ, կ, տ խուլ հնչյուն ունեցող օտար բառեր՝ վեր է ածում իր արտասանության՝ փ, թ, ք. օրինակ՝ փարթիա—պարտիա, քոմունիստական—կոմունիստական, թելեգրաֆ—տելեգրաֆ։ Նույնպես և ռուսերենը և կամ մի այլ լեզու, երբ ընդունում է իր մեջ մի բառ, որն ունի իրեն անհարազատ որևէ հնչյուն, այդ հնչյունը վերափոխում է այնպիսի մի հնչյունի, որն իր լեզվի մեջ կա և ի մոտո համապատասխան է օտար հնչյունին (օրինակ՝ փափախ—папаха):

Այս եղանակով հայերենի յուրաքանչյուր բարբառ պահպանել է իր հնչյունական սիստեմը և, երբ համեմատում ենք բոլոր բարբառները գրաբարի հնչյունական սիստեմի հետ, արտաքին կողմից՝ դրսից առաջին հայացքից թվում է, թե գրաբարի բառերն են վերափոխված, հարմարեցված տեղական բարբառային արտասանության, մինչդեռ հաճախ հավանական է հակառակը, այսինքն թե՝ գրաբարը, ունենալով իր հատուկ հնչյունական սիստեմը, ժողովրդական լեզվից վերցրել է բառերը և հարմարեցրել իր արտասանությանը։

Տարբեր լեզուների հնչյունական սիստեմները տարբեր են միմյանցից. զուգադիպություն հազվագյուտ է, զուգադիպությունը վկայում է, որ լեզուները հարևան են եղել, երկարատև փոխազդեցություն են ունեցել և փոխադարձաբար միանություն ձեռք բերել, ինչպես, օրինակ՝ հին հայերենը և հին վրացերենը։ Որպեսզի պարզ լինի մեր ասածը, վերցնենք հայերեն, ռուսերեն և ազրբեջաներեն լեզուների բաղաձայնական սիստեմը և համեմատենք միմյանց հետ.

հայերեն			ռուսերեն			ազերի
բ	պ	փ	б	п	—	b — ph
դ	տ	թ	д	т	—	d — th
ձ	ծ	ց	—	—	ц	— — —
ջ	ճ	չ	—	—	ч	v g — ɣ
գ	կ	ք	г	к	—	ɡ — kh

Համեմատությունը ցույց է տալիս, որ հայերենի բաղաձայնական սիստեմը համեմատաբար լրիվ է, բոլոր հնչյունները ներկայացված են երեք աստիճանով ըստ արտասանության որակի՝ ձայնեղ, խուլ և շնչեղ խուլ։ Ռուսերենի մեջ բացակայում են շրթնային և առաջնալեզվային հնչյունների շնչեղ խուլերը (փ, ք, թ), բայց շնչեղ խուլի սկզբունքը ռուսերենին օտար չէ, որովհետև այդ շարքը ներկայացված է ց ե չ շնչեղ խուլ աֆրիկատներով. նշանակում է հնչյունական զարգացման պրոցեսում ռուսերենը կորցրել է այդ շարքը։ Որովհետև աֆրիկատներից երկու շարք ռուսերենը չունի, բայց նույն ց ե չ հնչյուններով ներկայացնում է աֆրիկատների ֆոնեմատիկ առկայությունը ռուսաց լեզվի մեջ. հետևաբար կարելի է ենթադրել, որ ռուսերենի նախորդ էտապներում և կամ՝ ռուսերենին նախորդող

լեզուներում աֆրիկատներ եղել են, եթե ընդունում ենք լեզվաստեղծման պրոցեսի միասնական սկզբունքը։

Աղբբեջանական լեզվի մեջ ընդհակառակն է։ Չկա խուլերի շարքը՝ պ, տ, կ, կան շնչեղ խուլերը, նշանակում է աղբբեջանական լեզվի նախորդ էտապից դուրս են ընկել խուլերը, որից հետո առացվել է այդ հնչյունական սիստեմը։ Աֆրիկատներից աղերին ունի ջ և չ-ն, որը նույնպես վկայում է, թե այդ լեզվի նախորդ էտապում եղել են աֆրիկատներն իրենց լրիվ կազմով։ Այս խորհրդածություններն առաջ են գալիս այդ մի սոսկ պարզ համեմատություններից, բայց այն դեպքում, երբ ընդունում ենք Մառի հռչակավոր տեսությունը լեզվաստեղծման պրոցեսի համաշխարհային միասնականության մասին։ Այդ համեմատությունները, սակայն, ասում են մի ուրիշ բան ևս, որ այդ լեզուները՝ հայերենը, աղբբեջաներենը և ռուսերենը հետավոր անցյալում փոխադարձաբար քիչ են կապված եղել, դրանց հնչյունական սիստեմի մեջ ընդհանուր միասնականություն չի նկատվում։

Բայց երբ վերցնում ենք հայերենի բարբառները և համեմատում գրաբարի հետ, հատկապես հնչյունական սիստեմի տեսակետից, նկատում ենք զարմանալի օրինաչափություն։ Եթե ձայնեղ հնչյունների որևէ դեպք խլացման է ենթարկված, ապա ձայնեղների ամբողջ սիստեմն է խլացման ենթարկվել և ընդհակառակը։ Օրինակ՝ գրաբարն ունի բաղաձայնական եռաստիճան սիստեմ, իսկ Վանի բարբառը երկաստիճան սիստեմ[1]։

գրաբար			Վանի բարբառ	
բ	պ	փ	պ	փ
դ	տ	թ	տ	թ
ձ	ծ	ց	ծ	ց
ջ	ճ	չ	ճ	չ
գ	կ	ք	կ	ք

Լեզվական համեմատությունը ցույց է տալիս, որ եթե «բ» հնչյունով սկսվող բառերը Վանի բարբառում արտահայտվում են «պ»-ով, օրինակ՝ գրբ. «բերան», Վն. բրբ. «պերան», ապա առանց սխալվելու կարելի է ասել, որ «դ» հնչյունով սկսվողները կլինեն «տ»-ով, օրինակ՝ գրբ. «դուռն», Վն. բրբ. «տուռ», «ձ» հնչյունով սկսվողները կլինեն «ծ»-ով, օրինակ՝ գրբ. «ձու», Վն. բրբ. «ծու», «ջ» հնչյունով սկսվողները՝ «ճ»-ով, օրինակ՝ գրբ. «ջուր», Վն. բրբ. «ճուր», «գ» հնչյունով սկսվողները՝ «կ»-ով կամ «կ՝»-ով, օրինակ՝ գրբ. «գարուն», Վն. բրբ. «կ՝արուն» և այլն։

Այդ նույն ձևով կարելի է համեմատել մյուս բոլոր բարբառները։ Բավական է իմանալ մեկ ձայնեղի փոփոխությունը, որպեսզի կարելի լինի առանց սխալվելու ասել մյուս ձայնեղների հետ կատարվող փոփոխությունը և կամ, ընդհակառակն, մեկ խուլի փոփոխությունը հիմք է տալիս դիտենալու մյուս բոլոր խուլերի փոփոխությունը։ Այսպիսի տրամաբանական ու օրինաչափական է բարբառների և դրաբարի արտասանական-հնչյունական սիստեմների փոխհարաբերությունը։ Այս է այն միասնականը, որը հայա-

[1] *Տոսքը վերաբերում է «գրաբարյան» բառերին։*

կան՝ ընդհանուր հայկական է։ Այդ սիստեմավորությունն է, որ Վանի բարբառը պահպանում է հայերեն լեզվի սահմաններում իր տարբերությունն ոչ հայերեն լեզուների։ Վերևում տեսանք, որ հայերեն, ռուսերեն և ադրբեջաներեն լեզուները նման տիպի համեմատությունների ենթակա լինել չեն կարող, ուրեմն և տարբեր լեզուներ են, մինչդեռ հայերենի բարբառների վերևում ցուցադրված սիստեմավորությունը այդ բարբառները պահպանում է հայերեն լեզվի սահմաններում։ Այդ է պատճառը, որ մենք որոշում ենք բաղաձայնների «տեղաշարժ» տերմինն ընդունել իբրև պայմանական տերմին։

Գրաբար լեզուն ունի բաղաձայնական սիստեմի երեք տիպ՝ եռաշարք, երկշարք և միաշարք.

բ	պ	փ	գ	ս	վ —
դ	տ	թ	ժ	շ	մ
ձ	ծ	ց	ղ	խ	յ
ջ	ճ	չ			ն
գ	կ	ք			ռ
					ր
					— հ

Երկշարք և միաշարք սիստեմի մեջ նկատելի տարբերություններ հայերենում չկան և դրանք չեն բնորոշում բարբառի հնչյունական սիստեմը, մինչդեռ եռաշարք սիստեմը այնքան տարբերություններ և ներկայացնում բարբառներում և կամ օտար լեզուներում, որ միայն այդ շարքով բնորոշ է լինում լեզվի բաղաձայնական սիստեմը։ Ուստի, երբ խոսքը տեղաշարժի մասին է, այդ վերաբերում է միայն եռաշարք բաղաձայնական սիստեմին։

Գրաբարի համեմատությամբ մեր բարբառներում կատարվում են հետևյալ տեղաշարժերը. ձախից աջ կամ առաջին աստիճանի.

գրաբ. →	
բ պ փ	պ ՝ փ
դ տ թ	տ թ
ձ ծ ց	ծ ց
ջ ճ չ	ճ չ
գ կ ք	կ ք

Այդ բարբառների շարքին են պատկանում Ասարախանի, Շամախու, Ղարաբաղի, Հադրութի, Շաղախի, Մարաղայի, Խոյի, Ուրմիայի, Վանի և Մոկաց բարբառները։ Օրինակ՝ Աստրխ. ճուր, վան, Մարաղա, Ուրմիա, Խոյ, Ղրբ., Հադրութ, Շմխ., Սաղախ. ճուր. այդ տեղաշարժի հետևանքով ստացվում է երկաստիճան բաղաձայնական սիստեմ՝ ձայնեղազուրկ։

Ձախից դեպի հեռավոր աջ կամ երկրորդ աստիճանի տեղաշարժ.

գրաբ. →	
բ պ փ	բ փ
դ տ թ	դ թ
և այլն	ձ ց
	ջ չ
	գ ք

Այդ շարքին են պատկանում Տիգրանակերտի, Մալաթիայի, Ռոդոսթոյի բարբառները և արևմտահայ գրական լեզուն։ Օրինակ՝ գրբ. *ջուր,* Տիգրկ. *չուր,* Մալաթ. *չուր,* Ռոդ. *չուր,* արևմտահայ գր. լեզ. *չուր։*

Աջից ձախ կամ երրորդ աստիճանի տեղաշարժ.

գրաբ.

←	←	
բ	*պ*	*փ*
դ	*տ*	*թ*
և այլն		

բ՛	*բ*	*փ*
դ՛	*դ*	*թ*
ձ՛	*ձ*	*ց*
ջ՛	*ջ*	*չ*
գ՛	*գ*	*ք*

Այդ խմբին են պատկանում Ակնա, Սեբաստիայի, Շապին-Գարահիսարի, Համշենի, Սուչավայի և Սյուրիայի բարբառները, օրինակ՝ գրաբ. *ջուր,* Ակն. *ջ՛ուր,* Սչվ. *ջ՛ուր,* Սբատ. *ջ՛ուր.* գրաբ. *տուն,* Ակն. *դ՛ուն,* Սչվ. *դուն,* Սբատ. *դուն։ Այդ տեղաշարժի հետևանքով ստացվում է եռաստիճան խլազուրկ բաղաձայնական սիստեմ։*

Միայն խուլերի տեղաշարժ դեպի ձախ կամ չորրորդ աստիճանի տեղաշարժ.

գրաբ.

←		
բ	*պ*	*փ*
դ	*տ*	*թ*
ձ	*ծ*	*ց*
ջ	*ճ*	*չ*
գ	*կ*	*ք*

բ	*փ*
դ	*թ*
ձ	*ց*
ջ	*չ*
գ	*ք*

Այս խմբին են պատկանում Պոլսի, Տրապիզոնի, Ղրիմի, Եվդոկիայի բարբառները, օրինակ՝ գրաբ. *տուն,* Պոլիս՝ *դուն,* Տրապ. *դուն,* Ղրմ. *դուն,* գրաբ. *դուռն,* Պոլ. *դուռ,* Տրապ. *դուռ,* Ղրմ. *դուռ։ Այս տեղաշարժի հետևանքով ստացվում է երկաստիճան խլազուրկ բաղաձայնական սիստեմ։*

Այդ խմբի հատկությունն ունեն նաև երկրորդ աստիճանի տեղաշարժ ունեցող բարբառները, այն է՝ Տիգրանակերտի, Մալաթիայի, Ռոդոսթոյի բարբառները և արևմտահայ գրական լեզուն։

Տեղաշարժ աջից դեպի ձախ մասնակի երևույթներով կամ եռիգերորդ աստիճանի տեղաշարժ.

գրաբ.

←	←	←	
բ	*պ*	*փ*↓	
գ	*կ*	*ք*	
դ	*տ*	*թ*	
ջ	*ճ*	*չ*	
ձ	*ծ*	*ց*	

բ՛	*բ*	*պ*	*փ*
դ՛	*տ*	*թ*	*թ*
ձ՛	*ձ*	*ծ*	*ց*
ջ՛	*ջ*	*ճ*	*չ*
գ՛	*գ*	*կ*	*ք*

Այս խմբին են պատկանում Երևանի, Կարնո, Մշո և Զուղայի բարբառները, օրինակ. գրաբ. դուռն, Երևան՝ դ'ուռ, Կրն. գ'ուռ, Զուղ. դ'ուռ: Այդ տեղաշարժից ստացվում է ֆառաստիճան բաղաձայնական սիստեմ:

Այս շարքի մեջ այլից դեպի ձախ տեղաշարժ է կատարում բոլոր շարքերով Մշո բարբառը միայն, այսինքն այդ բարբառում շնչեղ խուլերն էլ երբեմն վերածվում են խուլերի: Այս բարբառին հատուկ եզակի երևույթ է այդ: Այս բարբառի մեջ տեղաշարժն ըստ սիստեմի լիակատար է:

Հակադարձ տեղաշարժ այլից ձախ և ձախից այլ կամ վեցերորդ աստիճանի տեղաշարժ, որ զուգադիպում է միջին հայերենի հնչյունական սիստեմին.

գրաբ.

←					
→					
բ	պ	փ		բ	պ	փ
դ	տ	թ		դ	տ	թ
ձ	ծ	ց		ձ	ծ	ց
ջ	ճ	չ		ջ	ճ	չ
գ	կ	ք		գ	կ	ք

Այդ շարքին են պատկանում, ըստ իս, Կիլիկիայի, Սեբաստիայի և Խարբերդի բարբառները. օրինակ՝ գրաբ. ջուր, Կիլիկ. ճօյ, Սեբ. ճուր, Խարբ. ճուր: Գրաբ. պատ, Կիլիկ. բօղ, Սեբ. բադ, Խարբ. բադ:

Տեղաշարժ դեպի հեռավոր այլ բառամիջում, բառասկզբում՝ անփոփոխ, այսինքն յոթերորդ աստիճանի տեղաշարժ.

գրաբ.

→					
բ	պ	փ		բ	պ	փ
դ	տ	թ		դ	տ	թ
ձ	ծ	ց		ձ	ծ	ց
ջ	ճ	չ		ջ	ճ	չ
գ	կ	ք		գ	կ	ք

Այս խմբին են պատկանում Թբիլիսիի, Ագուլիսի, Մեղրու, Կարճևանի բարբառները և մեր գրական լեզուն, օրինակ՝ գրաբ. դուռն, Թբ. դուրը, Ագուլ. դուրք, Մեղրի. դուրք. գրաբ. առն, Թբ. առն, Ագուլ. առն, Մեղրի— առն: Այս սիստեմն ունեցող բարբառները բառասկզբի ձայնեղներով նման են գրաբարին:

Այս բոլոր տեղաշարժերը սովորական լսողի համար կունենան երկք աստիճան միայն.

1. Ձայնեղ արտասանություն, օրինակ՝ բազուկ, դանակ, գիր, ջուր, ձու:

2. Խուլ արտասանություն, օրինակ՝ պազուկ, տանակ, կիր, ճուր, ծու:

3. Շնչեղ խուլ արտասանություն, օրինակ՝ փազուկ, թանագ, քիր, չուր, ցու:

Միայն ձախից դեպի այլ տեղաշարժ ունեն մեր բարբառների մեծագույն մասը, ուստի լեզվաբանության համար նրանք կլինեն նկատելի: Այժմ էլ այս փոփոխությունները աչքի են զարնում ամեն մի

քայլափոխում, քանի որ Սովետական Հայաստանում կան այդ բոլոր բարբառների ներկայացուցիչները։ Հիշյալ տեղաշարժերն առաջին և երկրորդ աստիճանի տեղաշարժեր են և ընդգրկում են մեր բարբառների մեծագույն մասը թե՛ ըստ բարբառների թվի և թե՛ ըստ խոսողների թվի։ Տեղաշարժերի մյուս աստիճանները ներկայացված են խոսողների համեմատաբար ավելի քիչ թվով։

Աչապիսով՝ Անանուն մեկնիչի վկայությունը հայերեն բարբառների բաղաձայնական սիստեմների մասին արձանագրում է մեր բարբառների բաղաձայնական սիստեմի առաջին և երկրորդ տեղաշարժերը ձախից դեպի աջ, այսինքն՝ մեր հիմնական բարբառների գոյությունը դեռ 7-րդ դարում բաղաձայնական նույն սիստեմով, ինչ որ մենք գտնում ենք այժմ մեր կենդանի բարբառների մեջ։

Անանունի այդ արժեքավոր վկայությամբ հաստատվում է այն կարծիքը, թե դրաբար լեզվի ամենազարգացած շրջանում անգամ մեր բարբառները գոյություն ունեին, ավելին՝ նրանք գոյություն ունեին համարյա նույն սիստեմով, նույն տարբերությամբ, ինչ որ այժմ։ Բարբառների մեջ եղած փոփոխությունները բաղաձայնների սիստեմին չեն դիպել 7-րդ դարում (Անանուն մեկնիչը համարվում է 7-րդ դարի հեղինակ) գոյություն ունեցող այդ բարբառների սիստեմը պետք է որ գոյություն ունենար նաև շատ դարեր դրանից առաջ, քանի որ բարբառները փոփոխության ավելի ենթակա են եղել 7-րդ դարից հետո, քան առաջ։

Հ. ԴՅՈՒԼԻ-ՔԵՎԼԵՅԱՆ

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ Ռ. ՊԱՏԿԱՆՅԱՆԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԱՐՁԱԿԻ ՄԱՍԻՆ

I

Ռ. Պատկանյանի գեղարվեստական արձակը մինչև այժմ մարքս-լենինյան գրականության պատմության կողմից փոքրիշատե հանգամանորեն չի շոշափվել։ Այս հոդվածով միայն մի փորձ ենք կատարում մանակիորեն քննության առնելու այդ արձակը, մեր ուշադրության կենտրոն դարձնելով ոչ թե հեղինակի վիպակների ու պատմվածքների մանրամասն անալիզը, այլ նրա գեղարվեստական արձակի մեթոդը—կոմպոզիցիա, սյուժե—և սրա հետ սերտորեն կապակցված մի քանի խնդիրները։

Պատկանյանն այն հեղինակներից չէ, որոնց սոցիալ-քաղաքական աշխարհայացքի և ստեղծագործության օրենքով բովանդակության մեջև նկատելի է ցայտուն հակադրություն։ Չի էլ կարելի նշել համընկնում նրա ստեղծագործությունից օրենքորեն բղխող ընդհանուր եզրահանգումների և նրա սոցիալ-քաղաքական դրույթների։ Կարևոր բնույթ ունեցող մի շարք խնդիրների կապակցությամբ կատարած այդ եզրահանգումների հետ մեր հեղինակը կամ չէր համաձայնի, կամ համակարծիք կլիներ վերապահումներով։

Պատկանյանի աշխարհայացքն ամբողջական, հետևողական չէ։ Սրան հենարան հանդիսացող հասարակական խավի սոցիալ-քաղաքական վիճակը, որը և վերջին հաշվով պայմանավորում էր, այլ դասակարգերի հետ հակադրված կամ զուգորդված, նրա հասարակական դիրքավորումն ու ձգտումները,—չէր կարող հիմք հանդիսանալ մի մոնոլիտ աշխարհայեցողության։ Պատկանյանը հենց սկզբից զբսևորվում է ակնբախ հակասություններով։

Նա երբեք հանդես չի եկել լիբերալիզմի ջահակիրի դերում, լիբերալիզմը նրա աշխարհայացքի հիմնական մոմենտը չի կազմում. որոշ խնդիրներում շփման եզր է նկատվում նրա և լիբերալների միջև, սակայն ըստ իր սոցիալական նպատակասլացության՝ Պատկանյանի «լիբերալ» մոտեցումները մխաձուլվելով նրա սոցիալ-քաղաքական մտայնության այլ տարրերի հետ, կազմում են մի նոր որակ։

Ճուտ իմաստով՝ Պատկանյանն ազգային պահպանողական էլ չէ։ Ճիշտ է, նրա և պահպանողականների հարակցության կետերն ավելի շատ են և սերտ, բայց պաշտպանելով ազգային պահպանողականների պլատֆորմի էական դրույթները, նա անջրպետվում է նրանցից իր տակտիկական մոտեցումներով, նրա պատվանդանը կազմող քաղաքային մանր-արտադրողների, «մանր մարդկանց» մասսան ըստ իր սոցիալական դոյի՝ պայմանավոր-

ված չլինելով իր ինքնուրույն քաղաքականութիւնը վարելու, տուրք էր տալիս մեկ կողմից լիբերալ բուրժուազիայի մտայնութիւնը, մյուս կողմից էլ ունկնդրում էր հայ ֆեոդալականութեան ճնացորդներին, առաջին հերթին եկեղեցուն—և այս ու այն չափով պահպանելով իր դեմքը համապատասխան խնդիրների վերաբերմամբ, իր յուրահատուկ շեշտն էր դնում հասարակական բոլոր հուզող խնդիրների առաջադրման և լուծման ևղանակի վրա։ Անցյալի տրադիցիաների ազդեցութիւնն իր վրա կրող, պապենական հինավուրց ժառանգութեանը հավատարիմ ճնալու տրամադիր այդ մասսան, հետզհետե ոտնատակ լինելով, ցավագնորեն է ապրում իր անկման պրոցեսը, ջղայնորեն անդրադառնում հանդեպ իր կենցաղը քայքայող ամեն կարգի նորամուծութիւնները, ցասկոտ արտահայտում իր բողոքն ու տագնապը։ Պատկանյանը քաղաքային այդ մասսայի շահերն իր պաշտպանութեան տակ առած ինտելիգենտ է։ Քաղաքի և գյուղի մանր արտադրողների մեջ է տեսնում նա իր սոցիալ-քաղաքական իդեալների իրագործման ղորավիգը։ Այդ մասսան է, որ հիմնականում իր ուսերի վրա պիտի տանի հայ ազգի ինքնապահպանման համար պահանջվող աշխատանքի ծանրութիւնը, սա է, որ արյուն պիտի թափի, հարմար պայմաններում հայ ազգի քաղաքական անկախութիւնը ձեռք բերելու համար մղվելիք պայքարում։

Հայ քաղաքային մանր արտադրողների, մանր առևտրականների մասան և գյուղի մանր-արտադրողները, Պատկանյանի կարծիքով, ազգի հիմքն են կազմում։ Ո՛վ է ավելի նախանձախնդիր անվթար պահպանելու իր ազգային լեզուն, ազգային կրոնն ու եկեղեցին, իր ազգային բարքերն ու սովորութիւնները, ով է ավելի զգում իր կաշվի վրա օտար տիրապետողների լուծը—մանր-արտադրողների հոծ մասսան—մտածում է Պատկանյանը, և վոչ թե ապազգայնանալու ուղին բռնած, իր վարք ու բարքով ապականվող, այլանդակվող հայ բուրժուազիան և նրան սպասարկող ինտելիգենցիան։ Սակայն մանր-արտադրողները ևս կարող են ենթակա լինել վտանգի, կորտած նորամուծութիւնները նրանց ևս հետզհետե իրենց ոլորտի մեջ են ձգում, նա ևս ազգի համար կարող է վարակված տարր դառնալ, նրա դրութիւնն ավելի տագնապալից կդառնա, երբ կսկսի նկատելի չափերով զրկվել իր ապրուստը հայթայթելու միջոցներից։

Վտանգ է սպառնում նաև գյուղացիութեան։ Զանազան շահատակութիւններ հարկադրում են նրա կենսունակ տարրերին՝ վերցնել պանդխտութեան ցուպը, թողնել իրենց պապենական դաշտն ու հանդը, հեռանալ իրենց հայրենի երկրից։ Այսպիսով՝ հիմնավորապես կփորփրվի ազգի արմատը,—ահ ու դողով խորհում է Պատկանյանը։ Ամենամեծ վտանգն սպառնում է թյուրքահայերին։ Ստեղծված անագորույն պայմանների մեջ, մի երկրում, ուր ոչ անձի, ոչ գույքի, ոչ պատվի ապահովութիւն չկա, ուր կողոպուտը, թալանը, բռնաբարութիւնն ու կոտորածն է իշխում, հայ ազգի ամենամեծ հատվածը կարող է ֆիզիկական բնաջնջման ենթարկվել—կրքոտ կոչում է Պատկանյանը։ Անհրաժեշտ է ազգի ինքնապահպանումն ապահովող այուներն ամրացնել, հայ ազգի տարբեր խավերը, տարբեր զբաղմունք ունեցող մասնիկները համերաշխութեան նշանաբանի տակ ի մի հավաքել։ Հարուստ թե չքավոր, արհեստավոր թե հոգևորական, գյուղացի թե զինվորական, ին-

տելիգենտ թե պետական պաշտոնյա, ազամարդ թե կին, երիտասարդ թե ծերունի, բոլորն էլ տոգորված պիտի լինեն իրար փոխադարձաբար օգնելու զգացումով, բոլորն էլ պատրաստ պիտի լինեն հայ ազգի ինքնապահպանման նեցուկը հանդիսանալու, հայ ազգի վրա տեղացող հարվածներին դիմագրավելու։ Այսպես է քարոզում Պատկանյանը։

Ազգի անդամները չեն ըմբռնում իրենց անելիքը, ազգի վիճակի ծանր լինելը, նրանք տգիտության մեջ են խարխափում, այն մասն էլ, որն ըմբռնում է կացության լուրջ լինելը, կեղծ ու պատիր ազգասիրությամբ է զբաղված, միամիտների աչքին փոշի փչելով՝ կամ իր անհատական կյանքի վայելքների հետևից է ընկած, կամ էլ հարստություն կիտելու հետամուտ է եղած։

Պետք է լուսավորել չհասկացողներին, իրենց դրության ու պարտականությունների իրազեկ դարձնել, ազգի պահանջներն ըմբռնելու աստիճանին հասցնելու համար։ Այս էր եզրակացնում Պատկանյանը։ Ազգը պետք է լուսավորվի, նրան անհրաժեշտ են ուսման հարցը ճանաչող հայրեր, իրենց որդիներին ազգի հերոսական ավանդություններով կրթող մայրեր, ընտանեկան հարկի սրբությունը պահպանող կանայք, ճշտասակար նորամուծություններին չհետևող ժրաջան և համեստ աղջիկներ, հայրենասիրական տրամադրությամբ վառվող, ազգի անունը չկոտրող երիտասարդներ, իրենց կոչման բարձրության վրա կանգնած վարժապետներ և տերտերներ, հայ լեզու սովորեցնող դպրոցներ, հայ թատրոն, հայրենասիրություն ու հայերի համերաշխություն քարոզող մամուլ։ Իսկական հայը պետք է բարձրացնի էջմիածնի վարկը, մեծարի ու հավատարիմ մնա իր լուսավորչական հավատին, նա պետք է ոգևորվի հայ անցյալի վառապանծ դեմքերով, մի Վարդան Մամիկոնյան, մի Ղևոնդ երեց ուղեցույց աստղ պիտի դառնան հայ մարտիկի, հայ հոգեորականի համար—այսպես էր հրահանգում Պատկանյանը։ Ամուր կառչած մնացեք ձեր հայրերի հողին, աշխատեցե՛ք սեփականություն ունենալ այնտեղ, եթե գաղթական էք՝ վերադարձե՛ք ձեր հայրենիքը, օգտագործեցեք զարգացած տեխնիկա արհեստագործության և երկրագործության մեջ, կիրառական գիտություններ սովորեցեք և զարկ տվեք արհեստների տարածման ու ամրապնդման։ Օգնեցե՛ք թյուրքահայերին ինչով որ կարող եք՝ նրանց ապստամբությունը հաղթանակով պսակելու, նախապատրաստվեցե՛ք գալիք օրերի համար,—այսպես էր ապսպրում Պատկանյանը։

Հայ ազգը բարեկամ չունի, մյուս ազգերը կամ թշնամաբար, կամ անտարբեր են տրամադրված դեպի նա։ Ռուսաստանում նրան ցանկանում են ռուսացնել, թյուրքիայում՝ ձգտում են ոչնչացնել։ Հայ ազգը պետք է ապավինի իր ուժերին։ Եվրոպական դիպլոմատիան կարող է թեթևացնել թյուրքահայերի վիճակը և նույնիսկ անկախություն շնորհել նրանց, բայց նա չի ցանկանում միջամտել, նա եսասեր է։ Այս չէր խանգարում Պատկանյանին մինչև իր կյանքի վերջը ակնկալություններ ունենալ այդ դիպլոմատիայից։ Պատկանյանն ընդհանուր առմամբ բարյացակամ չէր տրամադրված դեպի հայերի հետ կողք-կողքի ապրող մյուս ազգերը, նա, նայած տեղին և ժամանակին, երբեմն նույնիսկ ազդեսիվ վերաբերմունք է քարոզում դեպի այդ ազգերը։ Ազգության ամբողջությամբ էր մտածում Պատկանյանը, իր արտաքին քաղա-

քականութեան մէջ նա հակված էր ազգութիւնը նուիրացնել տիրապետող դասակարգի հետ։ Նա երբեք չի առաջադրում, չէր էլ կարող առաջադրել, տարբեր ազգերի աշխատավորական մասսաների համագործակցութիւնը՝ միահամուռ ուժերով ընդհանուր թշնամու վրա հարձակման դիմելու համար։ Ուրիշ ազգերի աշխատավորութեան վիճակը նրան երբեք չի հետաքրքրում։ Նա ամեն ինչ կշռում և դատում էր հայ ազգի օգտի և ձեռքի տեսակետից, քարոզում էր դասակարգային համերաշխութիւն, ատում էր բուրժուազիային, բայց գութ էր հայցում նրանից։ Նա ռեվոլյուցիոն շարժման դեմ էր, համարում էր այդ ձեռնակար ու կորստաբեր, սկզբունքային թշնամանք չուներ դեպի տիրապետող կարգերը, միայն թե հայերին չնեղացնեին, ձեռ չտան հայութեան ազգային արժանիքներին և թուլլ տան, որ նա «պատվավոր» ազգերի շարքը մտնի։

II

Հայ ազգի ինքնապահպանման կոնցեպցիայից բղխող խնդիրներն են, որ Պատկանյանը, ըստ իր կարողութեան, արվեստի միջոցներով արծարծում է իր գեղարվեստական արձակում։ Պատկանյանի գեղարվեստական մեթոդը հիմնականում ռեալիստական է, որին նա այս ու այն չափով հարակցում է ռոմանտիկական տարրեր։

Սա միանգամայն բնականոն է Պատկանյանի համար։ Նա, մի կողմից, չի փախչում ռեալ իրականութիւնից, ընդհակառակն աշխատում է ամուր կառչած մնալ նրան, նա չի ստեղծում երևակայական պերսոնաժներ, հեքիաթային չարագործներ և աշխարհից վերացած, իրենց մտքի ոլորտում ոսկե երազներ հյուսող մարդկանց, ոչ իդեալական հերոսներ և վոչ էլ խոլական բնավորութիւններ, նա կերպավորում է անմիջական ռեալ իրականութեան մեջ գործող, այդ իրականութեան մեջ իրենց նպատակները հետապնդող, իրենց առաջ ցցված ռեալ խոչընդոտները հաղթահարել ցանկացող մարդիկ, որոնք մեծ մասամբ տեղի են տալիս և ընկնում պարտված։ Պատկանյանը ամենատենդենցիոզ հայ գրողներից մեկն է, նա չի թագցնում իր համակրանքն ու հակակրանքը, պարտիականութիւնն անմիջապես ժայթքում է նրա գրածներից, նա աշխատում է իր հասարակական իդեալներին դեմ գնացողին, իր ծրագիրը չիրականացնողին ծաղրով ու հեգնանքով ոչնչացնել, ցույց տալ նրանց ոչ պիտանի ու ձեռնակար լինելը՝ ուրիշներին նախազգուշացնելու, խրատելու նպատակով։ Մերթ գայրույթով ու ցասումով, մերթ բարեսիրտ հումորով նա նկարագրում է այն ռեալ միջավայրը, որը ոտնատակ է տալիս մարդկանց արժանապատվութիւնը, իր կապարյա ծանրութեան տակ ճզմում թուլլերին, փչացնում, այլանդակում մարդկանց, վարձատրում գիշատիչներին և անպատիժ թողնում չարագործներին։

Իրականութեան մեջ չգտնելով իր սիրած գաղափարները կոնկրետացնող անձնավորութիւններ, Պատկանյանը, մյուս կողմից, աշխատում է իր հասկացած օրինակելի հայեր ու հայուհիներ կերտել, տալով նրանց գոյութեան երևութականութիւն, նա օժտում է նրանց այնպիսի հատկութիւններով, որ նրանք ունենալ չեն կարող, կատարել է տալիս այնպիսի գոր-

ծողութ յունները, որոնք չեն պայմանավորվում նրանց հասարակական ռեալ հարաբերութ յունների բնույթով։ Երբեմն նա, իր պերսոնաժների դրական գծերն ավելի շեշտած լինելու նպատակով, դնում է նրանց բացառիկ հանգամանքների մեջ, պարբերում նրանց փոխհարաբերութ յունն ինչ-որ խորհրդավորութ յամբ, իռացիոնալ մոմենտներ ստեղծում նրանց ապրումների վիճակը բացահայտելու համար և, այսպիսով, զրկում նրանց տիպական լինելու ամեն մի հնարավորութ յունից։

Մանավորապես ուժեղ ռոմանտիկական ասպեկտով են ներկայացված գործող անձերի ապրումներն ու փոխհարաբերութ յունը «Ես նշանած էի» վիպակում, որի մեջ Պատկանյանը տալիս է ամեն մի տիպականութ յուն ժխտող հոգեբանորեն ոչ ճիշտ դիրքավորում ունեցող մի դժբախտ սիրո պատմութ յուն։

Ռոմանտիկական իդեալիզացիայի տարրեր ու չափազանցութ յուններ են պարունակում նրա այն բոլոր վիպակները, որոնք գրված են դրական լեզվով և արվեստի տեսակետից արժեք են ներկայացնում. Պատկանյանը, իբրև ռեալիստ, ավելի հետևողական է Նար-Նախիջևանի բարբառով հորինած իր մի շարք պատմվածքներում, սակայն այնտեղ էլ նրա ռեալիզմը երբեմն վեր է ածվում սոսկական ֆակտոգրաֆիայի. երբ նա իր պերսոնաժների կյանքում տեղի ունեցող դեպքերի հաջորդականութ յան նշումը ծանրութ յան կենտրոն է դարձնում և, այսպիսով, իրեն զրկում ընդհանրացում կատարելու հնարավորութ յունից։

Ցուրահատուկ է Պատկանյանի ռեալիզմը, մասնավորապես գրական լեզվով գրած արտադրանքի մեջ։ Հայ գրականութ յան մեջ գեղարվեստական մեթոդի այդպիսի առանձնահատկութ յուններով մի այլ հեղինակ գոյութ յուն չունի։ Ինչպես իր չափածոյով, նույնպես և արձակով Պատկանյանը շկոլա չստեղծեց, հետևորդներ չունեցավ և այդ պետք է վերագրել մասամբ վերոհիշյալ հանգամանքին։ Պատկանյանի ստեղծագործական մոտեցումների սպեցիֆիկան կաշկանդում էր նրան և զրկում իր տաղանդի պոտենցիալ ուժերը ծավալելու հնարավորութ յունից։ Նրա մոտ մենք հասարակական կյանքի օրինաչափութ յան գեղարվեստական անդրադարձման նմուշներ ենք գտնում միայն։

Նրա ռեալիզմը տառապում է խոշոր թերութ յուններով։ Պատկանյանի սոցիալական աշխարհայացքի միջնակետը, ինչպես տեսանք, դա հայ ազգի ինքնապահպանումն է։ Այդ ինքնապահպանմանը պիտի նվիրված լինի ամեն մի հայ մարդու աշխատանքի, գործունեութ յան բովանդակութ յունը։ Ինքնապահպանման գործին մասնակցելն է չափանիշը, որով պետք է որոշել ամեն մի հայի—ով ուզում է նա լինի—պիտանի կամ ոչ պիտանի լինելը։ Պատկանյանի գեղարվեստական արձակում այդ մոտեցումն ի հայտ է գալիս գերազանց չափերով։ Պատկանյանը դեմ է լիբերալիզմի անհատական ազատութ յան պրինցիպին։ Ազգի ինքնապահպանումը նրա մոտ մի մոլոք է, որ լափում է անհատական կյանքի բոլոր երանգները, այդ ինքնապահպանմանն է ենթարկել տալիս նա իր պերսոնաժների գործողութ յունները, նրա համար կարևոր չեն նմանապես այն արտաքին հանգամանքները, որոնց մեջ կատարվում են այդ գործողութ յունները. բոլոր պարագաներում էլ պետք է

ապացուցվի ազգին հավատարիմ լինելու կամ նրան դավաճանելու իրողությունը։

Քննեցեք կատարվող փաստերը և նրանց հիման վրա դատեցեք։ Պատկանյանը գատավորի դեր է ստանձնում. այդ փաստերը նկատի առնելով, նա արդարացնում ու մեղադրում է, գովերգում ու պարսավում է։

Նրա նկարագրած անհատները ոչ մի դեպքում չեն դիտվում իբրև ինքնանպատակ, նրանց ներքին կյանքի պերիպետյանները, ինքնին, անկախ դեպի ազգի ինքնապահպանումն ունեցած կոնկրետ վերաբերմունքից, մեր հեղինակին բոլորովին չեն հետաքրքրում։ Նա սպարտական խստապահանջությամբ ամեն մեկին իր կատարելիք գունկցիան է նշում և վայ նրան, որ թերացավ իր պարտականությունների կատարման մեջ։ Բոլորը պետք է ունկնդրեն դերագույն հրամայականի պահանջին, պատժվում են, երբ չեն ընդունում այդ հրամայականը, և վարձատրվում, երբ ի կատար են ածում այդ։ Իսկ ինքը՝ հեղինակը, իբրև պատգամներ հայտարարող քուրմ, մարդկանց դարձնում է իր այս կամ այն իդեալն իրականացնող կամ ոտնահարող էկզեմպլյարներ։

Նա գովերգում է, իր կարծիքով հայ աղջկա իդեալ հանդիսացող «Փառասերի» հերոսուհի Սուսաննային ու «Տիկին և նաժիշտ»-ի հերոսուհի Կատոյային, նրանց հայրենասիրությանը, պարկեշտությանը և դեպի հայ տղամարդը տածած անկաշառ սիրո համար։ Նա խանդաղատանք և համակրանք է աշխատում զարթնեցնել դեպի «Տիկին և նաժիշտ»-ի դարձի եկած Սոֆիան, նա նահատակի լուսապսակով է զարդարում իր «Տրացինոս» պատմվածքի Կատարին, որովհետև այս աղջիկը չի կարողանում հաշտվել այն մտքի հետ, որ իր հայրը հայ չէ և ինքն ապօրինի ծնունդ է և վշտից հիվանդանալով՝ մեռնում է։ Նա պատժում է, խայտառակության այունին գամելով և անփառունակ վախճանի հասցնելով «Փառասերի» կենտրոնական դեմք Ալթմազովին, նրա փառասիրության, եսասիրության, հայ ազգի անունը կոտրելու և նրան ոչ մի բանով օգնել չցանկանալու համար. մուր է քսում Սոֆիայի հայր Աստուր աղայի երեսին, նրա՝ ազգի շահերն անտեսելու, անբարոյական աղջիկ կրթելու և ռուսասիրության համար, գզվանք ու գարշանք է ցանկանում առաջացնել դեպի իր «Պաց ազգարը» պատմվածքի Իվանուշը՝ մի համեստ հայ ընտանիքի քայքայման պատճառ հանդիսանալու համար, հարազատորեն նկարագրում է խոզի շատակերությունը և ազվեսի խորամանկությունը միասնացրած պորտաբույծ և զարհուրելի տգետ Փորսուխին Ավագին, ցասումով ու նողկանքով թվարկում է իր «Նորընծայի» Ծատուրի և «Մոնթենվեր»-ի Մինասի՝ հայ հոգևորականի անունն ու պատիվը խայտառակող արարքները։

Պատկանյանի այս ակնբախ պարտիականությունը, անսքող միտումնավորությունը հաճախ արատահայտում են ոչ թե իդեական բովանդակության զարգացման ներքին օրինաչափության հիման վրա, այլ դրսևորվում են արտաքնապես. հեղինակը, իր տենդենցը հրամցնելու նպատակով, երբեմն ստեղծում է բոնապրոսիկ հանգամանքների այնպիսի հանգույց ու լուծում, գրությունների այնպիսի հարակցություններ, որոնց մեջ պերսոնաժներն իրենց արարքներով ու գործողություններով անմիջապես ձևա-

կերպում են իր՝ հեղինակի առաջադրած նպատակը, արդարացնում իր կող-մից առաջադրված թեզի օրինականությունը։

Ըստ այնմ աենդենցը կոնկրետացնելու համար, Պատկանյանն ամբող-ջությամբ չի որդեգրում անդրադարձման ենթակա երեույթների կաուզալ կապակցությունների դրսեորման մեթոդը, այլ հաճախ իբրև գեղարվեստա-կան իմացության միջոց կիրառում է արտաքին, արհեսաականորեն առաջ բերում կապակցությունների իմաստը մեկնաբանող թելեոլոգիական մոտե-ցում, չզոհացնելով ընթերցողի հարցասիրությունը տեղի ունեցող երևույթ-ների օբեկտիվ պատճառը հասկանալու տեսակետից, այլ հրահանգելով նրան՝ տվյալ երևույթների առաջանալու հիմքում ընկած նպատակի իմաստով բա-վարարվելու։ Այսպիսով՝ երևույթների բարդ շղթան կորցնում է իր օղակ-ների կապակցման ներքին անհրաժեշտությունը, տեղ բաց անելով որոշ դեպքերում նպատակային դրույթով առաջ քաշված, անհրաժեշտության հետ չկապակցվող սոսկական պատահականությունների ներխուժման համար։

Մասնավորապես գրական լեզվով գրած իր վիպակներում, Պատկանյանը հաճախ իր պերսոնաժներին բուա էության դարձնելով այս կամ այն տեն-դենցի կրողը, հարկ եղած ուշադրություն չի նվիրում նրանց ներքին կյանքը անհրաժեշտ ավարտվածությամբ դրսևորելուն։ Սակայն, ինչպես ասել ենք, ներքինը Պատկանյանի համար մեծ արժեք չի ներկայացնում, նա չափա-զանց ժլատ է իր նկարագրած մարդկանց ապրումների, սրանց ներքին բաղ-խումների, բեկումների, ոգորումների պատկերն անդրադարձնելու մեջ։ Նա ծանրության կենտրոնը տեղափոխում է նրանց կատարած արտաքին գոր-ծողությունների, դեպքերի ու պատահմունքների, արտաքին իրադարձու-թյան բնագավառը։ Պատկանյանն ևս, իհարկե, գիտակցում է ներքինի ու արտաքինի կապակցության անհրաժեշտությունը, նա ևս աշխատում է այդ կապակցությունն արտահայտել։ Ի՞նչպես է նա պատճառաբանում իր նկա-րագրած պերսոնաժների կատարած գործողությունները, ինչպես է կոնկրե-տացնում ներքինի և արտաքինի միասնությունը։ Առավելապես ռեալիստ գրողն այդ խնդիրը իրագործում է իր պերսոնաժների ներքին կյանքի երևույթների կոնկրետ լուսաբանությամբ, նայած գեղարվեստական պահան-ջին և գրական ժանրին (roman, nouvelle), նրանցով այս ու այն չափի չրիվությամբ պատճառաբանելով կատարվող գործողությունները, միաժա-մանակ ցույց տալով այդ գործողությունների ազդեցությունը ներքին կյանքի երևույթների վրա։ Ռեալիստ գրողի մոտ այդ երևույթները չեն բացահայտվում իբրև կանխորոշող տվյալներ, մարդու ապրումները, այդ ապրումները արտաքինի վերածելու պրոցեսը տեղի ունի բարդ օրգանական հյուսվածքի մեջ, և ոչ թե իրենից ներկայացնում է մեխանիկորեն մեկը մյուսին առաջ քաշող ուղղագիծ ընթացող պարզ տվյալների մի շարք։

Պատկանյանի մոտ արտաքինի ու ներքինի միասնությունը իրակա-նանում է յուրահատուկ եղանակով։

Մի Տոլստոյ կամ Ստենդալ իրենց խարակտերները կերտելու համար, ուշադրությունից բաց չեն թողնում նրանց էությունը վերջին հաշվով բնորո-շող շարժուն դետերմինանտները, սակայն նրանց մոտ այդ դետերմինանտ-ները—պատճառաբանողները ձուլվում են ստեղծագործական հյուսվածքի մեջ,

նրանց հետևանքները երբեք անմիջապես չեն արտահայտվում, այլ էական նացվում են կոնկրետ պատճառակցական շղթայի մեջ։

Այլ կերպ է լուծում խնդիրը Պատկանյանը։ Նա, ինչպես ասացինք, գիտակցում է իր ստեղծած պերսոնաժների կատարած գործողությունների, սրանց ներքնաշխարհի երևույթների ծագման, գոյության պատճառաբանման անհրաժեշտությունը, սակայն նրա մոտ հաճախ ներքինը բացակայության աստիճանին է հասցրած, իսկ արտաքինը հիմնավորված է գետերմինանտների անմիջական ազդեցության առկայությամբ։ Նրա պերսոնաժների գործողությունները, վորոշ դեպքերում կոնկրետ են միայն իրենց կոլորիտով, իրենց բովանդակության անկրկնելիությամբ, իսկ իմաստավորվում են ոչ թե ընդհանուրի և մասնավորի բարդ միասնությամբ, այլ ընդհանուրի անմիջական առկա ներգործությամբ, որի հետևանքը երբեմն ի հայտ է գալիս ֆորմալ տրամաբանական սիլլոգիստիկայի օրենքների համաձայն։ Պատկանյանի այդ մոտեցումը, որը պայմանավորվում է տենդենց արտահայտելու եղանակի իր ըմբռնումով, խաթարում է նրա որոշ էրկերի գեղարվեստական արժեքը, քանի վոր ներքինի և արտաքինի նման տիպի կապակցումը մասնավորը դարձնում է հաճախ զուտ պատահականություն, որի պատճառը չափազանց ընդհանուր լինելով, խախտում է խարակտերների փոխհարաբերությունների պրոցեսի հոգեբանորեն և տրամաբանորեն համոզիչ լինելը։

Ո՞րոնք են Պատկանյանի այդ ընդհանուր գետերմինանտները։ Էմպիրիկորեն, նայած տեղին և ժամանակին, Պատկանյանը առաջ է քաշում մերթ այս, մերթ այն գետերմինանտը։ Ընտանեկան կրթություն, ծնողների ազդեցություն, «բնածին» և գիտակցական հայրենասիրություն, ընդհանուր հոգեկան կազմ, ձգտումների, հակումների տիրապետող գիծ, բիոլոգիական գրավչություն, տրադիցիայի ուժ և այլն։ Ահա այն գետերմինանտները, որոնց անմիջական ազդեցությունն ի հայտ է գալիս Պատկանյանի պերսոնաժների կյանքում և որոշում նրանց գործողությունները։

Ալթմազովը ձգտում է, ինչ գնով էլ ուզում է լինի, ամուսնանալ մեծ օժիտ ունեցող աղջկա հետ, այդ ձգտումը նրա մեջ արմատացրել է հայրը իր խրատներով, և Ալթմազովի բոլոր գործողություններն անմիջապես հարմարեցված են այդ խորհուրդներին, նրանց ազդեցությունն անմիջապես է ի հայտ գալիս, նրանք սովերի պես հետևում են մեր հերոսին և կաշկանդում նրա ներքինի ու արտաքինի միասնության կոնկրետ, բովանդակալից դրսևորումը։

Սոֆիան հայատյաց է, ձգտում է ամուսնանալ բարձրաստիճան ռուս աստիճանավորի հետ։ Ո՞վ է արմատացրել նրա մեջ այդ ցանկությունը,— նրա միլիոնատեր հայրը։ Ի՞նչպես են կոնկրետ արտահայտվում այդ ծնողական ազդեցության միջնորդավորող օղակները, այդ մենք տեսնում ենք չափազանց ընդհանուր կերպարանքով։

Կատյան առաքինի և հայրենասեր է, հեղինակը այդ աշխատում է ցույց տալ նրա կատարած գործողություններով, սակայն այդ գործողությունների դրդապատճառները իրենց կոնկրետությամբ չեն դրսևորված։ Ըստ երևույթին Պատկանյանն այդ աղջկա բարեմասնությունները համարում է «ին-

տուիտիվ» հայրենասիրությյան և ազնիվ արյուն ունենալու չափազանց ընդհանուր և ֆիլտիվ դետերմինանտների ազդեցությյան հետևանք։

Վարդան Հուսիկյանը մի քանի տարի Սոֆիայի ուսուցիչն է եղել, ամենօրյա հանդիպումների հետևանքով նրա մեջ առաջանում է սեր դեպի Սոֆիան, նա ցանկանում է ամուսնանալ այդ աղջկա հետ, այդ կապակցությյամբ բազմաթիվ անախորժությյուններ, ցավագին ապրումներ է ունենում։ Ի՞նչն է նրան քաշում դեպի Սոֆիան—գեղեցիկ դեմքը և փարթամ մարմինը։ Այս բիոլոգիական դետերմինանտը երկար ժամանակ հետապնդում է այդ ինտելիգենտ մարդուն, անմիջականորեն գունավորում և ընթացք տալիս նրա գործողությյուններին։

Սոֆիան, հայ մամուլին հետևելով, դարձի է գալիս, ցանկություն է հայտնում գնալ Վան, հայերի մեջ ապրելու համար։ Դարձը հիմնավորված չէ, ընդհանուր դետերմինանտը չի փրկում դրությյունը։

Ալթմաղովի իգական սեռի հակոտնյան՝ Սուսաննան ցանկանում է ամուսնանալ հայ Ալթմաղովի հետ, նա սիրահարվում է հենց առաջին անգամից Ալթմաղովի վրա, նա ջերմեռանդ հայ լուսավորչական է։ Ինչու, ինչպե՞ս է կոնկրետ պատճառաբանվում այդ բոլորը։ Դարձյալ ընդհանուր դետերմինանտները պետք է օժանդակեն։ Սուսաննան «բնածին» հայրենասեր է, իսկ Ալթմաղովը չափազանց գեղեցիկ երիտասարդ։

Նոր Նախիջևանի բարբառով Պատկանյանի գրած մի քանի պատմվածքներում («Զախու», «Վարտևոր», «Պաց ազպար», «Փորսուխին Ավագը») այս ստեղծագործական արատը կամ բացակայում է կամ մինիմալ չափով է ի հայտ գալիս։ Նրանք գեղարվեստականորեն անհամեմատ ավելի բարձր դրծեր են։

Ի՞նչն է պատճառը, ինչու միևնույն հեղինակը տարբեր մոտեցումներով է կերտում իր պերսոնաժներին։ Աշխարհայացքային հիմնական բեկում չի ունենում Պատկանյանը նոր-նախիջևանյան պատմվածքների և գրական լեզվով գրած վիպակների արանքում ընկած շրջանում, փոփոխման են ենթարկվում նրա տակտիկական մոտեցումները դեպի ցարիզմը։ Սակայն այս չէ հիմնական պատճառը։ Պատկանյանը սքանչելիորեն ճանաչում էր իր հայրենի քաղաքը, նրա՝ տարբեր զբաղմունքի, տարբեր սեռերի, հասակի մարդկանց։ Նա իր տրամադրության տակ ունի հսկայական էմպիրիկ նյութ, որ հնարավորություն է տալիս նրան այդ մարդկանց գործելակերպի դրդապատճառները ավելի ճշտությյամբ տարբերելու։ Սրան պետք է կցել և այն հիմնական հանգամանքը, որ մի քանի պերսոնաժների համար գործածվող մի դետերմինանտը՝ իր ընդհանուր բովանդակությյամբ ավելի անմիջականորեն է անդրադառնում անհամեմատ ավելի պարզ ու հասարակ հոգեկան կազմ ունեցող այդ պերսոնաժների գործողությյունների մեջ և այս կապակցությյամբ այդ պատմվածքների գեղարվեստական արժեքը նկատելի չափով չի իջեցնում։ Այս պատմվածքներում ևս, երբ Պատկանյանը շոշափում է տիպականությյունից զուրկ մի բացառիկ դիպված, նրա դետերմինանտը—տրադիցիան, ժառանգականությյունը,—ոչ մի կերպ կոնկրետ չի բացահայտում պերսոնաժների գործողությյունների դրդապատճառները։ Պատկանյանը «Տրացինս»-ի մեջ ծայրը ծայրին չի հասցրել։ Պատմվածքի գլխա-

վոր դեմքը՝ կատարը, նկարագրված է ՝իբրև մի արտասովոր բարեսրտությամբ օժտված աղջիկ, սակայն այդ հատկությունը դրսևորող գործողությունները գեթ մասնակիորեն չեն պատճառաբանված (որքան հնարավորություն է տալիս պատմվածքի պարզ կոմպոզիցիան), կոնկրետ չի հիմնավորված կատարի մահվան պատճառը։ Թե ինչու կատարն այդ աստիճան նուրբ հոգեկան կառուցվածք ունի և ցավագնորեն է վերաբերվում իր համար խորտակիչ հանդիսացող նորությանը՝ մնում է անորոշ։

III

Ընդհանուր դետերմինանտները Պատկանյանի մոտ մի սարսափելի կաշկանդիչ ուժ են, ինչ-որ ֆատում են նրա պերսոնաժների համար և հաճախ այնքան են զրկում նրանց անհատականությունից, որ նրանք վեր են ածվում շարժուն սխեմաների կամ հեղինակի խոսափողի։ Տեսնում ենք մարդկանց, որոնք ձգտումներ ունեն, նպատակներ են հետապնդում, ուրախանում ու տխրում են, սիրում և ատում են, գործողություններ են կատարում, սակայն այս բոլորը հաճախ տեղի է ունենում և այդ մարդկանցից վերը կանգնած, նրանց էությունը պայմանավորող ուժերի ազդեցությամբ։ Հենց այս հանգամանքի հետևանքով է հիմնականում, որ Պատկանյանի մի շարք պերսոնաժներ, մասնավորապես գրական լեզվով հորինած գործերում, իրենց ներքին կյանքի մեջ նկատելի փոփոխություններ չեն կրում։ Արտաքնապես զանազան դեպքերի, գործողությունների հետ կապակցվելով, նրանց ագենտը հանդիսանալով, նրանք ըստ էության նույն հոգեկան կազմի կայուն միավորն են ներկայացնում։ Գեղարվեստականությունը չլսող այս մոտեցման հետևանքով է մասամբ, որ Պատկանյանը հիմնականում ռեալիստ լինելով, անհատականություն չի ստեղծում և ըստ այնմ դուրկ է տիպեր կերտելու հնարավորությունից։ Նրա խարակտերները կամ չափազանց շատ են բեռնավորված վերացականի, ընդհանուրի ազդեցությամբ կամ այս ու այն չափով զոհ են դառնում հեղինակի ֆակտոգրաֆիական մոտեցման։ Այդ արատների բացակայության դեպքում նրա գրչի տակից դուրս են գալիս միանգամայն կենդանի մարդիկ, իրենց անհատական հատկանիշներով, մարդիկ, որոնք Պատկանյանի ընդհանրացում կատարելու ունակության մասին են վկայում. նրա Ջրկիր Մարտիրոսը, կաշեգործ Հովհաննեսը, Փորսուխին Ավագը, աղա Աատուրը հաջող են կերտված, նրանց արտաքինը և ներքինը հանդես են գալիս միասնությամբ, նրանց գործողությունները պատճառաբանված են, նրանց ասածի և արածի նկարագրության մեջ հոգեբանական վիժվածքի նշաններն անհամեմատ քիչ են։

Թե ինչու Պատկանյանը կոնկրետ անհատականությունը ներկայացնող պերսոնաժներ չի ստեղծել, այդ պայմանավորվում է նաև նրանով, որ նա նրանց գնում է չափազանց անձուկ հարաբերությունների մեջ։ Ճիշտ է, խարակտեր կերտելու համար ոչ բոլոր դեպքերումն է անհրաժեշտ նրան գնել իր բոլոր էական հարաբերությունների մեջ, լինի այդ հարաբերողը՝ մարդ կամ այլ երևույթներ։ Սակայն Պատկանյանի գեղարվեստական մտահղացումները, նրա՝ մեծ կտավներ նկարելու մտադրությունը, պահանջում

էին նրանից իր պերսոնաժների գոնե ամենաէական հասարակական հարաբերությունների կոնկրետ լուսաբանումը, իսկ նա շատ է պարզունակ դարձնում խնդիրը։

Նրա կերտած պերսոնաժների բնույթը քննարկելիս՝ մենք գալիս ենք այն եզրակացության, որ նրանցից շատերը որոշ առումով պատյանի մեջ գտնվող մարդիկ են։ Մենք ծանոթանում ենք նրանց անմիջական միջավայրի հետ—տունը, ընտանիքը, ընկերը և այլն։ Ի՞նչ են անում այդ մարդիկ դուրսը, ո՞ւմ հետ են լինում, ի՞նչ ծանոթություններ ունեն, ի՞նչ շրջանների հետ են շփվում, ո՞ւմ վրա են ազդում, ո՞ւմից են ազդվում իրենց նեղ շրջանակից դուրս—այդ բոլորը ծածկված է անհայտության քողի տակ։

Ըստ մտահղացման կենսագործման, ըստ կոմպոզիցիայի բնույթի նորնախիջևանյան պատմվածքներից շատերում պերսոնաժներին նեղ, անձուկ միջավայրի մեջ պարփակելը չի խանգարում Պատկանյանին դեղարվեստական որոշ խարակտերներ ստեղծելու։ Այլ է այդ տեսակետից գրական լեզվով արտադրած վիպակների վիճակը։ Միքայել Վայելչյանը նկարագրված է ուսանողական անձուկ միջավայրում, սրա ծանոթությունները գծագրված են չափազանց մակերեսորեն, վայրիվերո, մեծ մասամբ բոլորովին անտեղի—ինչի՞ համար է Տեսնոտայի մասին եղած ամբողջ պատմությունը։ Միայն Վայելչյանի ընկեր Հովհաննեան է ըստ էության հանդես գալիս, այն էլ ծառայողական գեր է կատարում. նա մեջ տեղ է բերված մի քանի համեմատություններ անելու և զուգահեռներ անց կացնելու նպատակով։

Ալթմազովի մասին այնքան է հայտնի, որ նա մի ուսանողի պատիվ պաշտպանելով՝ մի գնդապետի ապտակ է տալիս և նրան մենամարտի հրավիրում։ Իսկ թե ի՞նչ ազդակներ, ի՞նչ տպավորություն է ստանում նա համալսարանում կամ համալսարանից դուրս, դրա մասին հեղինակը ոչ մի խոսք չի ասում։ Ալթմազովը 60-ական թվականներին էր Պետերբուրգում, երբ հասարակական միտքը խլրտում էր, և հնարավոր չէր, որ նույնիսկ Ալթմազովի պես անձնավորությունը ոչ մի ազդեցություն չկրեր այդ մթնոլորտում, իսկ այդ ազդեցությունը, իր դրական կամ բացասական արտահայտությամբ, գոնե մինիմալ չափերով չի անդրադառնում նովելլայի և վեպի խառնուրդ ներկայացնող «Փառասերի» մեջ։

Վարդան Հուսիկյանը օրագիր է պահում, որտեղ երկար ու բարակ հիշողություններ է պատմում և դատողություններ անում իր՝ դեպի Սոֆիան ունեցած սիրո մասին, սակայն նա ևս Ալթմազովի վիճակն է բաժանում։ Գեթ ընդհանուր գծերով հաղորդվեր նրա ուսանողական կյանքի մասին, տեղեկություններ տրվեր նրա միջավայրի վերաբերմամբ։ Նրա համար աշխարհը—դա Աստուր աղան է, Սոֆիան, նրա մայրը և Կատյան է, ավելացրած դրան մի երկու էպիզոդիկ ֆիգուրաներ և Դրոզդովը։ Պատկանյանը չի ըմբռնել, որ իր «Ծիկին և նաժիշտի» կոմպոզիցիան, այսժետի ծավալումը անհրաժեշտաբար պահանջում են Հուսիկյանի խարակտերի բնութագրումն ավելի լայն սահմանների մեջ։ Սուսաննայի մասին իմանում ենք, որ նա հայ գնդապետի աղջիկ է, որ ծնողները վախճանված են, և ինքը որդեգրված է մի ինչ որ կնոջ կողմից։ Կենսագրական այդ տեղեկությունները բոլորովին անբավարար են այդ աղջկա խարակտերը անհրա-

ժեշտ ավարտվածությամբ պատկերացնելու համար։ Չէ՞ որ նա կենտրոնական ֆիդուրաներից մեկն է, Ալթմազովի հակոտնյան, Պատկանյանի՝ կնոջ իդեալր (միայն զարմանալի է, որ Պատկանյանը նրան մի գերմանացու հետ է ամուսնացնել տալիս)։ Զափից դուրս ժլատ է մեր հեղինակը այս աղջկա բնութագրման մեջ։ Սոֆիան և Կատյան հակոտնյաներ են, նրանք, կարծես, ապրում են անմարդաբնակ մի կղզում՝ Աստուր ադայի և նրա կնոջ հետ միասին, սրանց բնավորության միջնորդավորող օղակների մասին ոչինչ չենք իմանում, նույնիսկ իրազեկ չենք, թե չորս տարվա ընթացքում Հուսիկյանն իր աշակերտուհի Սոֆիային ըսա էության ինչ էր սովորեցնում, ինչ գաղափարներ էր ներշնչում նրան։

Պատկանյանի այդ պերսոնաժների մեծ մասը, կարծես թե, մենակյացներ լինեն, որոնք կյանքի հանգամանքների բերմամբ երբեմն հանդիպում են ունենում իրար հետ, որ նորից բաժանվեն և ապա նոր հանգամանքների մեջ նորից հանդիպեն իրար։ Այդ հանդիպումների ընթացքում նրանք որոշ վերաբերմունք են ցույց տալիս իրար, որոշ գործողություններ են կատարում, դրսեորում են իրենց ցանկությունները ու ձգտումները և այդ բոլորի հանդիսատես հեղինակն արձանագրում է այդ իրրև փաստեր։ Այդ փաստերը նրա անմիջական տվյալներն են, նրանցով է նա կառուցում իր գեղարվեստական շինվածքը։ Փաստերն օգտագործելով՝ նա ստանձնում է մեղադրողի կամ պաշտպանի դեր, փաստեր է բերում, արձանագրում՝ դատվերգելու, ըստ արժանվույն վարձատրելու նպատակով, փաստեր է նշում, հիշատակում՝ մեղադրելու, դատապարտելու համար։ Երբեմն այդ փաստերը հիմնավորված չեն, երբեմն էլ նրանց պատճառաբանումը ճիշտ չէ, այդ նրա համար երկրորդ կարգի խնդիր է, փաստերի, կապակցությունների համոզիչ լինելը նրան անմիջապես չի մտահոգում, նա նախապատվությունը տալիս է այդ փաստերի նկարագրությանը։

Ըստ այդմ նա ավելի շատ հակված է նկարագրելու, քան թե բացատրելու, հավաստելու, քան թե պատճառաբանելու, արտաքին հայոցդականությունը նշելու, քան թե կապակցելու։

Գեղարվեստական խարակտեր կերտելու մեջ Պատկանյանի ցուցաբերած այս թերությունները հիմնականում պայմանավորում են այն վերաբերմունքը, որ առաջանում է հանդեպ նրա պերսոնաժների։ Այս կապակցությամբ նրա նկարագրած անձերը բաժանվում են երկու խմբի։ Երբ մենք գործ ունենք համեմատաբար ավարտված խարակտերների հետ, մեր մեջ նկատելի չափով առաջ է գալիս համապատասխան վերաբերմունք, մենք այս ու այն չափով համակվում ենք հուզականությամբ — համակրանքով, կամ գարշանքով ու ցասումով։ Ընդհակառակն, տենդենցը իրենց շլնքին փաթաթած կամ ռոմանտիկական բարեմասնություններով օժտված պերսոնաժները թողնում են մեզ անտարբեր, նրանց ապրումները, կենսական վիճակի փոփոխությունները, նրանց դարձն ու վախճանը մեր մեջ չեն զարթեցնում համապատասխան վերաբերմունք։ Միայն վառ երևակայության միջոցով հնարավոր է լրացնել Պատկանյանի կիսատ թողածը, ստեղծել ավելի լրիվ պատկեր, և ավելի ուժեղ վերաբերմունք առաջացնել դեպի Վայելչյանն ու Մարին, Սուսաննան ու Վարդանը, Սոֆիան ու Կատյան և այլն։

Չնայած հեղինակի բոլոր ջանքերին, նրա հրապարակախոսական տիրադներին, կենսական-բարոյախոսական սենտենցներին, նրա՝ պերսոնաժների ապրումները, հոգեկան բեկումները ամենից քիչ են շարժում ընթերցողի հուզականությունը։

Այլ բնույթ ունեն Պատկանյանի նոր-նախիջևանյան մի քանի պատմվածքները։ Նրանց պերսոնաժները հեղինակի պատվիրած տենդենցի կրողը չեն հանդիսանում, նա այդ պերսոնաժների փոխհարաբերությունները մեկնարանման չի ենթարկում, չի միջամտում նրանց գործողություններին իր խորհրդակցություններով, հատուկ նպատակադրությամբ գույները չի խտացնում, սենտիմենտալ տեսարաններ չի նկարագրում, ազգասիրական կամ նման տիպի հայտարարություններ չի դնում նրանց բերանը։ Այդտեղ մենք զգում ենք հեղինակի ջերմ վերաբերմունքը, տեսնում ենք նրա ցավող սիրտը, գթառատ զգացմունքը։ Այդ պատմվածքներում նա միայն նկարագրում է, արտաքնապես չի միջամտում իր պերսոնաժների հանդեպ ցանկացած տրամադրություն առաջ բերելու, նրանք խոսում և գործում են անբռնազրոս, հեղինակը նրանց նպատակադրված ոչինչ չի հրահանգում, թելեղոլոգիական մոտեցումը բացակայում է։

Ահա ջրկիր Մարտիրոսը, իր շրջապատի անսահման տգիտության ու թշվառության այդ անմռունչ զոհը, որի բախտը խորտակվում է հասարակական դաժան կարծիքի, տրադիցիոն կենցաղի խեղդիչ ազդեցության տակ։ Որքան կարեկցություն, սրտացավ վերաբերմունք է առաջացնում կյանքի հարվածների տակ կքած այդ ծերունին անցած-գնացած իր օրերի տխուր պատմությամբ։ Որքան ճշմարտացի և համոզիչ է արտահայտված կույր պատահականության դերը Մարտիրոսի կյանքի մեջ՝ արտահայտելով նրա միջավայրի խեղճ մարդու դառն վիճակի անխուսափելիությունը։

Ահա կաշեգործ Օհաննեսը, կենցաղի մի այլ զոհ, որը փոխանակ իր հավանած գեղեցիկ աղջկա հետ ամուսնանալու, խաբվում ու ահաբեկվում է և հարկադրված՝ իր բախտը կապում մի սարսափելի տգեղ աղջկա հետ։ Որքան բնականոն են, պատճառաբանված են ընթանում այդ մարդու գործողությունները, որքան սերտ են նրանք կապված նրա պրիմիտիվ հոգեկան կյանքի հետ։ Կարեկցությամբ է համակվում ընթերցողը դեպի՝ սովորություններից ու կենցաղից ընկճված, վիզը ճկած այդ մարդը, որը երկար տարիներից հետո մեղմ թախիծով է պատմում իր կյանքի այդ դժբախտ դեպքի մասին։

Ահա մանր առևտրական Թաթոսը՝ «Պաց աղպարի» գլխավոր դեմքը, առևտրական կապիտալի ազդեցությամբ քայքայվող «նահապետական» հին Նախիջևանի այդ ներկայացուցիչը, որը ընկնելով այդ կապիտալի «ասպետի» մագիլների մեջ, սնանկանում, թշվառանում է, տարագրվում է իր բնից և ցավալի վախճան ունենում։ Ճիշտ է, Պատկանյանը նրան ներկայացնում է մարդ «չէ յաշխարհի աստի». նա չափազանց միամիտ է և աղնիվ, դյուրահավատ ու խաբվող է, և այս հանգամանքը ղրկում է նրան տիպական լինելուց։ Ճիշտ է, Պատկանյանը նկատելի սուբեկտիվ նպատակադրությամբ է ջոկել դեպքերն ու փաստերը, բայց, չնայած դրան, կենդ հոգեբանական դրություններից զերծ է այս պատմվածքը։ Այդ մանր առևտրականը, «փոքր

մարդը», որը գիշատելու, հափշտակելու ոչ մի ձգտում չունի, կարեկցություն է առաջ բերում ընթերցողի մեջ։

Ահա վարպետորեն կերտված Փորսուխին Ավագը, Պատկանյանի, թերևս, միակ խոշոր ընդհանրացումը։ Տգիտության, խոզային խժռողականության մարմնացում, կյանքի «իմաստությունը» լավ յուրացրած մի հմուտ «պրակտիկ»։ Ճիշտ է, այդ պարազիտի արտասահման ընկնելու պատճառաբանությունն այնքան էլ համոզիչ չէ, նրա «պրակտիկան» կոնկրետ իլլյուստրատիվ հյուսվածքով ուժեղ չի լուսաբանված, բայց այս թերություններով հանդերձ այդ պերսոնաժի էությունն այնքան ցայտուն է դրսևորված, որ անդիմադրելի նողկանք ու գարշանք է առաջացնում։

IV

Իր գեղարվեստական արձակում ունենալով աչքի ընկնող թերություններ, որոնք նսեմացնում են այդ արձակի հասարակական նշանակալիությունը և գեղարվեստական արժեքը, Պատկանյանը, այնուհանդերձ, մեկն է հայ գրականության այն դեմքերից, որոնք հետաքրքրականություն են ստեղծում, որոշ դեպքերում լարված ուշադրություն են առաջ բերում ընթերցողի մեջ և առանց որևէ ձանձրույթի՝ հետևել տալիս իր կերտած խարակտերների վիճակի փոփոխություններին, փոխհարաբերությունների ընթացքին և վերջնակետին։

Գրական ստեղծագործության հետաքրքրականություն առաջացնելու պատճառները իր կոնկրետության մեջ է հարկավոր ըմբռնել։ Ի՞նչն է Պատկանյանի արձակի այդ հատկանիշ պատճառը։ Նա ոչ մարդկային ներքնաշխարհի ոլորտների մեջ է խորը թափանցում, ոչ խոշոր ընդհանրացումներ կատարում, ոչ «անիծյալ» հարցեր լուծում, ոչ իր ժամանակաշրջանի լայն պատկերը տալիս, ոչ խորիմաստ մարդկային դոկումենտներ ստեղծում, ոչ իր գույների, երանգների բազմազանությամբ շլացնում, ոչ բնության տեսարաններ հրաշակերտում, ոչ գալիք օրերի հաղթական մարտի շունդն ու շառաչը հնչեցնում, ոչ անցյալի հերոսական դեմքերը վերակենդանացնում և այլն. բայց և այնպես, ոչ ոք չի կարող ասել, իբր մեր հեղինակի գրվածքների կողքով ընթերցողն անտարբեր անցնում է, հորանջելով դիրքը ծածկում և ոչ թե մի նվագ ամբողջ ընթերցումն ավարտում։

Մեր նպատակից դուրս է այս կապակցությամբ փոքրիշատե հանգամանորեն կանգ առնել Պատկանյանի գեղարվեստական արձակի իդեական բովանդակության վրա։ Ա՛յն պետք է նշել, որ Պատկանյանի արձակը խոշոր նշանակություն ունի անցյալ դարի 60—80 թ.թ. հայ մանր-բուրժուական ինտելիգենցիայի հասարակական մտքի որոշ հոսանքի արժեքն ու բնույթն իմաստավորելու, ճանաչելու համար։ Նույնքան կարևոր է այդ ստեղծագործությունն իր օբեկտի բազմազան անդրադարձմամբ, մի օբևկտ, որ հայ հասարակական կյանքի նշանակալից շրջաններից մեկն է—արդյունաբերական կապիտալիզմի նախապատրաստումը։ Այս իդեական բովանդակությունը Պատկանյանը մատուցում է որոշ կոմպոզիցիոն պրինցիպներով, որոնք, չնայած նրա իրրև արվեստագետի թերություններին, գրավում են

ընթերցողի ուշադրությունը։ Մենք արդեն նկատել ենք, որ Պատկանյանն իր պերսոնաժները կերտելիս, առավելապես ծանրության կենտրոնը դարձնում է նրանց կատարած գործողությունները, նրանց հետ կապված փաստերը։ Այդ գործողությունների դրդապատճառները հիմնավորելու խնդրում նա բավական թույլ է—նա հոգերան չէ, նրա «սոցիոլոգիան» էլ կազում է, բայց Պատկանյանը կարողանում է յուրահատուկ կերպով իր բացը լրացնել նյութի կառուցման, սյուժեի ծավալման այլ միջոցներով, որոնք նկատելի չափով օժանդակում են նրան իր պատմածն աշխույժ հունի մեջ մտցնելու։

Նրան հաջողվում է, որոշ առումով, իր արատն առաքինություն դարձնել։ Նա գործողությունը դարձնում է հիմնական, առաջատար, որոշիչ մոմենտ։

Պատկանյանի կառուցվածքային հական կիծն արտահայտվում է նրանով, որ նրա պերսոնաժների մեծագույն մասը անմիջական նպատակասլացություն են ի հայտ բերում, ըստ իրենց կարողության և հասարակական գոյի։

Իրենց նպատակներն իրագործելու մեջ նրանք հանդիպում են խոչընդոտների, արգելակների, որոնց հաղթահարման համար նրանք համապատասխան (երբեմն և անհամապատասխան) գործողություններ են կատարում, դանազան արտաքին դրություններ ստեղծում, երբեմն—հաճախ կոնկրետությունից զուրկ, անհամոզիչ—հոգեբանական վերապրնման ենթարկվում։

Նպատակների իրագործման և հարուցվող խոչընդոտների միջև առաջանում է կոնֆլիկտ, որը առումով արտաքին դրամատիկական սիտուացիաներ, որանց ուղեկցող հանգուցյներ և այլն։ Այս բոլորը տեղի ունեցող դեպքերի ընթացքին տալիս են զինամիկ երանգավորում։ Պերսոնաժները դրվում են այնպիսի վիճակում, որ հետաքրքրություն է առաջանում իմանալու, թե ինչ ընթացք ստացավ տվյալ դրամատիկական բնույթ կրող սիտուացիան։ Ինչպես, ում օգնին լուծվեց հանգուցյը, ինչ պարագաների մեջ տեղի ունեցավ այդ լուծումը։

Պատկանյանն այս տիպի կոմպոզիցիա ստեղծելու, սյուժե ծավալելու մեջ նկատելի վարպետություն է հանում։ Իր որոշ գործերում, նա հանգուցյն էլ ավելի լարված է դարձնում, խորհրդավորության մոմենտ մտցնելով պերսոնաժների փոխհարաբերություններին, բաղխումների մեջ։

Տարբեր են նրա նկարագրած անձերի նպատակները, նրանց հանդիպած խոչընդոտները, բայց մեծագույն մասով պատվում են սեռերի փոխհարաբերությունների շուրջը։ Այս հանգամանքը որոշ շարժառիթ է դառնում հետաքրքրականության ուժեղացման։

Վայելչյանի նպատակն է ամուսնանալ Մարիի հետ, սակայն նա հանդիպում է խոչընդոտի—Մարիի տարօրինակ, անհասկանալի վերաբերմունքին դեպի իր ամուսնությունը։ Մարին իր հերթին սիրում է Վայելչյանին, կցանկանար նրա հետ կապել իր բախտը, սակայն իր նշանված լինելն արգելակում է նրան իր նպատակն իրականացնելու։ Ստեղծվում և հանգուցյը, որը բավական արհեստականորեն լուծվում է Մարիի մահվամբ։

Ալթմազովը ձգտում է ամուսնանալ իշխան Կաբիլիևի աղջկա հետ, բայց նրա ցանկությանը խոչընդոտ է հանդիսանում իշխանուհի Կաբիլիևնան և արիստոկրատական տրադիցիան։ Ալթմազովը պատվում է այդ պայ-

քարի մեջ։ Սուսաննան սիրում է Ալթմազովին, սակայն Ալթմազովը չի սիրում նրան և անուշադիր է թողնում նրա զգացմունքը։

Վարդանը սիրում է Սոֆիային, աղջկա հայրը մերժում է Սոֆիային նրան կնության տալ, իսկ Սոֆիան իր թեթևամտությամբ բախվում է նրա ցանկությանը։ Կատյան սիրում է Վարդանին, ցանկանում է նրան իրագեկ դարձնել իրերի իսկական դրության, բայց հանդիպում է Վարդանի անտարբերության և այլն։ Այս բոլորն այս ու այն չափով դրված են արտաքին դրամատիկական սիտուացիաների մեջ, բոլոր այս պերսոնաժների արածը հանդում է արդելակները վերացնելուն։

Այս բախումներն էլ ավելի սուր, ավելի լարված բնույթ են ստանում, քանի որ կոնարագենտներն իրևնց սոցիալական դրությամբ հաճախ արամագծորեն հակադրվում են իրար։ Այս հանգամանքը նրանց փոխհարաբերությունները հաղորդում է բացառիկության շեշտ և ավելի է լարում ընթերցողի ուշադրությունը։

Հայ ուսանող Վայելչյանը հանկարծակի բացառիկ պայմանների մեջ սիրահարվում է մի շվեյցարացի, դեռ նոր Ռուսաստան եկած աղջկա վրա։ Երեվանի գյուղերից մեկի մյուլքադարի տղա՝ ուսանող Ալթմազովը ընկնում է Պետերբուրգի բարձր արիստոկրատական շրջան և ձգտում է ամուսնանալ մի իշխանի աղջկա հետ։ Վարդանը, մի անհայտ հայ բժիշկ, մեծ ցանկություն ունի ամուսնանալու մի միլիոնատեր հայ աղջկա հետ և այլն։ Այս պարագաները արկածայնության որոշ երանգ են մտցնում Պատկանյանի պատմածի մեջ։ Իսկ ինչո՞ւ է Պատկանյանը դրական լեզվով հորինած իր գործերի մեջ այդպիսի սուր դրություններին և մոմենտներին նախապատվություն տալիս։ Այդ հարցին կանդրադառնանք մի այլ առնչությամբ։

ԼԵՆԻՆՆ ՈՒ ՍՏԱԼԻՆԸ ՔՐԴԱԿԱՆ ՖՈԼԿԼՈՐՈՒՄ

Հեռհոկտեմբերյան շրջանում քրդական ֆոլկլորը մտավ զարգացման նոր փուլի մեջ։ Իր բովանդակությամբ սոցիալիստական և ձևով ազգային այդ նորը սերտորեն կապված է մեր փառապանծ ռևոլյուցիայի հետ, որը ինչպես բազմաթիվ մեծ ու փոքր ժողովուրդների, այնպես և քուրդ ժողովրդին ազատագրեց ցարական դաժան լծից և նրան տվեց այն, ինչ որ դարեր շարունակ երազել էր նա իր մտավոր ու հոգեկան կյանքի արտահայտիչ տաղանդավոր երգիչների և բանաստեղծների միջոցով։

Քրդական սովետական ֆոլկլորում ամենից առաջ աչքի են ընկնում այն ստեղծագործությունները, որոնք կապված են ամբողջ աշխարհի աշխատավորների մեծ առաջնորդներ Լենինի և Ստալինի կյանքի ու գործունեության հետ։ Քրդական սովետական ֆոլկլորը Լենինին ու Ստալինին անվանում է մեծ հայրեր, հարազատ եղբայրներ, ոչ միայն քուրդ ժողովրդի, այլև ողջ աշխարհի աշխատավորների ազատարարներ, անհաղթ դյուցազուններ, չքավոր գյուղացիության և բանվորության հարազատ բարեկամներ։

Քուրդ ժողովուրդը երգում է.

Մենք աշխատում էինք—հարուստներն ուտում[1],
Մենք վառվում էինք ցավից, տանջանքից,
Մեր Սովետներին մեծ շնորհակալություն,
Որ մեզ ազատեց նրանց ձեռքերից։

Չեմ մոռանա, չեմ մոռանա,
Լենինի գործը չեմ մոռանա,
Ոչ մի թշնամուց չեմ վախենա,
Լենինի ուղին չեմ մոռանա։

Ե՛կ ՄՈՊՐ-ին օգնենք, աշխարհն ազատենք,
Մեր Սովետներին կռնենք, ամրացնենք,
Ցրենք, քամու տանք թշնամիներին,
Երկիրն ազատենք արյունախումիներից։

Չեմ մոռանա, չեմ մոռանա,
Լենինի գործը չեմ մոռանա,

[1] Բոլոր մեջբերումները թարգմանված են բառացի։

Ոչ մի թշնամուց չեմ վախենա,
Լենինի ուղին չեմ մոռանա։

Այս քայլերգը, որի վերնագիրն է «Լենինի ուղին չեմ մոռանա» և որից մենք միայն մի քանի հատված ենք բերում, ստեղծագործվել է 1924—25 թ. թ., Թբիլիսիում ապրող քուրդ բեռնակիրների մեջ և մինչև այժմ էլ չի կորցրել իր թարմությունն ու այժմեականությունը։

Լենինի նշած ուղին—դա՝ ողջ աշխարհի աշխատավորների ուղին է, այդ ուղին ներշնչում է անվախություն, հույս, ոգևորություն, անհաշտ և անողոք պայքար ընդդեմ ամեն մի թշնամու։ Լենինը ցարի անթիվ ու անհամար զորքի դեմ կռվելիս՝ գոչում է.

Ստալին, դու իմ եղբայրն լինես,
Այսօր մահվան կամ ապրելու օրն է,
Լավ է մեռնել, քան հետ նահանջել,
Ուժերդ հավաքի՝ խորտակենք ցարին...

Կռվի տաք պահին դյուցազն Լենինին դյուցազն Ստալինն էր անհրաժեշտ, որ «խորտակենք ցարին»։ Այս առումով, կարծես, առաջին երգի շարունակությունն ու լրացումը լինի ստորև բերվածը, որը կոչվում է «Քլամա Լենին ու Ստալին» (Լենինի ու Ստալինի երգը).

Դե, լո, լո, լո, լո, լո[1]
Կարիճ խմբերը բոլշևիկյան,
Քոլողները դրին ու վեր կացան,
Քշեցին անգութ ցարի վրա,
Որ նրա տունն անեն վերան,
Թընդաց, դղրդաց աշխարհը բոլոր,
Դե լո, լո, լո, լո, լո մերխասո[2]։

Դե, լո, լո, լո, լո, լո,
Նրանց առաջից գնում էր Լենին,
Նրանց առաջից գնում էր Ստալին,
Կարմիր դրոշակը բռնած ձեռքերին,
Առաջ էին տանում կարմիր զորքին։
Կռվի էր գնում աշխարհը բոլոր,
Դե, լո, լո, լո, լո, լո մերխասո։

Այսպես է երգում Աշտարակի շրջանի կոլխոզնիկ Թոզո Մատևյանը, որը միևնույն ժամանակ հեղինակ է մի շարք այլ նոր երգերի։ Այս երգում բնորոշ է այն, որ քուրդ աշխատավորությունը միայնակ ու կղզիացած չէ ներկայացված, այլ ընդհակառակն, նա՝ միանալով «աշխարհի» բոլոր կռվողների հետ՝ կռվի է գնում «անգութ ցարի» ու բոլոր շահագործողների վրա։

---

[1] *Թարգմանութ. Սարմենի։*

[2] *Քաջ, արի, տղամարդ։*

Լենինը և Ստալինը ինտերնացիոնալիզմի նշանաբանն են, մեծագույն հերոսներ՝ հաղթող, անվեհեր։

Լենինը և Ստալինն իրենց անձնվեր, հերոսական պայքարով աղատագրելով ճնշված ժողովուրդներին, տվին նրանց նաև հիմնականը՝ հացը,— գյուղացուն հող, եղն ու կով, բանվորին՝ գործարան.

Նիկոլի գործը շատ զուլում էր,
Գիշեր թե ցերեկ, ծեծ ու տանջանք էր,
Նա ուներ անթիվ ուժեղ բանտեր,
Բանտերի առաջ՝ շատ ժանդարմներ։

Լենինը չընդունեց այս վատ բանը,
Ստալինը չընդունեց այս վատ բանը,
Մեջտեղից վերցրին էդ Նիկոլին,
Եվ ուրախացավ ողջ աշխարհը։

Առաջ դովրանը կուլակինն էր,
Նրանց առաջ կար գաթա, հալվա,
Նրանց խմածն էր արաղ ու գինի,
Սև էր չքավոր մարդու հալը։

Աշխատավորի տունը դոմ էր,
Նրա կերածը գարե չոր հաց,
Նրա շապիկը մեշոկից կարած,
Գիշեր ու ցերեկ քրտինքից թաց։

Լենինը չընդունեց այս վատ բանը,
Ստալինը չընդունեց այս վատ բանը,
Հաց, հող, եղն ու կով տվին ռանչպարին
Բոլոր գործարանները տվին բանվորին։

Այժմ դովրանը բանվոր-գյուղացունն է,
Նրանց տները լիք, երեխաներն առողջ,
Ժողովուրդների մեջ մեծ եղբայրություն,
Կեցցե Սովետական մեր իշխանություն։

Ալագյազի շրջանի Փամբ գյուղի բնակիչ, հայտնի սրնգահար Բաստ Բաքրյանի ասած այս երգը, որ նա սովորել է նույն շրջանի Ջարջառիս գյուղի կոլխոզնիկ, երգիչ-բանաստաց Ջալիլ Ռաշոյանից, ընդհանրացած է քուրդ ժողովրդի մեջ, դարձել է ողջ քուրդ ժողովրդի երգը։

Քրդական սովետական ֆոլկլորը երգում է նաև կոլխոզական նոր կենցաղը, նոր, երջանիկ և ունևոր կյանքը, որը նույնպես սերտ կերպով կապվում է մեր առաջնորդների անունների հետ։ Քուրդ երգիչ Ահմե Քալաշյանն ասում է.

Կոլխոզի ուղին մեր մեծ Լենինն ու Ստալինն են նշել,
Լենինի ու Ստալինի անունով կոլխոզ ենք կազմակերպել,

Մեր կոլխոզնները լի են, երջանիկ և ունևոր,
Փառք մեր զույգ արևներին՝ Լենինին ու Ստալինին։

կամ՝

Ո՜վ դու մեր մեծ հայր, Ստալին եղբայր,
Ալագյազի կոլխոզնիկ քո հայրենակցից
Ընդունիր ջերմ, ջերմագին բարև,
Գիտցիր՝ քո անունն ոգի է Հասոն մարդ դառել։

Հասոն էլ մարդ դառավ, կոլխոզնիկ դարձավ,
Սրինգը ձեռքերին նա քեզ է երգում,
Դու մեր արև, անհագթ Ստալին,
Քո կյանքի համար թող դարը օր լինի, իսկ տարին՝ վայրկյան։

Կոլխոզի կյանքը շատ լավ է, լավ է, լավ,
Կոլեկտիվ ուժը շատ լավ է, լավ է, լավ,
Այս բոլորի համար մենք քեզ ենք պարտական,
Մեր մեծ հայր և կենսատու արև, եղբայր Ստալին։

Լենինը և Ստալինն ամենուրեք գործում են, օգնում ու ոգևորում ամեն մի ճնշվածի, սովետական երկրում ապրող ամեն մի քաղաքացու։ Ահա ձեր առաջ կանգնած է ազատագրված քրդուհին, որը ռևոլյուցիայից առաջ ապրանքի էր վերածված՝ ծախվում էր այսպես կոչված «ղալանով»։

Այս երևույթը, որ գալիս էր տոհմատիրական շրջանից, չափազանց տարօրինակում, իրավազրկում էր քուրդ կնոջը, և ահա, որպես քրդուհիների ազատարարներ, կրկին հանդես են գալիս ճնշված մարդկության մեծագույն բարեկամները՝ Լենինն ու Ստալինը.

Հին դովրանում կանայք կորած էին,
Ռևոլյուցիան եկավ նրանց ազատեց,
Լենինն ու Ստալինը դեպի քրդուհին դարձան՝
Նա կորած վիճակից ազատություն ստացավ։

Խեղճ քրդուհին ինչքան ուրախացավ,
Դժվար է պատմել մարդկային լեզվով,
Նա հուզմունքից զույգ ձեռքերը երկարեց,
Մուրճն ու մանգաղը իր կրծքով սեղմեց։

Թող երկար ապրեն Լենինն ու Ստալինը,
Քրդուհուս ազատող Լենինն ու Ստալինը,
Լենինի ու Ստալինի պատկերները ձեռքերին,
Արցունքն աչքերին, գոչում է քրդուհին։

Կարդալով քրդուհի Խազալ Մամոյանի այս սրտառուչ երգի հատվածները, իսկույն հիշում ես Ստալինյան Կոնստիտուցիան՝ ազատագրված կնոջ վերաբերող 122-րդ հոդվածը, որն այնքան մարդկային է, այնքան հուզող և լուսատու ամեն մի ճնշված կնոջ համար, ով էլ լինի, որտեղ էլ լինի նա։

Ստալինյան Կոնստիտուցիան—դա մեր լայնածավալ երկրի փառքն ու պարծանքն է, դա ազատագրված ժողովուրդների դարավոր իղձն ու ցանկությունն է և հասկանալի է, որ քուրդ ժողովրդի աչք ու ականջ երգիչը չէր կարող այդ չնկատել, չոգևորվել ու անհուն սիրով չողջունել նրան.

Ա՛յ մայրիկ, տես՝ մի նոր գիրք է դուրս եկել,
Եթե ասեմ՝ սա ազատությունն է, դու հավատա,
Եթե ասեմ՝ սա արևն է, դու հավատա,
Նրա անունն է Ստալինյան Կոնստիտուցիա։

Սովետական Հայաստանում ապրող քուրդ ժողովուրդը երախտապարտ է Լենինին ու Ստալինին, Լենինի ու Ստալինի պարտիային։ Նա ապրում է ամենաերջանիկ ու բերկրալի կյանքով, դարավոր հարևան հայ ժողովրդի հետ ձեռք-ձեռքի տված՝ կառուցում է նորը, սոցիալիստականը։

Սակայն ինչպես ողջ սովետական քաղաքացիների իղձն է, նույնպես և քուրդ ժողովրդի իղձն է, որ բոլոր երկրների ճնշված ժողովուրդներն ազատագրվեն կապիտալիստական ծանր լծից։ Եվ քուրդ անվանի 70-ամյա աշուղ Ահմե Զոլոն իր վերջին պոեմներից մեկում երգում է հովիվ Ուսուբի ու նախրապանի աղջիկ Խազալի սերը։ Թեմուր բեկը բոլոր միջոցները գործադրում է, որպեսզի ինքը տիրանա Խազալին, փորձեր է անում հանդուգն հովվին սպանելու, սակայն հակառակն է կատարվում, նա ինքը՝ Թեմուր բեկն Ուսուբի ու Խազալի ձեռքով սպանվում է և նույն Ուսուբն ու Խազալը փախչում, գալիս են այնպիսի երկիր, ուր ոչ աղա կա, ոչ բեկ. այդ երկիրը կոչվում է Ստալինյան ազատագրված երկիր։

Լենինն ու Ստալինը մեծագույն ժողովրդական դյուցազուններն են, նրանցով է զարդանում քրդական դյուցազներգական ֆոլկլորը։ Այսօր ամեն մի քուրդ երգչի մեծագույն իղձն է՝ չլավականանալ եղածով, այլ տալ ավելի բարձր գեղարվեստական գործեր՝ կապված մեր դարաշրջանի մեծագույն առաջնորդների՝ Լենինի ու Ստալինի անմահ կերպարների հետ։

Х. С. САРКИСЯН

О НЕКОТОРЫХ ВОПРОСАХ АРМЯНСКОЙ ОРФОГРАФИИ

Несоответствие письма произношению, расхождение между ними—явление, свойственное в той или иной мере почти всем языкам. Одной из причин этого расхождения является то, что язык фонетически растет и изменяется, а графическое закрепление его норм остается прежним, традиционным.

Когда несоответствие или расхождение доходит до такой степени, что препятствует легкому восприятию письма—настает момент необходимости реформы орфографии, т. е. реформы норм письма.

Могут быть разные принципы реформы орфографии. Мы остановимся только на двух: 1) принцип единства норм произношения и 2) принцип полного соответствия письма звуку, графемы фонеме

1

По принципу единства норм произношения или непрерывности письменных традиций была реформирована орфография русского языка (1917 г., после Октябрьской революции).

Затруднения в русском правописании, в основном, вызывались присутствием букв—*ять, и с точкой, фита*—которые произносились абсолютно так, как произносятся буквы *е, и, ф,* т. е. эти пары букв графически были разные, но фонетически—тождественны.

К этим трем буквам надо прибавить еще *ъ*, который ставился в конце существительных с твердым согласным окончанием и был абсолютно ненужным балластом.

Конечно, исторически об'яснимы все эти, казалось, несуразности в старой орфографии русского языка. Однакож, в современном русском языке все эти знаки лишь ненужно осложняли письмо, затрудняли его освоение, засоряли его—реформа письма была абсолютно необходима.

Что же было сделано?

Везде, где писалось *ять,* начали писать *е;* где писалось *и с точкой,* начали писать *и;* где писалось *фита,* стали писать *ф*. Что же касается *ъ*, то от него осталось лишь пустое место, что внесло

большую экономию в книгопечатание (ъ был оставлен лишь в середине слова в качестве отделительного знака).

От этой реформы ничего не изменилось, ничего не пострадало, только стало легче писать, легче стало обучать письму.

До реформы в русском алфавите было 35 букв, после реформы стало 32 буквы. Норма чтения или произношения оставшихся букв осталась абсолютно той же самой.

Возьмите вы какой-либо дореволюционный или послереволюционный текст—от вашего чтения эффект получится тот же самый: вам следует только знать функции, нормы чтения упраздненных букв и больше ничего.

Азбука совершенно не была изменена: из нее был выкинут только балласт. Принцип непрерывности письменных традиций полностью был соблюден: *буква или упраздняется, или — если остается—ее норма чтения остается традиционной.*

2

По принципу полного соответствия письма звуку (одной букве —один звук) была реформирована орфография армянского языка (1922 г.).

В старом армянском правописании письмо затруднялось следующими орфографическими нормами:

1. Звук *э* в середине слова обозначался буквами *ե* и *է*—при абсолютно одинаковом произношении (*ձեռք, սէր*).

Буква *ե*, одновременно, в начале слова произносилась, как двугласное *е* (*երեան*).

2. Звук *о* в середине слова обозначался буквами *օ* и *ո* при абсолютно одинаковом произношении (*գօտի, բոլոր*).

Буква *ո*, одновременно, в начале слова произносилась как сочетание двух звуков—*во* (*որդի*).

3. Звук h в начале слова обозначался буквами *յ* и *հ*—при абсолютно одинаковом произношении (*յարմար, հաշիվ*).

Буква *յ*. одновременно, в середине слова после гласных звуков произносилась, как полугласное—j, *й* (*մայր*).

Та же самая буква без произношения (наподобие ъ) ставилась в конце слов с гласным окончанием (*պարագայ*).

4. Звук *в* в середине слова обозначался буквами *ւ* и *վ* при абсолютно одинаковом произношении (*նաւակ, կառավարել*).

Для большей наглядности прилагается следующая таблица произношения вышеуказанных букв:

Буквы	Произношение букв			
	В начале слова	В середине слова	В середине после гласного	В конце после гласного
Ե	е	э	—	—
է	э	э	—	—
Ո	о	о	—	—
ո	во	о	—	—
Յ	h	—	й	Не произносилась (немое j)
ֆ			—	—
Ւ	Не ставилась	в	—	—
վ	в	в	—	—

Конечно, эта пестрота в произношении букв—Ե, ո, Յ, Ւ—имеет свою историю и об'яснение.

Первоначальная норма чтения Ե—э, и только под натиском изменившегося произношения оно начало читаться в начале слова и как *е*. В эпоху сложения армянской азбуки слово *длинный* произносилось *эркайн*, а впоследствии *еркайн*—переход *э* в *е* графически не был фиксирован, и Ե в начале слова потеряло свою архаичную норму чтения.

Первоначальная норма чтения ո—*о*, и только под натиском изменившегося произношения оно начало читаться в начале слова и как *во*: слово *сын* произносилось *орди*, а впоследствии *ворди*, но так как переход *о* в *во* графически не был фиксирован—ո в начале слова потеряло свою архаичную норму чтения.

Первоначальная норма чтения Յ—*й*, и только под натиском изменившегося произношения оно начало читаться в начале слова как h. Но так как этот переход *й (j)* в h *(ֆ)* графически не был фиксирован—Յ в начале слова потеряло свою архаичную норму чтения.

Наконец, первоначальная норма чтения Ւ—*у* (греч. ипсилон, игрек), и только под натиском изменившегося произношения оно начало читаться в середине слове, как *в*. Графической фиксации не последовало, и Ւ потеряло свою былую норму чтения.

Однакож, исторически имея свое об'яснение и оправдание, в современном армянском языке эта сложная система графических знаков лишь крайне затрудняла письмо—реформа правописания была абсолютно необходима.

Что же было сделано?

В основу реформы был положен принцип: каждому звуку одна буква, сколько звуков в слове, столько же букв в письме.

Логически развивая свой основной тезис, реформа проделала следующие операции:

1. Из двух норм чтения буквы յ—h в начале слова (յարմար) и *й* после гласного (*մայր*)—она оставила только вторую, придав յ *новую* функцию: *й* до гласного звука.

2. Упразднив է, из двух норм чтения է—*е* в начале слова и *э* в середине—она оставила только вторую, придав է *новую* (по существу архаичную) функцию: *э* в начале слова.

По старой орфографии слово *Ереван* писалось так: Երևան: после реформы это начертание читается: *Эреван*.

После реформы слово *Ереван* писалось так: Էրեվան; по старой орфографии это начертание читалось: h*ереван*.

Итак, одно и то же графическое начертание или сочетание букв разно читалось по старой орфографии и по новой. Получилась путаница и полный перерыв письменных традиций.

Если русскую орфографию реформировали бы по этому принципу, то же самое слово Ереван надо было писать следующим образом: Йэрэван...

3. Упразднив ո, реформа из двух норм чтения ո—*во* в начале слова и *о* в середине—оставила только вторую, придав ո *новую*—по существу архаичную функцию: *о* в начале слова.

По старой орфографии слово *ворди* (сын) писалось так: որդի; после реформы это начертание читается: *орди*.

После реформы *оринак* (пример) писалось так: որինակ; по старой орфографии это начертание читалось: *воринак*.

Итак, одно и то же графическое начертание или сочетание букв разно читалось по старой орфографии и по новой. Получилась путаница и полный перерыв письменных традиций.

Чтобы быть последовательной—а реформа строго последовательна—была преобразована также система армянских двугласных.

Армянский язык имеет три двугласных со сложным начертанием: ևա — *я*, ևո (ո) = *ё*, իւ = *ю*.

Взамен ևա—согласно реформе—надо было писать յա, взамен ևո—յո, взамен իւ—յու.

Если русскую орфографию реформировали бы по этому принципу, то получилась бы следующая картина: взамен *я*—*йа*, взамен *ё*—*йо*, взамен *ю*—*йу* и, следовательно: не *яйцо*, а *йайцо*; не *елка*, а *йолка*, не *юг*, а *йуг*...

По этим нормам пишется:

1) не Պետրոսեան, а Պետրոսյան—первое по новой орфографии читается *Петросэан*, второе по старой—*Петросhан*;

2) не արդեօք (разве), а արդյո՞ք—первое по новой орфографии читается *ардеок*, второе по старой—*ардhок*;

3) не իւր (свой), а յուր: второе по старой орфографии читается h*ур*.

Итак, не только в отношении յ, է, ո, но и в отношении ևա, ևո,

իւ получилась полная путаница и резкий разрыв непрерывности письменных традиций.

Один и тот же текст, напечатанный по старой и новой орфографии, имел троякое чтение: одно нормальное, второе—старый текст по новым нормам, третье—новый текст по старым нормам.

Реформа изменила азбуку: буквам *յ, ե, ո* и сочетаниям *յա, յո, յու* она придала новые функции, новые нормы чтения, архаизировала эти нормы, вернулась к V веку.

Реформа до того была педантично последовательна, что взамен *և* начали писать *յեվ* (три звука—три буквы), а вспомогательный глагол, вопреки морфологическому принципу, начали писать двояко: *եմ* или *յեմ* и т. д. в зависимости от произношения.

По принципу: каждому звуку одна буква, можно и должно составить азбуки тех языков, которые не имеют письма. Несомненно, великий лингвист Месроп Маштоц при составлении в V веке азбуки армянского языка руководствовался этим принципом.

Но нельзя было руководствоваться этим принципом в настоящее время, спустя 1500 лет после смерти Маштоца.

3

Итак, реформа 1922 года, исходя из неправильного принципа дала ряд несуразностей; но она включает в себе и положительные результаты.

Эти положительные результаты в основном следующие:

1. Упразднение буквы *ւ*: везде, где слышно *в*—писать *վ*.

2. Упразднение произношения *յ*, как *հ*: везде, где слышно h—писать *հ*.

3. Упразднение разнобоя в писании звука *э* в середине слова: везде где слышно *э*—писать *ե*.

4. Упразднение разнобоя в писании звука *о* в середине слова: везде, где слышно *о*—писать *ո*.

Все это совершенно приемлемо по той причине, что не нарушает единства норм произношения, не прерывает письменной традиции (*բաւարար—բավարար, յարմար—հարմար, սէր—սեր, գոտի—գոտի*). Буква или выкидывается, или—если остается—норма ее произношения остается прежней.

Если бы армянскую орфографию реформировали по принципу единства норм произношения букв, то получилась бы такая, или приблизительно такая картина.

Зато неприемлемы следующие правила реформы 1922 года:

1. Писание в начале слова взамен *հ—ե*.

2. Писание в начале слова взамен *ո—ո*.

3. Писание двугласного *я* взамен *եա—յա*.

4. Писание двугласного *ё* взамен ե*о* (ե*ո*)—յ*ո*.

5. Писание двугласного *ю* взамен ի*ւ*—յ*ու*.

Все это *неприемлемо* потому, что *нарушает мудрый принцип единства норм произношения, прерывает непрерывность письменных традиций, изменяет азбуку*.

*
* *

Настоятельной потребностью армянской орфографии в настоящее время является упразднение ошибок 1922 года, т. е. упразднение тех изменений, которые были внесены в азбуку.

Согласно решению Коллегии НКПроса Арм. ССР (август 1940 г.) է и օ восстанавливаются. Было бы в высшей степени целесообразно, если наряду с է и օ были восстановлены также и двугласные ե*ա*, ե*ո*, ի*ւ*, ибо их современное писание յ*ա*, յ*ո*, յ*ու* также является изменением азбуки: յ перед гласной буквой звучало как h, а по принятому письму оно звучит как *й*.

Освободив ե и ո от излишней нагрузки несения функций *э* и *о* в начале слова—что нарушало единство норм произношения,—в дальнейшем надо освободить и յ от такой же излишней нагрузки несения функции *й* перед гласным звуком—что также является нарушением единства норм произношения.

Если мы в отношении букв ե и ո придерживаемся нормы невозможности перерыва письменных традиций, то ясно, что и в отношении буквы յ должны придерживаться той же самой нормы.

Восстановление է и օ, несомненно, лишь частичное изменение действующего алфавита, лишь первый его этап. В дальнейшем предстоят новые улучшения в орфографии армянского языка и—как нам кажется—в первую очередь восстановление ե*ա*, ե*ո*, ի*ւ*.

ՊՐՈՖ. Լ. ՄԵԼԻՔՍԵԹ-ԲԵԿ

ԵՐԵՎԱՆԻ ՀԻՇԱՏԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՍԵՎԱՆԻ 874 Թ. ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Երևանի անցյալին նվիրված պատմական տեսությունները սովորաբար սկսվում են այն վաստի հիշատակությամբ, որ խալդական շրջանում այն կոչվելիս է եղել Էրիախինի (Eriaini)[1]։ Ապա նշվում է «Գիրք Թղթոց»-ի մեջ հիշատակած՝ Աբրահամ հայոց կաթողիկոսի գումարած հակաքաղկեդոնիկ եկեղեցական ժողովի (մինչ 602 Թ.) մասնակից երկու «վանաց երեցների» անունները, մեկը «Դաւիթ Երևանայ», իսկ մյուսը «Զոջիկ երևանից», որով ապացուցվում է Երևանի գոյությունը VI դարի վերջերին։ Երևանի ու նրա բերդի անունը տալիս է VII դարում և Սեբեոս պատմիչը, սակայն դնելով «ի կողմանս Սեպհական գնդին», որ դժվարացնում է նրա նույնացումը Այրարատյան դավառի Երևանի հետ[1]։

Եթե քերդապատ Երևանի գոյությունը VII դարում կասկածելի է թվում, հապա այգեպատ Երևանի հիշատակությունը Սևանի 874 Թ. արձանագրության մեջ ամեն կասկածից դուրս է։

Այս արձանագրությունը, որ մենք հայտաբերեցինք դեռևս 1924 թվին, Սևանի Առաքելոց եկեղեցու (լեռան փոքր դմբեթավոր տաճարի) դմբեթի վրա և հրատարակեցինք 1939 թվին[2], որոշ չափով շփվում է, մի կողմից՝ Սեբէոսնոս Օրբելյանի «Պատմութիւն տանն Սիսական»-ի այն տվյալներին, որ վերաբերում են Սևանա կղզու շինարարությանը, իսկ մյուս կողմից Սիմեոն Երևանցու «Ճամբոռ»-ի հաղորդած այն ցուցակին, որ վերաբերում է Սևանա վանքին պատկանելիք անշարժ գույքին։

Ահա այդ արձանագրությունն ըստ մեր ընթերցման (5 տող).

1. *Համաւն այ Սիւնեաց | տիկին (բնագրում՝ տքն) Մարիամ շինեցի զեկեղեցիս | յանուն սբ | առաքելոցն՝ միաբանութեամբ (բնագրում՝ միայբանութբ) ||*
2. *Աշոտ[ոյ] (բնագրում՝ Ոշոտ) եւ տվաք | վախմ սբ առաքելոցն զ | Վարսերն, | զԴոմաճոր, ցամաքքերդ, Իւրդք, Ուռե ||*
3. *ացտավ, որսն զկո|ակծնկին, այդի ի Գա | ռնի եւ | յԵրեւան. և թանկագին նշան ||*

---

[1] Տրականությունն՝ Երվանդ Շահազիզ, Հին Երևանը, 1931, էջ 7—14. Հ. Ն. Ակինյան, Հին Երևանը,—«Հանդէս ամսօրեայ», 1934 թ., № 5—7, էջ 327. Համմ. Հ. Քոչար, Երևան,—«Սովետական Հայաստան» 1940 թ. № 219։ Սկզբնաղբյուրներ՝ Գիրք Թղթոց, թ. 1901, էջ 151. Սեբէոսի եպիսկոպոսի պատմութիւն. չորրորդ տպագրութիւն բաղդատութեամբ ձեռագրաց, հանդերձ առաջաբանիւ և ծանօթութեամբ ի ձեռն Ս. Մ ա ր գ ս յ ա ն ց, Երևան 1939, էջ 118։

[2] Л. Меликсет-Беков, Новооткрытая надпись на Севане от 874 г.,—«Памяти академика Н. Я. Марра (1864—1934)», изд. Акад. наук СССР, М. Л. 1938, стр. 409—415 и табл. I там-же *(խմբագրության անփութությամբ, գժբախտաբար, արձանագրության լուսանկարը ապված է գլխիվայր, իսկ տեքստը՝ սրբագրական սխալներով)։*

4. ք ածընկալ սբ նշանաց | տամ ի ժառանգութիւն զկ | տակելոյ (sic) | զկորատեղ, ով խա || –
5. փանէ՝ ՅԺԸ[ից] նզովեալ է | ղիցի. Թվ ՅԻԴ։ ||

Նույնը ըստ Սա. Օրբելյանի.

«Մեծն թագուհին Մարիամ ամուսին Վասակայ Սիւնւոյ, գայ առ սուրբն Մաշտոց և բազում թախանձանօք ի հաւան ածեալ զնա՝ ձեռն ի գործ արկեալ շինեն զգեղապաճոյճ եկեղեցիսն յանուն սուրբ առաքելոց և զմիւսն յանուն տիրուհւոյ աստուածածնին. և գարգարեալ մեծամեծ սպասուք կանգնեն զնա տուն աստուծոյ և բնակարան աստուածազգեաց արանց յՅԻԳ թուականին Հայոց։ Իսկ Մաշտոց եգ սահման վանացն և պայծառացոյց երկնաքատակ կարգօք. յորմէ համբաւոյ միաբանեալ Աշոտոյ՝ իշխանաց իշխանի սուրբ ուխտին՝ գայ ի տեսութիւն սուրբ հօրն և ընծայէ զփրկական նշանն աստուածընկալ խաչին, և տայ ի ժառանգութիւն սուրբ եկեղեցւոյն գիւգս՝ զվարսերն, զծամաքարերգ, զԴոմաձորն, զբևերգն, զՈւռեացտափ և գորսն Կոակծին, և այգիս ի Դառնի և յերևան և յայլ տեղիս, և բազում նզովիւք հաստատեցին»[1]։

Վերոհիշյալ՝ 874 թ. արձանագրության և Ստ. Օրբելյանի ցուցմունքի հանգեպ Սիմեոն Երևանցին Սևանի անշարժ գույքի ցանկը XVIII գարու նկատմամբ տալիս է հետևյալ կերպով.

«Սևանա անապատի որպիսութիւնք»

«Անապատս այս, որ է ծովակն Գեղարքունւոյ, որ և ... նախապէս հիմնարկեցաւ ի Թուոջ...

«Ունի զվիճակս ի Գեղարքունի, զկախմախ, գիատակալ, զվարգել, ևս զվարդել, զՓշմակալ, զրուղտաթափայ, գՀարաղալու, զՊորտակ, զկորատեղ։ Իսկ ի Ծազկունեաց նահանգէն զայս ինչ ունի. զԴրախտիկ, զՈւռիծառ, զՄեծտափ, զՋիպուխլու, զծամաքարերգ, զԴոմաձոր, զվարսեր, գՇալիս, զկորբել և զԾազկունք»[2]։

Այս ցանկում մի շարք անուններ՝ կորատեղ, Ուռիծառ, Մեծտափ, Ծամաքարերդ, Դոմաձոր և Վարսերը՝ կրկնություն են 874 թ. արձանագրության և Ատ. Օրբելյանի հիշատակածի. մինչդեռ Դառնիի և Երևանու այգիների մասին այլևս խոսք չկա։ Հավանական է, որ Սևանա վանքի իրավունքները IX գարում նվիրված տեղերի նկատմամբ կարող էին խախտվել, ինչպես օրինակ՝ Դառնիի և Երևանի այգիների վերաբերմամբ։ Սակայն փաստը մնում է վաստ, որ Երեանն իր այգիներով հիշատակված է ինչպես 874 թ. արձանագրության մեջ, նույնպես և Ստ. Օրբելյանի Պատմության մեջ։

---

[1] Ստեփանոսի Սիւնեաց եպիսկոպոսի պատմութիւն տանն Սիսական ի լոյս ընծայեաց Մկրտիչ Էմին, Մոսկվա 1861, էջ 116—127—Պատմութիւն Նահանգին Սիսական արարեալ Ստեփաննոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի Սիւնեաց [«Ղուկասեան Մատենադարան» 4], Տփղիս, 1911, էջ 173—174։

[2] «Ջամբռ», 1873, էջ 284։

ԱՍ. ԱՍԱՏՐՅԱՆ

ՇՈՒՇԱՆԻԿ ԿՈՒՐՂԻՆՅԱՆԻ ՊՈԵԶԻԱՆ[1]

1.

Ռուսական առաջին ռևոլյուցիան շատ խորն ազդեցություն թողեց հայ դրականության վրա՝ նոր մոտիվներ, նոր բովանդակություն և ուղղություն տալով նրա զարգացմանը։ Ժամանակի հայ առաջավոր գրողներն իրենց ստեղծագործությունների մեջ, յուրաքանչյուրն իր համակրանքի խորության չափով, արձագանքեցին ռևոլյուցիայի որոտին՝ հայ ժողովրդի, հայ բանվորների ու գյուղացիության ազատագրական կռվի կամքն արտահայտելով ու նրանց ձայնը միացնելով ռուսական պրոլետարիատի, ռուսական առաջավոր դեմոկրատիայի հզոր ձայնին։

Ռուսական առաջին ռևոլյուցիայի և պրոլետարիատի առաջավոր ջոկատի, այն է՝ ռևոլյուցիոն սոցիալ-դեմոկրատիայի ազդեցության ամենացայտուն արտահայտությունը հայ դրականության մեջ, դա—պրոլետարական գրական շարժման առաջացումն էր՝ 900-ական թվականների սկզբից, մի շարժում, որի հիմնադիրը և գլխավոր ներկայացուցիչը հանդիսանում է բոլշևիկ բանաստեղծ Հակոբ Հակոբյանը։

Գրական այս նոր շարժումը, որն իր հասարակական-քաղաքական մկրտությունն ստացավ ռուսական առաջին ռևոլյուցիայի կրակում, մեր պատմության նոր շրջանի՝ պրոլետարական ռևոլյուցիայի նախապատրաստման շրջանի արտահայտությունն էր և սոցիալիստական ռևոլյուցիայի հաղթանակի վաղ այգարացը հայ գրականության պատմության մեջ։

Գրական այս նոր շարժման մեջ ահա—շատ նշանակալից է Շուշանիկ Կուրղինյանի տեղն ու դերը, որն ըստ արժանվույն դեռ չի լուսաբանվել։ Իսկ մեր ներկա աշխատանքը սոսկ մի փորձ է այդ ուղղությամբ։

Ընդհանուր առմամբ անցյալի գեղարվեստական կուլտուրայի, մասնավորապես գեղարվեստական դրականության պատմության մեջ հազվադեպ երևույթ են կանայք որպես կուլտուրայի մշակներ. բայց հայ դրականությունն այնքան էլ աղքատ չէ կին գրողներով. մենք ունենք մի շարք կին գրողներ՝ արձակագիրներ ու բանաստեղծուհիներ, ինչպես՝ Սրբուհի Տյուսաբը, Անայիսը (Եվվիմե Ավետիսյան), Եվտերպեն (Զարուհի Գալեմքերյան), Սիպիլը (Զապել Տոնապետյան), Մ. Մարիսյանը (Մարիամ Մատիսյան) և ուրիշները։

---

[1] *Արմֆանի IX գիտական սեսիայի (Լենինականում) 1940 թ. հունիսի 19-ի նիստում կարդացած զեկուցումը։*

Պետք է նկատել, սակայն, որ անցյալի՝ թե հայ գրականության մեջ և թե նույնիսկ ռուսական ու համաշխարհային գրականության մեջ չկա մի կին գրող, որն իր ստեղծագործության հասարակական-քաղաքական բովանդակությամբ հավասարվեր հայ անվանի բանաստեղծուհի Շուշանիկ Կուրղինյանին. Կուրղինյանը եզակի դեմք է անցյալի գրականության մեջ։ Կարող ենք ասել, որ ինչպես հայ, նույնպես և այլ ազգերի հայտնի կին գրողների — բանաստեղծուհիների անունները (բացառությամբ Ժորժ Զանդի) հազիվ նշմարվող աստղեր են գրականության պատմության մեջ, մինչդեռ Շ. Կուրղինյանի անունը նույն այդ գրականության պատմության մեջ պայծառությամբ փայլում է։ Կուրղինյանն իր ստեղծագործության լույսն ու կրակն ստացավ ռուսական պրոլետարիատի ազատագրական պայքարից և Հ. Հակոբյանի հետ միասին հրավառեց հայ ժողովրդի պոեզիայի նոր այգաբացը։

Ասացինք, որ անցյալում ըստ արժանավույն չի գնահատվել Կուրղինյանի տեղն ու դերը մեր գրականության մեջ։ Այժմ, երբ նոր է դրվում հայ գրականության դիտական պատմությունը, երբ մարքսիզմ-լենինիզմի լույսի տակ վեր է հանվելու մեր ժողովրդի բազմադարյան գեղարվեստական գրականության զարգացումը, մեծատաղանդ բանաստեղծուհու տեղն ու դերը կորոշվի այդ զարգացման շղթայում, համաձայն այն խոշոր նշանակության, որ ունեցել է և ունի նրա պոեզիան։

Շուշանիկ Կուրղինյանը ծնվել է 1876 թվի օգոստոսի 18-ին նախկին Ալեքսանդրոպոլում (այժմ Լենինական), աղքատ արհեստավորի ընտանիքում։

Բանաստեղծուհու մանկությունն ու պատանեկությունն անցնում է կարիքով ու վշտով լի կյանքի պայմաններում, որոնք վաղ գիտակցական տարիներից նրան համակել են խոր թախիծով։ Ահա թե ինչ է պատմում Կուրղինյանն իր՝ ինքնակենսագրական բնույթի «Իմ երգը» վերնագրով ոտանավորում՝ գրված 1906 թվին։

Ես ծնվել եմ մութ խրճիթում մշտարաց,
Աղքատ կյանքի խոպանացած հովիտում,
Ուր զրկանքը մանուկ օրից զրկարաց
Թուլլ մարմինս իր կրծքին էր օրորում։
Կյանքի լույսի չկար այնտեղ գեթ նշույլ,
Միշտ խավար էր... տառապանքի ցուրտ ձմեռ...։

Մինչև 1903 թիվը Կուրղինյանն ապրել է իր ծննդավայրում, ուր և ստացել է սկզբնական կրթություն՝ նախ մի քահանայի ջոտ, ապա տեղի դպրոցում։ Բայց դեռ 1896 թվին նա փորձում է Մոսկվա գնալ ուսումը շարունակելու համար, սակայն, այդ նրան չի հաջողվում, և այնուհետև նա իր կրթության պակասը լրացնում է ինքնազարգացման ճանապարհով։

Դեռ մանկական տարիներին բուռն սեր է զարթնում Կուրղինյանի մեջ դեպի ժողովրդական ստեղծագործությունը և դեպի պոեզիան ընդհանրապես։

1899 թ. «Տարազ» շաբաթաթերթում (№ 30) տպագրվեց Շ. Կուրղինյանի՝ «Վերջալույսի վառ շողերով» բանաստեղծությունը, որով և սկսվում

է նրա գրական գործունեությունը։ Հայրենի բնությունը և սեր—ահա թե ինչն է կազմում Կուրղինյանի մինչռեվոլյուցիոն (1905 թ.) շրջանի ստեղծագործության հիմնական մոտիվը՝ համակված տխրությամբ ու թախիծով։ Աղքատ արհեստավորի բանաստեղծուհի աղջկա սրտին հենց սկզբից հարազատ է եղել ժողովրդական վշաի մոտիվը։

«Տուր ինձ քնարդ» ոտանավորի մեջ բանաստեղծուհին քնար է ուզում, որ երգի մարդկանց կսկիծն ու տանջանքը.

Հա... երգեմ տխուր կսկիծը մարդկանց
Ու այն թշվառին,
Որ անտուն-անտեր չունի կտոր հաց...
Երգեմ տանջանքը
Գերի սրտերի և արցունքները
Սև գիշերների...

Հանդես գալով 19-րդ դարի վերջում, Շ. Կուրղինյանն իր առաջին շրջանի ստեղծագործության մեջ հիմնականում կրկնում է նախորդ և ժամանակակից բանաստեղծներին (Ծատուրյան, Հովհաննիսյան, Իսահակյան և այլն)։ Բայց նրա կյանքի և ստեղծագործության մեջ շուտով նոր էջ է բացվում՝ բանվորական շարժման և ռուսական առաջին ռեվոլյուցիայի ազդեցությամբ։ Այդ տեսակետից վճռական նշանակություն ունեցավ այն հանգամանքը, որ 1903 թվին բանաստեղծուհին Ալեքսանդրապոլից տեղափոխվեց Ռոստով՝ Դոնի վրա։ Սա Ռուսաստանի բանվորական ռեվոլյուցիոն շարժման օջախներից մեկն էր։ Ապրելով այս նոր միջավայրում և հանդիսատես լինելով ռեվոլյուցիոն-քաղաքական մեծ պայքարի վերելքին՝ Կուրղինյանը հոգեպես ներգրավվում է այդ պայքարի հորձանքի մեջ, վերափոխվում և իր ստեղծագործություններում անդրադարձնում այդ պայքարը։

Պատասխանելով Յուրի Վեսելովսկու անկետային, Շ. Կուրղինյանը գրում է. «Ես ինձ շատ պարտական եմ զգում ռուսական կյանքին, վերածնվող փոքրկոտ օրերին և հատկապես ռուսական պրոլետարիատին։ Ռուսաստանն իմ բազմաթիվ մոտիվների հայրենիքն է»[1]։

Իր ինքնակենսագրության մեջ (գրված 1920 թվին) Կուրղինյանն ավելի մանրամասն պատմում է այն մեծ ու վճռական ազդեցության մասին, որ ունեցել է ռուսական պրոլետարիատի ռեվոլյուցիոն պայքարն իր վրա, հիմնովին փոխելով նրա հայացքը սոցիալական կյանքի նկատմամբ և ստեղծագործության նոր աշխարհ բաց անելով նրա առաջ։ Կուրղինյանը նկարագրում է թե՝ իր վրա ինչքան խոր տպավորություն է թողել Ռոստովի բանվորների մայիսմեկյան ռեվոլյուցիոն տոնակատարությունը՝ 1905 թվին։

«Մայիսի մեկի բանվորական կուռ շարքերը տարերքի, ալիքի պես, ինչպես մի ուժեղ հոսանք, վերցրեց և տարավ ինձ...

Վերադարձա տուն ուշ, հոգնած, փոշոտված, վերածնված, և նկատեցի,

[1] *Юр. Веселовский*—„Русское влияние в современной армянской литературе», 1909 г., стр. 26.

որ իմ սիրտն ու հոգին միաց նրանց հետ անվերադարձ կերպով. հավիտենապես: Այդ ժամանակից սկսած բանվորական երթերը, միտինգները, ցույցերը, մանիֆեստացիաները, ժողովներն ունենում էին ինձ վրա մոգական ազդեցություն և ես գնում եմ նրանց հետևից, նրանց հետ, առերևույթ նրանց օտար, բայց ամենից մոտիկ...»:

Կուրղինյանն ինքը վկայում է. «1905 թիվը եղավ իմ վերածնության տարին: Ռուսական հեղափոխությունը և պրոլետարիատը բացին իմ առջև պրոլետարական իմաստության բոլոր գաղտնարանները և իմ ազգասիրական երգերն օրեցօր թոշնեցին» («Ինքնակենսագրություն»):

Եվ իրոք, ռուսական առաջին ռեվոլյուցիայի տարիներին՝ 1905—1906—1907 թվերին Կուրղինյանն ապրում է աշխարհայացքի և ստեղծագործության արմատական վերափոխում. նա վերածնվում է: Կուրղինյանը կարդում էր ռեվոլյուցիոն սոցիալիստական գրականություն, նա՝ թերևս, առաջին հայ կինն էր, որ այն ժամանակ ձեռք է բերում ու կարդում Մարքսի «Կապիտալ»-ը: Նրան գրավում է պրոլետարիատի հանճարեղ գրողի՝ Մ. Գորկու ստեղծագործությունը և նա ոչ միայն կարդում է Գորկու երկերը, այլև փորձում է նրա հետ անձնական կապ հաստատել՝ նամակագրությամբ: Նրա վրա ազդում են նաև առաջին հայ պրոլետարական բանաստեղծի՝ Հակ. Հակոբյանի աշխատանքի ու ռեվոլյուցիոն երգերը, ինչպես և իտալացի նշանավոր բանաստեղծուհու՝ Ադա Նեգրու ստեղծագործությունները. որոնց լավագույն մասը ռեվոլյուցիայի նախօրյակին (1903—1904 թ. թ.) թարգմանել էր հայերեն Հ. Հակոբյանը:

Իր անցումն ռեվոլյուցիայի կողմը՝ Շ. Կուրղինյանը նշել է «Ես ըմբոստացա» բանաստեղծությամբ.

Ես ըմբոստացա—լույսը սիրեցի
Եվ խելացնոր հարվածներիս տակ
Ծավարը ընկավ... ես... ես հաղթեցի,
Փառք ու պատիվ ինձ, կեցցե՛ հաղթանակ...

— ասում է բանաստեղծուհին հպարտությամբ և կոչ է անում ուրիշներին, հետևելու իր օրինակին:

Անհիմն չէր Շ. Կուրղինյանի հպարտության այդ ազնիվ զգացմունքը քանի որ իր ժամանակի և ընդհանրապես ամբողջ մինչսովետական շրջանի հայ գրականության մեջ նա առաջին և միակ կին բանաստեղծուհին էր, որ ողջունեց ու երգեց բանվոր դասակարգի ռեվոլյուցիոն պայքարը, մի թռիչքով վեր բարձրացավ կնոջ կրկնակի ստրկական վիճակից, հասավ սոցիալական-քաղաքական գիտակցության բարձրակետին և Հ. Հակոբյանի հետ միասին, խիզախ ու բարձր ձայնով հնչեցրեց նոր էպոխայի «արշալույսի ղողանջները» հայկական պոեզիայում:

Արշալույսի հուր նետերից խավարն ընկավ վիրավոր.
Արշալույսի ազատ շնչից ես վեր թռա թևավոր,
Արշալույսը ինձ երդ տվեց բոսորավառ եթերից,
Արշալույսի հիմնը թռավ իմ հուսավառ շրթերից,

Արշալույսի շողերի հետ սավառնաթև կթռչեմ,
Արշալույսի լույսը գրկած՝ բմբոստ երգեր կհյուսեմ։

Անցյալի մեր քննադատության մեջ Շ. Կուրղինյանին անվանել են հայ Ադա Նեգրի։ Բայց Կուրղինյանն ավելի է, քան Ադա Նեգրին, հայ բանաստեղծուհին ավելի մոտ է բանվոր դասակարգի պայքարին, քան իտալացի նշանավոր բանաստեղծուհին։ Ադա Նեգրու ստեղծագործության մեջ հիմնականը, իսորը, աղնիվ կարեկցությունն է բանվոր դասակարգի ճնշված, տանջանքով լի կյանքի նկատմամբ, իսկ ռեվոլյուցիոն պայքարի մոտիվը չկա նրա մոտ, մինչդեռ Կուրղինյանը, ճնշված ու տանջված ժողովրդի նկատմամբ կարեկցության, վշտակցության զգացմունքի հետ միասին, ապրել ու երգել է նաև պրոլետարիատի պայքարը՝ հանուն նոր կյանքի, նրա ռեվոլյուցիոն կռիվը բուրժուազիայի և ցարիզմի դեմ։

Ուշագրավ է, որ Շ. Կուրգինյանը ստեղծագործական բուռն թափ ապրեց հատկապես ռուսական առաջին ռեվոլյուցիայի տարիներին։ Նրա տաղանդը կայծակի պես փայլատակեց և ամպրոպի պես որոտաց, առանձնապես այդ շրջանում։ Ուշագրավ փաստ է նաև այն, որ նրա բանաստեղծությունների ժողովածուն՝ «Արշալույսի զողանջներ» վերնագրով, լույս տեսավ 1907 թվին, այսինքն ռեվոլյուցիայի վայրէջքի սկզբին, երբ շուտով վրա էին հասնում ռեակցիայի դաժան տարիները։ Այդ դրքույկը բանաստեղծուհու 1906—1907 թ. թ. գրվածքների մի փոքր մասն է միայն ամփոփում, բայց այն, ինչ որ կա «Արշալույսի զողանջներ»-ում, այդ էլ բավական էր բանաստեղծուհու գրական ու հասարակական դեմքը բնութագրելու համար։

Ցարական ոստիկանական ցենզուրայի կամայականությանը ենթակա է եղել նաև Կուրղինյանը, որի պրոլետարական-ռեվոլյուցիոն բնույթի մարտաշունչ բազմաթիվ բանաստեղծությունները (օրինակ՝ «Զանգակները», «Մայիսի մեկ», «Բանվորներին» և այլն) չեն տպագրվել ցենզուրայի կամայականության պատճառով։

Փաստեր կան, որ «Արշալույսի զողանջները» ժողովածվի համար Կուրղինյանը հետապնդվել է ցարական ոստիկանության կողմից և որ նա 1908—1909 թվերին պատրաստում էր իր ժողովածվի երկրորդ[1] տրակը հրատարակելու, բայց ցենզուրական տրգելքները թույլ չեն տալիս նրան այդ անելու[2]։

II

«Արշալույսի զողանջներ» ժողովածուն մեծ հռչակ ստեղծեց հեղինակի համար։ Բանաստեղծուհուն ողջունեցին մեր գրականության առաջավոր դե-

---

[1] «Արշալույսի զողանջներ»-ի շապիկի վրա գրված է՝ «Բանաստեղծություններ. Ա պրակ»։

[2] Որպես վկայություն, հիշենք Կուրղինյանի բարեկամներից մեկի (հետագայում կոմունիստ՝ զոհված քաղաքացիական կռիվներում՝ Հյուս. Կովկասում) 1909 թ. 17/II նամակը՝ Շ. Կուրգինյանին, նրա ր. պրակի և ցենզուրական արգելքների մասին. նամակը գրված է Պետերբուրգից. «...Ասում ես, որ ամառը երկրորդը լույս ընծայես, բայց հնարավոր է առանց խուզվածքների դուրս ածը, ցենզուրան թաքը չի՛ դնի, իսկ եթե այդպիսիները դուրս պիտի գցեն, ավելի լավ է սպասել, քան թե հրատարակել չանչերից դուրս թողածները միայն...» (ՊԳԹ, Շ. Կուրղինյանի արխիվից)։

մոկրատական հոսանքի ներկայացուցիչները։ Հետաքրքրական է, որ նրա առաջին քննադատը, «Արշալույսի դողանջներ»-ի մասին դրվատանքի առաջին խոսք ասողը եղել է բանաստեղծուհու մեծ հայրենակիցը, Ավ. Իսահակյանը։ Այնուհետև Վրթ. Փափազյանն իր «Հայ դրականության պատմության» մեջ տեղ տվեց Կուրղինյանին՝ հիացմունք արտահայտելով նրա ստեղծագործության սոցիալական մոտիվների և նրա խոսքի բարձր արվեստի մասին։ Շնորհիվ Ղ. Ագայանի, Վ. Փափազյանի և Հ. Թումանյանի, Կուրղինյանը տեղ գրավեց նաև «Հայ գրողների» Ա. հատորում։ «Արշալույսի դողանջներ»-ի շուրջը գրական քննության քննադատություններ եղան և մի շարք պարբերականներում՝ «Գեղարվեստ»-ում (№ 1, Գար. Լեվոնյանի գրախոսականը), «Արարատ»-ում՝ Մինաս Բերբերյանի «Տխուր մեղեդիներ» հոդվածը՝ Հ. Հայկանեի, Ավ. Իսահակյանի և Կուրղինյանի մասին և այլն։ «Արշալույսի դողանջներ»-ի տաղանդավոր հեղինակը գրավեց նաև ռուս անվանի քննադատներից մի քանիսի ուշադրությունը. նրա մասին գրական խոսք ասացին Յուրի Վեսելովսկին և Վալերի Բրյուսովը—առաջինն իր „Русское влияние в современной армянской литературе“ ուսումնասիրության մեջ (1909), երկրորդն իր կազմած „Поэзия Армении“ մեծ ժողովածվի ներածականում (1916 թ.)։

Այս ընդհանուր հետաքրքրության պատճառն անշուշտ այն էր, որ Շուշանիկ Կուրղինյանը բանաստեղծական նոր ինքնուրույն խոսք էր ասում հայկական պոեզիայում և որ նա իր ստեղծագործությամբ արտահայտում էր ժամանակի առաջավոր հասարակական-քաղաքական տրամադրությունները, ակտիվությամբ ուղեկցելով ցարիզմի դեմ մղվող ռեվոլյուցիոն պայքարին։

Առաջին ռեվոլյուցիայի փոթորկի տարիներին, ինչպես և մեռյալ ռեակցիայի շրջանում՝ հայ դրականության մեջ, մասնավորապես պոեզիայում ամենից բարձր ու մարտական հնչում էին երկու ձայն, առաջինը Հ. Հակոբյանինն էր, երկրորդը՝ Շիրակի բանաստեղծուհունը՝ Շուշանիկ Կուրղինյանինը։ Հ. Հակոբյանն ու Կուրղինյանն էին, որ մեր պեզիայում բաց արին մինչ այդ միանգամայն անծանոթ ուղի, պրոլետարական պոեզիայի ուղին, խրոխտ ու անվեհեր հնչեցնելով աշխատավոր ժողովրդի, պրոլետարիատի «ըմբոստ կռվի կոչն ուժգին»՝ հանուն պրոլետարական ռեվոլյուցիայի, հանուն սոցիալիզմի։

«Հանգցրեք ջահերը», «Բանվորները», «Պատկեր», «Բանվորական թաղամասում», «Հակապատկերներ», «Քաղցից արնաքամ», «Անգործավորի երազը» և այլ բանաստեղծություններում Կուրղինյանը ցայտուն, կենդանի պատկերներով ներկայացնում է իրական կյանքի կոնտրաստը.

Այնտեղ՝ խրախճանք շեն պալատներում,
Ոսկի և արծաթ
Սեղանը առատ.
Այստեղ՝ սև կարիք, ճնշում, լաիող սով.
Որբերի լաց, կոծ,
Քաղցածներ անգործ....
(«Հակապատկերներ»)

Սոցիալական կյանքի երկու բևեռների, անկուշտ ձրիակեր դասակարգի հարստության ու շռայլ վայելքի և աշխատավոր ժողովրդի, բանվոր դասակարգի աղքատ ու դուրկ վիճակի հակադիր պատկերներն ավելի ցայտուն կերպով տրված են «Հանգցրեք ջահերը» բանաստեղծության մեջ.

Տրնքում է հողը. շնչով մահահոտ
Վիշտն է գալարվում երկրի երեսին...

Բայց ինչ հոգ ունեորների-հարուստների համար. նրանք իրենց շքեղ պալատներում ուրախ «տոն են տոնում ու ղվարճանում ոսկու, արծաթի, վայելքի գրկում». այն շքեղ պալատներում,

Ուր ամեն քարը ունի պատմություն
Յուր տակը ճզղմած թշվառ դանդերի,
Ուր որ ապյուսը ծծել է արյուն
Ու կսթիլները — աղի քրտինքի...:

Այդպիսի վառ գույներով տալով իրական կյանքի կոնտրաստը՝ Կուրդինյանը բանվորների և բոլոր շահագործվող մասսաների սոցիալական վշաի ծովից՝ Վ. Փափազյանի արտահայտությամբ՝ բուռն, «կատաղի զայրույթ է կուտակում և նետում է հարստահարողների, բռնակալների դղվելի դեմքերին»: Կուրդինյանի ոտանավորներում արտահայտած վիշաը, թախիծը «...ուրագանի նման վրա է ընկնում և ճարպոտ մակարույծերի, դիշատիչ քաղքենիների խնջույքների վրայից անցնելով, հանգցնում է նրանց ջահերը»: Ոիզախում և ծառանալով տիրող մռայլ ու դաժան իրականության դեմ մարտական ձայնով «որոտում է բանաստեղծուհին, այդ որոտումի մեջ դնելով իր ըմբոստ ոգու ամբողջ թափը վրդովված սրտի, վիրավորված ազնիվ ղղացմունքների ամբողջ դառնությունը»[1]:

Շ. Կուրդինյանի պոեզիայում բանվորների ու աշխատավոր ժողովրդի տանջանքով ու գրկանքով լի կյանքի պատկերին օրգանապես հաջորդում է ռեվոլյուցիոն ըմբոստացման ու պայքարի կոչը: «Հանգցրեք ջահերը» բանաստեղծությունը և «Բանվորները» իրար հետ սերտ կապված են ներքին իմաստով. մի դեպքում («Հանգցրեք ջահերը») պատկերված է աշխատավոր ժողովրդի, մասնավորապես բանվորների ու բուրժուազիայի միջև եղած սոցիալական անհավասարության անդունդը, մյուս դեպքում («Բանվորները»), նորից տալով այդ անհավասարության պատկերը բանաստեղծուհին միաժամանակ արտահայտում է բանվորների դասակարգային անհուն զայրույթը բուրժուազիայի դեմ և պատկերում նրանց ռեվոլյուցիոն պայքարի վճռականությունը, նրանց զայրույթի տարերային պոռթկումը «բռնության դահը—ստրուկի շղթան» խորտակելու և «նոր ուղի հարթելու» բոլոր շահագործվողների համար:

«Բանվորները» բացառիկ ուժով, ռեվոլյուցիոն ցասման կրակով գրված մի բանաստեղծություն է, որը մեր վաղ շրջանի պրոլետարական պոեզիայի թանգագին գոհարներից է: «Բանվորները» բանաստեղծության ռեվոլյուցիոն ոգով են տոգորված Շ. Կուրդինյանի մի շարք այլ բանաստեղծություններն

1 Վ. Փափազյան. «Պատմություն հայոց գրականության», 1910 թ., էջ՝ 583—584:

էլ, գարձյալ գրված 1905 —1906 —1907 թվերին—«Հառաջ անվեհեր», «Վայ ձեզ, վախկոտներ», «Հաղթանակի ճաճանչներից», «Ազատ, ինքիշխան», «Թող մեռնենք պատվով», «Շղթան», «Մի՛թե չեք դղրդում» և այլն։ Այդ ոտանավորներում բանաստեղծուհին բարձրացել է հասարակական-քաղաքական գիտակցության ղենիթը և այնտեղից՝ իր գեղարվեստական խոսքի վառ ճաճանչներով լուսավորում՝ «բռնության դահը» խորտակողների ուղին։

Պատահական չէ, որ հատկապես այդ շրջանը ստեղծագործություններում Կուրղինյանը հաճախ դիմում է արծվի թռիչքի պատկերին։ Արծիվը Կուրղինյանի ստեղծագործական մտահղացման մեջ նույն դերն ու իմաստն ունի, ինչ որ «հպարտ ու խիզախ բազեն» Մաքսիմ Գորկու նշանավոր երգում։ Անկասկած է Գորկու ազդեցությունը Կուրղինյանի վրա։ Վերջինիս «Արծիվը» հիշեցնում է Գորկու նշանավոր «Բազեի երգը».

Հսկա ժայռերի լանջին բարձրանիստ
Արծիվը հպարտ՝
Նսաած էր հանդարտ.
Հոգնած թևերին նա տալով հանգիստ՝
Երկիրն էր դիտում
Մտախոհ, տրտում։
«Տխուր է որքան վարը՝ այն խորում.
Երկրում բովանդակ
Ծանր լրծի տակ
Հեծում են մարդիկ, տնքում բանտերում
Անազատ կյանքից,
Ճնշված գրկանքից»։

Կուրղինյանի մոտ էլ «հպարտ արծիվը»ատում է երկրի անազատ կյանքը, նա սիրում է ազատությունը, ազատ թռիչքը «ազատ երկնքի տակ», նա հզոր ձայն ունի, նա ատում է մանավանդ ստրկությունը և նրանց, որոնք սողալով են ապրում ստրկության մեջ։ Արծիվը միայն ազատ թռչել գիտե և մտածում է մարդկանց մասին, որպեսզի նրանք էլ ազատ շնչեն «կապույտ անհունի շունչը» և վերանան դեպի «բարձրունքները» իր պես «սարերշավ, թռիչքի ծարավ»։

Ռեվոլյուցիոն վերելքի տարիներին ստեղծելով քաղաքական-ռեվոլյուցիոն լիրիկայի ինքնատիպ բարձր նմուշներ, բռնության դահը, ստրուկի շղթան խորտակելու մարտակոչը հնչեցնելով, Կուրղինյանն այդպիսով հպարտ, խիզախ արծվի թռիչք էր կատարում հայկական պոեզիայում։ Նա՝ արհամարհելով ցարական ոստիկանական ցենզուրայի կաշկանդումները, համարձակ կերպով երգում է ռեվոլյուցիան, փառաբանում մարտական դիրքերում ընկած «քաջարի ըմբոստ հոգիներին», ռեվոլյուցիայի անձնուրաց զինվորներին, որոնցից շատերն իրենց «մահով վաղաժամ» «խլում են ազատության անթառամ դափնին» («Մեր օրերը»)։ Դիտելով ռեվոլյուցիայի ընթացքը՝ բանաստեղծուհին պայծառ հայացքով տեսնում էր, որ

. . . Հետզհետե բռնակալ ուժի
Շիրիմն է փորվում խոր, անդունդային...

Եվ օրըստօրե շարքերը կովող
Աճուն ձև ընդոստ անձնուրացներից,
Անհայտության մեջ հոգիք դեգերող
«Վրեժ» են կանչում խռնավ հյուղերից։
Եվ գիտակցության շունչն ամեն սրտում
Մրրիկ է հանել արդար պահանջի։

Բանաստեղծուհին ռեվոլյուցիոն վճռականություն է արտահայտում, երբ գրում է.

Ով ընկերական կոիվն է մտնում,
Նա ոչ մի ուժից հետ չի նահանջի...

Եվ այդ գիտակցությամբ նա կոչ է անում, խրախուսյս է կարդում «րմբոստ անձնուրացներին» շարունակելու կոիվը մինչև հաղթանակը.

Հառաջ անվեհեր, հառաջ մինչև վերջ,
Սուրբ նպատակին միշտ հավատարիմ—
Մահն անմահ է արդար կովի մեջ
Եվ ուխտատեղի, մարտիկի շիրիմ...

Կուրդինյանը ռեվոլյուցիոն կովի այդ կոչն անում է այն խորը դիտակցությամբ, որ «ցանկալի այգի արևը» չի «ծագի հրաշքով», որ «գարերով կոփված կուռ շղթաները» սոսկ մի հարվածով չի կարելի փշրել։ Աղատության հաղթանակի համար՝

Ուժ է հարկավոր, անսասան հավատ,
Լայն, բաց կուրծքերից տիտան պատնեշներ...

—ասում է բանաստեղծուհին և նախազգուշացնում թուլամորթներին ու վախկոտներին.

Հորձանքն է գալիս, փորձանքի տարափ—
Ահա կպոռթկա—վայ ձեզ, վախկոտներ...

Կուրդինյանի պոեզիայում ոչ միայն կա ռեվոլյուցիայի արձագանքն ընդհանուր առմամբ, այլ և նրա (ռեվոլյուցիայի) առանձին հերոսական դրվագների պատկերները։ Ահա, օրինակ, 1905 թ. դեկտեմբերյան զինված ապստամբության արձագանքը՝ «Դեկտեմբերի օրերից» վերնագրով բանաստեղծության մեջ, որը տպվել է 1907 թ. «Երկրի ձայնը» ժուռնալում՝ Արփենիկ ստորագրությամբ [1]։

Ռուսական առաջին ռեվոլյուցիայի ամենահերոսական դրվագը—դեկտեմբերյան զինված ապստամբությունը խորը տպավորություն է թողել բանաստեղծուհու վրա և նա շատ հարազատորեն պատկերել է այն իր բանաստեղծությամբ։

---

[1] *Ի դեպ նկատենք, որ նույն ժուռնալում 1907—1908 թ. թ. Արփենիկ ծածկանվան տակ տպվել են Շուշանիկ Կուրղինյանի ռեվոլյուցիոն մոտիվով գրված մի շարք այլ բանաստեղծություններ ևս («Հոգ չէ, թե մեռնեմ», «Ծաղող ձիթենին», «Կեցցեն շարքերը», «Վայ ձեզ, վախկոտներ», «Երկրի ձայները» և այլն)։ Կուրղինյանը մինչև այժմ հայտնի չի եղել այդ ծածկանունով։*

Ուշագրավ է, որ Կուրդինյանն իր այս բանաստեղծությունը գրել է Մոսկվայի (և այլ քաղաքների) զինված, բարրիկադային մարտերի օրերին՝ 1905 թ. դեկտեմբերի 22-ին, բայց ցենզուրական պատճառներով լույս է տեսել միայն երկու տարի հետո և այն էլ ծածկանունով.

... Ահա ամբոխը,—և՛ ջահել, և՛ ծեր,—
Բարրիկադներին իր կուրծքը տված
Կռիվ է մղում, խիզախ, անվեհեր...

Ծերուկ բանվորի դողդոջ ձեռքերին
Կարմիր դրոշն է հպարտ ծածանվում...
Եվ պայթյունների ահեղ որոտին
Աղատ երգերի թինդը խառնվում։

«Բանաստեղծուհին իր գլուխն է խոնարհում դեկտեմբերյան այդ հերոսամարտի» նահատակների շարքերի առաջ, նա չի ընկճվում, պարտության զղացումը չի համակում նրան, այլ վճռականությամբ «առաջ անցնելու», նահատակների պայքարը շարունակելու միքն է վառվում նրա մեջ և «մեծ հաղթանակի» ճանապարհին իր կյանքը զոհելու գիտակցությունն առաջնորդում նրան։

Ուշագրավ է, որ «Դեկտեմբերի օրերից» ոտանավորին անմիջապես հաջորդում է (նույն տեղ և դարձյալ Արփենիկ ստորագրությամբ) «Հոգ չէ, թե մեռնեմ» բանաստեղծությունը, որը թեև գրված է ռեվոլյուցիայի վայրէջքի սկզբին, երբ սկսում էր լռել ռեվոլյուցիայի մրրիկը, բայց արտահայտում է խոր հավատ, վառ հույս ապագա հաղթանակի նկատմամբ.

Հոգ չէ, թե մեռնեմ... մեծ հաղթանակի
Կծաղի արե, ազատ, հոգեթով,
Նրա գոլքերը, կարմիր շեշտակի
Կցրեն մռայլ խավարը շուտով։
Դուք, վեհ ըմբոստներ, ձեռք-ձեռքի տված
Կփշրեք շղթան ստրուկ օրերի.
Բռնակալության լուծը ջախջախած
Արյուն անցյալին չեք լինի դերի։

Կուրդինյանը խորը համոզմունք է արտահայտում, որ այդ «մեծ հաղթանակը» լիովին ազատագրելու է ամբողջ ժողովրդին բռնակալության լծից, որի ջախջախումից ու վերացումից հետո գալու են ազատ, խաղաղ աշխատանքի, ստեղծագործության և երջանիկ կյանքի օրեր, թե՛ քաղաքի և թե՛ գյուղի համար։ Նույն այդ բանաստեղծության մեջ ասված է.

Եվ պարարտ հողի բեղմնավոր կրծքին
Կփայլեն խաղաղ բահ, արոր, գութան,
Ու կուշտ գեղջուկի պայծառ երգերին
Հրոխտ լեռները արձագանք կտան։
Եվ շեն գյուղերում ու ավաններում
Կհնչի զվարթ աղմուկ-աղաղակ,
Ամեն օջախից ծուխը գալարուն

Կավետ կյանքի հևքը ներդաշնակ,
Եվ անտառների խորքից կուսական,
Հոյակապ ու ժիր գործարաններից,
Ծեր բանվորների բախտավորության
Կոլորվի օրհներգն անդուլ, բերկրալից։
Արթնացած միաքը — կծնի հանճար,
Եվ աղատ խոսքը — հույս ու բաղդ անդորը,
Կյանքը հավասար, վաստակը արդար,
Մարդը չի լինի գահիճ իր եղբոր...

Այս տողերում պատկերված է բանաստեղծուհու սոցիալական իդեալը՝ բռնության, ճնշման ու շահագործման վերացումը և «արդար վաստակի», երջանիկ կյանքի իրականացումը, որ մարմնացած է մեր օրերում՝ Սովետական Հայրենիքում։ Եվ հանուն այդ սրբազան իդեալի մղվող կռվում, ահա, «հոգ չէ մեռնելը» — ասում է բանաստեղծուհին, որովհետև «մեծ հաղթանակի» ճանապարհին զոհվողը «նորից ապրում է»։ «Հոգ չէ, թե մեռնեմ» բանաստեղծությունը ռեվոլյուցիոն ռոմանտիկայի մի դեղեցիկ նմուշ է Կուրղինյանի պոեզիայում և իր այդ բնույթով այն ժամանակվա համար եղակի մի ստեղծագործություն է, որ այնքան վառ հավատով պատկերում է սոցիալիզմի հաղթանակը, սոցիալական անհավասարության վերացումը և ազատ ու երջանիկ կյանքի իրականացումը սոցիալիզմի պայմաններում։

Ռեվոլյուցիոն պոեզիայի մի վառ նմուշ է Կուրղինյանի «Հէհե տար քո խաչը» բանաստեղծությունը։ Դա պրոլետարական մարտնչող աթեիզմի արտահայտությունն է Կուրղինյանի ստեղծագործության մեջ և ընդհանրապես մեր պոեզիայում։ Մեր ամբողջ նոր շրջանի (19-րդ և 20-րդ դ. դ.) պոեզիայում դժվար է մի ուրիշ ստեղծագործություն ցույց տալ, որն իր արժեքով, դեղարվեստական ուժով հավասար լիներ Կուրղինյանի այս նշանավոր բանաստեղծությանը՝ կրոնի ու հոգևորականության՝ կոնտրռեվոլյուցիոն, ռեակցիոն դերի մերկացման գործում։ «Հէհե տար քո խաչը» բանաստեղծությունը մեր օրերի երիտասարդ ընթերցողին կենդանի պատկերացում է տալիս այն մասին, թե ինչպես ցարիզմը՝ կրոնի ու կրոնավորի օգնությամբ փորձում էր խեղդել բանվորների ռեվոլյուցիոն դիտակցությունը, թե ինչպես դահճի հետ միասին՝ ռեվոլյուցիոն անվեհեր մարտիկին մահապատժի ենթարկելիս, հանդես էր գալիս նաև տերտերը՝ «կեղեքիչների քառաթև զենքով» — խաչով։ Բանաստեղծուհին պատկերում է մի մռայլ տեսարան. ժողովրդի ազատության համար պայքարող մարտիկին դատապարտել են մահվան՝ կախաղանի միջոցով. աշխարհիկ դահճի դործը «հեշտացնելու» համար հանդես է գալիս «հոգևոր» դահիճը՝ «հոգևոր» կացնով — խաչով.

Եվ ահա թշվառ դատապարտյալին
Լուռ մոտենում է ծերուկ քահանան՝
Սարսուռի շղթան փշրել ուզողին —
Համբուրել տալու հալատի շղթան...

Բայց ռեվոլյուցիայի անձնվեր ու գիտակից մարտիկը դիտե կրոնի սպասավորի և նրա ձեռքի ոսկեձույլ խաչի խաբեական, կեղծարար դերը։

Տեսնելով իրեն մոտեցող խաչակիր տերտերին, ռևոլյուցիոն դատապարտյալն անզուսպ զայրույթով և խորն ատելությամբ բացականչում է.

Հե՛տ տար քո խաչը...
Հե՛տ տար քո խաչը—գործիքն հարմար
Անվերջ կեղծիքի, լպիրշ քսության...
...Հե՛տ տար մոլեռանդ, անմիտ ու անհաս
Կեղեքիչների զենքը—քառաթե՛ղ
Որ պաշտվեց երկար, երբ ամեն անդամ
Տնքում էր մարդը—մաքով կուչ, անթև...
Հե՛տ տար, նրանից արյուն է ծորում,
Վազում արցունքի, շարավի հեղեղ,
Բյուրավոր, անթիվ զոհերի լքում—
Ղողանջում մահվան նզովքով ահեղ...

Իր այս բանաստեղծությամբ Շուշանիկ Կուրղինյանը բարձրացել է ռևոլյուցիոն գիտակցության այնպիսի մակարդակի, որին չի հասել ականավոր կին գրողներից և ոչ մեկը միջադգային գրականության մեջ։

III

Հասնելով հասարակական-քաղաքական գիտակցության այդպիսի բարձրության, Շուշանիկ Կուրղինյանը, որպես կին գրող՝ առանձին ուշադրության է առնում կնոջ ստրկական վիճակը և նրա ազատագրման հարցը։

Հայկական պոեզիայում և պրոզայում եզակի չեն կնոջ ստրկական վիճակի պատկերները։ Հ. Հովհաննիսյանի, Հ. Թումանյանի, Ավ. Իսահակյանի, Վահան Տերյանի ստեղծագործություններում, ինչպես և Աղայանի, Նար-Դոսի, Շիրվանզադեի, Փափազյանի երկերում՝ անչափ կենդանի ու վառ կերպով պատկերացված է հայ կնոջ ստրկական վիճակը մինչև ռևոլյուցիան։

Այդ բոլոր գրողների տված պատկերների և արտահայտած հայացքների մեջ իրենց տարբերություններով հանդերձ կա ընդհանուր նմանություն, բոլորում նրանք բոլորն էլ հիանալի և ճիշտ են պատկերում իրականության, փաստը միայն, բայց կնոջ իրավական ու սոցիալական ազատագրման իսկական ուղին ճիշտ չեն ցույց տվել։ Այդպես է նաև հայ կին գրողների մոտ։ Նրանք բոլորն էլ խորը մարդկայնությամբ վշտակցել են կրկնակի ճնշման ենթակա կնոջը, բայց չեն կարողացել նոր, փրկարար ուղին լուսավորող խոսք ասել։ Նրանց գրեթե բոլորի էլ առաջարկածը վերջիվերջո հանգել է կնոջ էմանսիպացիայի բուրժուական ըմբռնմանը, կնոջ գժբախտության պատճառը համարելով նրա տգիտությունը, կուլտուրական հետամնացությունը և հասարակական կյանքից կտրված լինելը՝ իրավաբանական իմաստով, իսկ փրկությունը տեսել են կնոջ գրագիտության, կուլտուրականացման և հասարակական կյանքին որևէ կերպ մասնակցության ունենալու մեջ։ Սակայն նրանցից ոչ ոք կնոջ ազատագրումը չի կապել աշխատավոր ժողովրդի սոցիալական-քաղաքական պայքարի ու հաղթանակի հետ։

Շուշանիկ Կուրղինյանն ահա միանգամայն նոր խոսք է ասում մեր գրականության մեջ, նոր խոսք ոչ թե կնոջ անազատ վիճակը պատկերելու, այլ նրա ազատագրման ճիշտ ուղին ցույց տալու իմաստով։

Կուրղինյանն առաջինն է, որ սոցիալական-քաղաքական կռվի կոչով է դիմում կնոջը և ասում, որ նրա ազատությունը կապվում է այդ կռվի հետ, գիտակցելով նաև այն, որ իր հերթին այդ կռվի հաջողությունն էլ կախված է կնոջ մասնակցությունից։ Շնորհիվ Կուրղինյանի, առաջին անգամ մեր գրականության մեջ կնոջ ազատագրման մոտիվը միանում է քաղաքական պայքարի մոտիվի հետ։

«Մենք էլ միանանք» ոտանավորում բանաստեղծուհին մայրենի բարբառով կոչ է անում իր քույրերին՝ ոտքի ելնելու, ակտիվորեն մասնակցելու սոցիալական պայքարին և տղամարդկանց հետ միասին անվախ կռվելու տիրող ստրկական կարգերի դեմ, հանուն «ազատ կյանքի»։

Արի, քուրիկ ջան, ձեն տանք աշխարքին,
Մեր ընկերներին թեղ ոտքի հանենք,
Էս ահ դարաքաշ, անվայել կյանքին
Մի ելք, մի ուղիղ ճամբա բաց անենք։
Արի, քուրիկ ջան, մենք էլ միանանք,
Ին մենծ սուրը կռվին էղնինք մասնակից.
Հերիք շղթայված ու գերի ճռանք
Դուման մտքերով, շշմած զրկանքից։

Բանաստեղծուհին ճիշտ է նկատում, որ առանց կնոջ մասնակցության սոցիալական ազատագրական պայքարը շատ է դժվարանում։ Ճիշտ է՝ աշխատավոր տղամարդիկ «առաջ են անցել» կանանցից, բայց նրանք «թող... շատ չհպարտանան», քանի որ

Էնոնք առանց մեզ, հավատա, քուրիկ,
Թեղ տեղ չեն հասնի...

Այս և վերևում հիշված «Ես ըմբոստացա» մարտաշունչ բանաստեղծությունը միասին կազմում են աշխատավոր կնոջ ազատագրական պայքարի մանիֆեստը մեր գրականության մեջ։ Այդ բանաստեղծություններն արտահայտում են կնոջ դարավոր ճնշման ու վշտի սոցիալական էության և ազատագրական կռվի անհրաժեշտության գիտակցումը։

Իր քույրերին ուղղված պայքարի այս կոչը Կուրղինյանի մոտ հետևողական ստրկական վիճակի ռեալիստական պատկերմանը։ Թե դեղձկուհին և թե բանվորուհին իրենց տխուր, անմխիթար, կրկնակի ճնշված գրությամբ նշանակալից տեղ են գրավում Կուրղինյանի պոեզիայում։ «Արծվի սերը», «Դեղձկուհու մորմոքը», «Տխուր պատմություն», «Լվացող կանայք», «Ծոհեր», «Աղջիկը», «Աղջկա հրաժեշտը», «Ծաղիկ ծախող աղջիկը», «Բանվորուհին», «Պատկեր» և մի քանի այլ բանաստեղծություններ ռեալիստորեն պատկերում են կնոջ՝ տնտեսական, իրավական ու բարոյական տեսակետից՝ ստրկական վիճակը կապիտալիստական կարգերում՝ թե ընտանեկան և թե հասարակական կյանքում։

Կնոջ այդ ողբերգական անաղատ վիճակը Շուշանիկ Կուրղինյանը տա-
լիս է նոր, ինքնատիպ պատկերով ու համեմատությամբ, ազատ արծվի և
անազատ կնոջ կոնտրաստով.

Ժեռ քարափին արծիվ նստավ,
Արծիվ նստավ ու երգեց.
Ձորի միջին աղջիկ տեսավ—
Նշխուն տեսքեն զարնվեց։

«Հէյ, ջան աղջիկ, մարալ աղջիկ,
Ափսոս թռչել չգիտես.
Եգ ծմակում լոիկ-հնջիկ
Պիտի թռչես ծաղկի պես։

...Ցարաբ թռչել հէչ չգիտես,
Քեռ ով ծնեց առանց թև.
Ցարաբ կյանքում հէչ ուզած չես,
Օդում թռչել միշտ թեթև...»

Էսպես երգեց ժեռ քարափեն
Հպարտ արծիվն անպյուման,
Թռավ, անցավ սարեն, ձորեն—
Լալով բախտըն աղջկան։

(«Արծվի աերը», 1905 թ.)

Բանաստեղծուհին շատ խորն է դիտակցում կնոջ ծանր վիճակը։ Նա
դիտի, որ աղջիկը-կինը «թռչել հէչ չգիտեր», նա ծնվում էր գրեթե «առանց
թևի» ու թեև կյանքում միշտ երազում էր թռչելու մասին, բայց թռչել չէը
կարող, կապված լինելով կրոնի, ադաթի հնուց-անտի սահմանված անիրա-
վության շղթաներով։

Իսկ որպեսզի կինը արծվի պես թռչել կարենա—ազատ նա պետք է
միանա «էն մեծ սուրը կովին», որ մղում են բանվոր ամուսիննները, հայրերն
ու եղբայրները և նրանց հետ միասին վերջ տալու տիրող «սև դարաքաշ,
անվայել կյանքին»,—այս է ահա Կուրղինյանի պոեզիայում արտահայտված
իդեան կնոջ վերաբերմամբ։

IV

Վերևում արդեն նշել ենք, որ Շուշանիկ Կուրղինյանի պոեզիան 1905—
1907 թ.թ. ռուսական առաջին ռեվոլյուցիայի ծնունդ է և իր բովանդա-
կության մեջ անդրադարձնում է այդ ռեվոլյուցիայի հիմնական գծերը։
Նկատել ենք նաև, որ Կուրղինյանի այդ շրջանի ստեղծագործություններում
գերիշխող մոտիվը բանվոր դասակարգի կյանքն ու պայքարն է և այդ կող-
մով Կուրղինյանը հայ պրոլետարական-ռեվոլյուցիոն պոեզիան սկզբնավո-
րողներից է, երկրորդը՝ Հ. Հակոբյանից հետո։

Սակայն պետք է նկատել, որ Կուրղինյանը ռեվոլյուցիայի ընթաց-
քում (ինչպես և հետագայում) հանդես է եկել ոչ որպես պրոլետարիատի հե-

ազգական երգիչ[1]։ *Եթե Հ. Հակոբյանը հանդես էր եկել, որպես բոլշևիկ բանաստեղծ, ռեվոլյուցիոն մարքսիզմի աշխարհայացքով, ամբողջապես կլանված բանվոր դասակարգի կյանքով ու պայքարով, ապա Կուրղինյանը ներկայանում էր որպես հայկական մանր բուրժուական առաջավոր դեմոկրատիայի ազնիվ ներկայացուցիչը պոեզիայում՝ շատ մոտ կանգնած պրոլետարիատին։ Նրա ստեղծագործությունը պրոլետարիատի ազնիվ ուղեկցի ստեղծագործություն է, որը մինչհոկտեմբերյան շրջանում իր մեջ անդրադարձնում էր բուրժուա-դեմոկրատական ռեվոլյուցիայի հեգեմոնի՝ պրոլետարիատի կյանքն ու պայքարը։*

«Ռուսական ռեվոլյուցիայի յուրահատուկ կողմը հենց այն է, որ նա իր սոցիալական բովանդակությամբ բուրժուա-դեմոկրատական *էր, բայց կռվի միջոցներով՝* պրոլետարական» *— գրել է Լենինը*[2]։

Ռեվոլյուցիայի ընթացքում ցարիզմի դեմ ծառացել էին ոչ միայն ռուսական պրոլետարիատն ու գյուղացիությունը. նրա դեմ ծառացել էին նաև Ռուսաստանի ճնշված ազգությունները (այդ թվում և հայերը), որոնց նկատմամբ ցարական «կառավարության քաղաքականությունն... ամբողջովին համակված էր սև-հարյուրակային նացիոնալիզմով» (Լենին)։ Լենինը նշել է, որ հատկապես «բանվորական շարժման կապակցությամբ», պրոլետարիատի ռեվոլյուցիոն պայքարի ազդեցությամբ էր, որ այն ժամանակ «Ռուսաստանի ճնշված ժողովուրդների մեջ բռնկվեց ազդային-ազատագրական շարժում»[3]*, շարժում, որը ռուսական առաջին ռեվոլյուցիայի կարևոր բաղկացուցիչ տարրն էր հանդիսանում։*

Кроме сосудов, в могильнике было найдено: несколько мелких стеклянных и сердоликовых бус, плоский бронзовый браслет, бронзовая согнутая игла и бронзовое колечко. В одной из могил обнаружено шесть плоских наконечников стрел изящной формы, изготовленных из темного и прозрачного обсидиана. Материал из могильника не находит себе аналогий в материале, добытом при раскопках центральной части Кармир-блура, керамика и металлические изделия совершенно отличны.

Могильник у Кармир-блура входит в круг могильников, известных около Еревана, но до сих пор не имеющих еще твердую датировку.

Большое сходство он обнаруживает с могильником у крепости Кизил-Кала, на берегу Занги, против Канакира, раскопанным в 1896 г. П. В. Чарковским. Там были открыты две группы курганов, первая —с погребениями конца II тысячелетия до н. э., вторая же—начала I тысячелетия. Керамика из курганов второй группы очень близка к керамике из могильника у Кармир-блура; некоторое сходство наблюдается и в отношении бронзовых предметов.

Часть керамики из могильника имеет соответствие в материале из „циклопических крепостей" Арагаца. В частности, керамика с семячковым орнаментом на плечиках сосуда и зарубками по краю днища происходит из Хорома.

В то время как центральная часть крепости Кармир-блура не дает аналогий с керамикой из могильника, в поселении встречены отдельные черепки, связывающие могильник с древним городищем.

Нам кажется, что могильник, исследованный экспедицией раньше, построен в центральной части холма, поселение же содержит материал тождественный с могильником.

При наших знаниях форму для отливки крупной бронзовой секиры, найденной в поселении Кармир-блура, трудно отнести к VII—

—VI в.в. до н. э.; она, несомненно, несколько древнее, ибо характерной чертой могильников VII—VI в.в. до н. э. является именно отсутствие крупных бронзовых секир и массивных мечей.

Урарты при сооружении своих крепостей, как, например, у Ташбуруна, Армавира, Нор-Баязета и др., не выбирали необитаемые до них холмы, а использовали места поселений, до них существовавших.

Так, урартские надписи свидетельствуют о том, что крепость Менуахинили, у современного Ташбуруна, была построена на месте города Лухиуни закавказского правителя Иркуа. Таким образом, вполне вероятно, что раскопанный могильник содержит материал, предшествующий возведению грандиозных построек в центральной части Кармир-блура. Крепость на Кармир-блуре относится к заключительному этапу истории Ванского царства, к периоду его последнего расцвета. Раскопки на Топрах-Кале, около Вана, дали большое число памятников, характеризующих разцвет урартской культуры того времени. Особенно интенсивно в Ванском районе проводил строительство урартский царь Руса, сын Аргишти.

После поражения 714 г. до н. э., нанесенного Урарту Саргоном, Ванское царство прекратило свою борьбу с Ассирией, оно оставило также свои притязания и на области Северной Сирии, потеряв, тем самым, свое господство над основными торговыми путями Передней Азии. Все свое внимание Урарту переносит на районы к северу от своего центра, в Закавказье. О большой заботе урартов именно об этих районах свидетельствуют макинская и звартноцская надписи.

На Топрах-Кяле, во время раскопок, германской экспедицией была найдена глиняная таблетка с клинописью, представляющая собою письмо местного правителя страны Ишкигулу, находившейся в Закавказье, к северу от г. Арагац. В этом письме рассказывается о построении в Закавказье города, названного именем Русы.

Древнее наименование крепости на Кармир-блуре нам неизвестно, клинообразные надписи еще не могут дать нам ответа на этот вопрос. Из всех урартских крепостей в Закавказье нам известны имена только трех пунктов: „Аргиштихинили“ (Армавир), „город бога Халда“ (Нор-Баязет) и „город бога Тейшебы“ (Цовинар).

Очень возможно, что такая большая урартская крепость, как Кармир-блур, была названа по имени самого урартского царя. Изучаемая нами крепость имела чрезвычайно важное значение для закрепления урартской государственной власти в Закавказье. Она находилась на северной окраине Айрарагской низменности, территории, прочно освоенной урартами еще в начале VIII в. до н. э.

В кармир-блурской крепости находился урартский наместник со своим гарнизоном, на обязанности которого лежало наблюдение

за порядком, выполнением воинских и строительных обязанностей, а также за сбором подати и дани, поступаемой в эту крепость Кармир-блур не был единственным урартским административным центром в Закавказье.

В это время, т. е. в VII в. до н. э., в Закавказье было несколько наместников. Об одном из них, заменившем местного правителя, упоминает Нор-Баязетская надпись: „Руса, сын Сардура, говорит: царя страны Уеликухи я покорил, рабом взял в плен, страну во владение захватил, наместника сюда поставил...“ В настоящее время мы не располагаем материалами по локализации урартских наместничеств в Закавказье VII в. до н. э., но определенно можно сказать, что могущественный урартский центр Аргиштихинили (Армавир) к этому времени потерял свое прежнее значение.

Линия развития урартских административных центров в Закавказье весьма интересна. Продвижение урартов в области к северу от р. Аракс началось еще в конце IX в. до н. э. Тогда центром на севере была крепость Менуахинили, у современного селения Ташбурун, на северном склоне Арарата. Урартские надписи свидетельствуют об исключительном значении этой крепости в деле расширения границ Ванского царства.

При Аргишти, сыне Менуа, долина Аракса была уже включена в территорию Урарту, и, естественно, что административный центр был также перенесен на север, на левый берег Аракса. На холме у современного селения Армавир была построена крепость, названная Аргиштихинили.

Клинообразные надписи времени правления Аргишти, сына Менуа, и Сардура, сына Аргишти, красноречиво говорят о важном стратегическом значении этого пункта. Отсюда снаряжались походы урартов в горные районы Закавказья, здесь находился урартский наместник, являвшийся полновластным хозяином области.

Во второй половине VIII в. до н. э. положение урартских наместников настолько возросло, что они начали даже вести борьбу против урартского царя.

В Куюнджикском архиве сохранились интереснейшие ассирийские документы, свидетельствующие о конфликте, происшедшем между урартским царем Русой, сыном Сардура, и наместниками крупных областей Ванского царства.

В этих документах, являющихся информационными сводками ассирийских агентов относительно положения в соседних Ассирии странах, рассказывается о восстаниях в Урарту, поднятых против царя наместниками. Там излагается ход событий, отмечается переход войска на сторону мятежников, карательная экспедиция урартского царя в очаг восстания и, наконец, ликвидация мятежа.

В середине VIII в. до н. э. не только в Урарту, но и в Ассирии

наблюдается упорная борьба центральной государственной власти с чрезмерно усилившейся местной властью. Наместники, ставшие полновластными хозяевами своих областей, грозили развалить государство. Повидимому, и Руса, сын Сардура, по примеру Ассирии, повел решительную борьбу с местными правителями на окраинах своего государства. Это сказалось, в первую голову, на потере Армавиром (Аргиштихинили) своего прежнего значения, как основного административного центра на севере. В Армавире, при большом количестве памятников Аргишти и Сардура, до сих пор не найдено ни одной надписи Русы, сына Сардура, да и ко всему второму периоду урартской истории относится только одна небольшая надпись последнего урартского царя Русы, сына Эримены.

Борьба с наместниками выразилась прежде всего в разрушении крупных административных центров с заменой их более мелкими. С этим именно процессом связано возникновение нескольких наместничеств в Закавказье. Но с течением времени к наместникам стала возвращаться их утраченная сила, и, начиная с середины VII в. до н. э., снова начинается усиление урартской администрации на местах.

Крепость на Кармир-блуре, несомненно, являлась местопребыванием урартского наместника, о чем свидетельствует дворец, раскопки которого велись в 1939 и 1940 г. г. Эта крепость—ценнейший урартский памятник в Закавказье, по которому можно изучать культуру Урарту и характер взаимоотношений этого древнего государства Передней Азии с первобытным Закавказьем.

В заключении следует остановиться на вопросе о времени гибели крепости Кармир-блур.

Как нам кажется, материал для суждения об этом дают нам результаты раскопок 1940 г. Мы уже упоминали, что при раскопках западного фасада дворца были найдены бронзовые наконечники стрел, отличающиеся по форме от найденных в основном слое.—Это трехгранные или реже двуперые стрелы со втулкой, на которой иногда имеется боковой шип (рис. 10). Тип этих стрел нам хорошо известен по материалу из Причерноморья, где он датируется началом VI в. до н. э. Они весьма обычны в скифских курганах именно этого времени.

Обстоятельства находок этих наконечников стрел на Кармир-блуре также весьма интересны. Большинство их найдено не в культурном слое, а в грунте, его перекрывающем, представляющем собою разрушенные сырцовые стены крепости. Таким образом, можно предположить, что стрелы находились в кладке стены. Некоторые из них имеют загибы на концах, образовавшиеся от удара о камень, а один наконечник стрелы был найден застрявшим в слое обмазки, перекрывающей каменный фундамент стены.

Таким образом, стрелы с этими наконечниками принадлежали врагам, которые обстреливали Кармир-блур. С этим согласуется и находка одного наконечника у внешней линии оборонительных стен северного склона холма.




Рис. 10. Бронзовые наконечники стрел „скифского типа".

Наконечники скифского типа стали обнаруживаться теперь на территории Закавказья. В прошлом году О. Егиазарян обнаружил их в размытом могильнике, или же в святилище, у с. Махмуджух, на западном склоне Арагаца. Трехгранные и двуперые наконечники стрел имеются также среди материалов из старых раскопок Ж. де-Моргана в Лорийском районе. Некоторые могилы в Самтавро (ок. Мцхета) также содержали подобные стрелы в комплексе с железными скифскими мечами.

При раскопках во многих местах Передней Азии были неоднократно находимы наконечники стрел вышеотмеченного типа. Встречены они наряду с совершенно отличными от них местными стрелами на Топрах-кале у Вана, в Хайнаберде, в Вавилоне, в Ашуре—столице Ассирии, в Сирии и даже в городах Египта. В Вавилоне и Ашуре они были встречены при раскопках оборонительных стен города и отнесены к врагам, осаждавшим город. Наконечники стрел скифского типа, найденные в Египте, египтологи также определенно относят к иноземным отрядам.

Очень вероятно, что эти бронзовые наконечники стрел не случайно тождественны со скифскими и их появление в Передней Азии

связано со вторжениями скифов через Закавказье в VII и VI в.в. до нашей эры.

В Вавилонской хронике, где описаны последние дни Ассирии, отмечается и исключительная роль кочевников и среди них, в первую голову, скифов в разгроме великих держав Передней Азии. Эти кочевники в ассирийских и вавилонских текстах назывались „uman-manda", — термин, который раньше неправильно понимался, как „войско мидян". Эти полчища кочевников являлись грозной силой; они несли гибель тем, кто оказывал им сопротивление.

Библия красочно описывает полчища кочевников, вторгшихся в Переднюю Азию: „Вот идет народ от страны северной, и народ великий поднимается от краев земли; держат они в руках лук и копье; они жестоки и немилосердны, голос их шумит, как море, и несутся они на конях..."

Повидимому, при одном из таких вторжений кочевников в Закавказье с севера в начале VI в. до н. э. и была разрушена крепость на Кармир-блуре.

ԿԱՐՈ ՂԱՖԱԴԱՐՅԱՆ

ՊԱՏՄԱՇՆԱԳԻՏԱԿԱՆ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆՈՐ-ԲԵՐԴԻ ԿՅՈՒՐԻԿՅԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ա.

ԱՆԱՊԱՏԻ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՎ ԿՅՈՒՐԻԿՅԱՆ ՏՈՀՄԸ

Աշոտ Ողորմածի որդի Կյուրիկե (Գուրգեն) Բագրատունին իր եղբայր Սմբատ Տիեզերակալի օգնությամբ Տաշիրքում հիմնեց մի նոր թագավորություն (970—981), որը հետագայում իր անունով կոչվեց Կյուրիկյան։ Կյուրիկե Բագրատունու օրով ավարտվեցին Սանահնի և Հաղբատի գլխավոր տաճարները՝ Աստվածածինը և Ամենափրկիչը, որ հիմնարկել էր նրա մայր Խոսրովանույշ թագուհին։ Ամենափրկչի արևելյան ճակատին քանդակված են Կյուրիկեի և նրա եղբայր Սմբատ Տիեզերակալի բարձրաքանդակները։ Նրանք երկուսով իրենց ձեռքերում բռնած ունեն տաճարի կաղապարը։

Վիեննայի հրատարակություններից մեկում[1] Կյուրիկե առաջին է կոչվել ոչ թե Կյուրիկյան թագավորության հիմնադիր Կյուրիկեն, այլ Դավիթ Անհողինի որդի Կյուրիկեն, որ իրականում երկրորդ Կյուրիկեն է։ Մենք գուցե այս խնդրի վրա ուշադրություն չդարձնեինք, եթե հեղինակը կասկածի չառներ Սանահնի բարձրաքանդակները, որ հետևելով Բրոսսեին, վերագրում է Դավիթ Անհողինի որդի Կյուրիկեին և վերջինիս հորեղբայր Սմբատին։ Ցվյալ դեպքում հեղինակը հակառակ չէր լինի այդ քանդակները Սմբատ Տիեզերակալին և Կյուրիկե 1-ինին վերագրելու, եթե Սմբատը կանգնած լիներ Կյուրիկեի ձ կողմում։ Այդ մասին նա գրում է.

«Այլազգ անմեկնելի կը մնար թե ինչպես Սմբատ Տիեզերակալ հայոց գերագույն թագավոր, յուր կրտսեր եղբորմե՝ հպատակ թագավորե մը՝ ետքը կը դասվի» (էջ 33)։

Մենք այստեղ «ետքի» և առաջի խնդիր չենք տեսնում։ Պարզապես երկու եղբայրներ, իբրև եկեղեցու կառուցողներ, իրենց ձեռքին բռնել են եկեղեցու կաղապարը։

Այդտեղ Դավիթ Անհողինի որդի Կյուրիկեի և վերջինիս հորեղբայր Սմբատի պատկերները չէին կարող դրվել, եթե նրանք չեն ուզեցել իրենց նախորդների հիշատակը ոչնչացնելով՝ նրանց աշխատանքն իրենց վերադրելու միջոցին դիմել։ Ներանք վաստերը խեղաթյուրելու ճանապարհով անուն

---

[1] Ղևոնդ Մովսեսյան—«Անիի Կյուրիկյան թագավորներու պատմությունը», Վիեննա, 1923 թ.։

վաստակելու կարիքը չունեին, որովհետև իրենց պատկերները կարող էին քանդակել տալ նույն Սանահնում իրենց շինած ս. Գրիգոր բոլորաձև եկեղեցու կամ նշխարատան պատերի վրա։


Այդպիսի բարձրաքանդակներ կան Աղթամարում, Հառիճում, Հաղպատում և Անիի Գագկաշեն ս. Գրիգորում, որոնց բոլորի վրա էլ քանդակված են տաճարները շինող անձնավորությունները միայն։ Սանահինն այդ ընդհանուր երևույթի մեջ բացառություն կազմել չէր կարող, մանավանդ որ Կյուրիկեի և Սմբատի բռնած կաղապարն ամենայն հավանականությամբ Ամենափրկիչ եկեղեցունն է, բայց ոչ երբեք բոլորաձև ս. Գրիգորինը։

Կյուրիկե 3-րդը (ըստ Մովսեսյանի՝ Կյուրիկե 2-րդ) թագավորել է 12-րդ դարի երկրորդ կեսին, 1145 թ. մինչև 1185 թ.։ Ղ. Մովսեսյանը գիտե նրա հինգ աղջիկներին՝ Մարիամին, Ռուսուդանին, որ Իվանե Օրբելյանի կինն էր, Մամքանին, որ Խաչենի տեր Հասանի (Խազրակյան) կինն էր, Վանեին՝ Արանի որդի Դավթի կինը, և Բավրինային, որ խնամացնում էր Աբաս 2-րդին և Աղսարթանին։ Մովսեսյանին ծանոթ է Կյուրիկե 3-րդի միայն մի որդին՝ Աբասը, որ Նանայի ամուսինն էր և երիտասարդ հասակում մեռավ։ Սակայն, Նոր-Վարագավանքի արձանագրություններից պարզվում է, որ Կյուրիկե 3-րդն ունեցել է նաև մի ուրիշ որդի՝ Վասակ անունով, որը Նոր-Բերդի Կյուրիկյան ճյուղի հիմնադիրն է։ Վասակն ինքն արձանագրություններ չի թողել և, ըստ երևույթին, ավելի շուտ է մեռել, քան Աբասը։ Այդ երևում է նրանից, որ նա չի հաջորդել եղբոր գահին և, որ գլխավորն է, Աբասին հաջորդող Աղսարթանի գահակալության հենց սկզբին հանդես է գալիս Վասակի որդին՝ Դավիթը, որն արդեն Նոր-Բերդի իշխանն էր։ Վասակի մասին տեղեկություն ունենք միայն նրա որդի Դավթի և թոռան՝ Վասակի արձանագրություններից, որոնք փորագրված են Անապատի (Նոր-Վարագավանքի) պատերին։

Դավիթ, որդի Վասակա, թոռն Կյուրիկե արքայի.— Այս Դավթի մասին մի քանի մանրամասնություններ է հաղորդում ժամանակակից պատմագիր Կիրակոս Գանձակեցին։ Ըստ վերջինիս՝ Կյուրիկե 3-րդի որդի Աբասը 19 տարեկան հասակում մեռնելով՝ իր կին Նանայից որդի չի ունեցել, բայց Աբասի քույր Բյուրինան (Բորինա) լսում է, որ Աբասն ունի մի ապօրինի որդի, որին էլ ժառանգակալ են դարձնում Կյուրիկյան թագավորության. բայց Նոր-Բերդի Դավիթը, որ Բագրատունյաց տանից էր, Աղսարթանին ապօրինի ժառանգ համարելով ուզում է ինքը տիրանալ Մածնաբերդի գահին։ Նա իր աղջիկը կնության է տալիս Աղսարթանին, հետո տիրանում է Մածնաբերդին և աղջիկը բաժանելով Աղսարթանից, սրան հեռացնում է բերդից, բայց բերդի բնակիչները Դավթին չեն ընդունում, արտաքսում են այստեղից և Մածնաբերդը հանձնում Աղսարթանին։ Ավելորդ չէր լինի մեջ բերել Գանձակեցու խոսքերը.

«Եւ կացեալ Աբաս ամս երկու ընդ ամուսնոյն իւրոյ, վախճանի ամաց ընդ[ն]ից և տասանց. սորա զաւակ ոչ գոյր ի կնոջէն իւրմէ։ Իբրև ետես քոյր նորա, Բիւրինայ անուն, եթէ բնաջինջ եղաք յազգէ՝ անհնարին սգով վարանէր։ Ապա ասացին նմա, եթէ է կին մի, որ ունի մանուկ մի տնդիայ

եղբօրէն քումմէ, ապա զուարթացեալ կինոջն, առնու զմանուկն և անուցանէ և անուանեաց պանուն Նորա Աղսարթան, որ եղև ժառանգակալ Մածնաբերդոյ, այր աստուածապաշտ և քահանայասէր։ Սա որ ևնաս յաւուրս մեր, սորա ի ձերութեանն ցաւեցին ոտք, ընդ սա խալխութեամբ վարեցաւ Դաւիթ իշխան Նոր-Բերդին, զի էր և նա յազգէ Բագրատունեաց, հայրն Վասակայ իշխանի, որ շինեաց զեկեղեցին հրաշագան ի վանքն՝ որ Անապատն կոչի, հուպ ի Նոր-Բերդն առաջնորդութեամբ և ձեռնադրութեամբ արքեպիսկոպոսին Ցոհաննիսի Տայեցոյ քաղաքին Շամքորոյ, և Դարգմանայ, և Երզնկանիցն, և Տէրունականին, և Տաւշոյ, և այլ կողմանց իշխանութեան Վարհամայ իշխանի։ Եւ եղև աւարտումն եկեղեցւոյն, որ օծաւ և կնքեցաւ յանուն սրբոյ Աստուածածնին ի ՈՁԹ թուականին հայոց։ Այր սուրբ և առաքինի և բարեզործ էր եպիսկոպոսն Ցոհաննէս, որ յոլով քառասունս անսուաղ պահէր։ Իսկ Դաւիթ իշխան Նոր-Բերդին խաբեաց զմանուկն Աղսարթան և վերադարձոյց զնա ի զուսար իւր և ինքն տիրեալ Մածնաբերդոյ, և ապա եհան զդուստր իւր ի նմանէ։ Իսկ Աղսարթանայ իւր արարեալ զբնակիչս իւր բերդին, յանկարծակի յետդակարծ ժամու ըմբռնեալ զԴաւիթ հանդերձ ամենայն ընտանեօքն հանին արտաքս ի բերդէն, և եւուն զբերդն յԱղսարթան» [1]։



Նոր Վարագավանքն արևմուտքից։

Վասակի որդի Դավիթը նշանավոր է իր կառուցած Անապատով, որի կողքին հետագայում նրա որդի Վասակը շինեց Նոր Վարագավանքը։ Դանձակեցին սխալվում է, երբ ամբողջ շինութիւնը, կամ ասվելի ճիշտ կլինի ասել, Անապատի շինութիւնը վերագրում է Վասակին։ Այդ տեղեկութիւնը կարելի է հերքել բազմաթիվ արձանագրութիւններով։

Վասակի 1207 թվին պատկանող արձանագրութեան մեջ Անապատի կառուցումը վերագրված է Դավթին։


Ի Թ[ՈՒԻՍ] ՈՁՉ [686=1237] ԹԱԳ[ՈՒՀԻ] ՌՈՒՋՈՒՔԱՆԱ ԴՍՏԵՐ ՔԱՄ[ԱՐ]։ ԵՍ՝ ՎԱՍԱԿ, ՈՐԴԻ ԴԱՒԹԻ, ՈՐԴՈ ՎԱՍԱԿԱ, Ի ՏԱՆԵ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ, Ի ՏՈՀՄԷ ԴԱՒԹԱ ՄԱՐԳԱՐԷԻ, Ի ՓԱՌՍ Ա[ՍՏՈՒԾՈ]Յ ԿԱՏԱՐԵՑԻ ՉԵԿԵՂԵՑԻՍ, ՋՈՐ ՇԻՆԵՑԻ Ի ՁԵՌՆ Տ[ԵԱՌ]Ն ՅՈՀԱՆՆՈՒ ԵՒ ԸՆԾԱՅԵՑԻ

[1] *Կ ի ր ա կ ո ս Գ ա ն ձ ա կ ե ց ի—«Պատմութիւն Հայոց», Դուվ. հրատ., էջ 145—147։*

ՋՇԱՂԿԱԳՈՒՉԻ ԻՒՐ ԿՈՊԱՐՈՎՆ Ի ՎԱՆՔՍ, ԵՒ ՀԱՒԱՆՈՒԹԵԱՄԲ ԵՂԲԱՐՑՍ ՀԱՍՏԱՏԵՑԱՒ ԻՆՁ ՊԱՏԱՐԱԳ ՅԱՁՏՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՋԱՏԻԿՆ ՅԻՄ ՇԻՆԵԱԼ ՄԵԾ ԵԿԵՂԵՑԻՆ, ՈՐՊԷՍ՝ ԻՄ ՀԱՒՐՆ ՅԻՒՐ ՇԻՆԵԱԼ ՓՈՔՐ ԵԿԵՂԵՑԻՍՆ: ԳՐԵՑԱՒ ԵՒ ԿՆՔԵՑԱՒ ԱՆՈՒԱՄԲՆ Ա[ՍՏՒԾՈ]Յ, ՑԱՒՈՒՐ ՈՐՈՒՄ ՎԱՐԱԳԱ ՀԱՅՐՆ ՂՈՒԿԱՍ ՋՍ[ՈՒՐ]Ք ՆՇԱՆՆ ԵՏ ՅԵԿԵՂԵՑԻՍ: ԱՐԴ, ԲԷ ՈՔ ՁՄԵՐ ՏՈՒԵԱԼ ԳԵՒ-ՂԵՐՍ Ի ՄԵՐ ԵԿԵՂԵՑԵԱՑՍ ՀԱՆԵԼ ՋԱՆԱ ԵՒ ՁՄԵՐ ՅԻՇԱՏԱԿՆ ԽԱՓԱՆԷ՝ ԲԷ ՔՐԻՍՏՈՆԵԱ Է Ի ՔՐԻՍՏՈՍԷ ԵՒ ԻՒՐ ԸՆՏՐԵԼՈՑՆ Է ՆՁՈՎԱԾ, ԵՒ ԲԷ ՅԱՅԼ ԱՁԳ Է Յ[ՍՏՒԾՈ]Յ ԵՒ Ի ԴԵՆԷ ԵՒ ՅԱՌԱՋՆՈՐԴԱՑ ԻՒՐԵԱՆՑ, ԵՒ ՄԵՐ ՄԵՂԱՑՆ ՊԱՐՏԱԿԱՆ: ՅԱՒՈՒՐՆ ԴԱՏԱՍՏԱՆԻ ԱՍԱՑԵՆ ԱՄԵՆԱՅՆ Ս[ՈՒՐ]Ք ԵՂԻՑԻ, ԵՂԻՑԻ:

Եթէ դրան ավելացնենք նաև այն, որ Դավիթն իր շինած եկեղեցու մի քանի տեղերում արձանագրել է Անապատի շինության հանգամանքները, էլ ոչ մի կասկած չի մնա համոզվելու, որ բուն անապատի կամ հարավային թևի շինարարությունները կատարել է Դավիթը և ոչ թե վաստակը:

Տաճարի շինության գլխավոր արձանագրությունը գտնվում է նրա մուտքի բարավորի վրա և ունի հետևյալ բովանդակությունը.



Վաստակի որդի Դավթի արձանագրությունը Անապատի տաճարի արևմտյան մուտքի ճակատին:

ԿԱՄԱՒՆ Ա[ՍՏՒԾՈ]Յ, ԵՍ ԴԱՒԻԹ, ՈՐԴԻ ՎԱՍԱԿԱ ՔՈՌՆ ԿՅՈՒՐԻԿԷ ԱՐՔԱՒ ՇԻՆԵՑԻ ՋԱՆԱՊԱՏՍ ՅԻՄ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆՍ ՁԵՌԱՄԲ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ ՄԽԻԹԱՐԱ ԵՒ ՈՒԽԷ [647—1198] ԹՎԻՍ ՇԻՆԵՑԻ ՁԵԿԵՂԵՑԻՍ ՁԵՌԱՄԲ ՀԱՒՐ ԳՐԻԳՈՐՈ ԵՒ ՆՈՐԻՆ ԱՐԲԱՆԵԿԻՆ՝ ՊԵՏՐՈՍԻ ԵՒ ԵՂԲԱՐՑ ՆՈՐԱ ՅՈՎՀԱՆՆԻՍԻ ԵՒ ԱՁԱՐԻԱՒ: ԵՒ ԵՏՈՒ ՀՈՂ Ի ՏԱՆՁԵԿՈ, ԵՒ ՅԵՂԵՐ ԳԵՏԻՆ ԵՒ ԶԴՐԱԽՏՆ ԸՆԳՈՒՉԻ ՁԱՂԱՑԷՆ ՀԱՄԴՆՈ ՄԻՆՁ ՅՆԳՈՒՉՈՒՏՆ ԽԱՐԲԻ ԵՒ ՁԱՂԱՑ ՄԻ ԵՒ ԻՐԻՒՆ ԱՅԳԻ, ԵՒ ՇԻՆԱԿԱՆ ՄԻ: ԵՒ ԵՏՈՒՆ ԻՆՁ ՁՁԱՏԻԿՆ ԱՒՈՒՐՆ ԵՒ ՁՃՐԱԳԱԼՈՒՑԻՆ ԺԱՄՆ ՈՐՁԱՓ ԼԻՆԻ: ՈՎ ԽԱՓԱՆԷ, ԴԱՏԱՊԱՐՏԵՑՑԻ Ի Տ[ԵՒՌՆ]Է:

Դավթի տապանաքարն մուտքի կամարի վրա պրված է՝

«ՈՒԽՔ [649—1200] ԹՎԻՆ: ԵՍ ԴԱՒԻԹ, ՈՐԴԻ ՎԱՍԱԿԱ, ՔՈՌՆ ԿԻՒՐԻԿԷ Ա[Ր]ՔԱԻ, ՇԻՆԵՑԻ ՁԵԿԵՂԵՑԻՍ ԵՒ ՁՏԱՊԱՆԱՏՈՒՆՍ ԵՒ ԵՏՈՒ Ի ՏԱՆՁԵԿԻ ՁԻՄ...»

Արձանագրությունն այստեղ ընդհատվում է:

Դավթի անունը հիշատակվում է տաճարի արևմտյան պատի վրա քանդակած հետևյալ արձանագրության մեջ.

Ս/ՈՒՐ/Բ ՆՇԱՆ ՏԵՐՈՒՆԱԿԱՆ, ԴԱՒԹԻ ԼԵՐ ԱՒԳՆԱԿԱՆ, ՅԱՇԵՂ ԱՒՈՒՐՆ ԱՆՁՐԱՒԱԿԱՆ.

Դավիթը մի կրկնագիր արձանագրության մեջ էլ է հիշվում իբրև վանք շինող.

«ԴԱՒԹԻ ՇԻՆՈՂ ՎԱՆԻՑՍ»


Անապատն *այժմ կոչվում է Նոր-Վարագ։ Այդ անունը, ինչպես հետո պիտի տեսնենք, վանքն սացել է Վասակի կառուցած եկեղեցու պատճառով։ Այս վանքը կառուցված է Շամշադինի շրջանի Վելի (նախկին Հախում) գյուղից դեպի հյուսիս-արևմուտք, երեք կիլոմետր հեռու. գտնվող մի սարալանջի վրա՝ «հուպ ի Նոր-Բերդն», ինչպես վկայում է Կ. Գանձակեցին։ Մեր ենթադրությունը, թե այդ բերդը գտնելը մեծ աշխատանք չի պահանջելու, չարդարացավ—մեր երկար ստուգումներն ու տեղացիներին հարց ու փորձ անելն արդյունք չտվին։*

Նոր-Վարագի վանքը բաղկացած է երկու եկեղեցիներից, որոնցից յուրաքանչյուրն իր արևմտյան կողմում ունի մի ժամատուն։ Նրանցից մեկն ունի նաև մի տապանատուն։ Վանքն ունեցել է նաև ընդարձակ պարիսպ, որից տեղ-տեղ երևում են կրաշաղախի հետքեր։ Վանքի հանգստարանը գտնվում է նրա հյուսիսային կողմում՝ 200—300 քայլի վրա, որտեղ կան մի քանի տապանաքարեր և խաչքարեր։ Դրանցից միայն մեկն ունի վերծանելի արձանագրություն և պատկանում է 1659 թվին։

Հարավային կողմի փոքր եկեղեցին, տապանատունը և այդ մասի ժամատունը հուշարձանների խմբի մեջ հնագույններն են, որոնք կառուցվել են 1198 թվին, Կյուրիկե 3-րդի թոռ Վասակի որդի Դավթի միջոցներով։

Տաճարի արևմտյան ճակատը զեղեցիկ զարդաքանդակներ ունի։ Մուտքը զարդարված է կամարակապ զույգ ութնասյուներով, որոնց խոյակներն ունեն հյուսկեն քանդակներ։ Մուտքի աջ ու ձախ կողերը զարդարված են կամարաձև գլխով երկու մեծ և միմյանց համապատասխանող շրջանակավոր խաչքարերով, որոնց վերին և ստորին մասերն արձանագրված են։ Ինչպես իմանում ենք արձանագրություններից, այդ խաչքարերը կազմել է Թաար վարպետը, որը մեր երևելի քանդակագործներից մեկն է, ասայժմ մեզ հայտնի միայն այս երկու խաչքարերով, բայց հավանական է, որ նույն պատի վրա գտնվող որմնասյուներն ու մնացած ձևաևոր քարերը նույն վարպետի ձեռակերտը լինեն։ Տաճարն անսյուն է, ծածկը եղել է օրոցաձև։ Արևելյան արտիզը մի միջնորմով բաժանված է երկու մասի։

Այս եկեղեցին իր արևմտյան կողմում ունի մի ընդարձակ ժամատուն, որի ծածկն ամբողջովին կործանված է։ Այս ժամատան հարավային պատն ամբողջապես փլվել և պլորվել է ձորը, իսկ մնացած պատերը մեծ մասով կանգուն են։ Ժամատան արևմտյան մուտքն սկսվում է սլաքավոր բարավորով, որն առած է քառանկյուն ուղղակի շրջանակի մեջ։ Մուտքի պլխին կա շրջանաձև կեղծ լուսամուտ, որն ունի զարդաքանդակ պսակ։ Պատի այդ մասերում կան նաև մի քանի փոքրիկ խաչքարեր։ Ժամատունը սյուներ չի



Անապատի ժամատան հյուսիս-արևմտյան մասը ներսից։

ունեցել, այլ ծածկը հանգչել է պատերից դուրս ցցված որմասյուների վրա, որոնք՝ յուրաքանչյուր պատի մեջ՝ երկու հատ են։

Վասակ՝ որդի Դավթի։ Այս վասակը 13-րդ դարում իշխում էր Նոր-Բերդում։ Կիրակոս Գանձակեցուն նա ծանոթ է որպես Անապատի կառուցող և Նոր-Բերդի իշխան։ Վասակի թողած ամենահին արձանագրությունը ՈՁ[=1231] թվին է պատկանում, իսկ ամենաուշը, ՈՁՁ[=1237] թվին, բայց Կիրակոս Գանձակեցին ասում է, որ նրա կառուցած եկեղեցու օծումը տեղի է ունեցել ՈՁԹ[=1240] թվին։ Այս վասակով, որը Նոր-Բերդի կյուրիկյան իշխանների շարքում 2-րդ վասակն է, ըստ երևույթին վերջանում է Նոր-Բերդի կյուրիկյան տոհմի իշխանությունը։ Այսպիսով՝ Նոր-Բերդի իշխանների ճյուղագրությունն առանում է հետևյալ պատկերը.

Կյուրիկն Գ

/ \

Արաս Վասակ իշխան Նոր-Բերդի.

|


Դավիթ (հակառակորդ Աղսարթանի և Անապատի կառուցող)

|

Վասակ (Նոր վարագավանքի կառուցող)

Երկրորդ Վասակը հայտնի է Անապատի վանքում իր կառուցած եկեղեցով։ Այդպես է ճանաչում նրան նաև Գանձակեցին, որ ժամանակակից հեղինակ է, և նրա կառուցած եկեղեցին անվանում է «հրաշազան», որ միանգամայն համապատասխանում է իրականությանն։ Այս եկեղեցու անունը կապված է վարագա նշանն այնտեղ տեղափոխելու հետ։ Թաթարական արշավանքների ժամանակ Վարագի (Վանի վիլայեթ) վանահայր Ղուկասը վերցնելով Վարագա սուրբ նշանը, փախչում է հյուսիս և վեց տարի շրջելուց հետո այդ նշանը թողնում է Անապատում։ Վարագի նշանն Անապատի վանքը փոխադրելու հանգամանքը հիշատակված է տաճարի հյուսիսային պատի ներսի երեսին փորագրած հետևյալ ընդարձակ արձանագրության մեջ.

Ի ԹՎԻՆ ՈՁ [=680=1231] ԸՆԴ ԱՅԼ ԱՇԽԱՐՀՍ ՅՈԼՈՎՍ ՀԱՐԱՒ ԳԱ-ԻԱԶԱՆԱՒ ՑԱՍՄԱՆՆ Ա[ՍՏՈՒԾՈ]Յ ԳԱ-ԻԱՌՆ ԽԼԱՔԱ Ի ՁԵՌՆ ԽՈՐԱԶՄԻՆ ԵՒ ՔԱՔԱՐԻՆ, ԸՆԴ ՈՐՍ ԵՒ ՄԵԾԱՀՌՉԱԿ ՈՒԽՏԻՆ ՎԱՐԱԳ՝ ՅԻՇԵՑԵԱԼ ՄԵՂԱՑ ՄԵՐՈՑ: ՅԱՅՍՄ ԱՍԻ ԵՍ, ՂՈՒԿԱՍ, ՀԱՅՐ ՎԱՐԱԳԱ, ԱՌԵԱԼ ՉՏԻԵԶԵՐԱՀԱՄԲԱՒ Ս[ՈՒՐ]Ք ՆՇԱՆՆ ՇՆՈՐՀՆԱՆ Ա[ՍՏՈՒ-ԾՈ]Յ Ի ՓՐԿՈՒՔԻՒՆ ՄԱՐԴԿԱՆ Ի ՁԵ-ՌՆ ՊԱՏՐՈՆԻԿԵԱ ԵՒ Ս[ՈՒՐ]Ք ՀՌՈՄ-ՍԻՄԵԱՅՆ ԵՒ ԲՈԴԿԱ Զ:Զ: ԱՄ ԾՐՁԵ-ՑԱ ՔԱՓԱՌԵԱԼ Ի ՏԵՂՈ Ի ՏԵՂ, ԱՊԱ Ի ԿԱՄՍ Ա[ՍՏՈՒԾՈ]Յ ԵՏԵՍ ԽՆԱՄՈՑՆ Տ[ԵԱՌ]Ն, ՀԱՍԻ Ի ՆՈՐ ԲԵՐԴ ԱՌ Ք[ՐԻՍՏՈ]ՍԱՍԵՐ ԻՇԽԱՆՆ ՎԱՍՍԱԿ ԵՒ Ա[ՍՏՈՒԱ]ԾԱԲՆԱԿ ԱՆԱՊԱՏ ԿՈՉԵՑԵԱԼ ՎԱՆՍ ԵՒ ԱԶԴՈՒՄ ԻՆՉ ԵՂԵՒ ԱՌ ԻՍ ՀԱՃՈՒՆԱԼ Ս[ՈՒՐ]Ք ՆՇԱՆԻՍ Ի ՏԵՂՈՋՍ ՆԿԱՏԵՑԻ ԵՒ ԳԵՂԱՂԵՇ ԵԿԵ-ՂԵՑԻՍ ԱՐԺԱՆԻ ՀԱՆԳՉՍՏԵԱՆ ՍՈՐԱ ԵՒ ՄԵԾԱՐԵԱԼ Ի ԲՆԱԻՒՑՍ ԱՌՒ ՁՎԱՆՔՍ ԵՒ ԵՏՈՒ ՁԻԱՁՍ ՅԵԿԵՂԵ-ՑԻՍ Ա[ՍՏՈՒԾՈ]Յ, ՄԻՋՆՈՐԴՈՒԹԵԱՄԲ ԵՒ ՎԿԱՅՈՒԹՅԱՄԲ ՏԵԱՌՆ ՅՈՀԱՆՆՈՒ ՇԻՆԱՒՂԻ ԵԿԵՂԵՑՈՅՍ ԱՌԱՋԻ ՀՐԵՇ-ՏԱԿԱՑ ԵՒ ՄԱՐԴԿԱՆ: ԵՒ ՀԱՍՏԱՏԵՑԱԻ ԻՆՁ Ի ՏԱՒՆԻ ՍՐԲՈՑ ԱՌԱՔԵԼՈՑ ՊԵՏ-ՐՈՍԻ ԵՒ ՊԱՒՂՈՍԻ ԵՒ ՅՈՀԱՆՆՈՒ ԵՒ ՅԱԿՈԲԱ ՁԱՄԵՆ ԵԿԵՂԵՑԻՔՍ ՊԱՏԱ-ՐԱԳ: ԱՐԴ ԹԷՂՈՔ ՀԱՆԵԼ ՁԱՆԱ ԱՍՏԻ՝ ԿԱՊԱՆՍ ԵՒ ԱՆԵԾՍ ԺԱՌԱՆԳԵՍՑԷ Ի ՅՈԳԻ ԵՒ Ի ՄԱՐՄԻՆ ԱՆԲԺՇԿԵԼԻ Ի Ս[ՈՒՐ]Ք ՆՇԱՆԵՍ ԵՒ ՅԱՄԵՆ ԱՐԱՐԱՑ Ա[ՍՏՈՒԾՈ]Յ: ՈՐՁԱՓ ԱՅՍ ԵԿԵՂԵՑԻՍ ՇԷՆ Է ՄԻ ՈՔ ԻՇԽԵՍՑԷ ՁԻԱՁՍ ՀԱՆԵԼ ԿԱՄ ՁԻՄ ՅԻՇԱՏԱԿՍՆ ԽԱՓԱՆԵԼ, ԱՊԱ ԹԷ ՈՁ ՆԱԻ ՉԻՆՔՆ ՁՆՁԵՍՑԻ Ի ԿԵՆԱՑ ԳՐՈՅՆ ԵՒ ՅԻՇ-ՄԱՆԵՆ ԱՅՆ: ԱՍԱՍՑԷՆ ՀՐԵՇՏԱԿ[Ք] ԵՒ ՄԱՐԴԻԿ ԵՂԻՑԻ ԵՂԻՑԻ:



Նոր Վաթափաճնքի տաճարի արեմտյան մուտքը

Բացի դրանից, Վասակաշեն տաճարի շինութ[յանն է վերաբերում նաև եկեղեցու արեմտյան մուտքի քանդակազարդ շրջանակի գլխին փորագրած արձանագրութ[յունը, որի մեջ միայն մի բառ եղծված է, բայց մյուս արձանագրութ[յունների հիման վրա այդ բառը վերականգնվում է. դա Վասակի հոր անունն է, որ, ինչպես գիտենք, Դավիթն է եղել: Ահա այդ արձանագրութ[յան բովանդակութ[յունը.

«Ի ԹՎԻՆ ՈՁԴ [1235] ՇԻՆԵՑԱՒ ԵԿԵՂԵՑԻՍ ՁԵՌԱՄԲ ՅՈՀ: ՎԱՐԴԱՊԵՏԻՆ, ՀՐԱՄԱՆԱՒ ԵՒ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՄԲ ԻՇԽԱՆԱՑ ԻՇԽԱՆԻ ՎԱՍԱԿ[ԱՅ] ՈՐԴՈ [ԴԱՒԹԻ] ԲՈՒՆ ԿԻՒՐԻԿԵ ԱՐՔԱՒ. ԵՒ ՍԱ ՀԱՆԵՑԱՔ ՁԱՁԱՏ»:

Ինչպես տեսնում ենք, Վասակն իշխանաց իշխան է անվանվում. պարզ է, որ Կյուրիկե 3-րդի այս ճյուղի շառավիղները հաջորդաբար իշխանաց իշխան էին լինելու, ինչպես Դավիթը, նույնպես և Կյուրիկե 3-րդի որդի Վասակը: Սրանք թեև թագավորներ չդառան, բայց ինչպես երևում է ար-

ձանագրություններից, մեծ ձգտում ունեին ուրանալու Կյուրիկյան գլխավոր ճյուղի գահին։ Այդ հանգամանքը հատկապես նկատելի է Դավթի օրով, երբ Կյուրիկյան գահին նստած էր Աբասի ապօրինի որդի Ադամարթանը։

Մեծ տաճարի արևմտյան պատի ներսի երեսին կա մի արձանագրություն, որի մեջ հանդես է գալիս Նոր-Բերդի տիկին Խաթունը՝ Անեցի Մեծ Հեճուբ Վահրամի աղջիկը։ Խաթունը կարող է լինել միայն Վասակի կինը, քանի որ արձանագրությունը քանդակված է մեծ եկեղեցու վրա և պատկանում է 13-րդ դարին, որը, բացի գրերի պալեոգրաֆիկ ձևերից, ապացուցվում է նույն տիկին Խաթունի մյուս արձանագրություններով, որոնցից մեկը պատկանում է 1231 թվին և գտնվում է Հոռոմոսի վրա, իսկ մյուսը՝ Հաղբատի ժամատան վրա և պատկանում է 1235 թվին։

Այդ արձանագրությունները մեջ ենք բերում Կոստանյանցի «Վիմական տարեգրից».—

ՀԱՌԻՃԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«ԱՍՏՈՒԱԾԱՍԵՐ ԵՒ ԱՐԴԻՒՆԱՒՈՐ ՊԱՏՐՈՆՆ ՀԻՋՈՒԲ ՎԱՀՐԱՄ ՇԻՆԵԱՑ ԺԱՄԱՏՈՒՆՍ ԵՒ ԵԲԵՐ ՁՄԻՒՍ ՋՈՒՐՍ ՅԻՇԱՏԱԿ ՀՈԳՈ ԻՒՐՈ ԵՒ ՁԱՒԱԿԱՑ ԻՒՐՈՑ ԵՒ ԱՄՈՒՍՆՈ ԻՒՐՈ ՔԱՄԱՐԻՆ։ ԵՒ ՏԵՐ ՀԱՄԱՁԱՍՊ ԵՒ ՀԱՅՐ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԻԱԲԱՆՔՍ Ի ԽՆԴՐՈՑ ԴԱՏԵՐՆ ԻՒՐՈ ԽԱՔՈՒՆԻՆ ՀԱՍՏԱՏԵՑԻՆ Ի ՏԱՒՆԻ ՔԵՈՔՈՍ ՔԱԳԱՒՈՐԻՆ ՁԱՄԵՆԱՅՆ ԵԿԵՂԵՑԻՔՍ ՅԱՆՈՒՆ ՔԱՄԱՐԻՆ ՊԱՏԱՐԱԳԵԼ ԶՔՐԻՍՏՈՍԻ...»։

Հոռոմոսի արձանագրության մեջ Խաթունը գանգատվում է, որ զավակ չունի.

«ՔՐԻՍՏՈՍ ԱՍՏՈՒԱԾ Ի ՔՈ ՄԵԾԻ ԾԱԳՄԱՆ ԼՈՒՍՈ ՆՈՐՈԳԵԱ ՁՀՈԳԻ ԽԱՔՈՒՆԻՆ, ԴՍՏԵՐ ՀԵՁՈՒԹ ՎԱՐՀԱՄԱ, ՈՐ ՄԵԾ ՅՈՒՍՈՎ ԵՒ ԲԱՁՈՒՍ ԱՐԴԵԱՄԲՔ ՎԵՐՍՏԻՆ ՆՈՐՈԳԵԱՑ ՁԵԿԵՂԵՑԻՔՍ, ԵՒ ՁԻ ՈՉ ՈՒՆԼՈՎ ՄԱՐՄՆԱՒՈՐ ՁԱՒԱԿ՝ ՍՏԱՑԱԻ ԻՒՐ ԺԱՌԱՆԳ ՅԵՎ ՅԻՇԱՏԱԿ ՁՍՈՒՐԲ ՅՈՎՀԱՆՆԵՍԻ...»։

Խաթունն իր արձանագրությունների ժամանակով համընկնում է Դավթի որդի Վասակի ժամանակին (13-րդ դարի 30-ական թվականներ)։ Այսպիսով՝ անվիճելի է դառնում, որ Նոր-Բերդի այդ իշխանուհին Վասակի կինն է։

«Ի ՏԱՒՆԻ ՍՐԲՈՑ ՀՌԻՓՍԻՄԵՆՑՆ Ե ԱՒՐ ԺԱՄ ԼԻՆԻ ԽԱՔՈՒՆԻՆ ԱՆԵՑՈՅ. ԴՍՏԵՐ ՄԵԾԻՆ ՀԵՁՈՒԲ ՎԱՐՀԱՄԱ ԵՒ ՏԻԿԻՆ ՆՈՐ-ԲԵՐԴԻՍ. ՈՐՔ ԽԱՓԱՆԵՆ՝ ԴԱՏԻՆ ՅԱ[ՍՏՈՒԾՈ]Յ».

Հոռոմոսի արձանագրությունից երևում է, որ Վասակը որպէս չի ունեցել իրեն հաջորդ կարգելու համար և կարելի է ենթադրել, որ նրանով էլ վերջանում է Նոր-Բերդի Կյուրիկյան իշխանությունը։ Խաթունի արձանագրության ներքևը գտնվում է նույն փորագրչի ձեռքով և նույն դրելով գրված մի արձանագրություն, որը նվիրված է Խաթունի անուղղակի ժառանգին.

Ի ՏԱՒՆԻ Ս[ՈՒՐ]Բ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՆԱՒԱՍԱՐԴԻՆ Ա ԱՒՐ ԺԱՄ ՅԽԿԱՆԵՑՈ ԴՈՐԻ՝ ԱՆՈՒՑՈՂԻ ԽԱՔՈՒՆԻՍ. ՈՐՔ ԽԱՓԱՆԵՆ ԴԱՏԻՆ ՅԱ[ՍՏՈՒԾՈ]Յ։

* * *

Վասակաշեն տաճարը կառուցված է Անապատի հյուսիսային կողմում։ Տաճարը դրսից քառանկյուն է, իսկ ներսից՝ խաչաձև։ Ներսում սյուներ չկան, այլ խաչաձևությունն առաջացնող թևերի ներս ընկած մասերի հիման վրա բարձրանում է բարձրադիր գմբեթը։ Տաճարի չորս անկյուններում կան չորս կրկնահարկ խորաններ։ Արևմտյան խորանների վերին հարկերը բարձրանում են պատերի հետ շինած քարե սանդուխքով։ Արևմտյան ժամատունն ունեցել է չորս կենտրոնական սյուներ, բայց ծածկը փլված է և այժմ միայն պատերի մասերը։ Տաճարն ունի երկու մուտք՝ հարավային, որ միացել է Դավիթաշեն ժամատան մեջ և արևմտյան, որը բացվում է Վասակի շինած ժամատան մեջ։ Այս վերջին դուռն ունի խիստ հարուստ հարդարանք։ Սրա քառանկյուն մուտքը զարդարված է զուտ որմնասյուներով, դռան ճակատակալ քարը կամարավոր է, իսկ դռան կողքերը և ճակատը զարդարված են փոքրիկ ձևավոր քարերով, որոնք ստորին շարքերում ունեն երկրաչափական ձևեր, իսկ վերին մասերում՝ կենդանական և բուսական ոճավոր քանդակներ։

Վանքն ունեցել է նաև ջրմուղ, որի կառուցողի անունը միացել է մի կոթողի վրա։

«Ի ԹՎԻՆ ՉԲ [1253] Ա[ՍՏՈՒԱ]Ծ ՈՂՈՐՄԻ Շ Ա Ռ Ա, ՈՐ ՋՈՒՐ ԲԵՐԵԱՑ».

Վանքի շրջապատում կան մատուռներ և գևրեզմանոց։

Բ.

ԽՈՐԱՆԱՇԱՏ

Խորանաշատ վանքը գտնվում է Ջինարի գյուղից մոտ երկու կիլոմետր դեպի հյուսիս-արևելք ընկնող բարձրադիր ձորակում։ Շրջակայքն անտառապատ է, մոտերքում կան նաև պտղատու ծառեր։


Այս վանքի կառուցման մասին, բացի վիմական արձանագրություններից, ունենք նաև Կիրակոս Գանձակեցու ընդարձակ նկարագրությունը, որից երևում է, որ հիշյալ պատմագիրն այս վանքում աշակերտ է եղել վանքի կառուցող և ժամանակի մեծագույն ուսուցիչ Հովհաննես Վանականի մոտ։ Վանականի մասին կարևոր տեղեկություններ են հաղորդում նաև նրա նշանավոր մյուս աշակերտները՝ Վարդան Վարդապետը և Մագաքիա Աբեղան։

Հովհաննես Վանականը Տավուշեցի է (Շամշադին), ծնվել է 12-րդ դարի վերջերին։ Փոքր հասակից ուղարկվել է վանք։ Նա սովորել է Դատաստանագրքի նշանավոր հեղինակ Մխիթար Գոշի մոտ, Գևտիկ վանքում։ Ավարտելով ուսումը, ստացել է Վարդապետ (գիտնական ուսուցիչ) կոչումը և գնալով իր հայրենիքը՝ հիմնադրել է Խորանաշատը։ Շինության սկզբնավորության մասին չկա արձանագրություն. հնագույն արձանագրությունը վերաբերում է տաճարի պլխավոր դռան շինությանը, որը կրում է 1211 թվականը և կառուցվել է ոմն Սերոբի ծախքով։

ՄԻՆ ԽՈՐԱՆ ՊԱՏԱՐԱԳ ՄԱՏՋԻ ՍԵՐՈԲԻՆ Ի ՏԱՒՆԻ ՍՐԲՈ ԽԱՉԻՆ, ՋԻ ԴՈՒՌՍ ՆՈՐԱ ԻՐԱՒՔՆ ՇԻՆԵՑԱՒ Ի ՈԿ [660=1211] Թ[ՎԻՆ]։

Հյուսիս-արևելյան խորանի շինությունն ունի 1216 թվականը.

ՈԿԵ [865=1216] ԵՍ ՎԱՐՇԱՄ ԿԱՆԱՉՈՂԿԵՑԻ ԵՒ ԱՄՈՒՍԻՆ ԻՄ ՄԻԱԲԱՆԵՑԱ Ի ԽՈՐԱՆԱՇԱՏՈ Ա[ՍՏՈՒԱ]ԾԱԾԻՆՍ, ԵՏՈՒ ՋԾԱԽՍ ԽՈՐԱՆԻՍ ԵՒ ՎԱՐԴԱՊԵՏՆ ՀԱՍՏԱՏԵԱՑ ԻՆՁ Բ ԺԱՄ Ի ՏԱԻՆԻ Ս[ՈՒՐ]Բ ԳՐԻԳՈՐԻ ԱՆԽԱՓԱՆ»[1]:



Խորանաշատը հարավ-արևմուտքից:

Մյուս խորանի շինությունն էլ ունի 1220 թվականը.

ՈԿԹ [669—1220]. ԵՍ ԱԻԵԼԴԱՏ ՍՏՐԺԵՑԻ ՄԻԱԲԱՆԵՑԱ Ի ԽՈՐԱՆԱՇԱՏՈ Ս[ՈՒՐ]Բ Ա[ՍՏՈՒԱ]ԾԱԾԻՆՍ ԵՒ ԵՏՈՒ ՋԾԱԽՍ ՅԱՅՍՄ ԽՈՐԱՆԻՍ ՅԻՇԱՏԱԿ ԾՆՈՂԱՑ ԵՒ ԵՂԲԱՐՑ ԻՄՈՑ ՆԱԻՈՒՐԻՆ ԵՒ ԱՊԻՐԱՏԻՆ ԵՒ ՎԱՐԴԱՊԵՏՆ ՀԱՍՏԱՏԵՑ: Բ: ԺԱՄ ՅԱՅՍՄ ԽՈՐԱՆԻՍ, Ա Ի ՏԱԻՆԻ ՎԱՐԴԱՎԱՐԻՆ ԵՒ Ա ՎԱՐԱԳԱ ԽԱՉԻՆ ԱՆԽԱՓԱՆ: ՀԱՍՏԱՏ Է ԿԱՄԱԻՆ Ա[ՍՏՈՒԾՈ]Յ:

Նշանակում է, շինության վերաբերող արձանագրություններն ունեն — հնագույնը՝ 1211 և վերջինը՝ 1222 թվականները, որ տաճարի կառուցման և ավարտման մոտավոր ժամանակն ենք համարելու՝ հաշվելով կառուցման տեղության 13-ից 15 տարի:

Սարգ. Ջալալյանն իր Ճանապարհորդության առաջին մասի 162 էջում Խորանաշատի շինության թվականը համարում է ՈՂ [640=1191], սակայն այդ ենթադրությունը միանգամայն անհիմն է[2]:

Սակայն, ինչպես երևում է արձանագրություններից, վանականն իր ամբողջ կյանքը Խորանաշատի շինությամբ անցկացրեց: Դանձակեցուց դի-

[1] Հրատարակված է «Արցախ»-ում, էջ 323 և «Վիմական արեգիր»-ում, էջ 59:

[2] Այս նույն սխալի վրա ուշադրություն է դարձրել դոկտ. Հ. Կոգյանը և նա գրում է. «Ջալալյան ՈՂ թվին, ուրեմն 1191-ին կկարծե թե վանքը շինված է, Խոսք մը որ հերքվելու պետք չունի, քանի որ մինչև ցարդ ըսածներս ասոր դեմ կը բողոքեն» (էջ 11):

տենք, որ Հովհաննես Վանականը վախճանվել է 1251 թվին և հենց այդ տարեթիվը ունեցող մի արձանագրություն տեղեկանում ենք, որ ժամանումը դեռևս այդ թվականին ավարտված չի եղել. Եկեղեցու հարավային պատի ներսի երեսին կարդում ենք.

Ի ԹՎԻՆ Ջ [700=1251]. ՅԱՆՈՒՆ ՀԱՒՐ ԵՒ ՈՐԴՈ ԵՒ ՀՈԳՈՅՆ Ս[Ր]ԲՈ ԵՒ ՄԱՒՐ Ս[ՈՒՐ]Բ Ա[ՍՏՈՒԱ]ԾԱԾՆԻ: ԵՍ, ՍՏԵՓԱՆ Ի ԳԱՒԱՌԵՆ ՅԱՐՃԻՇՈ Ի ՀՈՋԱԿԱՒՈՐ ՈՒԽՏԵՆ ՅԱՐԻՋՈՐՈ ԵԿԻ ԱՌ Ս[ՈՒՐ]Բ ՎԱՐԴԱՊԵՏՆ ՎԱՆԱԿԱՆ ԵՒ ՄԻԱԲԱՆԵՑԱ Ս[ՈՒՐ]Բ Ա[ՍՏՈՒԱ]ԾԱԾՆԻՍ ԵՒ ԳՐԻԳՈՐԻՍ ՎԱՐԴԱՊԵՏ. ԵՒ ՍԱԿԱՒ ԸՆՁԻՒՔ ԱԻԳՆԱԿԱՆ ԵՂԱՔ ԺԱՄԱՆՈՒՆ: ԵՒ ԽՈՍՏԱՑԱՆ ՅԱՄԵՆ ՏԱՐԻ Դ ԱՒՐ ԺԱՄ Ի ՏԱՒՆԻ ԾԱՌԶԱՐԴ[ԱՐԻՆ]: ՈՐՋԱՓ ԿԵՆԴԱՆԻ ԵՄՔ ՄԵՐ ԾՆՈՂԱՑՆ ԱՌՆԵՆ, ԻՍԿ ՅՈՐԺԱՄ ՓՈԽԻՄՔ Ի Ք[ՐԻՍՏՈ]Ս՝ ԻՆՁ՝ ՍՏԵՓԱՆՈՍԻ ԿԱՏԱՐԵՆ: ՈՎ ԽԱՓԱՆԵ ԴԱՏԻ Յ[ՍՏՈՒԾՈ]Յ ՅԱՆԵՐԵԿ ԱՒՈՒՐ: ԿԱՏԱՐԻՋՔ ԱՒՐՇՆԻՆ Յ[ՍՏՈՒԾՈ]Յ: ԱՄԵՆ:

Այս արձանագրությամբ պարզվում է, որ վանականը 40 տարուց ավելի զբաղված է եղել իր հիմնադրած վանքի շինությամբ, եթե շինության սկզբնավորությունը համարենք 1211 թիվը, երբ արդեն դուռն էին շինում, սակայն բուն տաճարի շինությունը, ինչպես քիչ առաջ ասացինք, ավելի կարճ ժամի տևած լինի, այդ մասի ամենաուշ արձանագրությունն ունի 1222 թվականը։

1246 թվականը կրող մի արձանագրությունից տեղեկանում ենք, որ Վանականը «ի Խամո շինող վանից» է կոչվել իր ժամանակակիցներից։ Այդ մի զորեղ ապացույց է, որ Վանականի շինությունից առաջ Խորանաշատի տեղում հին ժամանակներից մնացած շինություններ չեն եղել.


ԵՍ ԿԻՒՐԻԿԵ ՄԻԱԲԱՆԵՑԱ Ի Ս[ՈՒՐ]Բ Ա[ՍՏՈՒԱ]ԾԱԾԻՆՍ ԵՒ ՀԱՅՐ ՊԱՒՂՈՍ ԵՒ ՎԱՆԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ Ի ԽԱՄՈ ՇԻՆՈՂ ՎԱՆԻՑ, ՀԱՍՏԱՏԵՑԻՆ ՄԵՋ Դ ՍԵՂԱՆ ՊԱՏԱՐԱԳ՝ ՅԱՒԱԳ ԵԿԵՂԵՑԻՍ, ՔՀԱՅՏՆՈՒԹԵԱՆ ՏԱՒՆԻՆ, Բ ՓՈԽՄԱՆ: ՈՎ ԽԱՓԱՆԵ՝ ԴԱՏԻ Յ[ՍՏՈՒԾՈ]Յ: ԹՎԻՆ ՈՂԵ(645=1246)։

Թերևս այս արձանագրության մեջ հիշվող Կյուրիկեն Աղսարթան 1-ինի որդի Կյուրիկե 4-րդն է (ըստ Ղ. Մովսեսյանի՝ 3-րդ), որը մինչև այժմ հայտնի է միայն 1232 թվի մի արձանագրությամբ և Կիրակոս Գանձակեցու մի վկայությամբ։ Թաթարական արշավանքների նկարագրության ժամանակ Գանձակեցին պատմում է, որ Մոլար Նուինը մի շարք տեղերի հետ միասին գրավել է նաև «Մածնաբերդ, զոր ունէր Կիւրիկէ Բագրատունի, որդի Աղսարթանայ» (էջ 229)։

Հովհաննես Վանականն իր ժամանակի ամենանշանավոր գիտնական վարդապետն է եղել։ Դավանաբանական-փիլիսոփայական խնդիրները լուծում էին ստանում նրա ձեռքով։ Նա գրել է նաև իր ժամանակի պատմությունը, որը մեզ չի հասել։ Վանականը նշանավոր ուսուցիչ է եղել, որի մոտ տարբեր գավառներից սովորելու էին հավաքվում ուսման ծարավի երիտասարդներ։ Նրա աշակերտներն են, ինչպես ասացինք, պատմագիրները՝ Կիրակոս Գանձակեցին, Վարդան վարդապետ Արևելցին և Մաղաքիա Աբեղան։ Գանձակեցին գրում է, որ Վանականը մահացավ «ի Վանան՝ զոր իւր շինեալ էր, որ կոչի Խորանաշատ վանն յոլով եկեղեցեացն՝ որ ի նմա, ընկալաւ զանունն, որ կայ հանդէպ Երզնկանից քաղքին և ի թիկանց Գարդմանայ, առնէր նա շինուածս երևելիս, գաւիթ շինելով ի կոփածոյ վիմաց

ի գուռն մեծ եկեղեցւոյն, զոր իւր իսկ շինեալ էր, և զբան վարդապետութեանն ուսուցանէր այնոցիկ, որ ժողովէին առ նա յամենայն գաւառաց»[1]։

Տաճարը բռնում է 13,10 × 10,5 մ. տարածութիւն, գմբեթը հանգչում է եկեղեցու չորս պատերից բարձրացող կամարների վրա։ Հատակագիծը դրսից ուղղանկիւն քառանկիւնի է, իսկ ներսից՝ խաչաձև. հատակագծի խաչն ունի անկիւնաւոր թևեր, բացի արևելեան աբսիդից (բեմից), որ կիսաբոլորակ է։ Տաճարի չորս անկիւններում կառուցված են չորս կրկնահարկ խորանները։ Բեմի վրա կան 14 խորանաձև կամարաւոր կեբոտվածքներ, որոնցից մի քանիսի մէջ կան արձանագրութիւններ։ Գմբեթը լայն է և կլոր, նրա 12 նեղ և երկարաձիգ անկիւնաւոր լուսամուտներն առնված են կոտրտւած շրջանակի մէջ, որից վերև գմբեթը շրջապատված է գոտի կազմող քանդակների մի պարոյով։



Խորանաշատի գմբեթը։

Ժամատունը դրնվում է տաճարի արևմտեան կողմում և կառուցված է չորս պիլոնների վրա, որոնց խոյակներն իրենց անկիւններում ունեն ատորաբանայաց առալակաիտներ։ Ժամատան կենտրոնում բարձրանում է խիստ բութ մի գմբեթ։ Ժամատան արևմտեան մուտքի որմնախոյներն ունեն առյուծաքանդակ խոյակներ, որոնցից մեկի վրա արձանագրած է՝

Ք[ՐԻՍՏՈ]Ս Ա[ՍՏՈՒԱ]Ծ ՈՂՈՐՄԻ ՎԱՆԱԿԱՆԻՆ, ԽԱԶՍ ՆՄԱՅ Է.

Մյուս խոյակի վրա արձանագրված է՝

Ք[ՐԻՍՏՈ]Ս Ա[ՍՏՈՒԱ]Ծ ՈՂՈՐՄԻ ԳՐԻԳՈՐՈՅ, ԽԱԶՍ ՆՄԱՅ Է.

Կ. Գանձակեցին հիշատակում է Խորանաշատի ավերումը Ջալալեդդին սուլթանի ձեռքով։ Այդ մասին նա գրում է.

Իբրև աւերեցաւ առաջին վանք նորա, որ կայ հանդէպ բերդին Երգևկանից, ի Ջալալադին Սուլտանէն. և անդ կայր զետեղեալ՝ ժողովեալ բազում գրեանն, զի յոյժ ուսումնասէր էր այրն, մանաւանդ թէ աստուածա-

[1] *Կ ի ր ա կ ո ս Գ ա ն ձ ա կ ե ց ի — «Պատմութիւն հայոց», Ղուկասյան հրատարակութիւն, էջ 333։*

սէր. և բազումք դային առ նա, և ուսանէին զբանս վարդապետականս ի նմանէ[1]:

Այստեղ հիշատակված «ավերումը» վերաբերում է ոչ թե շենքը քանդելուն, այլ Յորանաշատի գույքը հափշտակելուն և միաբանությունը ցրելուն, որովհետև վանքի ամենավերին մասերն անգամ մնացել են սկզբնականը և Վանականի անունը կրող արձանագրություններն ամենուրեք մնացել են իրենց բուն տեղերում:

Այս ավերման մասին ժողովրդի բերանում մնացել է հետևյալ ավանդությունը.

Լենկ-Թեմուրը գրավում է վանքը, վանքի շքեղությունը տեսնելով նախանձով լցվում և հրամայում է անմիջապես քանդել: Ծառայներն անցնելով դործի, շուտով համոզվում են, որ վանքը շատ ամուր է շինված, և անկարելի է քանդել, ուստի վանքի մեջ մեծ քանակությամբ փայտ են լցնում և այրում: Հրդեհից վանքը չի ջնասվում, այլ միայն պատերն են սևանում:

Յորանաշատի արձանագրությունների մեծագույն մասի մեջ հիշատակված է «Վանական վարդապետի» անունը, թեև մի քանիսի մեջ հիշատակված է միայն «Վարդապետ» անունով, որ, անկասկած, դարձյալ Վանականն է: Այդ արձանագրություններից առավել ևս հետաքրքրական են հետևյալները.

1. Տաճարի արևմտյան պատի վրա, մուտքի վերևում, խիստ բարձր դրված է՝

Ի [ԹՎԻՆ] ՈՂԵ [695=1246] ՆՈՒԱՍՏ ԹԱՌՍ Ա[ՍՏՈՒԾՈ]Յ ԵՍ՝ ՏԵՐ ՆԵՐՍԵՍ ԱՂՈՒԱՆԻՑ ԿԱՔՈՒՂԻԿՈՍ ՄԻԱԲԱՆԵՑԱ Ի ԽՈՐԱՆԱՇԱՏՈ Ս[ՈՒՐ]Բ Ա[ՍՏՈՒԱ]ԾԱԾԻՆՍ. ՑԻՇԱՏԱԿ ՀԱՍՏԱՏԵՑԻՆ ՋԱՒԱԳ ՅԵԿԵՂԵՑԻՍ ԻՒՐ ԽՈՐԱՆԱՒՔՍ, ՁԵՌԱՄԲ ՎԱՆԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ ՇԻՆՈՂԻ ՎԱՆԻՑՍ, Ի ՏԱՒՆԻ Ս[ՈՒՐ]Բ ԺՈՂՈՎՈՑՆ ՆԻԿԻԱ. ՓՐԿԵԱԼ Ք[ՐԻՍՏՈՍ]Ի ԲԱՒՐԻՆԱ ՔՈՅՐ ՁԱԼԱԼԻՆ ՄԱՅՐ ՏԵՌՆՈՐԴԵ.

2. Ժամատան հերսում արևմտյան կողմի կամարի վրա, ծածկին մոտիկ գրված է՝

ԸՆԴ ԵՐԿԻՆՍ ԱՆՑԵԱԼ ԵՒ ՅԵՐԿՐԻ ՔՐԻՍՏՈՍԵԱՆ ԱՒՃՈՅՍ ՀԱՅՐ Տ[Է]Ր ԿՈՍՏԸՆԴԻՆ ԿԱՔՈՂԻԿՈՍ ՀԱՅՈՑ ՄԻԱԲԱՆԵՑԱ Ս[ՈՒՐ]Բ Ա[ՍՏՈՒԱ]ԾԱԾԻՆՍ. ԵՒ ԵՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՎԱՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏԵՑԻ ԶԲ [ԶԵՐԿՈՒՍ] ԺՈՂՈՎՆ՝ ԿՈՍՏԱՆԴՈՒՊԱԼԻ ԵՒ ԶԵՓԵՍՈՍԻՆ ԶԱՄԵՆ ԵԿԵՂԵՑԻՔՍ ՊԱՏԱՐԱԳ ԵՒ Ի ՏԱՒՆԻ [ՍՈՒՐ]Բ ԿԱՐԱՊԵՏԻՆ, ՈՐ Ի ԶԱՏԿԻՆ՝ ՏԵՐ ՄԱՐԳԱՐԷԻՆ ԵՂԲԱՒՐ ՈՐԴՈ ԻՄ. ՈՂԵ (695=1246(:

3. Տաճարի արևմտյան ճակատին, ժամատան մեջ գրված է՝

ՅԱՆՈՒՆ Ա[ՍՏՈՒԾՈ]Յ. ՎԱՆԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԵՒ ՅԱՅՐ ՊԱՒՂՈՍ ՀԱՍՏԱՏԵՑԻՆՔ ՄԻՆ ՍԵՂԱՆ ՊԱՏԱՐԱԳ ԳԵՐԳԱ ԵՒ ՅՈՀԱՆԻՍԻ ՄԱՏՋԻ ԱՆԽԱՓԱՆ Ի ՏԱՒՆԻ ԽԱՉԻՆ. Թ. ՈՂԳ [693=1244]

Գ.

ԵՐԳԵՎԱՆՔ

Երգեվանքի տեղն անհայտ է համարվում: Մակար Բարխուդարյանն «Աբցախ»-ում բոլորովին չի հիշատակում այդ անունը, իսկ Էփրեմկյանը «Ճեպաշխարհիկ բառարան»-ում Երգեվանքի տեղագրությունը քաղելով Գան-

[1] *Կիրակոս Գանձակեցի*—«Պատմութիւն հայոց», Ղուկ. հրատ., էջ 230:

ձակեցուց, ենթադրում է, որ լինելու է Ղուլալի գյուղի սահմաններում։ Սակայն դրանով հարցը չի սպառվում, վորովհետև Ղուլալի գյուղի սահմաններում 3 ամրոց կա։

1. Այդ ամրոցներից մեկը կոչվում է Ղըզղալա կամ Աշոտ Երկաթի բերդ։ Սա գտնվում է գյուղից դեպի հարավ վեց կիլոմետր հեռավորության վրա, Ախնջի գետակի աջ ափին, մի սրագագաթ, 150—170 մետր բարձրություն ունեցող լեռան գլխին, որի գագաթի մոտ գտնվող տարածությունը պարիսպված է պարսպով՝ իբրև միջնաբերդ։ Գագաթին կան սպիտակ հուզկ քարերից պատրաստած շենքի հիմքերը և այլ պատերի մնացորդներ։ Գետնի երեսից կարելի է հավաքել բրոնզե ապարանջաններ, միջնադարյան զրամներ և Դվինի ու Անիի մշակույթին պատկանող կեramիկա։ Այդ ամրոցը միջնադարյան Հայաստանի ամրոցների բնորոշ նմուշներից է և պեղելու համար ամենահարմար վայրերից մեկը կարող է համարվել, որովհետև բնակավայրերից հեռու գտնվելով՝ շատ լավ է պահպանվել, իրերը և շինությունների քարերը շատ քիչ են հափշտակվել։ Լեռան լանջը ևս շրջապատված է պարսպով, սակայն այնտեղ, որտեղ ժայռեր են, արհեստական պատեր չկան։ Ըստ երևույթին այդ պարիսպը միջին շրջապարիսպն է, որն ընդգրկել է միջնաբերդը և նրա մերձակա մասերը։ Արտաքին պարիսպը, որ լեռան սառուցեն է, գետակի ափին, նեղլիակում է նաև լեռան շրջապատի հարթության մի մասը։ Միայն հյուսիսային կողմում, որտեղ լեռը կապված է լեռնաշղթայի հետ, պարիսպը հատում է լեռնաշղթան։ Սառցին պարսպից շատ քիչ բան է մնացել, տեղ-տեղ երևում են միայն պատերի կրաշաղախ հետքեր, որոնց միջոցով կարելի է վերականգնել պարսպի ուղղությունը։ Այս պարսպով շրջափակված տարածության վրա մակերեսային բեկորներ համարյա թե չկան, միայն մի երկու տեղ երևում են կրաշաղախ պատերի հետքեր։

2. Երի ձորը, կամ, այլ անունով՝ Մովրովի ձորի բերդը՝ գտնվում է գյուղի հենց կողքին և մեծ տարածությամբ շրջապատված է պարսպով։ Այստեղ ամրոցը կառուցված է մի սրագագաթ լեռան սահմաններում։ Արտաքին պարիսպն ընդգրկում է բավական մեծ տարածություն, բայց արտաքին պարսպից համարյա թե բան չի մնացել՝ գյուղական շինարարությունների տակ ընկել և, աստիճանաբար ուսումնասիրվելու, ոչնչացել անցյալում, բայց գյուղացիների մեջ դեռևս հիշողներ կան և ցույց են տալիս ամրոցի արտաքին պարսպի ուղղությունը։

Այս պարսպի նեղան է գտնվում 12—13-րդ դարերին պատկանող մի եկեղեցի, այսպես կոչված «Մովրովի ձորի եղջին», որ ավերակ է և ոչ մի արձանագրություն չունի։ Բարձրում, ժայռերի գագաթին մոտիկ, կան կրաշաղախ պատերով շարված երկու ջրամբար և այլ շինությունների հետքեր։ Ժայռերի գլխին, բոլորովին անմատչելի տեղերում, կան քարի մեջ փորած անցքեր և, գուցե, վիմափոր բնակարաններ։

3. Ասկի-քար կոչվող ամրոցը պատերազմական թագստարան է, կառուցված բոլորովին անմատչելի մի ժայռի գլխին։ Սրա բռնած տարածությունը փոքր է և, հավանաբար, պատկանում է Բագրատունյաց ժամանակներին։ Գյուղացիների մեջ մի ավանդություն կա այս ամրոցի մասին։

Վերջինիս անմատչելիությունը նկատի ունենալով՝ պատմում են, որ Աշոտ Երկաթի ամբողջ գանձը պահվում է այդ ժայռերի դլխին երևացող կրաշաղախ պատերի ներսում, բայց մինչև օրս ոչ ոք չի կարողացել բարձրանալ և տիրանալ այդ գանձին։ Այստեղ էլ ծագում է նրա այժմյան անունը՝ Խզնի-ֆար, որ նշանակում է գանձարանի ժայռ։

Թեև Կիրակոս Գանձակեցին շատ որոշ է ցույց տալիս Երգևանքի տեղը, ասելով՝

ա) «Իբրև աւերացաւ առաջին վանք նորա [Վանականի], որ կայ հանդէպ բերդին Երգևանից» (էջ 220)։

բ) «Վարդապետն Վանական, որ բնակէր ի վանս Խորանաշատայ՝ հանդէպ Երգևանից բերդին» (էջ 311)։

գ) «Ի վանսն, զոր իւր (Վանականի—Կ. Գ.) շինեալ էր, որ կոչի Խորանաշատ վասն յոլով եկեղեցեացն՝ որ ի նմա, ընկալաւ զանուն, որ կայ հանդէպ Երգևանից բերդին և ի թիկանց Դարգմանայ» (էջ 333)։

Սակայն դրանով էլ դժվար է որոշել Երգևանի ճիշտ տեղը, որովհետև, ինչպես ասացի, Խորանաշատի դիմացն ընկնող Ղուլալի գյուղի սահմաններում կան վերևում նկարագրված երեք միջնադարյան ամրոցների ավերակները։

Այստեղ պետք է ասել, որ «Աշոտ Երկաթի» բերդը Խորանաշատից չի երևում—հանդիպակաց լեռները ծածկում են նրան։ Բայց խնդիրն այն է, որ հենց այդ ամրոցի շրջակայքում գտնվող եղցաձորի եկեղեցու մոտ շինված մատուռի կողքին գտնվեց մի տապանաքար, որը պատկանում է Երգեվանք գյուղի բնակչուհի Խաթունին։

... Է Ա ԵԴԻՐ ՏԱՊԱՆԻ ԽԱՔՈՒՆԻՆ, ԴԱՏԵՐ ... ԴՐԱ... ՆԻՆ... ԵՐԳԵՎԱՆԻՑ, ՈՐ ԵՐ ԱՄՈՒՍԻՆ ՇԲԱՐՔԻՆ ՈՐԴՈ ՋԱՔԱՐԻ· ՈՎ ԿԴԷՔ ....

Մնացածը ջարդված է։ Ուրիշ արձանագրություններ չկան։ Երգևանքը Ղըզ-Ղալան լինել չի կարող, եթե հավատանք Գանձակեցու տեղեկություններին։ Նրան չհավատալու իրավունք չունենք, քանի որ նա իր կրթությունն ստացել է հենց Խորանաշատում, այսինքն Երգևանքի դիմացը, հետևապես և լավ ծանոթ էր լինելու շրջակայքի տեղադրությանը։ Նրա տեղեկություններն աղճատված չենք կարող համարել, քանի որ նա երեք անգամ մատնանշում է միևնույն բանը, և այս բոլորից հետո մեզ մնում է քննության առնել տապանաքարի խնդիրը։ Պարզ է, որ այդ քարը տեղահան արած և մյուս վայրերից եղցաձոր տարած չեն լինի, և, նկատի ունենալով տապանաքարի տեղադրությունը (լեռան լանջին գտնվող փոքրիկ դերեզմանոցում), պիտի ենթադրել, որ այդ տապանաքարը գտնվում է իր բուն տեղում։ Այս բոլորն ընդունելուց հետո, մեզ մնում է ենթադրել, որ երգևանքցի Խաթունը թաղվել է ոչ Երգևանքում, այսինքն այն, որ եղցաձորը և Ղըզղալան Երգևանք ամրոցի տեղում չեն։ Գանձակեցու տեղեկության համաձայն՝ Երգևանքը եղել է շրջակայքի ամենամեծ կետը։ Այդ երևում է նրանից, որ Գանձակեցին, Խորանաշատի նման մի խոշոր հուշարձանի տեղն ու դիրքը նկարագրելիս, բավականանում է մատնանշելով, թե նա գտնվում է Երգևանքի դիմաց։ Այսպիսի նշանավոր վայր եղած չէր կարող

լինել Խչնի քարը, քանի որ նա պարզապես մի թաղսաարան է։ Մնում է ենթադրել, որ երգևանքը Երի ձորի կամ Մովրովի ձորի բերդն է, որը գանվում է հենց Խորանաշատի դիմաց և մեծ տարածություն է շրջափակում իր մեջ, հետևարար լիովին համապատասխանում է Դանձակեցու հաղորդած տեղեկություններին։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Կյուրիկե 3-րդը, բացի Արասից, ունեցել է նաև Վասակ անունով մի ուրիշ որդի, որը Նոր-Բերդի Կյուրիկյան իշխանության հիմնադիրն է։

2. Աղսարթան 1-ինի հակառակորդ Դավիթը վերոհիշյալ Վասակի որդին է և Կյուրիկե 3-րդի թոռը։ Սա 12-րդ դարի վերջին տասնամյակում շինել է այժմյան Շամշադնի շրջանի Վելի և Հախում գյուղերի միջև ընկած Անապատ (Նոր-Վարագավանք) կոչվող վանքի փոքր եկեղեցին և ժամատունը։

3. Դավթից հետո Նոր-Բերդի իշխանաց իշխան է դառնում նրա որդի Վասակը, որը 1231—1240 թվերին կառուցում է Անապատի մեծ եկեղեցին և ժամատունը։ Սրանով էլ վերջանում է Նոր-Բերդի Կյուրիկյան իշխանությունը։ Վասակի կինը եղել է Անեցի Հեճուլ Վահրամի աղջիկ տիկին Խաթունը, որը հայտնի էր Հաոիճի և Հոռոմոսի արձանագրություններից։

4. Վանական վարդապետը Խորանաշատի հիմնադիրն է և 40 տարուց ավելի է տևել եկեղեցու և ժամատան շինությունը։

5. Երգևանքը այժմյան Ղուլալի գյուղի մոտ գտնվող «Երի ձորի» կամ «Մովրովի ձորի» բերդն է։

ШЕЛКОВНИКОВ Б. А.

ХУДОЖЕСТВЕННАЯ КЕРАМИКА ДВИНСКИХ РАСКОПОК

Развалины города Двина расположены в плодородной долине Аракса на берегу Гарни-чая, в 37 километрах от Еревана. Возникновение города относится к IV веку нашей эры, когда город, повидимому, служил летней разиденцией Аршакидов. В V веке, с концом династии Аршакидов, происходит возвышение города и его избирают столицей иранские наместники Армении. Арабское завоевание не лишает Двин политического значения и он продолжает служить резиденцией арабских наместников до землетрясения 893 г., когда наместничество было перенесено в Нахичевань. Но с утратой политического значения город продолжает существовать как значительный торговый и промышленный центр вплоть до XIII столетия. С этого времени армянские летописцы перестают говорить о Двине: повидимому, монгольское завоевание гибельно отразилось на экономическом благосостоянии города и Двин из цветущего промышленного и торгового центра превратился в незначительное поселение сельского типа.

Производящиеся в настоящее время Армянским Филиалом Академии Наук СССР, под руководством докт. С. В. Тер Аветисяна, раскопки города лишь начаты. В продолжении трех археологических кампаний раскопана лишь незначительная часть городища. Несмотря на это, уже обнаружена значительная коллекция материальных памятников, среди которых керамика занимает первое место не только по количеству, но и по качеству. Среди большого числа, незначительных по размеру, фрагментов керамики имеется несколько первоклассных предметов, настолько сохранившихся, что вполне можно судить об их форме и стиле. Описанию последних и посвящена эта статья.

Среди неглазурованных глиняных изделий, с грубым окрашенным черепком, художественный интерес имеют фрагменты карасов, сосудов для хранения вина, украшенные рельефными тисненными орнаментами. К сожалению, в большинстве случаев фрагменты столь незначительны, что нельзя даже судить о форме сосудов. Лишь один карас из находок 1938 г. №204 (рис. №1), хотя и разбитый на несколько кусков, сохранился на три четверти. Это—большой горшок, 37 см. высоты и 31 см. в диаметре, с пузатым туловом и широким

горлом. Снаружи вся верхняя половина караса покрыта красной краской и, возможно, отпалирована. Лишь широкая полоса, украшенная орнаментами, не покрыта краской и сохраняет цвет черепка. Основная орнаментированная кайма тянется вокруг караса, перпендикулярно к ней расположены еще 4 полоски, доведенные до шейки сосуда.




Рис. 1. Карас XI—XIII в. в.

Кайма разбита поперечными полосами с ребрами на участки. В каждом участке изображено стилизованное животное, повидимому, горный козел. Четыре полосы, идущие от горла сосуда к кайме, покрыты плетеным орнаментом. Вся орнаментация исполнена тиснением и поэтому рельефна.

Двинский карас очень похож на фрагменты, найденные в Ани.

